



Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
www.ichd.org

Հայաստան - Թուրքիա հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրները

Համայնքային քննարկումներ
Հայաստանի Հանրապետության մարզերում.
արդյունքների վերլուծություն



Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

www.ichd.org

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրները

Համահամայնքային քննարկումներ Հայաստանի Հանրապետության մարզերում

Քննարկումների արդյունքների վերլուծություն

Քննարկումներն իրականացվել են Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից՝ Եվրասիա համագործակցության հիմնադրամի միջոցով ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տրամադրած օժանդակությամբ:

Ստորև քաղաքացիների արտահայտած տեսակետներն ու կարծիքները հնչեցվել են քննարկումների մասնակիցների կողմից և միշտ չէ, որ արտահայտում են Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Եվրասիա համագործակցության հիմնադրամի և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետներն ու կարծիքները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒՓՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒՓՅՈՒՆ 2

Ներածություն 7

Մեթոդաբանություն 8

 Համահամայնքային քննարկումների ձևաչափը 8

 Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծությունը 9

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ 12

 Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի ազդեցությունը Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթաց վրա 12

 Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի ազդեցությունը Հայ Դատի և պահանջատիրության վրա 14

 Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստան-Սփյուռք գործակցության հեռանկարները 16

 Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա 18

 Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստանի համեմատական մրցունակության խնդիրները 19

 Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում բիզնես շահերի, ազդեցություն և սոցիալական արդարություն խնդիրները 21

 Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Ռուսաստանի Դաշնության ազդեցությունն ու դերակատարումը 23

 Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Ամերիկայի Միացյալ Նահանգների ազդեցությունն ու դերակատարումը 24

 Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Վրաստանի ազդեցությունն ու դերակատարումը 25

 Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի ազդեցությունը հայ-ադրբեջանական հարաբերությունների վրա 26

 Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի ազդեցությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վրա 27

 Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Իրանի Իսլամական Հանրապետության ազդեցությունն ու դերակատարումը 28

 Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում միջազգային հանրության ազդեցությունն ու դերակատարումը 28

 Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Նախաձեռնության, պատասխանատվության և դիվանագիտության գործոնները 30

 Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Ժամանակի, տեմպի ու հեռանկարների ընկալման գործոնները 32

 Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Ժամանակի, տեմպի ու հեռանկարների ընկալման գործոնները 34

 Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում հանցավորության, թաֆիբինգի և միգրացիայի հիմնախնդիրները 35

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում կրթության, մշակույթի և լրատվության դերը	36
Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստանի ներքաղաքական գործունը.....	38
Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում վստահության գործոնն ու կարծրատիպերը.....	40
Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում եվրախնտեզման գործունը.....	42
Ա. Ցեղասպանության միջազգային ճանաչում.....	43
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	43
2. Չզացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	44
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք.....	45
4. Սոցիալական երկխոսություն	48
Բ. Պահանջատիրություն.....	52
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	52
2. Չզացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	54
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք.....	55
4. Սոցիալական երկխոսություն	57
Գ. Տևտեսություն.....	61
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	61
2. Չզացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	63
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք.....	65
4. Սոցիալական երկխոսություն	68
Դ. Մրցունակություն.....	71
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	71
2. Չզացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	71
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք.....	72
4. Սոցիալական երկխոսություն	73
Ե. Բիզնես շահ, ազդեցություն և սոցիալական արդարություն.....	76
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	76
2. Չզացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	77
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք.....	78
4. Սոցիալական երկխոսություն	80
2. Սիյուռք	84
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	84
2. Չզացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	84
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք.....	85
4. Սոցիալական երկխոսություն	86
Ե. Ռուսաստան	89

1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	89
2. Չգացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	90
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք.....	90
4. Սոցիալական երկխոսություն.....	92
Ը. ԱՄՆ.....	95
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	95
2. Չգացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	95
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք.....	95
4. Սոցիալական երկխոսություն.....	95
Թ. Վրաստան.....	96
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	96
2. Չգացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	97
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք.....	98
4. Սոցիալական երկխոսություն.....	98
Ժ. Ադրբեջան.....	101
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	101
2. Չգացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	101
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք.....	101
4. Սոցիալական երկխոսություն.....	102
ԺԱ. ԼՂՀ.....	103
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	103
2. Չգացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	103
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք.....	104
4. Սոցիալական երկխոսություն.....	104
ԺԲ. Իրան.....	105
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	105
2. Չգացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	105
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք.....	106
4. Սոցիալական երկխոսություն.....	106
ԺԳ. Միջազգային հանրություն, գերտերություններ.....	107
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	107
2. Չգացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	108
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք.....	109
4. Սոցիալական երկխոսություն.....	110
ԺԴ. Նախաձեռնություն, պատասխանատվություն, դիվանագիտություն.....	114
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	114
2. Չգացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	117

3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք	119
4. Սոցիալական երկխոսություն	122
ԺԵ. Ժամանակ, տեմպ և հեռանկար.....	127
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	127
2. Չզացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	128
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք	130
4. Սոցիալական երկխոսություն	131
ԺԶ. Հանրային քննարկում.....	135
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	135
2. Չզացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	135
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք	135
4. Սոցիալական երկխոսություն	136
ԺԷ. Հանցավորություն, թրաֆիքինգ, միգրացիա	137
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	137
2. Չզացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	137
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք	139
4. Սոցիալական երկխոսություն	139
ԺԸ. Կրթություն, մշակույթ և լրատվություն.....	142
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	142
2. Չզացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	143
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք	144
4. Սոցիալական երկխոսություն	145
ԺԹ. Ներքաղաքական.....	148
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	148
2. Չզացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	148
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք	149
4. Սոցիալական երկխոսություն	149
Ի. Վստահություն և կարծրատիպեր	151
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	151
2. Չզացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	151
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք	153
4. Սոցիալական երկխոսություն	157
ԻԱ. Եվրաինտեգրում	162
1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ.....	162
2. Չզացմունքներ, Վախեր, Մտահոգություններ.....	162
3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք	163
4. Սոցիալական երկխոսություն	163

Չավելված 1. Գունային կողավորում	165
Չավելված 2. Չայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հնարավոր զարգացումների քննարկման սցենարները	166
Լուռ ապաշրջափակում	166
Բաց սահման պահանջատերերի միջև	167
Արևմտյան ճակատում՝ անփոփոխ	168
Շահումն ու շահողը՝ անհայտ	169
Քայլ ձիով	170
Չավելված 3. Չայաստան-Թուրքիա հարաբերությունների հնարավոր զարգացման տարբերակների քվեարկության արդյունքները	171
Չավելված 4. Տիպական համահամայնքային քննարկման տարածական նկարագիրը	172
Չավելված 5. Չայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հեռանկարների վերաբերյալ սոցիալական երկխոսությունը զուգահեռ քննարկումների արդյունքների համադրման միջոցով	173
Չավելված 6. Չայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հեռանկարների այլընտրանքային տարբերակներում ներառված հիմնախնդիրները	174
Տնտեսություն և մրցունակություն	174
Չայկական Սփյուռք	174
Չավելված 7. Չամահամայնքային քննարկումների արդյունքների համադրություն-հակադրություն սանդղակը	175

Ներածություն

Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման և դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացի վերաբերյալ ՀՀ քաղաքացիների ձայնը լսելի դարձնելու և հասարակությանը հուզող խնդրի քննարկումներին ակտիվորեն ներգրավելու նպատակով, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» (ՄՉՄԿ) հասարակական կազմակերպությունը, Եվրասիա համագործակցության հիմնադրամի օժանդակությամբ, ՀՀ բոլոր մարզերի քաղաքային համայնքներում և Երևանում 2009թ. սեպտեմբերին նախաձեռնեց համահամայնքային քննարկումների շարք:

Համահամայնքային քննարկումների ձևաչափով ՄՉՄԿ-ն նախկինում քննարկման է դրել հասարակությանը հուզող բազմաթիվ հարցեր, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման և ՀՀ Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ հարցերը: Այս ձևաչափը հասարակության տարբեր խմբերը ներկայացնող մեր համաքաղաքացիներին հնարավորություն է ընձեռում անմիջականորեն և արդյունավետ կերպով մասնակցել քննարկումներին, արտահայտել իրենց կարծիքն ու մոտեցումները և բարձրաձայնել իրենց մտահոգող խնդիրները:

Քննարկումները, որոնց մասնակցել են հանրապետության ավելի քան 1200 քաղաքացիներ, իրականացվել են Արարատի մարզի Արտաշատ, Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր, Սյունիքի մարզի Սիսիան, Գեղարքունիքի մարզի Մարտունի, Տավուշի մարզի Իջևան, Լոռու մարզի Վանաձոր, Շիրակի մարզի Գյումրի, Արմավիրի մարզի Արմավիր, Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքներում, ինչպես նաև Երևանում:

Քննարկումներն իրականացվել են մամուլում հրապարակված մտքերի, կարծիքների և վերլուծականների հիման վրա ՄՉՄԿ փորձագետների կողմից մշակված հայ-թուրքական հարաբերությունների հետագա զարգացման հինգ հնարավոր տարբերակների շուրջ, որոնք ներկայացված են Հավելված 1-ում:

Յուրաքանչյուր հանրային քննարկմանը հաջորդել է քվեարկություն. մասնակիցներն ընտրել են առավել նախընտրելի և առավել հավանական տարբերակները: Քվեարկության ամփոփ արդյունքները ներկայացված են Հավելված 3-ում:

Համահամայնքային քննարկումների ՄՉՄԿ ձևաչափը հնարավորություն է ընձեռում արձանագրել քննարկման ընթացքում հնչած յուրաքանչյուր ամփոփ միտք և առաջարկություն, ամփոփել ու վերլուծել դրանք և դնել հանրության ու որոշում կայացնողների առջև: Քննարկման ընթացքում արտահայտված բոլոր մտքերը ներկայացված են ՄՉՄԿ պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ <http://www.ichd.org> հասցեում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մասնակցության՝ երկխոսության և բանավեճի արդյունքում մշակվել են եզրակացություններ և առաջարկներ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ

Մեթոդաբանություն

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների զարգացման շուրջ հանրային քննարկումների իրականացման և դրա արդյունքների վերլուծության մեթոդաբանությունը բաղկացած է երկու մասից: Մեթոդաբանական առաջին մասը ներկայացնում է համահամայնքային քննարկումների ձևաչափը, իսկ երկրորդը՝ քննարկումների արդյունքների վերլուծական գործիքները:

Համահամայնքային քննարկումների ձևաչափը

Համահամայնքային քննարկման (Town Hall Meeting) ձևաչափը մշակվել և ներդրվել է ՄՁՄԿ կողմից 2005 թվականին, հանրային որոշումների կայացմանը քաղաքացիների արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով: Իր տեսակի մեջ եզակի մասնակցային ժողովրդավարության այս ձևաչափը մշակվել է «Ամերիկան խոսում է» (America Speaks) կազմակերպության փորձի հիման վրա, որը մշակել է այս ձևաչափի մեթոդաբանական սկզբունքները և դրանք առ այսօր հաջողությամբ կիրառում է ԱՄՆ-ում:

Որոշում կայացնողները հաճախ դժվարանում են գնահատել հանրային շահերի կենտրոնում գտնվող այս կամ այն խնդրի վերաբերյալ հասարակ քաղաքացիների մեծամասնության կարծիքներն ու ընկալումները: Ավելին, նման իրավիճակում քաղաքացիները ևս օտարվում են հանրային կառավարման գործընթացից և հակված չեն մասնակցել հանրային կյանքին: Արդյունքում, արատավոր շղթան փակվում է մարտահրավեր նետելով ժողովրդավարությանը երկրում:

Համահամայնքային քննարկումների գործընթացը հնչեցնում է քաղաքացիների ձայնը, լսելի դարձնում նրանց կարծիքներն ու մոտեցումները հանրային որոշումների կայացման գործում՝ հանրային կարևորագույն խնդիրների վերաբերյալ հասարակության անդամների կամքն ու դիրքորոշումը կառավարման ղեկը ստանձնած գործիչներին անմիջականորեն հայտնելու հնարավորություն ընձեռելու միջոցով:

Յուրաքանչյուր քննարկում ապահովում է բազմակարծությունն ու քաղաքական դաշտում հավասարակշռությունը՝ գործընթացում հարյուրավոր հասարակ քաղաքացիների միաժամանակյա ընդգրկման, քաղաքացիների արտահայտած կարծիքների անհապաղ և արդյունավետ ամփոփման, ինչպես նաև արդյունքների լայնածավալ տարածման ու տեղեկատվության սփռման շնորհիվ:

Ձևաչափի համեմատական առավելություններն են, մասնավորապես. հիմնախնդրի վերաբերյալ կարծիքների վերուղղումը, արդյունավետ մասնակցությունը՝ հնչած որևէ միտք չի անտեսվում, քննարկումների շարունակականությունը, գերակայությունների հստակ առանձնացումը: Ձևաչափի հաջող կիրառման հիմնական գրավականներն են, մասնավորապես. Բազմակարծության ապահովումը յուրաքանչյուր սեղանի շուրջ, որոշում կայացնողների ներգրավումը գործընթացի յուրաքանչյուր փուլում, բարձրորակ բովանդակության, կառուցվածքի և ընթացքի ապահովումը, գործընթացի ազդեցությամբ կատարվող իրական փոփոխությունները:

Համահամայնքային քննարկումների ձևաչափը խարսխված է քաղաքացիների միջև երկխոսության և կարծիքների փոխանակման վրա, ի հակադրություն՝ երկարաշունչ ելույթների, հարցուպատասխանի կամ զեկուցումների: Քննարկումներին կլոր սեղանի շուրջ ձայնի հավասար իրավունքով մասնակցում են հասարակության տարբեր խմբերը ներկայացնող քաղաքացիներ՝ 10-15 հոգի յուրաքանչյուր սեղանի շուրջ, ովքեր իրենց կարծիքն են արտահայտում քաղաքականության, միջոցների տրամադրման, պլանավորման կամ այլ կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ: Եթե առանձին քննարկումը մասնակիցների թիրախ խմբին չի ներկայացնում սեռային կամ տարիքային հատուկ պահանջներ, ապա յուրաքանչյուր սեղանի շուրջ, ինչպես նաև դահլիճում, ապահովվում է կանանց, տղամարդկանց, երիտասարդների հնարավորինս հավասար կազմ: Յուրաքանչյուր սեղանի շուրջ քննարկումը վարում է բարձր որակավորում ունեցող սեղանավարը (facilitator), ինչն ապահովում է մասնակիցների հետևողականությունը քննարկվող խնդրի շրջանակներում, ինչպես նաև ժողովրդավարական սկզբունքների պահպանումը քննարկման ընթացքում:

Քննարկվող խնդրի վերաբերյալ մասնակիցների իրազեկման պատշաճ մակարդակն ապահովելու նպատակով, նրանց տրամադրվում են հնարավորինս մանրամասն և հավասարակշռված տեղեկություններ խնդրի վերաբերյալ:

Ձևաչափի շրջանակներում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում առանձին սեղանների շուրջ ընթացող քննարկումները վերածել ընդհանուր խմբային քննարկման ողջ դաշիվին: Յուրաքանչյուր սեղանի շուրջ արտահայտված մտքերն ու կաճիքները գրանցվում և կենտրոնացվում են անլար համակարգչային ցանցի միջոցով: Յուրաքանչյուր սեղանին ներկա է գրառող, ում պարտականությունն է գրանցել քննարկման մասնակիցների հնչեցրած յուրաքանչյուր միտք և ուղարկել այն գլխավոր օպերատորին, ով ապահովում է ժամանած ուղերձների ցուցադրումը քննարկման բոլոր մասնակիցների համար տեսանելի դիրքերում տեղակայված էկրաններին: Քննարկման ավարտին համակարգչային ծրագրի միջոցով յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն է ընձեռվում քվեարկել ի օգուտ հստակ ձևակերպված հարցերի շուրջ սեփական դիրքորոշման: Հատկանշական է, որ ողջ խումբը հնարավորություն ունի անդադառնալ ցանկացած առանձին սեղանի շուրջ հնչեցված մտքերին, ինչպես նաև քվեարկության միջոցով որոշում կայացնողների հասցնել իրենց դիրքորոշումը խնդրի վերաբերյալ: Քննարկման ավարտին ամփոփվում և հնչեցվում է քվեարկության միջոցով ներկաների արտահայտած ընդհանրական դիրքորոշումը: Որոշում կայացնողները ակտիվորեն ներգրավվում են քննարկմանը՝ մասնակցելով քննարկմանը, դիտելով գործընթացը, ինչպես նաև քննարկման ավարտին արձագանքելով քաղաքացիների հարցադրումներին ու կամարտահայտությանը:

Միով բանիվ, համահամայնքային քննարկման կազմակերպումը պահանջում է. (ա) քննարկման խնդրի հստակեցում և ձևակերպում, (բ) քննարկման համար անհրաժեշտ փորձագիտական տեղեկությունների ապահովում, այլընտրանքային տարբերակների տեսքով, (գ) անհրաժեշտ ծրագրային ապահովում, (դ) անհրաժեշտ համակարգչային սարքավորում, (ե) քննարկումների վայրի, պայմանների ու կահավորման ապահովում, (զ) համակարգչային ցանցի կազմակերպում, (է) պատշաճ որակավորում ունեցող սեղանավարների և գրառողների առկայություն, անհրաժեշտության դեպքում՝ նրանց վերապատրաստման միջոցով, (ը) քննարկման մասին քաղաքացիների իրազեկում և մասնակիցների կազմի ապահովում, (թ) քննարկման ընթացքում սպասարկող և տեխնիկական անձնակազմի առկայություն, (ժ) քննարկման արդյունքների ամփոփում, (ի) արդյունքների վերաբերյալ իրազեկում բոլոր շահագրգիռ անձանց: Հավելված 4-ում ներկայացված է համահամայնքային քննարկման տիպական տարածական նկարագիրը:

Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծությունը

Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծության մեթոդաբանությունն անուղղակի սոցիալական երկխոսություն է ապահովում քննարկվող խնդրի՝ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հեռանկարների վերաբերյալ երկրի բոլոր մարզերի հասարակ քաղաքացիների վերաբերմունքն ու դիրքորոշումն արտահայտող փաստարկների համադրման և այդպիսով՝ միջնորդավորված զուգահեռ «երկխոսություն» ծավալելու միջոցով (Հավելված 5):

Համեմատական վերլուծության մեթոդաբանությունը հենվում է երկու բաղադրիչների. (ա) համահամայնքային քննարկումների արդյունքների (ուղերձների) վերլուծություն՝ արձարծված հիմնախնդիրների (Հավելված 6) և երեք հիմնական՝ գիտելիք¹, վերաբերմունք² և ընկալում

¹ Գիտելիքը ներառում է. (ա) կյանքի փորձի և կրթության միջոցով անձի ձեռք բերած փորձառությունն ու հմտությունները, խնդրո առարկայի տեսական կամ գործնական ըմբռնումը, (բ) առանձին ոլորտում կամ ընդհանուր առմամբ հայտնի տեղեկություններն ու փաստերը, և (դ) դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ իրազեկությունը: Գիտելիքի վերաբերյալ փիլիսոփայական քննարկումները հաճախ սկսվում են գիտելիքի պլատոնական սահմանմանը հղումով՝ «գիտելիքը հիմնավորված ճշմարիտ հավատն է»: Այդուհանդերձ, գիտելիքի համընդհանուր ճանաչման և ընդունման արժանացած սահմանումը կամ նման սահմանման հեռանկարը բացակայում է, իսկ միմյանց հետ մրցող տեսությունները բազում են: Անգլերենի օքսֆորդյան բառարան. <http://www.oed.com>:

հարթությունների (dimensions) առումով, և (բ) քննարկման դրված սցենարների վերաբերյալ կամ հիմնախնդիրների շուրջ արտահայտված կողմ և դեմ կարծիքների՝ ուղերձների ամփոփում:

Նման մոտեցումն ապահովում է հասարակ քաղաքացիների միջև միջնորդավորված բանավեճն ու երկխոսությունը՝ նրանց հնչեցրած կարծիքների՝ ուղերձների, ամփոփման միջոցով: Որոշ դեպքերում բանավեճը կամ բողոքը միակ հնարավոր ձևաչափն են: Այն դեպքերում, երբ մարդիկ ներգրավվում են բանավեճի կամ ընդդիմախոսության մեջ, կողմերը փորձում են անհրաժեշտ ճնշում գործադրել կամ քաղաքական աջակցություն ձեռք բերել իրենց պահանջներն ու պատկերացումները տեղ հասցնելու նպատակով: Քանզի բանավեճի ու երկխոսության նպատակները տարբեր են, ուստի երկուսն էլ հաղորդակցության դաշտի կարևորագույն տարրեր են: Ցավոք, հաճախ երկխոսության և բանավեճի միջև հավասարակշռությունը զգալիորեն շեղված է երկրորդի կողմը:

Հանրային քննարկումներում բանավեճային ձևաչափը գերակշռում է բազում պատճառներով, այդ թվում. (ա) ոմանք համոզված են, որ բանավեճն ու ընդդիմախոսությունը լսելի դառնալու միակ ուղին են, (բ) երկխոսության մոդելը շատերի ընկալմամբ նպաստում են վիճակի պահպանմանը կամ դանդաղ փոփոխություններին, (գ) համայնքային կամ հասարակական մակարդակներում իրական և արդյունավետ երկխոսության դրական օրինակների եզակի են, (դ) բանավեճից բացի այլ մեթոդների համար հաստատված կանոնների բացակայությունը, (ե) անձանց տարբեր խմբերի միջև առկա թշնամական մթնոլորտը ենթադրում է, որ հաղորդակցությունը ևս պիտի լինի թշնամական, (զ) բանավիճելն ավելի հրապուրիչ ու հետաքրքիր է, քան երկխոսելը, և բանավիճողին նկատելի է դարձնում, (է) բանավեճն ու ընդդիմախոսությունը «խոսել-դատարկվելու» գործառույթ ունի, (ը) բանավեճի պարագայում մարդիկ կարող են լսելու չտալ ու չսովորել բաներ, որոնք չեն սիրում, (թ) բանավիճելն ավելի հեշտ է. ռիսկերը քիչ են, բանավիճողը նվազ խոցելի է, (ժ) մարդիկ սիրում են հանդես գալ խմբերի, այլ ոչ սեփական անձի անունից, (ի) երկխոսությունը ընկալվում է որպես «հալելու ու հալվելու» միջոց, (լ) վախը, որ երկխոսությունը զիջումներ է պահանջում, (խ) վախը, որ երկխոսելու պարագայում խնդրելու են «ձուլվել-միակարծիք դառնալ», (ծ) վախը, որ շփոթմունքը, խոցելիության զգացումը կամ հակառակ կողմից կարծիքն ըմբռնելը երկխոսողին դարձնում է նվազ համոզիչ, (կ) վախը, որ երկխոսության մեջ մտնելու պարագայում, եթե դիմացինը մնում է բանավեճի շրջանակներում, ապա երկխոսություն սկսողը կարող է տանուլ տալ երկխոսությունը, (հ) շատերը տեղյակ չեն երկխոսության առանձնահատկություններին և չգիտեն, թե ինչու է այն շահեկան: Այսպես, շատերը տեղյակ չեն, օրինակ, որ իրենց համոզությունը միայն շահում է, երբ հակառակ կողմին հասկանալ են տալիս, որ լսել են նրան:

Իհարկե՛, երկխոսության ծավալումն ինքնին ամենաբուժիչ չէ, սակայն բանավեճ-երկխոսություն խառնուրդի հավասարակշռումը օգտակար է այն հաղորդակցության և խնդիրների լուծման բազմաթիվ խոչընդոտների հաղթահարելու գործում, որոնք ստեղծվում են բացառապես բանավեճի ձևաչափի պարագայում: Երկխոսության առավել բարձր մակարդակը կարող է խթանել քննարկումներում առավել մեծ թվով անձանց ներգրավումը: Երկխոսությունը հնարավորություն է ընձեռում հարստացնել քննարկումը սեփական փորձի օրինակներով, փոխանակել տարակուսանքը, մտավախություններն ու շփոթմունքը: Այս պարագայում ավելի շատ տեղեկություններ են փոխանակվում և ըմբռնումը խորանում է: Հայաստան-Թուրքիա

² Վերաբերմունքը ենթադրական կառուցվածք է, որն արտահայտում է առարկայի հանդեպ անձի համակրանքի կամ հակակրանքի աստիճանը: Վերաբերմունքը, ընդհանուր առմամբ, բացասական կամ դրական պատկերացումներն են անձի, վայրի, առարկայի կամ դեպքի հանդեպ, որոնք հաճախ կոչվում են վերաբերմունքի առարկա: Մարդիկ կարող են նաև հակասական կամ տարակուսելի վերաբերվել առարկային, ինչը նշանակում է, որ նրանք միաժամանակ թե՛ դրական, թե՛ բացասական վերաբերմունք ունեն խնդրո առարկայի հանդեպ: Վերաբերմունքը գնահատական է: Այն ձևավորվում է ԱՎԳ մոդելով (ազդեցություն, վարքագիծ և գիտակցում): Չգայական արձագանքը հուզական արձագանք է, որն արտահայտում է առարկային անձի կողմից տրված նախապատվության աստիճանը: Վարքագծային մտադրությունն արտահայտվում է անձի խոսքի կամ տիպական վարքագծային միտումների միջոցով: Գիտակցական արձագանքը առարկայի գիտակցական գնահատումն է, որը ներառում է առարկայի վերաբերյալ անձի պատկերացումներն ու համոզմունքները: Վերաբերմունքը հաճախ անձնական փորձի կամ դիտարկման ճանապարհով միջավայրից քաղած դասերի արդյունք է: Breckler, S. J., & Wiggins, E. C. (1992). On defining attitude and attitude theory: Once more with feeling. In A. R. Pratkanis, S. J. Breckler, & A. C. Greenwald (Eds.), *Attitude structure and function*. Hillsdale, NJ: Erlbaum: էջեր՝ 407-427:

հարաբերությունների կարգավորման գործընթացը հաճախ հիմնվում է մյուսների կողմից խնդրի ընկալման, ցանկությունների և գերակայությունների թյուր ընկալման վրա: Արդյունքում խնդրի լուծման նախաձեռնությունը կարող է դուրս գալ ուղեգծերից³:

Վերլուծությունը ենթադրում է նաև դասակարգված և խմբավորված ուղերձների համեմատական վերլուծությունը հակադրություն- համադրություն (Contrast-Coherence) սանդղակով (Հավելված 7): Վերլուծության փուլերն են.

Փուլ 1-ին. Նախնական մշակման փուլում հեռացվել են կրկնվող կամ տեխնիկական ուղերձները, քերականորեն սրբագրվում է ողջ տեքստը:

Փուլ 2-րդ. Տեսակավորման փուլում հեռացվել են անձնական կամ ազգային վիրավորանք⁴ կրող ուղերձները, որոնք կարող են տրամադրվել կամ վերլուծվել առանձին հետազոտության շրջանակներում, մասնավորապես, ի հայտ բերելու համար առանձնապես բացասական վերաբերմունքն ու ընկալումը, որոնք, օրինակ, խոչընդոտում են հարաբերությունների կարգավորմանը:

Փուլ 3-րդ. Ըստ հիմնախնդիրների դասակարգման փուլում հնչած ուղերձները դասակարգվել են ըստ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրների (Հավելված 6) և ապա ամփոփվել Սոցիալական երկխոսության վերլուծական աղյուսակում: Այս փուլում յուրաքանչյուր ուղերձ տեղադրվել է համակարծիք ուղերձների վանդակում, ներառելով թե՛ ռացիոնալ, թե՛ իռացիոնալ թե՛ հուզական փաստարկները: Հակառակ վանդակում տեղադրվել են ընդդիմախոս փաստարկներ պարունակող ուղերձները: Որոշ դեպքերում ընդդիմախոս վանդակներում ուղերձներ չկան:

Փուլ 4-րդ. Ըստ ուղերձների հարթությունների դասակարգման փուլում հնչած ուղերձները դասակարգվել են ըստ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրների երեք հարթությունների. (1) շահեր, դիրքորոշում, մտադրություններ, (2) զգացմունքներ, վախեր, մտահոգություններ, և (3) արժեքներ, կարծրատիպեր, համոզմունք:

Փուլ 5-րդ. Սինթեզի փուլում դասակարգված ուղերձներն ու փաստարկները վերլուծվել են համադրություն- հակադրություն սանդղակի միջոցով: Այս փուլում հիմնախնդիրները դիտարկվել են երկու առանցքներով՝ (ա) ինչպիսի ազդեցություն կունենա Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացն առանձին հիմնախնդրի վրա, և (բ) ինչպիսի ազդեցություն կունենա առանձին հիմնախնդիրը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի վրա: Դիտարկվող հիմնախնդրի վերաբերյալ առանձին վերաբերմունքի կշիռն ու ընկալման սրությունը պայմանավորվել են ոչ թե այդ վերաբերմունքն արտահայտող արտահայտությունների, այլ թվում՝ ռացիոնալ, իռացիոնալ, հուզական և այլ, հաճախականությամբ կամ քանակով, այլ նման արտահայտությունների բազմազանությամբ ու բազմակողմանիությամբ: Այսինքն առանձին վերաբերմունքը կարևորվել է այնքանով, որքանով ավելի բազմազան են այն հիմնավորող կամ արտահայտող ձևակերպումները: Ձևակերպումների մեխանիկական կրկնությունը չի փաստում առանձին վերաբերմունքի միանշանակ կարևորության մասին, այլ կարող է արտահայտել, օրինակ, հիմնախնդրի վերաբերյալ առկա կարծրատիպերի տարածվածությունը:

³ Doug Stone, Robert Ricigliano and Eric Collins. Conflict Management Group. 1993:

⁴ Սույն մեթոդաբանության շրջանակներում վիրավորանքը սահմանվում է որպես արտահայտություն կամ գործողություն, որը որևէ մեկին կարող է պատճառել հուզական ցավ կամ որևէ այլ կերպով կարող է բորբոքել անհատին: Վիրավորանքը հարաբերական հասկացություն է, քանզի վիրավորանքի զգացումը հաճախ պայմանավորված է առանձին անհատի անձնական արժեքներով: Սույն մեթոդաբանության շրջանակներում վիրավորանք է նաև անարվել այն արտահայտությունները, որոնք ազատորեն շրջանառվել են հայաստանյան կամ միջազգային լրատվամիջոցներում:

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի ազդեցությունը Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթաց վրա

Ձիթենյաց լեռան աղոթքը

Քաղաքացիների վերաբերմունքը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի հանդեպ մեծապես պայմանավորված է Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի վրա դրա հնարավոր ազդեցությամբ: Քաղաքացիները զգալի մասը Ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը համարում է բացառիկ նշանակություն ունեցող համահայկական գերխնդիր: Նրանց բացառիկ մեծամասնությունը մերժում է հարաբերությունների կարգավորման գործընթացում որևէ նախապայման կամ գործողություն, որը կարող է վտանգել Ցեղասպանության միջազգային ճանաչումը: Այդուհանդերձ, քաղաքացիներն ընկալում են, որ նախապայմանների բացակայության պարագայում անգամ երկու գործընթացները որոշակիորեն խաչվում են, ուստի քաղաքացիները մտահոգ են գործընթացների փոխկապակցմամբ պայմանավորված շահարկումների հնարավորությամբ: Միաժամանակ, քաղաքացիների մեկ այլ խումբ համարում է, որ Ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը պետք է դիտել սոցիալական, տնտեսական և քաղաքական ազգային գերակայությունների ընդհանուր համատեքստում: Նման վերաբերմունք ունեցող քաղաքացիները իրենց մոտեցումը հիմնավորում են, մասնավորապես, սոցիալական մարտահրավերներով, Թուրքիայի կողմից Ցեղասպանության ճանաչման հեռանկարի անհնարինությամբ, սերնդափոխության արդյունքում խնդրի տարրալուծման և ապամոբիլիզացման հեռանկարով, Ցեղասպանության միջազգային ճանաչման գործում պետության սահմանափակ միջոցներով, և այլն: Հատկանշական է, որ քաղաքացիների երկու խմբերն էլ գրեթե միակարծիք են, որ Ցեղասպանության ճանաչման և երկու երկրների հարաբերության կարգավորման գործընթացները չպետք է պայմանավորել մեկը մյուսով և մեկը լուծել ի վնաս մյուսի: Այս հարցում ակնկալիքները, թերևս, համընկնում են: Քաղաքացիները, ընդհանուր առմամբ, համակարծիք են նաև տնտեսականի հանդեպ քաղաքական գերակայությունների կարևորության խնդրում:

«Եվ՛, և՛»-ն ընդդեմ «կա՛մ, կա՛մ»-ի

Քաղաքացիները, ընդհանուր առմամբ, գտնում են, որ երկու գործընթացները պիտի ընթանան զուգահեռ և հիմնականում համարում են, որ դրանք չպետք է հակադրել՝ մեկում առաջընթացը չպիտի լինի մյուսի հաշվին: Ավելին, ըստ տարածված կարծիքի հարկավոր է հնարավորինս հետևողական և նախաձեռնող լինել Ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրում, մինչդեռ երկու երկրների հարաբերությունների կարգավորման գործընթացում անհրաժեշտ է լինել ճկուն, գտնել փոխադարձաբար ընդունելի և փոխշահավետ քաղաքական և տնտեսական պրագմատիկ լուծումներ:

Երեք միլիոն դիվանագետ բաց սահմանին

Քաղաքացիների մի խումբ համարում է, որ երկու երկրների հարաբերության կարգավորման գործընթացի արդյունքում Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը կարագանա, թեպետ արագացած գործընթացի արդյունքը չի համարում միանշանակ: Քաղաքացիների մի մասը համարում է, որ կարգավորման գործընթացը, բաց սահմանն ու հաճախակի շփումները հնարավորություն կընձեռեն թուրք հասարակությանն անմիջականորեն ներկայացնել իսկությունը հենց «Թուրքիայի ներսում» լողափներում, քաղաքներում, գյուղերում...»: Նրանց կարծիքով յուրաքանչյուր հայաստանցի պիտի «ներքին մղումով» դառնա «ազգի դեսպան» ու «քարոզիչ», պիտի թուրք հասարակությանը համոզի և ապացուցի Ցեղասպանության եղելությունը, և համարում է, որ հենց բաց սահմանն է նման հնարավորություն ընձեռում: Քաղաքացիների այս խումբը համոզված է, որ անձնական շփումները կօգնեն Ցեղասպանության ճանաչման գործընթացում ներգրավել անհատներին ու հասարակությանը, մինչդեռ ներկայում ճանաչման գործընթացի հիմնական բեռը կրում են Հայաստան պետությունն ու համահայկական կառույցները արտերկրում, ինչն ավելի արդյունավետ կդարձնի գործընթացը: Քաղաքացիները համարում են, որ գործընթացի այս փուլում իսկ Թուրքիայի մերժողական քաղաքականությունը խոցելի է դառնում, քանզի մերժողականության ներքաղաքական գիմնանցի հիմնական տարրերից մեկը՝ լուրջությունը, արդեն իսկ

չեզոքացվում է, իսկ հետագա շփումների արդյունքում խնդիրն էլ ավելի լայն ու ազատ կշռափվի ու կշռջանառի թուրք հասարակության մեջ: Քաղաքացիների մի մասը համարում է նաև, որ անհրաժեշտ է օրենսդրորեն քրեականացնել Ցեղասպանության փաստի մերժումը: Ընդհանուր առմամբ, քաղաքացիների այս խումբը Ցեղասպանության ճանաչումը համարում է նպատակ, իսկ երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման գործընթացը՝ միջոց:

Անհայրենիք բուրժուազիա և տկար սերունդ

Քաղաքացիները մտավախություն ունեն նաև, որ բաց սահմանների արդյունքում տնտեսական աշխուժացումը հայաստանցիների շրջանում կբթացնի խնդրի ընկալման սրությունը, այն կմղի ետին պլան, քանի որ «հասարակ հայ առևտրականին» չի հուզում Ցեղասպանության ճանաչման խնդիրը: Նրանք նաև թերահավատ են թուրք սերնդակիցներին Ցեղասպանության եղելությանը հաղորդակից դարձնելու հայ երիտասարդների կարողությունների ու համոզականության հանդեպ:

Դատավորն ու հայցվորները

Քաղաքացիների մեկ այլ խումբ համարում է, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացը կվնասի Ցեղասպանության միջազգային ճանաչմանը ու կդանդաղեցնի ճանաչման գործընթացը: Քաղաքացիները միջազգային հանրությունը այս խնդրում համարում են դատավոր, և մտավախություն հայտնում, որ «դատավորը» հարաբերությունների կարգավորումը կարող է դիտել որպես Ցեղասպանության ճանաչման այլընտրանք, իսկ խնդիրը բարձրաձայնողներին խարանել «երկու երկրների հարաբերություններին խանգարողի» պիտակով, շրջել Ցեղասպանության ճանաչման օրակարգի էջն ու մարել ճանաչման ալիքը: Քաղաքացիների ընկալմամբ առանց նախապայմանների երկու երկրների հարաբերությունների կարգավորման գործում Հայաստանի պատրաստակամությունը Թուրքիան կարող է շահարկել լռեցնելու համար Ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված համահայկական կառույցների ջանքերը և համարում է, որ երկու երկրների միջև լարված հարաբերություններն առավել նպաստավոր են Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի համար և, ըստ էության երկու գործընթացներն ընկալում է որպես փոխբացառող:

Համահայկականն ու համամարդկայինը

Քաղաքացիների մի մաս Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչումը համարում է ոչ մի այն համահայկական այլև համամարդկային խնդիր, որն անհրաժեշտ է նման ոճիրները կանխելու համար: Միաժամանակ, քաղաքացիները համարում են, որ հարկ է խուսափել Հայաստանի գուտ «ցեղասպանակենտրոն» միջազգային ընկալումից: Քաղաքացիները ճանաչման գործընթացի հաջող ընթացքը մասամբ պայմանավորում են Թուրքիայի վրա միջազգային ճնշման առկայությամբ: Քաղաքացիների մեկ այլ խումբ, Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը համարում է անդարձելի, իսկ գործընթացի արագությունը՝ փոփոխական: Քաղաքացիները Ցեղասպանության ճանաչման գործընթացում կարևորում են բարոյական «ներողության» գործոնը, որպես հետագայում երկու ժողովուրդների գոյակցության պայման: Նրանք կարծում են նաև, որ Ցեղասպանության ճանաչումը ազդեցություն կունենա նաև թուրքական ինքնության վրա: Այդուհանդերձ, քաղաքացիների մեկ այլ խումբ տարակուսում է Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի նպատակների վերաբերյալ. «Ասենք թե Թուրքիան ճանաչեց ցեղասպանությունը, բա հետո ի՞նչ ենք անելու» հարցը: Քաղաքացիների այս խումբը կարծում է, որ հստակ հեռանկարներ չունենալը բացասաբար է ազդում գործընթացի և դրա շուրջ հայության ջանքերի համախմբման վրա: Նման իրավիճակում, քաղաքացիների մեկ այլ խումբ Ցեղասպանության ճանաչման բարոյական կողմը համարում է երկրորդական և անկարևոր: Ընդհանուր առմամբ, քաղաքացիները միաձայն են մեկ հարցում. Թուրքիայի համար Ցեղասպանության մերժումը եղել և մնում է քաղաքական գերակա խնդիրներից մեկը:

Մահակի երկու ծայրերը

Քաղաքացիների վերաբերմունքը հակասական է նաև միջկառավարական երկկողմ հանձնաժողովի պատմական հարթությամբ զբաղվող ենթահանձնաժողովի ստեղծման խնդրում: Այսպես, քաղաքացիների մի մասը Ցեղասպանության պատմական փաստերի քննարկումը ենթահանձնաժողովում համարում է անընդունելի, քանի որ «քննարկելով պատմության ցավոտ էջը՝ կասկածի տակ է դրվում եղելությունը» և Ցեղասպանությունն արդեն իսկ ճանաչած աշխարհի շատ երկրների ու համայնքների քայլի իրավաչափությունն ու տրամաբանությունը: Քաղաքացիները տարակուսում են նաև պատմական, ուստի հիմնականում ակադեմիական խնդիրների քննարկման միջկառավարական ձևաչափի ընտրության վերաբերյալ: Ավելին, քաղաքացիները մտահոգ են պատմագիտության անհարկի քաղաքականացման և «նոմենկլատուրային պատմաբանների» հայտնվելու հեռանկարով: Քաղաքացիների մեկ այլ խումբ համարում է, որ պատմական ենթահանձնաժողովում ևս հայկական կողմը կկարողանա հաջողությամբ ևս մեկ անգամ, այս անգամ անմիջականորեն թուրքական կողմին, ապացուցել Ցեղասպանության եղելությունը, և համարում է, որ բուն մարտահրավերը ոչ թե հարցի քննարկումն է պատմական հարթության մեջ, այլ պատմաբանների պատրաստվածությունն ու «մարտունակությունը»:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի ազդեցությունը Հայ Դատի և պահանջատիրության վրա

Տեսնեմ Անին ու Նոր մեռնեմ...

Քաղաքացիների վերաբերմունքը Հայ Դատի և պահանջատիրության վրա Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի ազդեցության վերաբերյալ հակասական է: Այսպես, քաղաքացիների մի մասը գտնում է, որ բաց սահմանը և երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորումը կնպաստի հեռանկարում հայության «Հայրենիքների միավորմանը» և Հայ Դատին, բաց սահմանը նախնառաջ ընկալում է որպես ճանապարհ՝ դեպի պատմական Հայաստանի տարածք, իսկ պատմական հայրենիքի հետ շփման մատչելի հնարավորությունը համարում է հայ ինքնության ամրապնդման երաշխիք: Քաղաքացիները համարում են, որ Թուրքիայում հայ պատմամշակութային ժառանգության ողբալի վիճակը մասամբ պայմանավորված է հենց փակ սահմանով, իսկ սահմանի ապաշրջափակման պարագայում ակնկալում է հոգատար վերաբերմունք այդ արժեքների հանդեպ: Քաղաքացիները համարում են, որ Հայ դատն ու պահանջատիրությունը, եթե անգամ անիրականանալի մնան, հայկական ինքնության, մնում են հայկական երազանքի անկյունաքարային տարրը:

Ճանաչել զ՛սահման և զ՛ամբողջականությունն

Քաղաքացիների մեկ այլ խումբ համարում է, որ երկու երկրների հարաբերությունների կարգավորումը վտանգում է Հայ Դատը, իսկ գործընթացի կարճաժամկետ, առավելապես՝ տնտեսական օգուտները ընկալում է որպես համազգային դարավոր պայթարին խոչընդոտ: Քաղաքացիները հատկապես մտահոգ են կարգավորման գործընթացում սահմանների փոխադարձ ճանաչման խնդրով, որում հակասություն են տեսնում ՀՀ Սահմանադրությանն ու Անկախության Հռչակագրին: Ավելին, քաղաքացիները համարում են, որ պահանջատիրության խնդրում հնարավոր նահանջին վերաբերվող առկա մտահոգությունները Հայաստանի հանդեպ միջազգային ուժի կենտրոնների ճնշման արդյունք են, ինչին մեր երկիրը թերևս չի կարող դիմակայել: Հոռետես քաղաքացիները Թուրքիայի տարածքում գտնվող հուշարձանների պահպանությունը նույնպես իրատեսական չեն համարում:

«Չամբերե՛, հոգի՛ս, համբերե՛»

Քաղաքացիների մի մասը տարանջատում է տարածքային ամբողջականության և սահմանների ճանաչման ինդիքները և հնարավոր է համարում համատեղել դիվանագիտական հարաբերություններ ունենալն ու «պահանջատեր մնալը»: Նրանք գտնում են, որ Հայաստանը պիտի մերժի Ղարսի պայմանագրի հետևանքներն ընդունելը, այլապես անիմաստ է համարում Ցեղասպանության ճանաչման գործընթացը, եթե վերջինս նյութական՝ տարածքային ձեռքբերումների նպատակ չի հետապնդում, իսկ պահանջատիրությունը համարում է անբեկանելի: Միաժամանակ, քաղաքացիները համարում են, որ Ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված ջանքերն ինքնանպատակ չեն, դրա նպատակը համարում են «հողերի վերադարձն ու ու բոլոր տնտեսական ու ֆինանսական կորուստների փոխհատուցումը», իսկ համահայկական օրակարգում հեռանկարում գտնում են, որ Ցեղասպանության միջազգային ճանաչմանը հաջողությամբ պիտի հաջորդի հենց տարածքային պահանջների առաջադրումը: Քաղաքացիների մի խումբ հավատում է, որ աշխարհասփյուռ հայերը հնարավորության պարագայում կարող են վերադառնալ, բնակեցնել ու շենացնել պատմական հայրենիքը:

Ա՛նցնիք Սասուն, մտնիք Վան...

Քաղաքացիներից շատերն ընկալում են, որ «խոսելով հող չեն վերցնում, հողը վերցնում են արյունով ու ջրում՝ քրտինքով» և կարծում են, որ Ցեղասպանությունը ճանաչելու պարագայում անգամ Թուրքիան չի բավարարի հայերի տարածքային պահանջները: Քաղաքացիները տարածքային պահանջների բավարարման գրավական համարում են Հայաստանի ռազմա-քաղաքական հզորությունը և «հավատում պատերազմին»: Նրանք համարում են, որ պապական հողերում հաստատվելու և ապրելու համար առնվազն հարկավոր է լինել հզոր երկիր, որն ի վիճակի է պաշտպանել իր քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը հարևան երկրում: Քաղաքացիները նշում են, որ մեր ժողովրդի ուղին լի է անակնկալներով, համարում, որ պահանջատիրության ոգին լավ ծառայություն է մատուցել հայ ժողովրդին Արցախյան գոյամարտում, ուստի չի բացառում նաև պահանջատիրության ցանկալի լուծման հեռանկարը:

Ոչ միայն հավիտյանս, այլև՝ հավիտենից

Քաղաքացիների մեկ այլ խումբ գտնում է, որ պահանջատիրության ցանկալի լուծումն անիրատեսական է, երկրի ներկա վիճակը թույլ չի տալիս երազել տարածքները վերականգնելու մասին, մինչդեռ երկրի հզորացման հեռանկարը համարում է հնարավոր և անհրաժեշտ, այդ թվում՝ հարևան Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման միջոցով: Քաղաքացիների մի խումբը անիրատեսական է համարում հայերի վերաբնակեցումը պատմական տարածքներ՝ տարածքային պահանջների բավարարման պարագայում անգամ, սակայն չի բացառում, որ հաջորդ սերունդները կարող են այնտեղ բնակվելու ցանկություն ունենալ: Քաղաքացիները նման մոտեցումը հիմնավորում են Արցախի բնակեցման անմխիթար միտումներով: Նրանք նշում են նաև, որ այսօր էլ հայաստանցիները անարդյունավետ կերպով են մշակում ունեցած տարածքը, իսկ պահանջատիրությունը բեռ են դիտում սերունդների համար: Քաղաքացիները տարակուսում են սահմանի ապաշրջափակման և սահմանների ճանաչման զուգահեռների առումով: Քաղաքացիներին մտահոգում է նաև Հայ Դատի պատեհական ակտիվացումը և պահանջատիրության բարձրաձայնումը «միայն ապրիլյան օրերին» և համարում, որ դրանք ազգային օրակարգում պիտի լինեն ոչ միայն մշտապես այլև անընդհատ:

Հայաստանի Զրդական Հանրապետություն

Քաղաքացիները հակասական վերաբերմունք ունեն նաև ներկայում Արևմտյան Հայաստանի պատմական տարածքներում ներկայում բնակվող քրդերի հանդեպ՝ Հայ Դատի և պահանջատիրության համատեքստում: Այսպես, քաղաքացիները նշում են, որ պահանջատիրության առարկա տարածքները ներկայում բնակեցնում է բազմամիլիոն քրդաբնակ համայնքը, ինչը կարող է ժողովրդագրական լրջագույն մարտահրավերներ ստեղծել Հայաստանի համար, անգամ Թուրքիայի կողմից հայերի տարածքային պահանջների բավարարման պարագայում: Քաղաքացիները համարում են, որ նման հեռանկարում երեք միլիոն հայ և բազմամիլիոն քուրդ բնակչությամբ համատեղ երկիրը հայ ինքնության պահպանման և զարգացման լավագույն տարբերակը չէ: Քաղաքացիների մեկ այլ խումբ համարում է, որ բազմամիլիոն քրդական

ընակչությունն իրականում լուրջ մարտահրավեր չէ հայկական պետությանը, իսկ հայ-քրդական համակեցությունը համարում է հնարավոր և անվտանգ: Ընդհանուր առմամբ, քաղաքացիները համարում են, որ քրդական հարցի շահարկումը և «տեղափոխումը» հայկական օրակարգ մարտահրավեր է, որը առաջանում է թուրքական քաղաքականության արդյունքում:

Նոր դաշնակի՞ց, թե՞ հին հակառակորդ

Քաղաքացիների մի մասը համարում է, որ ժամանակակից Թուրքիայում ընակվում են մեխ թվով հայ ինքնությունը կորցրած, սակայն ծագումով էթնիկ հայեր, և անհրաժեշտ են համարում նրանց արթնացնել նրանց ինքնության ակունքներն ու օգտագործել ներուժը՝ ի շահ հայ ժողովրդի: Քաղաքացիները գտնում են, որ հնարավոր և անհրաժեշտ է օգտագործել նաև Թուրքիայում քրդերի ազգային ազատագրական պայքարը հղվելով Հայոց Սպարապետի «Եթե սատանան պարսիկի թշնամին է, ուրեմն իմ բարեկամն է» գաղափարին և համարելով, որ թուրքահպատակ քրդերը բարեկամաբար են տրամադրված հայերի հանդեպ: Քաղաքացիների մեկ այլ խումբ համարում է, որ պահանջատիրության խնդրում քրդերն ավելի շուտ մրցակից են, քան դաշնակից, իսկ քրդերի ապագան տեսնում է «Հյուսիսային Իրաքում»: Նրանք համարում են, որ երկու երկրների արագ մերձեցման պարագայում մեր հարևանությամբ ընակվող քրդերը լուրջ մարտահրավերներ կստեղծեն ոչ միայն Թուրքիայի այլև՝ Հայաստանի համար:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստան-Սփյուռք գործակցության հեռանկարները

Փոխլրացումն ընդդեմ հակադրման

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում որոշումների կայացմանը Սփյուռքի մասնակցության վերաբերյալ քաղաքացիների առավել տարածված վերաբերմունքը երկշերտ է. (ա) խորհրդակցական մասնակցային գործընթաց՝ Սփյուռքի ձայնը միանշանակորեն պիտի լսելի լինի որոշումների կայացման գործընթացում, և, (բ) կայացված որոշման պատասխանատվություն՝ Սփյուռքահայության կարծիքը հաշվի առնելով, Հայաստանի Հանրապետությունը, իմա՝ պետությունը, քաղաքացիական հասարակությունն ու մասնավոր հատվածը, պիտի որոշումներ կայացնի երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման վերաբերյալ և կրի այդ որոշումների պատասխանատվությունը՝ ողջ ծավալով: Ըստ էության, նշված երկու շերտերը չպետք է հակադրել մեկմեկու, այլ պիտի ընկալել որպես միմյանց փոխլրացնող: Ավելին, որոշումների կայացման և դրանց համար պատասխանատվության հարթություններն անբախտելի են: Միաժամանակ, որոշումները պիտի կայացվեն արդյունավետ մասնակցային գործընթացի արդյունքում, այդ թվում՝ հայկական Սփյուռքի և նրա կառույցների մասնակցությամբ: Հատկանշական է, որ կարգավորման գործընթացում որոշումների կայացմանը Սփյուռքի դերի ու մասնակցության աստիճանի անհարկի շահարկումը նպաստում է Հայաստանի և հայկական Սփյուռքի պառակտմանը՝ տնտեսական, քաղաքական, ի վերջո՝ արժեքային հարթություններում:

Ոչ՝ բաժանարար գծերին

Երկու երկրների հարաբերությունների կարգավորման գործընթացով պայմանավորված Հայաստան-Սփյուռք գործակցության խնդիրների վերաբերյալ քաղաքացիների վերաբերմունքը, ըստ էության, միանշանակ է. գործընթացը չպետք է պառակտի Սփյուռքը, չպետք է ստեղծի նոր բաժանարար գծեր կամ վատթարացնի գոյություն ունեցող բաժանարար գծերը, այդ թվում քաղաքական և հոգևոր ոլորտներում, ինչպես Հայաստանի և Սփյուռքի միջև, այնպես էլ աշխարհասփյուռ հայության տարբեր հատվածների միջև, որևէ կերպ չպետք է խոչընդոտի Հայաստան-Սփյուռք գործակցության ընակնուն գարգացմանը, վերջապես չպետք է հարվածի աշխարհասփյուռ հայերի ինքնությանը, որի արժեհամակարգի կենտրոնական տարրերից են ներկայում Ցեղասպանության զոհերի հիշատակը և դրա արհավիրքների հետևանքների վերացմանն ուղղված համահայկական ջանքերը: Այս առումով հայկական ինքնությունը, հատկապես՝ Սփյուռքի հայ համայնքներում, մնում է «ցեղասպանակենտրոն»: Թեև, ընդհանուր առմամբ, քաղաքացիներն արտահայտվում են հոգուտ երկու երկրների հարաբերությունների կարգավորման

գործընթացում Հայաստան-Սփյուռք շահերի համադրման, այդուհանդերձ, այդ շահերը երբեմն նաև հակադրվում են, ինչը նշանակում է, որ առկա են այդ շահերի հակադրման շահարկման հնարավորություններ թե՛ ներքաղաքական, թե՛ արտաքին քաղաքական գործընթացներում:

Սիմֆոնիա մի լարի վրա

Հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստանի և Սփյուռքի ինտեգրման մակարդակի վերաբերյալ քաղաքացիների գնահատականներն էականորեն բևեռացած և հակասական են: Ըստ էության, կարգավորման գործընթացի առաջին փուլը վեր հանեց համահայկական նշանակության խնդիրների վերաբերյալ քաղաքական որոշումների կայացման գործընթացի և դրանց իրականացմանն ուղղված Հայաստան-Սփյուռք ներկա դերակատարումների առավել խոցելի խնդիրները: Հասարակ քաղաքացիների կարծիքները մատնանշում են նաև Հայաստանի և Սփյուռքի միջև քաղաքական երկխոսության և համագործակցության առկա խնդիրները, այդ թվում՝ համագաղթին խնդիրներին առնչվող Հայաստանի Հանրապետության քաղաքական գերակայությունների սահմանման և իրականացման գործում Սփյուռքի և նրա համահայկական կառույցների տնտեսական, քաղաքական և սոցիալական ինտեգրվածության անբավարար աստիճանը, այդ գերակայությունների երբեմն հակասական ըմբռնումն ու տարամեկնաբանումը: Համահայկական խնդիրների շուրջ Հայաստան-Սփյուռք գործակցության «պարտիտուրան» հիշեցնելու ջանքերն ի ցույց դրեցին, որ «առնվազն պագանինիական վարպետություն է հարկավոր ջութակի միակ լարի վրա դիվանագիտական բարդագույն սիմֆոնիան կատարելու, լարը չկտրելու, նվագողի մատերը չվնասելու համար, և դեռ հանդիսատեսի ծափահարություններին հավակնելու համար»:

Գործընթացը՝ մասնակցային, պատասխանատվությունը՝ միանձնյա, դերաբաշխումները՝ համաձայնեցված

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական հայեցակարգում հարկավոր է ներառել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում հայկական Սփյուռքի և նրա կառույցների ներգրավմանն ու դերակատարման սկզբունքներն ու մեխանիզմները: Մասնավորապես, կարգավորման գործընթացում վարվող պետական քաղաքականության շրջանակներում անհրաժեշտ է հստակեցնել հայկական Սփյուռքի և նրա կառույցների անմիջական մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի կառույցների դերակատարումները համապատասխան ոլորտներում, այդ թվում՝ Հայոց Տեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում: Ընդ որում, այս պարագայում որոշումների ընդունման մասնակցային գործընթացը չպետք է սահմանափակվի խորհրդակցական բնույթով. համապատասխան դերակատարումներին վերաբերվող բուն որոշումները պիտի կայացվեն համատեղ, ուստի դրանց համար պատասխանատվությունը նույնպես պիտի լինի ընդհանուր թե՛ Հայաստանի Հանրապետության, թե՛ հայկական Սփյուռքի համար: Այս առումով հատկապես կարևորվում է համապատասխան որոշումների ընդունման մեխանիզմի մշակումը, մասնավորապես, հայկական Սփյուռքի տարբեր հատվածների լիարժեք ներգրավման առումով: Նման մոտեցումը ոչ միայն կկանխի Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում որոշումների կայացմանը Սփյուռքի մասնակցության աստիճանի վերաբերյալ շահարկումների արդյունքում Հայաստան-Սփյուռք հնարավոր պառակտումը, այլև առկա սոցիալ-տնտեսական, քաղաքական, արժեքային բաժանարար գծերը կփոխարինի դերակատարումներ բաշխման վերաբերյալ համատեղ որոշումների համար ընդհանուր պատասխանատվությամբ:

Աստծունը՝ Աստծուն, Կեսարինը՝ Կեսարին

Երկու երկրների հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստան-Սփյուռք գործակցության արդյունավետությունն էականորեն պայմանավորված է Հայաստանի ներքաղաքական կյանքին Սփյուռքի և նրա համահայկական կառույցների ինտեգրման աստիճանով: Անհրաժեշտ է կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարներում Սփյուռքի և նրա կառույցների ներկայացուցիչներին հնարավորիս ներգրավել Հայաստանի տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային և հոգևոր կյանքին: Ակներևաբար, սոցիալական համագործակցության առկա մոդելներն ու մեխանիզմները, այդ թվում՝

գործարարության և բարեգործության ոլորտներում, չեն լրացնում երկրի քաղաքական կյանքում Սփյուռքի անմիջական մասնակցության բացը: Այսպես, ի լրումն երկքաղաքացիության ինստիտուտի հնարավորինս արագ ներդրման, անհրաժեշտ է Սփյուռքի համահայկական կառույցներին ներգրավվել Հայաստանի կարևորագույն քաղաքական գործընթացներին՝ քաղաքացիական հասարակության մասնակցության ձևաչափով, մասնավորապես, ապահովելով Սփյուռքի համահայկական կառույցների ներկայացուցիչների ներգրավումը համապետական և տեղական ընտրություններում դիտորդական առաքելություններում, Անվտանգության խորհրդի ընդլայնված կազմում, Հանրային խորհրդի կազմում, Հայագիտական կամ համահայկական նշանակության խնդիրների վերաբերյալ գիտական կամ ստեղծագործական խորհուրդների կազմում և այլն: Անհրաժեշտ է նաև հետևողականորեն կիրառել Հանրապետության Նախագահի «Համահայկական շրջագայության» նախաձեռնության փորձը՝ համահայկական նշանակության կամ հնչեղության խնդիրների վերաբերյալ՝ ամենամյա հաճախականությամբ:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա

Բաց սահման՝ տնտեսական նոր հեռանկարներ

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում առաջացող տնտեսական և քաղաքական հնարավորությունների ու մարտահրավերների հանդեպ քաղաքացիների վերաբերմունքը միանշանակ չէ: Այսպես, քաղաքացիների մի խումբը համարում է, որ բաց սահմանն առավելապես նոր հնարավորություն է ստեղծում երկրի տնտեսության զարգացման համար՝ դեպի համաշխարհային շուկա առավել հարմար այլընտրանքային ճանապարհ՝ «պատուհան՝ դեպի ծով» բացելու, բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների համար առավել նպաստավոր նախապայմաններ ստեղծելու, հարևան երկրի հետ առևտրային շրջանառությունը պարզեցնելու, կանոնակարգելու և վերահսկելու, ՀՀ սահմանամերձ շրջաններում տնտեսական կյանքն ակտիվացնելու, հայաստանյան շուկայում մրցակցությունը խթանելու, տեղական արդյունաբերության արտադրողականությունը խթանելու համար անհրաժեշտ նախապայմաններ ստեղծելու և այլ միջոցներով: Նման վերաբերմունք ունեցող քաղաքացիները հաճախ Հայաստանի տնտեսության բազմաթիվ առկա խնդիրներ մասամբ պայմանավորում են հենց սահմանի շրջափակմամբ: Նրանց կարծիքով սահմանի բացումը հայաստանցիներին հնարավորություն կընձեռնի տնտեսապես զորանալ և դիմակայել տնտեսական ու քաղաքական մարտահրավերներին: Քաղաքացիներն ակնկալում են նաև, որ երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորումը կարող է ակտիվացնել թուրքահպատակ հայերի տնտեսական ակտիվությունը երկու երկրների միջև առևտրային հաշվեկշռում:

Արարատին պետք է երկու կողմից նայել...

Քաղաքացիներ մյուս խումբը գտնում է, որ Թուրքիայի կողմից սահմանի ապաշրջափակման և երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման հեռանկարում զգալի տնտեսական օգուտներ չկան կամ դրանք էականորեն զիջում են ազգային անվտանգության մարտահրավերներին: Այսպես, քաղաքացիները նշում են, որ դեպի համաշխարհային շուկաներ բացվող ճանապարհը, «կարճ» լինելով հանդերձ, բավարար կերպով անվտանգ ու ապահով չէ: Մյուսները համարում են, որ տարածաշրջանային խոշոր տարանցիկ ծրագրերի բացակայության պարագայում կարգավորման գործընթացի տնտեսական հանրագումարը լինելու է անշոշափելի, իսկ խոշոր ծրագրերը մնալու են խոստում: Ընդհանուր առմամբ, տնտեսական շահի ցածր ակնկալիքները հանգեցնում են նաև գործընթացի հանդեպ հոռետեսական ու դժկամ վերաբերմունքի. «Թող քիչ ուտենք, բայց ապահով լինենք»: Մտավախությունների սպեկտրը լայն է: Այն ընդգրկում է ներկրվելիք ապրանքների որակի ու սննդի անվտանգության վերաբերյալ մտահոգությունները, անշարժ գույքի շուկայում գնաճն ու վարկերի մատչելիության նվազումը, օտարերկրյա ներդրումների դաշտի օրենսդրական կարգավորման բացերը, Թուրքիայի պրոտեկցիոնիստական քաղաքականությունը՝ սեփական արտահանողներին ի շահ և ի վնաս հայ արտահանողների և այլն: Քաղաքացիները գնտում են, որ առևտրի համար բաց սահմանների ընձեռնելիք հնարավորությունները կխամրեն երկրում առակա խնդիրների ստվերում կոռուպցիա, մենաշնորհներ, սեփական ռեսուրսների կառավարման ցածր արդյունավետություն և այլն: Նման կարծիքը պաշտպանող քաղաքացիները,

մասնավորապես, գտնում են, որ Հայաստանում այսօր իսկ անհամաչափորեն ցածր է օտարերկրյա ուղղակի ներդրումների մակարդակը, ինչի պատճառը, ուստի և՛ դեղամիջոցը, ամենևին չըջափակված սահմանը չէ: Քաղաքացիները գտնում են նաև, որ սահմանի ապաշրջափակումը չի վերացնելու մեր ենթակառուցվածքների կախումը օտարերկրյա կապիտալից, ուստի իրական նախադրյալներ առավել մեծ տնտեսական կամ քաղաքական անկախության համար չի կրում: Մտահոգություններ են հնչում նաև թուրքական տնտեսությանը ինտեգրվելու և մեր տնտեսության տնտեսական դիվերսիֆիկացումը կորցնելու վերաբերյալ, ինչն անհամաչափորեն կարող է մեծացնել Հայաստանի քաղաքական և տնտեսական կախվածությունը Թուրքիայից: Քաղաքացիները գտնում են նաև, որ տնտեսական ակտիվացումն անհնար է առանց որոշակի մշակութային երկխոսության, ինչին պատրաստ լինելու համար անհրաժեշտ է «Արարատին նայել երկու կողմից»:

Կռունկ ուստի կուգաս...

Կարգավորման գործընթացով պայմանավորված աշխատուժի միգրացիայի հեռանկարները քաղաքացիներին ներկայանում հիմնականում մութ գույներով: Այսպես, քաղաքացիները համարում են, որ թուրքական աշխատուժն ավելի էժան է, ուստի հայկական աշխատուժի շուկան վտանգված է, հատկապես՝ Արևելյան Թուրքիայի բնակիչների: Գտնում են նաև, որ Թուրքիան «կրառնա այն շուկան, ուր կսպառվի Հայաստանի մտավոր ներուժի արտադրանքը»:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստանի համեմատական մրցունակության խնդիրները

Կիկոսի մահը

Հայաստանի տնտեսվարողների վրա Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի ազդեցության ընկալումը քաղաքացիների շրջանում հակասական է: Այսպես, համաձայն լայնորեն տարածված կարծիքի, թուրքական առավել մրցունակ ապրանքները կողողեն հայկական շուկան, իսկ հայաստանյան արտադրողները հեռանկարում չեն դիմանա տնտեսական մրցակցությանը ներկրման հետ մրցավազքում: Արդյունքում, քաղաքացիների կարծիքով, Հայաստանում արտադրությունը դիրքերը կզիջի ներմուծմանը, իսկ արդյունաբերությունը՝ առևտրին, հեռանկարում էլ ավելի խորացնելով մրցունակության անդունդը, երկիրը դնելով տնտեսական կախման մեջ և մարտահրավերներ ստեղծելով ազգային անվտանգությանը: Նման վերաբերմունքը քաղաքացիները հիմնավորում են թուրքականի համեմատ Հայաստանի տնտեսության նվազ մրցունակությամբ, տեխնոլոգիաների համեմատաբար ցածր արտադրողականությամբ և բարձր ինքնարժեքով, շուկայի ազատականության համեմատաբար ցածր մակարդակով և այլն: Հատկապես հաճախ են հնչում գյուղատնտեսության ոլորտի քայքայման և հայ գյուղացու «հողագրկման» վերաբերյալ մտահոգությունները: Ավելին, քաղաքացիները խիստ թերահավատ են թուրքական շուկա հայկական ապրանքների արտահանման հեռանկարների վերաբերյալ:

Հայացք՝ զույգ աչքով

Միաժամանակ քաղաքացիների մեկ այլ խումբ արտահանման մի շարք հնարավորություններ է նշում, հատկապես՝ Թուրքիայի արևելյան շրջանների շուկա: Թուրքական շուկա ապրանքների և ծառայությունների արտահանման հնարավորությունների շարքում քաղաքացիները նշում են քիմիական արդյունաբերության արտադրանքը, գորգերը, շինարարական աշխատանքները, և այլն: Սպառողական ապրանքների էժանացման հնարավորությունը քաղաքաբնակ հայաստանցիների տեսանկյունից նույնպես դրական է գնահատվում: Քաղաքացիների մեկ այլ խումբ համոզված է, որ Թուրքիայում գյուղատնտեսական, հատկապես՝ շուտ փչացող ապրանքները, երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման հեռանկարում վտանգ չեն սպառնում հայկական գյուղատնտեսության զարգացմանը, քանի որ դրանց գնի, բեռնափոխադրման և պահպանման ծախսերի համադրությամբ տեղական արտադրանքը մրցունակ է: Քաղաքացիները նշում են, որ գին-որակ համադրության մեջ հայաստանյան ապրանքները թուրքականի համեմատ հիմնականում մրցունակ են: Ավելին, հնչում են կարծիքներ, որ գին-որակ

համադրությամբ շահեկան թուրքական առանձին ապրանքատեսակներն արդեն իսկ տեղ են գրավել հայկական շուկայում ու «ծփում են Հայաստանում», ուստի հեռանկարում նոր մարտահրավերներ չեն ծագի: Ընդհանուր առմամբ, լավատեսների կարծում են, որ «ավելի զարգացած տնտեսության հետ առևտուր անելը միշտ էլ շահեկան է» և մենք «վախենալու բան չունենք»:

Ես չլինեի... վա՛յ՛ ընկար

Քաղաքացիները տարակարծիք են նաև Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում տեղական արտադրողների մրցունակության պակասը պետական լրացուցիչ աջակցության միջոցով փոխհատուցելու խնդրում: Քաղաքացիների մի խումբը համոզված է, որ երկու երկրների հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստանը պիտի պաշտպանի տեղական արտադրողին, մասնավորապես, մի կողմից՝ թուրքական ծագումով ապրանքների ներմուծման համար մաքսային, ֆիտոսանիտարական, որակի սերտիֆիկացման և այլ խիստ ռեժիմներ սահմանելու և ուղղակի և անուղղակի սահմանափակումներ կիրառելու, Հայաստան թուրքական կապիտալի մուտքն ու թուրք ձեռնարկատերերի տնտեսական գործունեությունը վերահսկելու, ներմուծվող ապրանքների որակի հանդեպ հսկողության և սպառողների պաշտպանության, և մյուս կողմից՝ տեղական արտադրողներին պետական աջակցություն տրամադրելու, գյուղատնտեսության և վերամշակող արդյունաբերության սուբսիդավորման և այլ միջոցներով:

Որպես փյունիկ կրակից կելնես, կելնե՞ս նոր...

Քաղաքացիների մեկ այլ խումբ համարում է, որ հարաբերությունների կարգավորումն ու բաց սահմանը կնպաստեն մեր երկրի տնտեսության մրցունակության բարձրացմանը՝ առողջ մրցակցության պայմաններում, ուստի համարում են, որ պետությունը չպետք է լրացուցիչ արհեստական երաշխիքներ տրամադրի տնտեսության ոչ մրցունակ ճյուղերին, խոչընդոտելով դրանց զարգացմանն ու հարվածելով նոր տեխնոլոգիաների ներդրման, նորարարության զարգացման ու արտադրողականության բարձրացման շարժառիթներին: «Ընկնելով՝ մեռի՛ր կամ հառնի՛ր՝ փոխակերպվելով», «ազատ շուկան կլուծի բոլոր խնդիրները», «բաց սահմանը կստիպի մեզ մրցունակ լինել, Էժան ու որակյալ արտադրանք առաջարկել», «մա՛հ կամ մրցունակ ազատ տնտեսություն» սա է, ըստ էության, նման վերաբերմունքն արտահայտողների փիլիսոփայությունը: Ավելի՛ն, ըստ քաղաքացիների այս խմբի համոզման, հենց եվրոպական առևտրային գոտուն ինտեգրված թուրքական տնտեսության հետ մրցող ու մրցունակ հայ տնտեսվարող է մեր տնտեսության պահպան «զինվորը», որը մոտակա տասնամյակների հեռանկարում պիտի «գրավի Արևմտյան Հայաստանի տնտեսությունը»:

Լավագույն պաշտպանությունը հարձակումն է

Անկախ մեր տնտեսության մրցունակության գնահատականից, քաղաքացիները գրեթե անվերապահորեն գտնում են, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորումն անվիճելիորեն բերելու է երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների ակտիվացմանը՝ այս կամ այն չափով: Ակնհայտ է նաև, որ քաղաքացիների ընկալմամբ սարերի հետևում չեն նաև անդրսահմանային և տարանցիկ տարածաշրջանային ծրագրերը: Այնուամենայնիվ, ըստ քաղաքացիների երկու տնտեսությունների «շփման գիծը» անցնում է հիմնականում Հայաստանում: Ուրեմն կարգավորման ինչպիսի քաղաքականություն պիտի վարի պետությունը, ապահովելու մեր տնտեսության մրցունակության բարձրացումն ու մեր հարկատուների՝ տնտեսվարողների ու սպառողների, շահերի պաշտպանությունը: Թերևս անհրաժեշտ է ձեռնպահ մնալ Հայաստանի շուկայում գործող տեղական տնտեսվարողների համար «ջերմոցային» պայմաններ ստեղծելուց, ինչը ոչ միայն կխաթարի ազատ մրցակցությունն ու ազատ շուկայական հարաբերությունները երկրում, այլև կխոչընդոտի մեր տնտեսության մրցունակության առաջանցիկ աճին: Այդուհանդերձ, Հայաստանը պիտի համարժեք երաշխիքներ տրամադրի հայաստանյան տնտեսվարողներին, Թուրքիայի կողմից համապատասխան երաշխիքները հավասարակշռելու համար: Միաժամանակ, անհրաժեշտ է պետականորեն հնարավորինս խթանել որակի եվրոպական չափանիշների, այդ թվում՝ կորպորատիվ չափորոշիչների, ներդրումը հայաստանյան ձեռնարկություններում: Ավելի՛ն, անհրաժեշտ է ներդնել թուրքական և եվրոպական շուկաներ արտահանողներին պետականորեն աջակցելու մեխանիզմներ:

Մազութի համոյականության մարտահրավերները...

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացը հասարակ քաղաքացիները սերտորեն փոխկապակցում են տնտեսական շահերի, մրցակցության և սոցիալական արդարության խնդիրներին՝ մտավախությունների կամ ակնկալիքների տեսքով: Այսպես, գերակշռում է մտավախությունը, որ երկու երկրների հարաբերությունների կարգավորման գործընթացում շահելու են «օլիգարխները»՝ հասարակության, թեպետ, ազդեցիկ, սակայն չնչին խումբը, մինչդեռ հասարակ ժողովուրդը գրեթե չի շահի սահմանի բացումից և հարաբերությունների կարգավորումից: Սրան հետևում է մտավախությունը, որ կարգավորման գործընթացը էլ ավելի կսրի հասարակության սոցիալական բևեռացումն ու շերտավորումը: Երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման պտուղների նման ծայրահեղ անարդար բաշխման մտավախությունը քաղաքացիների ընկալմամբ հիմնավորվում է Հայաստանի տնտեսության խիստ մենաշնորհային բնույթով: Քաղաքացիների ընկալմամբ սահմանի բացումն ու հարաբերությունների կարգավորումը հանգեցնելու է «մի քանի հոգու գրպանը լցնելուն», «խոշոր ձկների հարստացմանը» կամ «օլիգարխների գործունեությունը հեշտացնելուն»: Ուստի զարմանալի չէ, որ նման վերաբերմունք ունեցող քաղաքացիները հիմնականում բացասաբար են ընկալում գործընթացը: Այսպիսով, Քաղաքացիները, մի կողմից, Նշված գործոններն ընկալում են որպես խոչընդոտ՝ երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման գործընթացին., մյուս կողմից հասարակական ընկալման մեջ արմատավորված է այն վերաբերմունքը, որ հարաբերությունների կարգավորումն էլ ավելի կսրի առկա, այդ թվում՝ տնտեսական մրցակցության և սոցիալական արդարության խնդիրները: Հասարակական ընկալման այս երկու առանձնահատկություններն էականորեն ազդում են կարգավորման գործընթացի հասարակական ընկալման ու գնահատականի վրա:

Հին Մարգարան. Նոր Սադախլո՞

Միաժամանակ, քաղաքացիների զգալի մասը ակնկալում է, որ սահմանի բացումն ու հարաբերությունների կարգավորումը պիտի ծառայեցնել երկրում աղքատության կրճատմանը, շուկայական տնտեսության առողջացմանը, փոքր ու միջին գործարարության զարգացմանը, և ամենակարևորը՝ տնտեսական մրցակցությունը խթանելուն: Քաղաքացիներն ակնկալում են, որ մրցակցությունը կսրվի հենց գերիշխող դիրք ունեցող տնտեսվարողների շրջանում: Այս առումով թուրքական կապիտալի հոսքը Հայաստան դրական է դիտվում, եթե նման հոսքը խթանի տնտեսական մրցակցությունը հայաստանյան շուկայում: Կա նաև կարծիք, որ ներկայում փակ սահմաններից առավելապես օգտվում են հենց «օլիգարխները» և շուկայում գերիշխող դիրք ունեցող խոշոր ձեռնարկատերերը: Նման վերաբերմունք ունեցող քաղաքացիները ակնկալում են նաև, որ սահմանների բացումից ու հարաբերությունների կարգավորումից կշահի միջին խավը, հատկապես տնտեսության մրցակցային ոլորտներում: Սոցիալ-աշխարհագրական առումով հատկանշական է երկու երկրների հարաբերությունների կարգավորման և սահմանի բացման հեռանկարների հանդեպ համեմատաբար դրական վերաբերմունքը՝ սպասարկման և արդյունաբերության ոլորտներում ծագող հնարավորությունների և ակնկալվող օգուտների առումով, մինչդեռ գյուղատնտեսության պարագայում քաղաքացիների ընկալմամբ հեռանկարում հիմնականում սահմանափակումներն ու վնասներն են: Նման ընկալումը հատկապես ցայտուն է Թուրքիային սահմանամերձ ՀՀ մարզերում Գյումրիում և Արմավիրում: Ըստ մեր քաղաքացիների, եթե բաց սահմանի, ուստի և՛ ներմուծման ծախսերի կրճատման, պարագայում տնտեսվարողները չկարողանան կամ չկամենան Հայաստանի շուկային մրցունակ առաջարկներ կատարել ներմուծվող ապրանքների առումով, ապա հավանական է հայ-թուրքական սահմանում սպառման ապրանքների առևտրի մերձսահմանային «շուկայի» ձևավորումը՝ Բագրատաշեն-Սադախլո շուկայի նմանությամբ:

«Քաղաքանտարկյալ» գործարարություն

Քաղաքացիների զգալի մասը համարում է, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում գերակա են քաղաքական շահերը՝ տնտեսականի համեմատ, իսկ տնտեսական-գործարար շահերը պիտի ենթարկվեն քաղաքական շահերի տրամաբանությանն ու տեղավորվեն քաղաքական օրակարգի շրջանակներում: Նման մոտեցումը քաղաքացիները, մասնավորապես, հիմնավորում են այն փաստարկով, որ բիզնես շահերը կարող են անհարկի քաղաքական ազդեցության լծակ դառնալ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման և ձևավորման գործընթացում Թուրքիայի կամ երրորդ երկրների ձեռքում: Հատկանշական է, որ նման մտավախության հիմքում ընկած է «բիզնեսի մեջ ազդություն չկա, կա շահ ու եկամուտ...» համոզմունքը: Ավելին, մերօրյա Հայաստանի գործարար էլիտան ոչ բոլոր հայաստանցիների համար է վստահելի կամ հուսալի՝ ազգային շահերի ընկալման ու հավատարմության տեսանկյունից: Ավելին, գործարար էլիտայի ներկայացուցիչները, ոմանց կարծիքով, առավելապես «ապազգային» են: Ընդհանուր առմամբ, քաղաքացիների ընկալման մեջ Հայաստան-Թուրքիա հարաբերություններում գործարար և ազգային շահերը ոչ թե հակադրվում այլ հակադրվում են: Միաժամանակ, մեր քաղաքացիներն ակներևաբար ընկալում են, որ մեր երկրում, ինչպես ցանկացած այլ պետության մեջ, գործարար հատվածը քաղաքացիական հասարակության առավել ազդեցիկ և կարող մասն է, որի ազդեցությունը պետական քաղաքականության ձևավորման վրա հատկապես մեծ է: Ցավալիորեն, երկու երկրների հարաբերությունների կարգավորման գործընթացում հասարակության առավել ազդեցիկ խմբի դերակատարումը հանրային շահերի համար ընկալվում է որպես նվազ ցանկալի ու նպաստավոր, սակայն ոմանց կարծիքով՝ թերևս անխուսափելի:

Տնտեսական կողածիերը՝ քառատրոփ, քաղաքականության քեղածին՝ վարզով

Քաղաքացիներն ընկալում են երկրի տնտեսական հզորության և քաղաքական անկախության փոխադարձ կապը: Այսպես, քաղաքացիների մեկ այլ խումբ համարում է, որ գործարար շահերը ոչ միայն չեն վտանգում ազգային քաղաքականության գերակայությունները, այլև հենց գործարար շահերն են որ պիտի առաջնորդեն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացը: Նման մոտեցման կողմնակիցները սեփական դիրքորոշումը նախևառաջ հիմնավորում են դրա անխուսափելիությամբ: Ավելին կարծիքներ են հնչում, որ զուտ ազգային գաղափարախոսության վրա հիմնված և գործարար շահերն անտեսող քաղաքականությունը փակուղի կտանի երկու երկրների հարաբերությունների կարգավորման գործընթացը: Հօգուտ տնտեսական և գործարար շահերի առաջնայության հիմնավորումների թվում հնչում են նաև փոխադարձ ներդրումների անհրաժեշտությունը, որոնց արդյունքում կշահեն ազատ տնտեսական հարաբերություններն ու շուկան, տնտեսական մրցակցությունն ու, ի վերջո՝ երկրի անվտանգությունը: Ավելին, հնչող կարծիքների համաձայն՝ տնտեսական փոխհամաձայնությունն ու ընդհանուր գործարար շահերը կնպաստեն նաև քաղաքական երկխոսության կայացմանը: Գոյություն ունի նաև կարծիք, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորումը ոչ պայմանավորված է ներդրումներով կամ ներքաղաքական խնդիրներով, ոչ էլ էականորեն կազդի վերջինների դիմամիկայի վրա: Նման վերաբերմունք ունեցող քաղաքացիները Հայաստանում շուկայական հարաբերությունների, քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական կառավարման խնդիրները բացառապես պայմանավորում են երկրի ներքաղաքական զարգացումներով:

Բոլորը սահմանի համար, սահմանը՝ յուրաքանչյուրի

Այսպիսով, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում գործարար և հանրային շահերի հավասարակշռությունը, տնտեսական և քաղաքական գործընթացների փոխլրացումն ու երկրում սոցիալական արդարության անխաթարությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է առաջին հերթին երաշխիքներ ստեղծել կարգավորման գործընթացի արդյունքում տնտեսական մրցակցության ընդլայնման և ծագող տնտեսական հնարավորությունների մենաշնորհումը բացառելու համար: Ավելին, անհրաժեշտ է հնարավորինս լուսաբանել այդ երաշխիքները, փոխելու համար խնդրի հանդեպ ձևավորված աննպաստ և բացասական վերաբերմունքը: Միաժամանակ, անհրաժեշտ է գործարարներին ներգրավել նման երաշխիքների մշակման և լուսաբանման գործընթացում: Մասնավորապես, նպաստավոր հասարակական կարծիքի ձևավորումը կարող են խթանել կարգավորման գործընթացի տնտեսական

ազդեցության հեռանկարների վերլուծությունները, այդ թվում և առաջին հերթին՝ հենց հայաստանյան խոշոր գործարարների կողմից: Նման վերլուծությունները կարող են անդրադառնալ հիմականում ներմուծվող լայն սպառման ապրանքների գների հնարավոր դինամիկային, երկրում արտադրվող գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների արդյունաբերական գնումների խնդիրներին և դրանց կազմակերպման հնարավոր մեխանիզմներին, այդ թվում՝ պարտավորություններին (օրինակ, խաղողի, տոմատի, կաթի և այլ գյուղատնտեսական ապրանքների մթերման հեռանկարների վերաբերյալ պարտավորություններ՝ վերամշակող խոշոր ընկերությունների կողմից, ֆյուչերային պայմանագրերի կնքման մեխանիզմ): Օրենսդրորեն հարկ է ամրագրել նաև պետական կարիքների համար գնումները հնարավորինս կամ բացառապես տեղական արտադրողներից կատարելու դրույթները և այլն: Անհրաժեշտ է կանոնավոր կերպով լուսաբանել կարգավորման գործընթացի վրա գործարար հարաբերությունների դրական կամ բացասական ազդեցությունը:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Ռուսաստանի Դաշնության ազդեցությունն ու դերակատարումը

Օրինվի Էն սհա՛թը

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Ռուսաստանի Դաշնության ազդեցության ու դերակատարման, ինչպես նաև կարգավորման գործընթացում հյուսիսային գերտերության շահերի ընկալումը մեր քաղաքացիների շրջանում, ընդհանուր առմամբ հակասական է: Այսպես, քաղաքացիների մի մասը գտնում է, որ Ռուսաստանը շահագրգիռ է երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորմամբ, իսկ Հայաստանի և Ռուսաստանի շահերը համընկնում են այս գործընթացում: Ուստի զարմանալի չէ, որ Ռուսաստանի ազդեցությունը տարածաշրջանում և ակտիվ դերակատարումը կարգավորման գործընթացում քաղաքացիները համարում են մեր երկրի համար նպաստավոր ու խրախուսելի, իսկ ՌԴ ազդեցության ընդլայնումը տարածաշրջանում և երկրում հաճախ ընկալում են որպես թուրքական ազդեցությանը դիմակայելու երաշխիք: Քաղաքացիներ համարում են, որ Ռուսաստանի գերիշխող դերակատարումը, մասնավորապես, պայմանավորված է երկրի ենթակառուցվածքներում ռուսական կապիտալի գերակշիռ մասնակցությամբ, ուստի գտնում են, որ Հայաստանը պիտի համադրի իր շահերը հյուսիսային գերտերության շահերին կամ, առնվազն, օգտվի շահերի պատահական համընկնումից, այդ թվում տարածաշրջանային տարանցիկ Էներգետիկ և հաղորդակցության ծրագրերի առումով: Քաղաքացիները համարում են, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորումը հնարավոր չէր լինի առանց ռուսական կողմի համաձայնության և միջնորդության, իսկ ոմանք գտնում են, որ հենց Ռուսաստանն է կարգավորման իրական նախաձեռնողը: Քաղաքացիները կարծում են, որ հայկական մեծ համայնքի առկայությունը Ռուսաստանում այդ երկրին ստիպում է չանտեսել հայկական շահերը:

Լենինն ու Ալին

Հատկանշական է, որ քաղաքացիների մի մասին մտահոգում է երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման գործընթացում Ռուսաստանի զգալի դերակատարման հնարավորությունը, իսկ նման ընկալումը վերաճում է ողջ գործընթացի հանդեպ մտահոգության ու բացասական վերաբերմունքի: Այսպես, քաղաքացիների մի մասը համարում է, որ երկու երկրների հարաբերությունների կարգավորումը ծառայում է բացառապես Ռուսաստանի տնտեսական շահերին՝ ի հաշիվ հայկական շահերի, այդ թվում՝ ռուս-վրացական հակամարտության սրման պարագայում: Ռուսաստանում հայերի հանդեպ վերաբերմունքը քաղաքացիները հակադրում են Թուրքիայում հայերի հանդեպ վերաբերմունքին, և երկրորդը համարում առավել նպաստավոր: Հայաստանյան ենթակառուցվածքներում ռուսական կապիտալի գերիշխող մասնակցությունը քաղաքացիների ընկալմամբ մեկ այլ մարտահրավեր են, քանի որ հնարավորություն են ընձեռում սեփական տնտեսական և քաղաքական շահերին հետամուտ երրորդ երկրին միջամտել հարևան երկրների հարաբերությունների զարգացման դինամիկային: Քաղաքացիների ընկալմամբ Ռուսաստանի համար շահեկան է հարևանների հետ լարված հարաբերություններ ունեցող թույլ Հայաստանը:

Հատկանշական է, որ քաղաքացիները կարևորում են ոչ միայն Ռուսաստանի դերակատարումը Հայաստան-

Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում, այլև վերջինիս ազդեցությունը հայ-ռուսական հարաբերությունների զարգացման վրա: Այսպես, քաղաքացիներն ակնկալում են, որ սահմանի ապաշրջափակման ու Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման արդյունքում կթուլանա նաև Հայաստանի քաղաքական և տնտեսական կախվածությունն իր հյուսիսային բարեկամից և վերջինս այլևս էական միջնորդային դերակատարում չի ունենա Հայաստան-Թուրքիա հարաբերություններում: Ավելին, քաղաքացիները գտնում են, որ կարգավորման գործընթացում Հայաստանը պետք է պայմաններ առաջ քաշի և լրացուցիչ երաշխիքներ պահանջի հենց միջնորդ Ռուսաստանից, համարելով, որ Ռուսաստանի շահերը տարածաշրջանում դինամիկ են և հեռանկարում կարող են չհամընկնել կամ հակասել հայկական շահերին: Այսպես, քաղաքացիները, ռուսական և թուրքական շահերի մերձեցումը համարում են մարտահրավեր Հայաստանի շահերին, և մտահոգ են Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի արդյունքում երկրում և տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության հնարավոր մեծացման հեռանկարով: Քաղաքացիները մտահոգ են նաև հայ-թուրքական զինված հակամարտության պարագայում Ռուսաստանի դաշնակցային պարտականությունների կատարման խնդրում և կարծում, որ Ռուսաստանը բազմիցս «ծախել» է Հայաստանի շահերը: Քաղաքացիների մի մասը համարում է, որ հարաբերությունների կարգավորման գործընթացում հայ-թուրքական սահմանը պիտի վերահսկեն հայկական սահմանապահ ուժերը, մինչդեռ մյուսները գտնում են, որ ռուսական սահմանապահ ուժերը ռազմական անվտանգության երաշխիք են:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Ամերիկայի Միացյալ Նահանգների ազդեցությունն ու դերակատարումը

Կովկասյան պատուհան

Քաղաքացիների մի խումբը գտնում է, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի ներկա փուլը համընկնում է տարածաշրջանում ազդեցության նոր ուղի և միջոցներ ձեռք բերելու ԱՄՆ շահերին: Նրանք համարում են, որ գործընթացի արդյունքում մի կողմից կմեծանա ԱՄՆ-ի ազդեցությունը Թուրքիայում, իսկ տարածաշրջանում ԱՄՆ ազդեցության հիմնական կրողի՝ Թուրքիայի, քաղաքական մենաշնորհը կթուլանա: Հատկանշական է, անկախ կարգավորման գործընթացում Ռուսաստանի և ԱՄՆ-ի շահերի համընկնելու կամ հակասելու մասին ընկալումից, քաղաքացիները համարում են, որ Հայաստանը պիտի փորձի մանևրել երկու գերտերությունների շահերի համադրության արանքում և փորձի ցանկացած պարագայում շահած դուրս գալ: Քաղաքացիները համարում են, որ ԱՄՆ դիրքորոշումը կարգավորման գործընթացում մեծապես պայմանավորում է նրա գործընկերների վարքագիծը այս խնդրում, այդ թվում՝ ՆԱՏՕ-ի շրջանակներում: Այս առումով, քաղաքացիները համարում են նաև, որ ԱՄՆ ազդեցությունը էական է առաջին հերթին հենց Թուրքիայի վրա: Մի կողմից, Թուրքիայի համար խիստ դժվար է «դիմակայել» կարգավորման խնդրում ավագ գործընկերոջ ճնշմանը, առավել ևս՝ ընկալելով, որ գործընթացի արդյունքում ամերիկյան գործընկերոջ համար նվազելու է թուրք-ամերիկյան համագործակցության կարևորությունը: Միաժամանակ, քաղաքացիները համարում են, որ Թուրքիան եղել և մնում է ԱՄՆ կարևորագույն գործընկերը տարածաշրջանում և ԱՄՆ-ն այս երկրի շահերը էականորեն վտանգող որևէ բայլ չի անի, այդ թվում՝ Ցեղասպանության ճանաչման գործում:

Սիրե՞ք կարգավորումը ձեր մեջ, ոչ երբեք՝ ձեզ կարգավորման մեջ

Այսպես, քաղաքացիները համարում են, որ Ցեղասպանության ճանաչման գործում ԱՄՆ-ին հնարավորություն է ընձեռում, մի կողմից, ազդել երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման գործընթացում Թուրքիայի քաղաքականության վրա, իսկ մյուս կողմից՝ կարգավորման գործընթացն օգտագործել տարածաշրջանում իր ռազմավարական գործընկերոջ շահերին հակասող Ցեղասպանության ճանաչման գործընթացը սառեցնելու համար: Քաղաքացիները համարում են, որ Ցեղասպանության ճանաչման խնդիրը ԱՄՆ համար սեփական քաղաքացիների՝ ամերիկահայերի խնդիրը պիտի լինի և չպետք է շահարկվի Հայաստան-Թուրքիա հարաբերություններում ազդեցություն ձեռք բերելու նպատակով: Քաղաքացիները համարում են, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման և տարածաշրջանում խաղաղության և կայունության զարգացման գործընթացները կնպաստեն ԱՄՆ-

Թուրքիա հարաբերությունների պարզեցմանը, ինչի արդյունքում հեռանկարում կշահի ԱՄՆ կողմից Ցեղասպանության ճանաչման գործընթացը:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Վրաստանի ազդեցությունն ու դերակատարումը

Փախուստ Մետեխից

Քաղաքացիների ընկալման մեջ արմատավորված է տարածաշրջանում և Հայաստանի քաղաքական ու տնտեսական կյանքում Վրաստանի դերակատարման վրա Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի նպաստավոր ազդեցությունը: Այսպես, քաղաքացիները համարում են, որ հարևան Վրաստանը, ըստ էության, ոչ միայն օգտվում է Հայաստանի երկկողմ շրջափակման մեջ գտնվելու իրողությունից, այլև հաճախ շահարկում է առավելապես իր տարածքով կատարվող հայկական բեռնափոխադրումների գործոնը: Քաղաքացիները ակնկալում են, որ Հայաստանի արևմտյան սահմանի ապաշրջափակման և դեպի արտաքին շուկաներ այլընտրանքային ճանապարհների առկայության պարագայում կթուլանա «Հայաստանի կոկորդ սեղմող ձեռքը»: Քաղաքացիները ակնկալում են նաև, որ կարգավորման գործընթացը հնարավորություն է ընձեռում մեր երկրին դուրս գալու Վրաստանի անհուսալի և անկանխատեսելի արտաքին քաղաքականության «պատանդի» կարգավիճակից, ինչպես նաև հայտնվել առավել շահեկան առևտրային պայմաններում, ինչի արդյունքում արտաքին շուկայում հայկական ապրանքները կդառնան առավել մրցունակ, իսկ ներկրվող ապրանքների գները՝ կիջնեն: Քաղաքական առումով: Չարմանալի չէ, որ նման վերաբերմունքի պարագայում քաղաքացիները համարում են, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացը Վրաստանին շահեկան չէ, և մեր հարևանը հնարավորինս խոչընդոտելու է մյուս երկու հարևանների միջև հարաբերությունների կարգավորմանն և ձգտելու է պահպանել Հայաստանի համար Յուլսիսային դարպասի ու «կյանքի ուղու» իր բացառիկ կարգավիճակը: Քաղաքացիները չեն բացառում նաև, հեռանկարում հայ-վրացական հարաբերությունների լարումը՝ տարածաշրջանում երկու երկրների շահերի բախման, Վրաստանի ներքաղաքական և արտաքին քաղաքական անկայունության և այլ պատճառներով, որոնք մարտահրավեր են արտաքին աշխարհի հետ Հայաստանի տնտեսական և ռազմա-քաղաքական հաղորդակցության ուղիների համար: Այս առումով, հատկապես հատկանշական է քաղաքացիների շրջանում հյուսիսային հարևանի հանդեպ վստահության պակասի խնդիրը, ինչը մասամբ պայմանավորված է վերջին շրջանում Վրաստանում հայկական եկեղեցիների կարգավիճակի շուրջ սուր հակասություններով:

Նորաշենի դողանջները

Քաղաքացիների ընկալմամբ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորումը կնպաստի նաև վրաստանաբնակ հայերի զարգացմանը, ինքնության պահպանմանը, Վրաստանում հայկական պատմամշակութային և հոգևոր արժեքների պահպանմանը, պատմական հայրենիքում բնակվող ջավախահայության առկա խնդիրների առավել հայանպաստ լուծմանը, քանի որ Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն կունենա հարևան երկրի հետ հարաբերությունները կառուցել առավել շահեկան քաղաքական և տնտեսական դիրքերից: Միաժամանակ, քաղաքացիները համարում են, որ Վրաստանի հասարակության մեջ վրացահայերի ինտեգրումը խրախուսող պետական քաղաքականության արդյունքում հայ համայնքը հարևան երկրում հզորացել է:

Հայացք Թումանյանի աչքերով

Քաղաքացիները համարում են, որ հայ-վրացական հարաբերություններում բացակայում են այն պատմական խոչընդոտներն ու բարդությունները, որոնք առկա են հայ-թուրքական հարաբերությունների պարագայում, իսկ Վրաստանի տարածքով ներկրվող կամ արտահանվող ապրանքների համեմատաբար բարձր գինը պայմանավորում են առավելապես Հայաստանի տնտեսության և շուկայի թերություններով:

«Գորտը մեծ պարուն է տաքուկ ջրհորին, դուրս ելավ, բաժին է վիշապի փորին...»

Քաղաքացիների ընկալմամբ, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի նախաձեռնությունը մասամբ պայմանավորված է վերջին տարիներին վրաց-ռուսական հարաբերությունների լարվածությամբ և հեռանկարում դրանց սրման հավանականությամբ: Քաղաքացիները համարում են, որ Ռուսաստանի և Վրաստանի հարաբերությունների վատթարացումը լրջագույն մարտահրավեր է Հայաստանի տնտեսական և ռազմա-քաղաքական անվտանգությանը, ինչը ապացուցեց 2008-ի ռուս-վրացական հնգօրյա պատերազմը: Ավելին, քաղաքացիների ընկալմամբ, ռուս-վրացական լարված հարաբերությունները Ռուսաստանին հնարավորություն են ընձեռում խնդիրը շահարկելու միջոցով մեծացնել ազդեցությունը Հայաստանում: Քաղաքացիները համարում են, որ հարաբերությունների կարգավորման գործընթացը, մասնավորապես, կնվազեցնի Հայաստանի խոցելիությունը ռուս-վրացական հակամարտության պարագայում:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի ազդեցությունը հայ-ադրբեջանական հարաբերությունների վրա

Երկրորդ գլխի դեգերումները

Քաղաքացիների ընկալման մեջ արմատավորված է այն վերաբերմունքը, որ, թեպետ Ադրբեջանական իշխանություններն ու հասարակությունը ներկայում տարակուսում և վրդովված են «մեկ ազգի» «երկրորդ պետության» վարած արտաքին քաղաքականության կապակցությամբ, ընդհանուր առմամբ, թուրք-ադրբեջանական գործընկերության վրա Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացն էական ազդեցություն չի թողնի, քանի որ այդ երկրների շահերը սերտորեն փոխկապակցված են, իսկ ադրբեջանական արտաքին քաղաքականությունը գտնվում է Թուրքական ազդեցության ներքո: Քաղաքացիները մտահոգ են կարգավորման գործընթացում Թուրքիայի կողմից ադրբեջանական շահերի ներառման և դարաբաղյան հակամարտության հետ երկու երկրների հարաբերությունների կարգավորման գործընթացը աղերսելու հեռանկարով: Նախիջևանի հանդեպ Թուրքիայի պորտեկտորատը քաղաքացիներն ընկալում են որպես ժամանակի շղարշի տակ թաքնված ակառ: Քաղաքացիները համարում են նաև, որ Թուրքիայի կողմից Հայաստանի արևմտյան սահմանի ապաշրջափակումը, ըստ էության, ապաշրջափակում է նաև մեր արևելյան հարևանի՝ Ադրբեջանի, դեպի արևմուտք հաղորդակցության ուղիների սահմանը, հեռանկարում ապահովելով Ադրբեջանի և Թուրքիայի միջև ցամաքային կապը և դրա համար անհրաժեշտ ենթակառուցվածքների մի մասի՝ Հայաստան-Թուրքիա հատվածի, ձևավորում արդեն այսօր: Ընդհանուր առմամբ, քաղաքացիները գտնում են, որ հայ-ադրբեջանական հարաբերությունները Հայաստան-Թուրքիա հարաբերություններին «խառնելը» անթույլատրելի է և խիստ անշահեկան:

Tail wags the dog?

Քաղաքացիների մեկ այլ խումբը համարում է, որ Թուրքիան, արտաքին և ներքին քաղաքական գերակայությունների ձևավորված շրջանակներում (թրդական հարց, ԵՄ ինտեգրում, Հյուսիսային Կիպրոս, հայոց ցեղասպանության մերժողականություն, արաբական աշխարհ և այլն), հետամուտ է բացառապես սեփական շահերին, լարախաղացի ճկունությամբ փորձում է տվյալ պահին առավել նուրբ կամ խոցելի խնդիրները ետին պլան մղել նվազ խոցելի, «պայթուցիկ» կամ կարևոր խնդիրներին լուծումներ տալու հաշվին, անհրաժեշտության դեպքում՝ նաև երկրորդական հարցերում զիջումների գնալով: Չարմանալի չէ, որ շատ քաղաքացիներ գտնում են, որ Թուրքական քաղաքականությունը Ադրբեջանի շահերի պատանդը չէ: Քաղաքացիների մի խումբը համարում է, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորումը կնպաստի նաև հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորմանը և սահմանի բացմանը, ինչու չէ՝ նախքան դարաբաղյան հակամարտության վերջնական լուծումը:

Մի խաչի՛ր, որ չխաչվես

Քաղաքացիները Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացման և անվտանգության ապահովումը համարում են համահայկական օրակարգի բացառիկ գերակայություն և հայ ժողովրդի մեծագույն ձեռքբերում: Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացը քաղաքացիների մի մասի ընկալմամբ որևէ եական ազդեցություն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վրա ունենալ չի կարող, քանի որ խնդրի լուծումը կախված է ոչ այնքան Հայաստանի կամ Թուրքիայի հարաբերությունների օրակարգով, այլ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրացված իրավունքով: Քաղաքացիները նաև գտնում են, որ երկու գործընթացները թեև կարող են որոշակիորեն ազդել մեկը մյուսի վրա, սակայն չպետք է փոխկապակցվեն և մասն գուգահեռ՝ «չխաչվելով», այլապես կարող են վտանգել խաղաղ կարգավորման նուրբ գործընթացը, ապակայունացնել տարածաշրջանը, ինչը վստահության կատարյալ ճգնաժամի պայմաններում կարող է փոքրածավալ զինված ընդհարումների կամ լայնածավալ պատերազմի մարտահրավերներ ստեղծել պայթուցավտանգ տարածաշրջանում:

Միջնորդություն, թե՛ միջամտություն

Ավելի՛ն, քաղաքացիների մյուս խումբը գտնում է, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում դարաբաղյան հակամարտության կարգավորման գործոնի շահարկման յուրաքանչյուր փորձ պիտի արժանանա Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության խիստ արձագանքին, այդ թվում՝ շահարկումները բացառելու վերաբերյալ թուրքական կողմի պաշտոնական հրապարակային հայտարարություններ պահանջելու միջոցով: Քաղաքացիները նման դիրքորոշումը հիմնավորում են դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում Թուրքիայի բացառիկ կողմնակալությամբ և մտավախություն ունեն, որ երկու երկրների միջև կարգավորման գործընթացը կարող է մտնել փակուղի՝ դարաբաղյան խնդրում թուրքիայի անճկուն և կոպիտ քաղաքականության, միջամտելու և ոչ բնավ միջնորդելու մղումով: Նման վերաբերմունքը քաղաքացիները հիմնավորում են կարգավորման գործընթացը դարաբաղյան հակամարտությամբ անմիջականորեն պայմանավորվելու թուրքական իշխանությունների բազմիցս հնչեցրած «հետևողական» հայտարարություններով:

Նվազ կողմնակալ ու առավել ճկուն

Քաղաքացիների մի մասը համարում է, որ երկու երկրների հարաբերությունների կարգավորումը կնվազեցնի Թուրքիայի ազդեցությունը դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի վրա, որովհետև կվերանա ազդեցության հիմնական լծակը՝ շրջափակումն ու ապաշրջափակման նախապայմանը: Ուստի քաղաքացիների այս խումբն ակնկալում է, որ դարաբաղյան հակամարտության կարգավորման խնդրում Թուրքիան հեռանկարում կլինի նվազ կողմնակալ և առավել ճկուն: Ավելի՛ն, քաղաքացիները գտնում են, որ երկու երկրների հարաբերությունների կարգավորումը կամրապնդի Հայաստանի դիրքերը դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում:

Déjà vu

Քաղաքացիների մեկ այլ խումբ հակառակ կարծիքի է, համարում է, որ երկու երկրների հարաբերությունների կարգավորման գործընթացը կխթանի դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում առավել մեծ դերակատարում ստանձնելու և ազդեցություն ունենալու Թուրքիայի հավակնությունները: Նման վերաբերմունքը քաղաքացիները հիմնավորում են թուրքական լրատվամիջոցներում շարունակաբար հնչող և հայ հասարակությանը մատչելի կարծիքներով: Ընդ որում, Թուրքիայի դերակատարման ընդլայնումը քաղաքացիներն ընկալում են միանշանակորեն բացասական: Ավելի՛ն, քաղաքացիները մտավախություն ունեն, որ դարաբաղյան հակամարտության կարգավորման ընթացքը կարող է բացասաբար ազդել երկու երկրների հարաբերությունների վրա, և գտնում է, որ մեկ անգամ նման քայլ կատարած Թուրքիան կարող է կրկին շրջափակել Հայաստանը՝ անհրաժեշտության դեպքում մարտահրավեր նետելով միջազգային հանրությանը կամ այլ խնդրում փոխզիջման գնալու գնով:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Իրանի Իսլամական Հանրապետության ազդեցությունն ու դերակատարումը

Հազար ու մի գիշեր

Քաղաքացիները ընկալմամբ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացը կարող է ներառել անկախացումից հետո Հայաստան-Իրան սահմանի բացմանը հետևած, քաղաքացիների գնահատմամբ՝ բացասական երևույթներն ու մարտահրավերները: Մասնավորապես, քաղաքացիները բացասաբար են վերաբերվում Հայաստանում իրանցիների կողմից անշարժ գույքի ձեռքբերմանն ու վարձակալմանը և համարում, որ նման սցենարը կրկնվելու է թուրքահայատականների պարագայում ևս: Քաղաքացիները նշում են նաև Իրանից Հայաստան ներկրված առանձին ապրանքների ցածր որակն ու գտնում, որ ցածրորակ ու էժանագին ապրանքների նման լայնածավալ ներհոսք սպառնում է Թուրքիայից՝ արևմտյան սահմանի ապաշրջափակումից հետո: Միաժամանակ, քաղաքացիները Իրանի օրինակով նշում են, որ բաց սահմանը երաշխիք չէ հարևան երկրում տնտեսական գործունեություն իրականացնելու կամ բնակություն հաստատելու և գույք ձեռք բերելու համար, նման ընկալումը փաստելով առկա խոչընդոտներով և սահմանափակումներով:

Ուղիների ցախավելը

Քաղաքացիները չեն բացառում նաև, որ տարածաշրջանային անկայունության պարագայում, Իրանի սահմանը մտնում է խոցելի և աննպաստ պայմաններում կարող է փակվել, Հայաստանի ազգային անվտանգության համար ստեղծելով տնտեսական ու քաղաքական անկանխատեսելի մարտահրավերներ: Քանի դեռ հարևան Իրանի միջուկային էներգետիկայի զարգացման ծրագիրը հարուցում է միջազգային հանրության տարակուսանքն ու դժգոհությունը, Հայ-Իրանական սահմանը պատշաճ կերպով անվտանգ չէ: Քաղաքացիները գտնում են, որ միջազգային հանրությունը բավարար կերպով չի պատկերացնում Հայաստանի առջև կանգնած այս մարտահրավերը: Միաժամանակ, քաղաքացիները նշում են, որ նման պայթուցավտանգ իրավիճակում անգամ, հարավային ուղին կենսական նշանակություն ունի մեր երկրի համար և նման «կենարար խողովակն առավել նախընտրելի է, քանի մի քանի թունավորը»:

Հատկանշական է, որ քաղաքացիները նշում են հարավային և հյուսիսային ուղիների պահպանման կարևորությունը՝ բաց, և, թերևս, առավել էժան արևմտյան ուղու առկայությամբ անգամ, համարելով, որ Հայաստանի տնտեսական և քաղաքական անվտանգության և անկախության երաշխիքը ոչ թե այս կամ այն սահմանն է, այլ դրանց բազմազանությունը և այլընտրանքների առկայությունը: Նման մոտեցումը հիմնավորվում է հետևյալ փիլիսոփայությամբ. «Մի քանի վատ ուղիների միջև ընտրության հնարավորությունն ավելի լավ է, քան մեկ լավ ուղին»:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում միջազգային հանրության ազդեցությունն ու դերակատարումը

Փբուն առազաստով մակույկը

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում միջազգային հանրության դերակատարման հանդեպ քաղաքացիների վերաբերմունքը միանշանակ չէ: Այսպես, քաղաքացիների մի մասը գտնում է, որ կարգավորման գործընթացի հանդեպ միջազգային ատյանների վերահսկողությունը շահեկան է: Ավելին, քաղաքացիները համարում են, որ կարգավորման գործընթացն առանց միջազգային հանրության միջնորդության կմտնի փակուղի: Քաղաքացիները գտնում են, որ կարգավորման գործընթացի նախաձեռնությունը մասամբ պատկանում է միջազգային հանրությանը, որի համար փակ սահմաններն անընդունելի են ներկա դարձնում, ինչպես նաև համաշխարհային ուժի կենտրոններին՝ գերտերություններին, որոնց շահերը ներկայում պահանջում են կարգավորել երկու երկրների միջև հարաբերությունները, քանի որ Հայաստանն ու տարածաշրջանը խաչմերուկ են այդ շահերի բախման ու համադրման համար:

Հատկանշական է, որ քաղաքացիները համարում են, որ կարգավորման գործընթացում Հայաստանը պիտի փորձի իր շահերը համադրել գերտերությունների պատեհական շահերին կամ առնվազն հաշվի նստի այդ

շահերի հետ տակտիկական առումով: Այսպես, քաղաքացիները համարում են, որ գերտերությունների և միջազգային հանրության շահերին համահունչ վարքագծի դեպքում Հայաստանը կարող է հասնել իր նպատակներին, անգամ առանձին հարցերում հարևան երկրի դժկամության պարագայում: Հատկանշական է, որ քաղաքացիները համարում են, որ կարգավորման գործընթացը շահեկան է հենց Հայաստանի ու Թուրքիա, և ապա միայն գերտերությունների համար: Միաժամանակ, քաղաքացիները գտնում են, որ գերտերությունների շահերը հարկ է ընկալել որպես օբյեկտիվ արտաքին գործոն, որոնք պետք է խելամտորեն օգտագործել կամ մեղմել դրանցով պայմանավորված մարտահրավերները, այլ ոչ թե թաքնվել դրանցից, կամ դրանք պատճառաբանելով հրաժարվել նախաձեռնողական արտաքին քաղաքականություն վարելուց: «Օտարի շահը քամի է: Եթե վախենում ես, քամուց, պիտի ընդհանրապես ծով չմտնես, այլ պառկես ափին: Սակայն այդպես ափին էլ կմնաս»: սա է նման վերաբերմունքի փոխհարաբերությունը:

Քամուց քշվածները

Քաղաքացիների մեկ այլ խումբ հակառակ կարծիքի է, և համարում է, որ գերտերությունները և միջազգային հանրությունը չպետք է միջամտեն երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման գործընթացին, քանի որ նրանց շահերը կործանարար են մեր երկրի ու ժողովրդի համար: Նման վերաբերմունք ունեցողները գտնում են, որ Հայաստանն ու Թուրքիան պիտի ինքնուրույն՝ առանց միջնորդների, լուծեն իրենց միջև առկա խնդիրները: Քաղաքացիները համարում են, որ միջազգային հանրությունը ի վիճակի չէ լուծել երկու երկրների միջև առկա հիմնախնդիրներն ու փոխադարձ պահանջներն ու հավակնությունները, այլ կարող է սոսկ ժամանակավորապես լռեցնել դրանց բարձրաձայնումը: Ավելին, քաղաքացիները համարում են, որ հենց գերտերությունները պիտի ստիպեն Թուրքիային ապաշրջափակել սահմանն ու գնալ գիշումների, քանի որ հարաբերությունների կարգավորումը բխում է հենց գերտերությունների շահերից, ուստի և Հայաստանը չպետք է որևէ փոխգիշում կատարի կարգավորման գործընթացում ընդհանրապես: Նման կարծիքը քաղաքացիները հիմնավորում են Թուրքիայի հանդեպ գերտերությունների նկատելի ճնշմամբ և գտնում են, որ եթե Հայաստանը փոխգիշումներ չանի անգամ, Թուրքիայի հանդեպ քաղաքական ճնշումները կշարունակվեն և Թուրքիան հարկադրված կլինի գիշումների գնալ, քանի որ. «Յուրաքանչյուր պետության վրա ամենամեծ ազդեցությունն ունի ավելի մեծ պետությունը»: Այդուհանդերձ, քաղաքացիների մեկ այլ խումբ համարում է, որ միջազգային հանրությունը Հայաստանի հանդեպ ևս ճնշումներ կգործադրի, եթե Հայաստանը չգնա փոխգիշումների, ինչը մի կողմից մարտահրավեր է, իսկ մյուս կողմից՝ մանևրելու հնարավորություն:

Опять Гуськов!

Քաղաքացիների մի խումբը համարում է, որ գերտերությունները կարգավորման գործընթացում էական շահեր ընդհանրապես չունեն կամ նրանց շահերը չեն համընկնում հայկական շահերին, ինչպես օրինակ Թուրքիան մասնատելու առանձին գերտերությունների շահի պարագայում: Մեկ այլ խումբ նշում է, որ կարգավորման գործընթացը հակադրվում է տարածաշրջանի առանձին երկրների, այդ թվում՝ Ադրբեջանի, Վրաստանի և Իրանի շահերին: Քաղաքացիները գտնում են, որ կարգավորման գործընթացը կարող է սրել գերտերությունների շահերի բախումը տարածաշրջանում, որի արդյունքում էականորեն տուժելու է համեմատաբար թույլ կողմի՝ Հայաստանի, շահը: Հատկանշական է, որ Հայոց Ցեղասպանությունը քաղաքացիները համարում են գերտերությունների բախման արդյունք: Նման մտավախություն ունեցողները կարգավորման գործընթացում գերտերությունների փոփոխական շահերն ու դերակատարումը, ընդհանուր առմամբ, համարում են մարտահրավեր, ոչ՝ հնարավորություն, որին անհրաժեշտ է դիմակայել: Քաղաքացիները գտնում են, որ գերտերությունների շահերի բախմամբ պայմանավորված մարտահրավերներին Հայաստանը կարող է ավելի լավ դիմակայել, եթե ինդրի լուծմանը պետությունից բացի լծվեն նաև քաղաքացիական հասարակությունը, գործարար հատվածն ու հայկական Սփյուռքը:

Յեռնման կետի ստացական Դանկոյին

Քաղաքացիների մասը խրախուսում է Հայաստանի քաղաքական ղեկավարության դերակատարումը երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման գործընթացում: Քաղաքացիների այս խումբը, ընդհանուր առմամբ, ողջունում է ինդիքի լուծմանն ուղղված երկրի Նախագահի նախաձեռնությունը և պատասխանատվության ստանձնումը, չբացառելով անգամ այդ գործընթացում հնարավոր սխալները: Քաղաքացիները սպասողական և ռեակտիվ՝ «ոսկորին հասած դանակի դեպքում միայն շարժվող», քաղաքականությունը համարում են վտանգավոր, և կողմնակից են կարգավորման գործընթացում առավել ակտիվ և նախաձեռնող՝ «քայլ առ քայլ առաջ գնացող, այլ ոչ՝ մեծ-մեծ խոսող» քաղաքականությանը, սակայն նշում են, որ նման քաղաքականությունը պահանջում է հետևողական, բայց և՛ ճկուն դիվանագիտություն: Քաղաքացիների զգալի մասը ցանկանում է հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստանին տեսնել «թելադրողի» դերում: Ավելին, քաղաքացիները համարում են, որ արտաքին քաղաքական գործընթացի հաջողությունն ու շահեկանությունը պայմանավորված են պետական կառավարման, տնտեսության և բանակի բարեփոխումների նախաձեռնությամբ և ընթացքով:

Սև կատուն մուտ սենյակում է

Կարգավորման գործընթացը քաղաքացիներն ընկալում են որպես երկրի արտաքին քաղաքական գործունեության ակտիվ դրսևորում և հնարավորություն՝ միջազգային հարաբերություններում երկրի քաղաքական վարկն ու քաշը մեծացնելու համար: Քաղաքացիները համարում են, որ հայ դիվանագիտության և պետականության կարողությունների համեմատությունը այլ երկրների, այդ թվում՝ Թուրքիայի համեմատ, չպետք է ընկալել որպես կղզիացման պասսիվ-սպասողական-ռեակտիվ՝ «բռն բվի» քաղաքականության արդարացում: Ընդհանուր առմամբ, քաղաքացիները պատասխանատվությամբ են վերաբերվում կարգավորման գործընթացին և համարում, որ դրանում յուրաքանչյուրն ունի գործունեության և անգործության համար պատասխանատվության սեփական բաժինը: Այսպես, քաղաքացիները համարում են, որ ներկա սերունդն ու քաղաքական գործիչները պատասխանատու են գալիք սերունդներին զարգացման առավել նպաստավոր պայմաններ թողնելու համար: Քաղաքացիները համարում են, որ հայ-թուրքական հարաբերությունների վերջնական կարգավորումը սերնդափոխություններ է պահանջում, սակայն յուրաքանչյուր սերունդ ունի անելիքի սեփական բաժինը: Նրանք նաև ակնկալում են, որ հայ-թուրքական հարաբերությունները հեռանկարում ազդելու են մեր մտածելակերպի և ցանկությունների վրա նույն կերպ, ինչպես մեր մտածելակերպն ու ցանկություններն են ազդում հարաբերությունների վրա:

Բարաթը կարելի է չգնտել, չփնտրել՝ չի կարելի

Քաղաքացիները համարում են, որ ուժեղ հակառակորդի կամ գործընկերոջ հետ «ջայլամի քաղաքականությունն» ու մեկուսանալը անօգուտ են, քանի որ նրա հետ հարաբերություններն անխուսափելի են: Նրանք գտնում են, որ հայկական դիվանագիտությունն ու արտաքին քաղաքականության դպրոցը կգարգանան «արժանի հակառակորդի հետ խաղում», իսկ «հաղթող կամ պարտվող կարող է լինել միայն խաղացողը և հաղթանակի համար պայքարողը»: Ավելին, քաղաքացիները համարում են, որ արտաքին քաղաքական կղզիացման պարագայում, երբ Հայաստանի ինդիքների լուծումը ստանձնում են երրորդ երկրները, երկրի շահերը մնում են անպաշտպան, իսկ «իր հարաբերությունները սեփական պայմաններով չկարգավորողը, պարտադրված է դրանք կարգավորել ուրիշի պայմաններով»: Հատկանշական է, որ քաղաքացիները Թուրքիայի շահագրգռությունն ու մասնակցությունը գործընթացում հնարավորություն են համարում հարևան երկրից զիջումներ ձեռք բերելու համար: Քաղաքացիները գործընթացը գնահատում են որպես սեղանի շուրջ հարևանների միջև առկա կնճռոտ հարցերը «երես-երեսի» քննարկելու հնարավորություն: Ավելին, քաղաքացիները համարում են, որ կարգավորման ներկա փուլում Հայաստանը գործընթացի լիարժեք մասնակից է, որն իրական ազդեցություն և դերակատարում ունի գործընթացում, մինչդեռ մեկուկես տասնամյակ առաջ սահմանի շրջափակման ընթացքում Հայաստանը որևէ դեր կամ ազդեցություն ժամանակի իրավիճակում չունեցավ: Քաղաքացիների ընկալմամբ բանակցությունները պարտադիր են, թե՛ դաշնակից-բարեկամների, թե՛ մրցակից-հակառակորդների հետ:

Քայլ կաղ ձիով

Քաղաքացիների մի խումբը կարգավորման գործընթացը համարում է արտաքին ուժերի անայլընտրանք հարկադրանքը և գտնում, որ մեր երկիրը կարող է միայն «ատամները սեղմած» պատրաստվել հետևանքներին: Քաղաքացիների մեկ այլ խմբի համար հարաբերությունների կարգավորման հայկական նախաձեռնությունն ինքնին ողջունելի է, սակայն երրորդ կողմի միջնորդությունը նրանց պատկերացմամբ խաթարում է գործընթացը, իսկ դրա հետևանքները դարձնում անկանխատեսելի: Ավելին, կարգավորման գործընթացը քաղաքացիներին ներկայանում է որպես Հայաստանի համար միակողմանի զիջումների անվերջանալի շքերթ: Առավել հոռետես քաղաքացիները համարում են, որ Հայաստանն ի վիճակի չէ ինքնուրույն էական քայլեր կատարել կարգավորման գործընթացում, «զինվոր է՝ ուրիշի խաղում» և «անօգնական երեխայի պես հայտնվել է մայրուղու մեջտեղում»:

Արջի համբույր նապաստակին

Քաղաքացիների մեկ այլ խումբը համարում է, որ Հայաստանի մասնակցությունը կարգավորման նախաձեռնությանն արդարացված չէ, իսկ սահմանի ապաշրջափակումը Թուրքիայի միակողմանի քաղաքական որոշումն է, ուստի պիտի հանգուցալուծվի նույնպես միակողմանիորեն: Քաղաքացիները նախաձեռնությունը համարում են մարտահրավեր իրենց անվտանգությանը և բացասաբար վերաբերվում կարգավորման գործընթացին: Ստատուս քվոյի պահպանումը քաղաքացիների ընկալմամբ հնարավոր և շահեկան է, քանի որ սահմանի ապաշրջափակման գործում Թուրքիայի վրա ԵՄ ճնշումը քաղաքացիները համարում են որոշիչ, իսկ կարգավորման գործընթացը նրանց կարծիքով ժամանակավրեպ է, որևէ հնարավորություն չի ստեղծում, այլ առաջ է բերում բացառապես մարտահրավերներ: Ըստ էության, քաղաքացիների ընկալմամբ կարգավորման գործընթացում Հայաստանը կանգնել է վատի ու վատթարի ընտրության առջև: Հատկանշական է, որ քաղաքացիների ընկալմամբ լավ ապրելն ու անվտանգ ապրելը հակադրվում են միմյանց:

Պատերազմ կլոր սեղանի շուրջ

Քաղաքացիները գտնում են, որ «ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր» սկզբունքը վարագուրում է կարգավորման գործընթացի հնարավորությունները և հասարակության ուշադրությունը սևեռում է բացառապես վտանգների ու մարտահրավերների վրա, իսկ մտավախությունների կենտրոնում հայկական դիվանագիտության պարտության հեռանկարն է: Իսկ հայկական դիվանագիտության ներկա կարողությունները քաղաքացիներին ներկայանում են խիստ աննպաստ գույներով: Այսպես, քաղաքացիների մի մասը համարում է, որ արտաքին քաղաքական գերատեսչությունը սխալ կադրային քաղաքականության արդյունքում վերածվել է «տուրիստական գործակալության»: Հայ-թուրքական հարաբերությունները քաղաքացիներն ընկալում են որպես ուղեղների պատերազմ, իսկ կադրերը ձևավորվում են պատերազմների ժամանակ, ուստի դիվանագիտական կադրերը ձևավորվում են ուղեղների պատերազմներում: Քաղաքացիներն ակնկալում են, որ հայ-թուրքական «դիվանագիտական պատերազմը» պիտի ծնի «դիվանագիտության հերոսներին»:

Գայլից վախեցողն անտառի մասին

Թուրքական դիվանագիտությունը քաղաքացիները թերևս գերազնահատում են, «փափուկ բարձի» ասպետներին համարելով ահեղ և մրցակցությունից դուրս: Հարևան երկրի դիվանագիտության ուժը մեր քաղաքացիներին ներկայանում է թեև իրավիճակային, սակայն ճկուն և համոզիչ, իսկ «Եթե չես կարող բռունցքը կոտրել՝ համբուրի՛ր այն» փիլիսոփայությունը քաղաքացիների ընկալմամբ թուրք դիվանագիտությունը դարձնում է անկանխատեսելի և անվստահելի: Թուրքական դիվանագիտությանը համարժեք դիմակայելու համար, քաղաքացիների կարծիքով, հայ դիվանագիտությունը պիտի «մի աչքով շիլ լինի»:

Ում համար է պատվում ժամալաբը

Քաղաքացիների զգալի մասը համարում է, որ ներկա պահն առավել բարենպաստ է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման համար: Քաղաքացիները գտնում են, որ կարգավորման հետաձգումը՝ ստատուս քվոյի հետագա պահպանումը, նպաստավոր չէ Հայաստանի համար, քանզի «ժամանակը մեր օգտին չի աշխատում»: Որքան խնդիրն ուշ լուծվի, այնքան թույլ կլինեն մեր երկրի դիրքերն աշխարհաքաղաքական բեմում, ուստի լուծումն էլ կլինի նվազ հայանպաստ: Ավելին, քաղաքացիները համարում են, որ ստատուս քվոյի պահպանումը, ոչ միայն աննպաստ է զարգացման միտումների առումով, այլև որոշակի զին ունի, որը «կարգավորամետը» պիտի վճարի ներկայում կարգավորման ուղղությամբ քայլեր ակնկալող միջազգային հանրությանը: Անգործությունը քաղաքացիների ընկալմամբ հավասարազոր է պարտության, քանզի ստեղծված իրավիճակը Հայաստանին միայն թուլացնում է, մինչդեռ կարգավորմանն ուղղված յուրաքանչյուր գործողություն, հնարավոր վտանգներով հանդերձ, նպաստավոր լուծման՝ հաղթանակի, հնարավորություն է ստեղծում: Քաղաքացիների այս խումբը համարում է, որ կարգավորման լավագույն պահը միշտ մնալու է «երեկը»: Փաստարկների թվում, քաղաքացիները նշում են Թուրքիայում հայ համայնքի և հայ ինքնության պահպանման համար առավել նպաստավոր պայմանների ձևավորման, երկու ազգերի սերունդների միջև երկխոսության և համագործակցության համար առավել նպաստավոր միջավայրի ապահովման, ինչպես նաև փակուղուց դուրս գալու և աշխարհի հետ լիաթոք հաղորդակցության Հայաստանի հնարավորությունների զարգացման հրատապությունը: Կարգավորման գործընթացում առկա կարճաժամկետ ու միջնաժամկետ տեսանելի մարտահրավերները քաղաքացիները համեմատում են երկարաժամկետ հեռանկարում աշխարհաքաղաքական զարգացումների անկանխատեսելի մարտահրավերների հետ, և եզրակացնում, որ վերջիններն առավել վտանգավոր են: Քաղաքացիները համարում են, որ «անցյալին հարկավոր է նայել ապագայի պատուհանից», քանզի եվրախնտեզրման գործընթացում մեր երկիրը չպետք է ետ մնա հարևաններից: Քաղաքացիները եզրակացնում են, որ ներկա պահը նպաստավոր է զարգանալու համար, իսկ պահի ընձեռած հնարավորությունը չիրացնելը համարժեք է ապագա հնարավոր գոյապայթարում անհրաժեշտ կենսական ռեսուրսներից հրաժարվելուն:

Կեղծ մեկնա՞րկ

Քաղաքացիների մեկ այլ խումբ համարում է, որ կարգավորման նախաձեռնությունը ժամանակավրեպ է, քանզի ստատուս քվոն գործում է ի շահ Հայաստանի և խնդիրը հետագայում ավելի հայանպաստ լուծում կարող է ունենալ: Հնչող հիմնական փաստարկը կարգավորմանը տեխնիկապես պատրաստ չլինելու հանգամանքն է: Այսպես, քաղաքացիները համարում են, որ բուն կարգավորմանը պիտի նախորդեն երկարատև նախապատրաստական աշխատանքները: Միաժամանակ, քաղաքացիները գտնում են, որ կարգավորման հիմնական քաղաքական դրույթներին ներկայում համաձայնվելով, Հայաստանը ապագայում խրվելու է «մարտավարական խնդիրների ճահճում»: Ընդհանուր առմամբ, քաղաքացիների այս խումբը պատրաստ է «սպասել որքան անհրաժեշտ է, մինչև հակառակ կողմն ընդունի հայկական պահանջները»:

Շտապել դանդա՞ղ

Քաղաքացիների ճշող մեծամասնությունը համարում է, որ կարգավորման գործընթացում հետագա շտապողականությունը կարող է խաթարել գործընթացը, հանգեցնել աննպաստ ու հակասական արդյունքների և նոր մարտահրավերների: Քաղաքացիների ընկալմամբ, գործընթացը պահանջում է երկկողմ համարժեք քայլեր և վստահության աստիճանական ձևավորում: Քաղաքացիները կարգավորման գործընթացի պատասխանատուներից և միջնորդներից ակնկալում են «զգուշավոր խիզախություն» և «խիզախ զգուշավորություն»: Կարգավորման գործընթացում արագ զարգացումները, քաղաքացիների ընկալմամբ, բերում են անկանխատեսելի մարտահրավերներ և մեծացնում վտանգները, իսկ կողմերը թերևս պատրաստ չեն դրանք կառավարելու: Քաղաքացիները համարում են, որ երկրների և ժողովուրդների միջև ներկա հարաբերություններն ավելի քան սառն են, իսկ «սառը ջուրը հարկավոր է դանդաղ մտնել», այլապես՝ «մկաններդ կբռնվեն ու կուռվեն»: Ընդ որում, քաղաքացիները համարում են,

որ երկու ազգերի փոխադարձ վստահությունը ոչ միայն հետագա քայլերի իրական և շարունակական Նախապայմանն է՝ գործընթացի շարժիչ ուժն ու միջոցը, այլև գործընթացի կարևորագույն նպատակներից մեկը: Ավելին, քաղաքացիների ընկալմամբ, վստահության ձևավորումը հնարավոր է միայն «փոքր հաղթանակների» ճանապարհով, իսկ վստահության խաթարումը քաղաքացիները համարում են կարգավորմանը սպառնացող լրջագույն մարտահրավեր: Փոխադարձ վստահության պաշարն աստիճանաբար սպառելու կամ այն միանվագ կերպով զրոյացնելու պարագայում, կարգավորման գործընթացը կարող է ոչ միայն դանդաղել, այլև ընդհատվել ու շրջվել: Այս առումով, կարևորվում է վստահության համար մեծագույն մարտահրավերի՝ Ներքաղաքական գործընթացների և երրորդ երկրների հանդեպ Հայաստանի և Թուրքիայի վարած արտաքին քաղաքականության առավել հնչեղ ձայնի՝ քաղաքական ուղերձների հանդեպ երկու երկրների քաղաքացիական հասարակության «իմունիտետի» ձևավորումը: Միաժամանակ, փոխադարձ վստահությունը կարգավորման գործընթացի անշրջելիության և կայունության միակ երաշխիքն է: Միաժամանակ, քաղաքացիները համարում են, որ գերտերությունների մեծ ակնկալիքներն ու հետագա ճնշումները կարող են երկու երկրների իշխանություններին կանգնացնել քաղաքական ցայտնոտի առջև և անհարկի արագացնել գործընթացները: Քաղաքացիներին հատկապես մտահոգում է արագ գործընթացի ոչ հայանպաստ արդյունքների, մասնավորապես, աշխարհասփյուռ հայության տարբեր հատվածների պառակտման վտանգը: Ավելին, քաղաքացիները համարում են, որ արագ գործընթացի պարագայում երկու հասարակությունները կզրկվեն գործընթացին մասնակցելու և այն ըմբռնելու հնարավորությունից, ուստի գործընթացի ցանկացած ընթացք էականորեն կզրկվի քաղաքացիական հասարակության աջակցությունից՝ պատասխանատվությունը թողնելով բացառապես իշխանության, մասամբ նաև՝ միջնորդների, ուսերին: Նման պարագայում երկու իշխանությունների վերջին հույսը թերևս «ամրագոտիների ամրությունը» և «արգելակների հուսալիությունն» են: Եթե միայն երրորդ կողմը չսեղմի «արագացուցիչի ոտնակը»:

Լույս փշալարերի արանքում

Կարգավորման գործընթացի հեռանկարները քաղաքացիների ընկալմամբ հակասական են: Այսպես, քաղաքացիների մի մասը համարում է, որ Թուրքիայի կողմից սահմանի ապաշրջափակումը գործընթացի համար կդառնա շրջադարձային, և կարող է անշրջելի դարձնել կարգավորման գործընթացն ամբողջությամբ: Միաժամանակ, բաց սահմանը քաղաքացիների ընկալմամբ սոսկ անցակետ է՝ փշալարերի արանքում: Քաղաքացիները Հայաստանի անվտանգության երաշխիքը համարում են երկրի քաղաքական և տնտեսական հզորությունը, իսկ հարևանների կամ միջազգային հանրության երաշխիքներն ու խոստումները ընկալում են քաղաքական հայտարարությունների համատեքստում: Հետաքրքրական է, որ քաղաքացիների ընկալմամբ հարևան երկիրը կայսրություն է, որը հեռանկարում մասնատվելու է, ինչը Նոր մարտահրավերներ է ստեղծելու մեր երկրի համար: Ընդհանուր առմամբ քաղաքացիները լավատես են և երկարատև հեռանկարում ակնկալում են առկա բոլոր խնդիրների վերջնական հանգուցալուծում, տարածաշրջանում կայուն խաղաղություն, զարգացում և գործակցություն: Միաժամանակ, քաղաքացիները համարում են, որ կարգավորման գործընթացը տևական ջանքեր է պահանջելու տասնամյակներ շարունակ:

Փակ բաց-սահման

Քաղաքացիների մեկ այլ խումբ հռետեստորեն է տրամադրված և համոզված է, որ կարգավորման գործընթացը փշովելու է՝ զարկվելով բազմաթիվ «ստորջրյա խութերի», իսկ հեռանկարը ընկալում է բացառապես մութ գույներով: Այսպես, քաղաքացիները մտահոգ են, որ Թուրքիան կբավարարվի սահմանն ապաշրջափակելով, մինչդեռ կարգավորման իրական ընթացքը կսառնեցվի և երկու տնտեսությունները չեն իրացնի առկա հնարավորությունները: Քաղաքացիների համոզմամբ երկու երկրների հարաբերությունները կարող են էլ ավելի սրվել բաց սահմանի պարագայում անգամ: Ավելին, համաձայն տարածված կարծիքի, սահմանի ապաշրջափակումը ավելի վտանգավոր մարտահրավերներ է ստեղծելու Հայաստանի համար:

... ձայն Բազմաց՝ ձայն Աստուծոյ

Քաղաքացիների ընկալմամբ կարգավորման գործընթացում քաղաքացիական հասարակության ձայնը պիտի միանշանակորեն լսելի լինի: Ընդ որում, քաղաքացիների մի մասը համարում է, որ իշխանությունը հակված է լսելու հասարակության կարծիքը և փորձում է հաշվի առնել քաղաքացիական հասարակության դիրքորոշումները քաղաքականությունը մշակելիս և իրագործելիս: Ավելին, այս խումբը գտնում է, որ իշխանությունը կարգավորման խնդրում չի կարող քայլեր կատարել առանց քաղաքացիների մեծամասնության աջակցության, քանի որ հարկադրված կլինի պատասխանատվության բեռը կրել միանձնյա, իսկ պատասխան տալ՝ յուրաքանչյուրին: Առավել ակտիվ քաղաքացիները համարում են, որ այս խնդրում իշխանությունների և քաղաքացիական հասարակության մոտեցումների ներդաշնակությունը կարող է պայմանավորել իշխանության ղեկին կանգնած քաղաքական ուժերի ճակատագիրը: Միաժամանակ, համաձայն տարածված ընկալման, հանրային կարծիքի ամբողջական «ձայնադարանը» հայկական դիվանագիտությանը առավել ճկուն կդարձնի կարգավորման բանակցային գործընթացում:

Լսողություն բերանով

Քաղաքացիների մեկ այլ խումբ կարծում է, որ իշխանությունները ժողովրդի կարծիքը հաշվի չեն առնելու և որոշումները կայացնելու են միայն սեփական տեսակետից ու խմբային շահից ելնելով: Այս խումբը կարգավորման գործընթացում հասարակության ձայնը հնչեցնելու և լսելի դարձնելու փորձերը առավելապես դիտում է մանկապլյացիոն-ներգործական միջոցների համատեքստում: Նրանց հատկապես մտահոգում է տարբեր ձևաչափերով, այդ թվում՝ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների, հաղորդումների և լուսաբանման միջոցով, հանրային կամ խմբային քննարկումների արդյունքների հրապարակային կողմնակալ ներկայացման վտանգը: Ավելին, քաղաքացիների այս խումբը համարում է, որ բաց քննարկումներում մարդիկ միշտ չէ, որ բաց և ազնիվ արտահայտում են կարգավորման գործընթացի վերաբերյալ սեփական կարծիքը: Ընդհանուր առմամբ, քաղաքացիների այս խմբին կարգավորման գործընթացի շուրջ իշխանություններ-հասարակություն հաղորդակցությունը պատկերանում է միակողմանի-ասիմետրիկ՝ առավելապես քարոզչության ուղղությամբ շեղված:

«Հարկավոր է, որ ամեն աղախին սովորի պետություն դարձնել...»

Քաղաքացիների մի մասը գտնում է, որ կարգավորման գործընթացը համազգային-համապետական, նաև՝ համահայկական խնդիր է և գործընթացում ասելիք ունեն բոլորը՝ պիտի լսելի լինի հասարակության բոլոր խավերի ձայնը: Քաղաքացիների մեկ այլ խումբ կարծում է, որ կարգավորման գործընթացում կարևորը դիվանագետների, տնտեսագետների, պատմաբանների և այլ նեղ մասնագետների կարծիքն է, իսկ բժիշկները, ուսուցիչները, տաքսիստները՝ «հասարակ ժողովուրդը» ասելիք չունի, կամ եթե ունի անգամ, ապա նման կարծիքն արժեքավոր չէ որոշումների կայացման գործընթացում: Նման ընկալումը քաղաքացիները հիմնավորում են կարևորագույն հիմնախնդիրների շուրջ հանրային քննարկումների ավանդույթի ու մշակույթի բացակայությամբ: Քաղաքացիները տարակուսում են հասարակությանը հուզող բազմաթիվ այլ խնդիրների հանրային քննարկման սահմանափակ պրակտիկայի առումով:

Աշխատանք դրսու՛մ, թե՛ ծառայություններ ներսում

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում քաղաքացիներին մտահոգում է միգրացիոն հոսքերի զգալի փոփոխության հեռանկարը: Ընդ որում, քաղաքացիները մտահոգ են թե՛ արտագաղթի, թե՛ ներգաղթի հեռանկարներով: Այսպես, քաղաքացիների մի մասը գտնում է, որ կարգավորման արդյունքում կծնավորվեն բնակչության միգրացիայի համար առավել նպաստավոր հաղորդակցության նոր ուղիներ և կմեծանա հայաստանցիների արտագաղթն արտերկիր, այդ թվում՝ աշխատանքային միգրացիան Թուրքիա: Այս խմբին մասնավորապես մտահոգում է «ուղեղների արտահոսքը» Հայաստանից: Քաղաքացիների մյուս մասը համարում է, որ բաց սահմանի պարագայում արտագաղթը Հայաստանից կնվազի՝ հարաբերությունների կարգավորման արդյունքում տնտեսական դրական տեղաշարժերի հետևանքով: Ավելի՛ն, քաղաքացիները համարում են, որ բաց սահմանը կհեշտացնի արտերկրում գտնվող հայաստանցիների վերադարձը՝ հայրենադարձությունը: Քաղաքացիների մի խումբ բաց սահմանի պարագայում ակնկալում է թուրքահպատակների ներգաղթի զգալի հոսք դեպի Հայաստան: Քաղաքացիների մեկ այլ խումբ համարում է, որ Թուրքիայից Հայաստան իմիգրացիոն շոշափելիորեն հոսքերը չեն մեծանա, իրենց կարծիքը հիմնավորելով հայ-իրանական միգրացիոն հոսքերի դինամիկայի զուգահեռներով, թուրքահպատակների Հայաստան ներգաղթի ներկա հնարավորություններով և հոսքերով և այլն: Քաղաքացիները համարում են, որ Հայաստանի առաջարկած կրթական ծառայությունները կարող են գրավիչ լինել Թուրքիայի արևելյան, հիմնականում՝ քրդաբնակ, նահանգների երիտասարդների համար: Միգրացիոն հոսքերի փոփոխությունները քաղաքացիների մի մասի ընկալմամբ կարող են հանգեցնել ժողովրդագրական շոշափելի փոփոխությունների, մինչդեռ մյուսները գտնում են, որ չափազանց միատարր հայաստանցիներին ժողովրդագրական էթնիկ կազմի որակական փոփոխություն չի սպառնում:

Սաբնուհիների առևանգումը

Հարաբերությունների կարգավորումը քաղաքացիների ընկալմամբ այս կամ այն կերպ կազդի մարդկանց անօրինական առևտրի՝ թրաֆիքինգի երևույթի վրա: Ընդ որում քաղաքացիները մտահոգ են, որ բաց սահմանի պարագայում Հայաստանից Թուրքիա թրաֆիքինգը, հատկապես կանանց թրաֆիքինգը և մարմնավաճառների շահագործումը էլ ավելի կաշխուժանա: Միաժամանակ, քաղաքացիների մեծ մասը համարում է, որ երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը և հյուպատոսական ծառայությունների ստեղծումը մեծապես կնպաստի Թուրքիայում հայաստանցիների իրավունքների պաշտպանությանը, թեպետ համարում են, որ հայաստանցիների իրավունքները Թուրքիայում երբեք այնչափ պաշտպանված չեն լինի, որքան հարևան Վրաստանում կամ Ռուսաստանում:

Վիրուսներ առանց սահմանի

Քաղաքացիներին մտահոգում է բաց սահմանի պարագայում հանցագործությունների թվի հնարավոր աճը, մասնավորապես, անասնագործության ծավալի մեծացումը: Քաղաքացիներին անհանգստացնում է նաև սննդի անվտանգության և հանրային առողջապահության խնդիրների հնարավոր սրացումը բաց սահմանի պարագայում: Մասնավորապես, ինդրահարույց է սահմանամերձ գոտիներում կենդանիների հիվանդացության աճը, պայմանավորված Թուրքիայում կենդանիների պատվաստումների մակարդակով: Քաղաքացիների ընկալմամբ սահմանի ապաշրջափակումը և ուղևորաշրջանառության աճը կարող են հանգեցնել Հայաստանում առանձին հիվանդությունների, մասնավորապես, գրիպի վտանգավոր՝ այդ թվում՝ AH1N1 վիրուսի տարածման:

Ծաղկած փշալարեր

Կարգավորման գործընթացն ու բաց սահմանը քաղաքացիների ընկալմամբ նոր մարտահրավերներ են ստեղծում մեր երկրում ահաբեկչության դեմ պայքարի համար: Այսպես, քաղաքացիները համարում են, որ բաց սահմանի պարագայում արդիական կղառնա քրդական ազատագրական պայքարի զինված խմբավորումների անդրսահմանային տեղաշարժի և դրան առնչվող խնդիրների կարգավորման հարցը:

Քաղաքացիների մեկ այլ խումբ համարում է, որ բաց սահմանը երկրի անվտանգության լրացուցիչ երաշխիք է, իսկ սահմանային ներկա ռեժիմը լավ հիմքեր է ստեղծում ահաբեկչության դեմ պայքարի համար: Միգրացիայի կարգավորման համակարգը Հայաստանում, այդուհանդերձ, հարկ է հզորացնել և կայացնել թե՛ իրավակարգավորիչ, թե՛ ինստիտուցիոնալ առումով: Փախստականների և ապաստան հայցողների, այս անգամ թուրքաբնակ, մեծ հոսք ընդունելու մեր երկիրը թերևս պատրաստ չէ: Վերջին խնդիրը ավելի է կարևորվում Հայաստանի եվրախնտեզրման գործընթացի համատեքստում:

Յողի գինը

Քաղաքացիները կարևորում են նաև Հայաստանում թուրքահպատակների և Թուրքիայում հայաստանցիների կողմից անշարժ գույքի՝ հողերի, շենքերի և շինությունների սեփականության ձեռք բերման խնդրի կանոնակարգումը: Այսպես, հայաստանցիները մի կողմից մտահոգ են մեր երկրում հողի երկարաժամկետ վարձակալության հնարավորություն ընձեռող ազգային օրենսդրությունից, միաժամանակ, քաղաքացիները մտահոգ են Թուրքիայում սեփականություն, այդ թվում՝ հող, ձեռք բերելու սահմանափակ հնարավորություններով:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում կրթության, մշակույթի և լրատվության դերը

Երկսայրի կրթություն

Քաղաքացիները համարում են, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում կարևորագույն դեր ունի կրթությունը: Ավելին, քաղաքացիների կարծիքով կարգավորմանն առընչվող բազմաթիվ խնդիրներ պիտի լուծվեն հենց կրթության միջոցով: Այսպես, ցեղասպանության միջազգային ճանաչման և Հայ Դատի խնդիրները գալիք սերնդի արժեքային համակարգում և համահայկական օրակարգում ամրագրել հնարավոր է բացառապես կրթական համակարգում այս խնդիրները պատշաճ կերպով ներառելու շնորհիվ: Ընդհանուր առմամբ, քաղաքացիները կարևորում են կրթության և, հատկապես՝ հայրենասիրական դաստիարակության, դերը հայ-թուրքական հարաբերությունների զարգացման համատեքստում: Հատկանշական է, որ քաղաքացիներին մտահոգում է հայ-թուրքական խառնամուսնությունների խնդիրը, իսկ դրանց կանխման գործում քաղաքացիները կրկին կարևորում են ընտանեկան և համայնքային դաստիարակությունը: Միաժամանակ, երկու երկրների միջև գործակցության հեռանկարները նույնպես պիտի լուծվեն կրթության միջոցով: Մասնավորապես, քաղաքացիները համարում են, որ Հայաստանյան առանձին դպրոցներում անհրաժեշտ է կազմակերպել թուրքերենի ուսուցում, ինչն անհրաժեշտ է հարևան երկրի հետ արդյունավետ շփումների համար:

Փաստարկված իրազեկում

Քաղաքացիները գտնում են, որ հանրությունը կարգավորման գործընթացի վերաբերյալ իրազեկման կարիք ունի՝ կարգավորման ստեղծած բազմաթիվ հնարավորություններն ու մարտահրավերները, դրա հետևանքները կարիք ունեն լայն լուսաբանման: Իրազեկության պակասն ակնառու է հատկապես ներպետական օրենսդրության և միջազգային իրավական փաստաթղթերի, այդ թվում՝ Կարսի պայմանագրի, վերաբերյալ: Ավելին, քաղաքացիները համարում են, որ պատշաճ իրազեկումը ունի լրացուցիչ գործառույթ՝ այն հնարավորություն կտա չեզոքացնել մի շարք մարտահրավերներ և առավել արդյունավետ օգտագործել առանձին հնարավորություններ: Հատկանշական է, որ քաղաքացիների ընկալմամբ գործընթացի լուսաբանումը՝ «մատուցումը», գրեթե նույնքան կարևոր է, որքան կարևոր է բուն կարգավորումը: Քաղաքացիները կարևորում են նաև կարգավորման գործընթացի հիմնախնդիրների վերաբերյալ համաշխարհային հանրության իրազեկման պատշաճ մարտավարությունը: Այսպես, գործընթացի կարևոր բաղադրիչը՝ սահմանի ապաշրջափակումը Թուրքիայի կողմից հարկ է միջազգային հանրությանը ներկայացնել պատշաճ կերպով, այլապես տպավորություն կարող է ստեղծվել, որ Եվրոպային հարևան երկրի շրջափակված սահմանի համար պատասխանատու է նաև Հայաստանը: Նշված օրինակը մասնավորապես փաստում է տերմինների կարևորությունը: Քաղաքացիների համոզված են, որ

հավասարակշիռ իրազեկումն ու անկողմնակալ լուսաբանումը էականորեն կմեծացնեն հասարակության վստահությունը երկրի քաղաքական դեկավարության, նրա նախաձեռնությունների և բուն կարգավորման գործընթացի հանդեպ: Քաղաքացիները համարում են, որ հասարակության իրազեկման գործում անգնահատելի է հատկապես լրատվամիջոցների դերը, սակայն նշում են նաև, որ հրապարակային ելույթներում հասարակական-քաղաքական գործիչները հազվադեպ են փաստարկում իրենց մոտեցումները և սահմանափակվում առավելապես հուզական՝ էմոցիոնալ և արժեքային՝ իռացիոնալ հռետորությամբ: Քաղաքացիների ընկալմամբ իրազեկության պակասը զգալի է նաև Էլիտայի ներկայացուցիչների շրջանում: Հատկանշական է, որ նման իրավիճակում «թերփաստարկված» կարծիքների բազմազանությունը քաղաքացիներին հնարավորություն չի տալիս կողմնորոշվել, այլ «ժողովրդի գլխում քառս է ստեղծում»: Այսպիսով, քաղաքացիների հնչեցրած կարևոր պահանջը որակյալ և ժամանակին իրազեկումն է կարգավորման գործընթացի վերաբերյալ:

Ճանաչե՛լ զմիմեանս

Քաղաքացիների մի մասը համոզված է, որ կարգավորման գործընթացը հնարավորություն կընձեռի Հայոց Ցեղասպանության իրողությունն ու պատմական ճշմարտությունը, ինչպես նաև հայ ժամանակակից ինքնության առանձնահատկությունները պատշաճ կերպով ներկայացնելու թուրքահպատակների ներկա սերնդին՝ թուրք քաղաքացուն, որն առայսօր զրկված է երկու ժողովուրդների հարաբերությունների զարգացման մասին երկկողմանի լիարժեք տեղեկություններ ստանալու հնարավորությունից: Ընդհանուր առմամբ, քաղաքացիները համարում են, որ բաց սահմանն ու առավել հաճախակի շփումները կնպաստեն երկու ժողովուրդների փոխադարձ ճանաչողությանը, սոցիալ-մշակութային փոխհարաբերություններին, ընդհանուր շահերի ու մոտեցումների ձևավորմանը, կարծրատիպերի փոփոխմանն ու վերացմանը, բազում մտավախությունների փարատմանը, խաղաղության մշակույթի տարածմանը և այլն:

Si Vis Pacem, Para Pacem!

Կարգավորման գործընթացում քաղաքացիները կարևորում են մշակութային գործոնը: Ներկայում տիրող փոխադարձ թշնամանքի մշակույթը ահազնացնում է կարգավորման գործընթացի մարտահրավերները և սահմանափակում զարգացման ծագող հնարավորությունները: Այսպես, մեր մշակույթում ֆորմալ առումով բացասական վերաբերմունք կա թուրքական, մասամբ նաև՝ միջերկրածովյան մշակույթի տարրերի, այդ թվում՝ երաժշտության ու կիրառական արվեստի, նիստուկացի ու հագուկապի, ավանդույթների ու կենցաղի հանդեպ: Միաժամանակ, մեր մշակույթը, նյութական առումով գտնվելով թուրքական և միջերկրածովյան մշակութային ազդեցության տակ, կենցաղային մակարդակով իր մեջ ներառել է դրանց բազմաթիվ տարրեր: Քաղաքացիների ընկալմամբ «հողեղեն բաց սահմանը» մշակութային առումով մարտահրավեր չէ, քանզի «հոգևոր սահմանը վաղուց բաց է»: Այդուհանդերձ, քաղաքացիները անխուսափելի են համարում Հայաստանում թուրքական մշակույթի ներկայության ընդլայնումը՝ շփումների ծավալմանը զուգահեռ: Քաղաքացիներին հատկապես մտահոգում է մշակութային փոխակերպումների ազդեցությունը երիտասարդ սերնդի վրա: Այսպիսով, քաղաքացիները մի կողմից ցանկանում են տեսնել մշակութային «հակամարտությունից» անցում մշակութային երկխոսությանը, զուգահեռաբար ակնկալելով մշակութային փոխակերպումներում նոր տարրերի առողջ ձուլումը հայ մշակույթի մայրուղուն (mainstream): Ընդ որում, նման ակնկալիքներն ուղղված են թե՛ հայկական, թե՛ թուրքական հասարակություններին միաժամանակ: Հայաստանցիների ընկալմամբ ժամանակակից Թուրքիան շարունակում է հայկական մշակույթի եղեռնը և բռնի «թուրքականացումը» իր տարածքում, ինչը ներառում է միջոցների լայն սպեկտր՝ մերժողականությունից, մշակույթի և պատմության հուշարձանների «հայաթափությունից» ու «խաչաթափությունից» մինչև «մեր հայերը» գաղափարախոսական ուղղությունն ու թուրքահպատակ հայ գործիչների հանդեպ թշնամական վերաբերմունքը: Այս հանգամանքը քաղաքացիներին ստիպում է տարակուսել մշակութային երկխոսության կայացման ուղիների վերաբերյալ:

Անձիավոր գլուխ

Քաղաքացիների զգալի մասը թերահավատորեն է վերաբերվում կարգավորման գործընթացում Հայաստանի ազգային շահերին լիարժեքորեն հետամուտ լինելու, գործընթացն արդյունավետ կերպով առաջնորդելու քաղաքական ուժերի, այդ թվում՝ իշխող քաղաքական կոալիցիայի, գիտելիքներին, հմտություններին, խմբային շահերը հանրային շահերին համադրելու կամ, անհրաժեշտության դեպքում՝ առաջինները վերջինին ստորադասելու, առավել ևս՝ կարգավորման գործընթացում ազգային համաձայնություն ձևավորելու կարողություններին: Նման վերաբերմունքի պարագայում զարմանալի չէ, որ քաղաքացիները կարգավորման գործընթացում իշխանություններից մեծ ակնկալիքներ չունեն, և առավել ևս՝ հայաստանյան քաղաքական ուժերի կողմից «ձիով քայլին» չեն սպասում: Հատկանշական է, որ քաղաքական ուժերի հանդեպ վստահության ճգնաժամի արտահայտության նման պայմաններում, ազգայնական արժեքներն ու զաղափարախոսությունը քաղաքացիների ընկալմամբ ցավալիորեն հակադրվում են հումանիստական-ժողովրդավարական արժեքներին և ազատական զաղափարախոսությանը: Անվստահության նման արտահայտության հիմքում թերևս ընկած է խոշոր գործար շրջանակների հետ քաղաքական-պետական էլիտայի սերտաճման ակնհայտ բարձր աստիճանը, ինչպես նաև նախկինում մասնավոր շահին հանրային շահի ստորադասման բազմաթիվ դեպքերի շնորհիվ ձևավորված վերաբերմունքը: Միաժամանակ, խոշոր գործարարների հանդեպ քաղաքացիների վերաբերմունքի մեջ առանձնանում է գործարարների, որպես ապազգային՝ «անհայրենիք ու անազգ» տարրի ընկալումը: Նման վերաբերմունքը տարանցվում և վերագրվում է այն ինստիտուտներին, որոնցում խոշոր գործարարներն ու նրանց մասնավոր շահը ներկայացված են անմիջականորեն, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ Կառավարությանը: Համապատասխանորեն, ընկալման նման թանձր մթնոլորտում քաղաքացիները դժվարանում են պետական պաշտոնյաների շրջանում «հայրենասերներ ու անձնագրիներ» տեսնել: Ավելի՛ն, նման վերաբերմունքի արդյունքում քաղաքացիները հաճախ օտարված են զգում իշխանությունից, իշխանությունը «մեծամասնության ուժ» չեն ընկալում կամ առնվազն չեն իրենց չեն ընկալում որպես «ուժի մեծամասնության» մաս:

Երեսը՝ նորաձև, աստառը՝ հնամա՞ջ

Քաղաքացիների գտնում են, որ երկրում առկա տարբեր սոցիալական, տնտեսական, քաղաքական և հանրային կառավարման խնդիրները խոչընդոտում են կարգավորման գործընթացին և թուլացնում հայաստանյան կողմի դիրքերը ընթացիկ և ապագա բանակցություններում: Այսպիսով, քաղաքացիները համարում են, որ ներքին և արտաքին քաղաքական գործընթացները սերտորեն փոխկապակցված են, ինչը նշանակում է, որ հնարավոր չէ վարել արդյունավետ և համաձայնեցված-ընդունելի արտաքին քաղաքականություն, առանց արդյունավետ և մասնակցային ներքին քաղաքականության: Անգամ լավագույն դիվանագիտությունը ի զորու չէ լրացնել այն բացերը, որոնք առաջանում են պետական թերի կառավարման հետևանքով: Ավելի՛ն, քաղաքացիների կարծիքով կարգավորման գործընթացի բազմաթիվ մարտահրավերներ պայմանավորված են ոչ թե բուն կարգավորման ընթացքով, այլ բացառապես ներպետական խնդիրներով՝ երկրի իշխանության ներքին քաղաքականության թերություններով և դրանց հանդեպ հասարակության վերաբերմունքով ու վարքով: Քաղաքացիները գտնում են, որ նման պարագայում արտաքին քաղաքականության սայթաքումները կարող են երկիրն ու հասարակությունը հանգեցնել քաղաքական անկայունացման: Միաժամանակ, ներքին քաղաքականության ամրապնդումը և պետական կառավարման արդյունավետության ու մասնակցայնության բարձրացումը կամրապնդեն Հայաստանի դիրքերը ոչ միայն կարգավորման գործընթացում, այլև՝ երկրի միջազգային հարաբերություններում ընդհանրապես:

Վեց երգ՝ հինգ հոգով

Քաղաքացիներին չի բավարարում ոչ միայն երկրում քաղաքական գործընթացների բովանդակությունը, այլև՝ ձևաչափը: Գործող քաղաքական ուժերի հատվածայնությունը՝ ի դեմս ավելի քան 70 քաղաքական կուսակցությունների, քաղաքական թե՛ երկխոսության, թե՛ բանավեճի ցածր մակարդակը, հասարակությանը կողմնորոշելու գործում քաղաքական ուժերի տկարությունը, քաղաքացիների համոզմամբ բերում են կարգավորման գործընթացում Հայաստանի արտաքին քաղաքականության, արտաքին քաղաքական երկխոսություն վարելու ունակությունների, ի վերջո՝ երկու մշակույթների միջև երկխոսության հասարակության կարողությունների էական թուլացման:

Փառապանծ ու ցավալի

Քաղաքացիները առանձնակի և հակասական վերաբերմունք ունեն կարգավորման գործընթացում հայ քաղաքական իրականության պատմական սյուներից մեկի՝ արդի քաղաքական դաշտում Նշանակալի դերակատարում ստանձնած Հայ Յեղափոխական Դաշնակցության (ՀՅԴ) դերի հանդեպ: Այսպես, քաղաքացիների մի մասը կարծում է, որ ՀՅԴ հնչեցրած մտավախությունները արդիական են և կարգավորման գործընթացում կիրականան: Հատկանշական է, որ ՀՅԴ գործունեությունը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման վերաբերյալ արձանագրությունների շուրջ քաղաքացիական հասարակության կարծիքի ձևավորման վրա էական ազդեցություն է գործել այս կամ այն առումով, թերևս բևեռացնելով դրանց հանդեպ հասարակության վերաբերմունքը՝ «պահանջատիրականության» կամ «պարտվողականության» որակումներով բևեռներում: Ակնհայտ է նաև, կարգավորման գործընթացի արձանագրությունների ստորագրման փուլում հանրային իրազեկման գործում ՀՅԴ կատարած աշխատանքի դրական զգալի արդյունքը: Այսպես, քաղաքացիներ որոշակի մասը ծանոթ է արձանագրություններին հենց ՀՅԴ հրապարակումների շնորհիվ: Հատկանշական է, որ քաղաքացիների մի մասը Դաշնակցությունը համարում է հայ ինքնության մաս հանդիսացող պատմական մնայուն արժեք, որն ասոցացվում է ոչ այնքան սոցիալական, որքան արմատական ազգայնականության գաղափարախոսության հետ: Քաղաքացիները գտնում են նաև, որ կարգավորման գործընթացի խաթարումը կամ ոչ հայանպաստ ընթացքը կնպաստի ապագայում ՀՅԴ քաղաքական կապիտալի մեծացմանը: Միաժամանակ, քաղաքացիների ընկալմամբ Հայաստանի առաջին հանրապետության կառավարման ղեկավարումը ժամանակին ստանձնած հարյուրամյա կուսակցությունը պատասխանատու է ժամանակի արտաքին ու ներքին քաղաքական թե՛ պանծալի հաղթանակների, թե՛ ցավալի պարտությունների համար:

Կաթից վառվողի մածուկին փչելու իրավունքը

Քաղաքացիները հստակորեն ընկալում և արտահայտում են Հայաստան-Թուրքիա հարաբերություններում առկա բազմաթիվ կարծրատիպերը, փաստում դրանց դերը հարաբերությունների կարգավորման գործընթացում, ինչպես նաև նշում դրանց հաղթահարման անհրաժեշտությունն ու ուղիները: Ընդհանուր առմամբ, քաղաքացիները նշում են, որ առկա կարծրատիպերը լուրջ խոչընդոտ են հարաբերությունների կարգավորման և զարգացման համար: Առավել մտահոգիչ է այն, որ «անկիրթ թուրքն անկիրթ գազան է, իսկ կիրթ թուրքը՝ կիրթ գազան» բնույթի բազմաթիվ կարծրատիպերը փոխակերպվել են տարատեսակ վախերի (Ֆորբիաների), օրինակ՝ «նրանք ջուրը կթունավորեն, մեզ կգնեն ու տնտեսությունը կբայթայեն, կլցվեն ու կբազմանան, կամուսնանան մեր աղջիկների հետ ու երկիրը կլցնեն համասեռամուլներով, սերունդը կայլանդակվի» տրամաբանությամբ: Առավել հաճախ հնչում են կարծրատիպերը, որոնցում թուրք ինքնությունը ներկայանում է որպես ոխերիմ ու արյունառատ, և ամենակարևորը՝ անհուսալի, անվստահելի, դավադիր ու ուխտադրուժ՝ անփոփոխ ու հարատև: Հատկանշական է նաև, որ թուրքերի վերաբերյալ կարծրատիպերը և քաղաքացիների վերաբերմունքը հաճախ միահյուսված են ադրբեջանցի «թորթերի» հանդեպ վերաբերմունքին և, ըստ էության, քաղաքացիներն այս երկուսին հաճախ չեն տարբերակում: Միաժամանակ, կրոնական հարթության մեջ առկա կարծրատիպերը շոշափելի չեն:

Հայացք՝ Սարի հայացքի ներքո

Քաղաքացիները համարում են, որ պաշտոնական հարաբերությունների կարգավորումը չի բերի ժողովուրդների միջև հարաբերությունների ջերմացման և փոխվստահություն տեսանելի հեռանկարում չի ձևավորվի: Ավելին, քաղաքացիների համոզմամբ տնտեսական և քաղաքական շփումները նույնպես չեն կարող ջերմացնել երկու ժողովուրդների հարաբերությունները, քանզի այդ հարաբերությունները մթազնում են դեռևս չճանաչված ցեղասպանության փաստը և «պապենական հողերի կորստյան հիշողությունը: Հատկանշական է, որ նման վերաբերմունքը քաղաքացիները հիմնավորում են ցեղասպանության մերժողականության Թուրքիայի պաշտոնական քաղաքականությամբ, հարևան երկրի վարած կրթական և մշակութային քաղաքականությամբ, որը նպաստում է հարևան ժողովրդի մեջ հայերի՝ որպես թշնամու կամ առևձաճ՝ արժանի զոհի կերպարի ձևավորմանը անցյալում և ներկայում: Ըստ էության հենց չմեղանչող հանցագործի կերպարն է, որ սկիզբ է տալիս կարծրատիպերի մեծամասնությանը: Նման կարծրատիպերն էլ ավելի են արմատավորվում, երբ շաղախվում են անձնական փորձի լեղիով: Այսպես, քաղաքացիները նշում են, որ թուրքերի հետ առևտրային բնականոն հարաբերությունները ակնթարթորեն վերածվում են լարվածության, երբ խոսքը գնում է ցեղասպանության կամ պահանջատիրության խնդիրների մասին: Ավելին, քաղաքացիները համոզված են, որ այս խնդիրների շուրջ բանավեճն ու երկխոսությունն հարևան երկրում գործնականում անհնար են: Նման վերաբերմունքը քաղաքացիներին տրամաբանականորեն ուղղորդում է դեպի կարծրատիպերի հաջորդ հանգրվանը՝ «մենք նրանց կընդունենք, իսկ նրանք մեզ՝ ոչ»: Ընդ որում, երկու պետությունների տեսանելի սահմանագիծը՝ բիբլիական սարը ներկայում բնավ բարեկամության սիմվոլ չէ մարդկանց ընկալմամբ, այլ պատշաճ հարգանքի չարժանացած կորուստը անընդմեջ հիշեցնող, մշտաթուն ցավը փորփորող ու վրեժի կոչող հուշարձան՝ ցեղասպանության զոհերին:

Շահեր՝ հավերժական

Հատկանշական է, որ կարգավորման գործընթացն ինքնին ընկալվում է որպես կարծրատիպերի հաղթահարման միջոց: Առավել բնութագրական կարծրատիպերի թվում քաղաքացիները նշում են վախը հարևան երկրի ագրեսիայի հանդեպ և շեշտում, որ երկկողմ շփումները կնպաստեն վախի հաղթահարմանն ու ներքին ազատության հզորացմանը: Հատկանշական է, որ կարծրատիպերի շարքում քաղաքացիները նշում են նախ և առաջ ներանձնականացված կարծրատիպերը, այդ թվում՝ ազգային գերազանցության և բացառիկության բարդույթը, հավերժական ու անվերադարձ կորստի զգացումը և այլն: Քաղաքացիները նշում են, որ հարևան ժողովրդի մասին առկա դրական կարծրատիպերը կարող են նպաստել բացասական կարծրատիպերի հաղթահարմանը: Առավել հաճախ նշվում են առևտրային վստահելի գործընկերոջ, հարևանի մասին պատկերացումները: Ընդ որում, քաղաքացիները համարում են, որ ոչ բոլոր շփումներն է

հարկավոր անհրաժեշտաբար ավարտել քաղաքականացմամբ, առավել ևս, երբ երկու ժողովուրդների մեջ էլ կան խմբեր, որոնց արժեքային համակարգում վերը նշված խնդիրներն ու կարծրատիպերը կամ բացակայում են կամ մղված են հետին պլան: Քաղաքացիները նշում են նաև, որ հարևանների հանդեպ համարժեք, առավել հավասարակշռված վերաբերմունքը, «հավերժական բարեկամների և հավերժական թշնամիների» դասակարգումից խուսափելն ու շահերի վրա հիմնված վերաբերմունքի արմատավորում մեծապես կնպաստեն կարգավորման գործընթացին:

Credat Iudaeus Apella!

Վերը նշված կարծրատիպերի բոլոր վտակներն ու դրանց մնուցած վախերի գետերն ի վերջո թափվում են վստահության ծովը, որը ներկայում լճացել է, վերածվելով անվստահության ճահճի: Ըստ էության, կարելի է արձանագրել մեր քաղաքացիների շրջանում հարևան երկրի հանդեպ վստահության ակնհայտ ճգնաժամը՝ խոր անվստահությունը: Ընդ որում, անվստահությունն ամենից առաջ և բոլորից առավել վերաբերվում է Թուրքիա պետության՝ թուրքական պետականության հանդեպ վերաբերմունքին: Հատկանշական է, որ հնչող կարծրատիպերի մեծամասնությունն այս է փաստում: Անվստահություն հենց պետականության, դրա ինստիտուտների և ապա միայն ժողովրդի կամ հասարակության հանդեպ. «Թուրքն իր ստորագրածը չի իրականացնելու... դարեդար այդպես է եղել»: Անվստահությունը բյուրեղացել է ոչ միայն կարծրատիպերի ապարում, այլև փաստարկներ է փնտրում: Եվ ավելի ու ավելի հաճախ գտնում դրանք: Թուրքիայի քաղաքական ղեկավարության, պետական պաշտոնյաների ու քաղաքական գործիչների հաճախակի հնչեցրած հակասական ուղերձները միայն յուր են լցնում անվստահության կրակին, բետոնելով հայ հասարակության կարծրատիպերն ու վախերը: Կրթության և մշակույթի ոլորտներում Թուրքիայի պաշտոնական քաղաքականության հայ հասարակությանը մատչելի դրսևորումները քաղաքացիներին ներկայանում են որպես հայատյացության ժամանակակից արտահայտություն: Սեփական արևելյան նահանգներում, քրդական հարցում, Հայաստանի երկարամյա շրջափակման, ինչպես նաև Հյուսիսային Կիպրոսի խնդրում թուրքական պետության հետևողական քաղաքականությունը նույնպես գալիս են ամրացնելու առկա կարծրատիպերը: Քաղաքացիները տրամաբանական եզրահանգում են կատարում. ժամանակակից թուրք պետականությունը պատրաստ չէ հարևանի հետ հարաբերությունների մերձեցման և էական ճեղքում արևմտյան ճակատում չի ակնկալում: Սահմանի ապաշրջափակումն անգամ, քաղաքացիներին ներկայանում է որպես մարտավարական ժամանակավոր քայլ հարևան երկրի իշխանությունների կողմից՝ հեռագնա «դավադիր» նպատակներով: Միաժամանակ, հատկանշական է, որ քաղաքացիները վստահ են հարևան երկրի շահակենտրոն քաղաքական վարքագծում և ենթադրում, որ Թուրքիայի շահերը խարսխված են պանթուրքիզմի գաղափարախոսությանը և անհրաժեշտաբար ու մշտապես հակադիր են Հայաստանի շահերին: Հատկանշական է, որ քաղաքացիների մի մասը թերահավատորեն է վերաբերվում երկու հասարակությունների հետագա մերձացմանը հենց այն պատճառով, որ երկու պետություններն էլ կայացած ժողովրդավարություններ չեն դեռևս, ուստի «պալատների պատմերագմը» մշտապես վտանգում է «խրճիթների խաղաղությունը»: Քաղաքացիների մի մասին էլ ժամանակակից Թուրքիան պատկերանում է պառակտված՝ արժեքային առումով:

Եվրամիությունը Մայր Արաքսի ափերին

Կարգավորման գործընթացն ու տարածաշրջանի եվրախնտեգրման գործընթացները քաղաքացիների ընկալմամբ աղետավում են մի քանի հարթություններում: Այսպես, քաղաքացիների մի մասը համարում է, որ Թուրքիայի անդամակցությունը Եվրամիությանը կնպաստի երկու երկրների միջև համագործակցության զարգացմանը և նույնական արժեքներ կրող հասարակությունների մերձեցմանը: Ընդ որում, եվրոպական կառույցին անդամակցող, մարդու իրավունքների և միջազգային իրավունքի նորմերի պաշտպանության շրջափելի պարտավորություններ ստանձնած Թուրքիան, ըստ քաղաքացիների հարկադրված կլինի հարևանի հետ հարաբերությունները կառուցելիս առավել զգուշորեն ընտրություն կատարել ռազմա-քաղաքական և սոցիալ-տնտեսական գործիքների միջև: Ավելին, քաղաքացիները համարում են, որ եվրոպական մաքսային գոտուն անդամի համար հեշտ չի լինի պրոտեկցիոնիստական առևտրատնտեսական քաղաքականություն վարել ի հեճուկս հարևանի: Միաժամանակ, քաղաքացիներ ընկալմամբ, կարգավորման գործընթացը Թուրքիայի համար միջոց է եվրախնտեգրման ճանապարհին, քանզի Յայաստանի շրջափակված սահմանը շրջափակում է Եվրամիության դարպասը հենց Թուրքիայի համար: Քաղաքացիների զգալի մասը այս գործոնը համարում է կարգավորման գործընթացում Թուրքիայի քաղաքականության հիմնական շարժառիթը:

Մեծը՝ մեծի մեջ

Քաղաքացիների մեկ այլ հատվածը Թուրքիայի եվրախնտեգրումն ու Եվրամիությանը այս երկրի անդամակցումը համարում է մարտահրավեր Յայաստանի անվտանգությանը: Այսպես, քաղաքացիները համարում են, որ եվրոպայում թուրքական տարրի մեծացումը ինքնին վտանգավոր է, քանզի հնարավորություն է ստեղծում նաև Թուրքիայի համար եականորեն ազդել եվրոպական արտաքին քաղաքականության ձևավորման վրա: Նման պարագայում Թուրքիայի, ԵՄ անդամ-պետության ձայնը միանշանակորեն ավելի լսելի կդառնա եվրոպական արտաքին քաղաքականության երգացանկում: Միաժամանակ, քաղաքացիները չեն բացառում Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ եվրախնտեգրման վեկտորի թուլացումը, և դրանով պայմանավորված նոր մարտահրավերները:

Եվրախնտեգրման արդուկը և տարածաշրջանային ծալքերը

Քաղաքացիները կարևորում են նաև կարգավորման ազդեցությունը Յայաստանի եվրախնտեգրման գործընթացում: Այսպես, քաղաքացիները նշում են, որ հարաբերությունների կարգավորումը Թուրքիայի հետ կմեծացնի մեր երկրի քաղաքական քաշը եվրոպական կշեռքին, հայաստանյան տնտեսությունը, «մոտենալով Եվրոպային», կդառնա ավելի մատչելի և հրապուրիչ ներդրողների համար: Միաժամանակ, քաղաքացիները համարում են, որ առանց հարևան երկրի հետ հարաբերությունների կարգավորման, Յայաստանի եվրախնտեգրման գործընթացն ապագա չունի, իսկ վերջինը իր հերթին նոր թափ կհաղորդի կարգավորման գործընթացին: Քաղաքացիների այս խումբը Թուրքիան համարում է «երդիկ՝ դեպի Եվրոպա»:

Կովկասյան դիալեկտիկա՝ ինտեգրման ինտեգրում

Ի վերջո, քաղաքացիները կարգավորման գործընթացը դիտարկում են եվրահամայնքի տեսանկյունից: Այսպես, քաղաքացիները համոզված են, որ Եվրոպան շահագրգիռ է խաղաղ և կայուն հարևան տարածաշրջան ձևավորելու գործում: «Միասնական Կովկաս». ըստ քաղաքացիների սա է տարածաշրջանի եվրոպական տեսլականը: Այսպիսով, Եվրոպային տարածաշրջանը ինտեգրման գործընթացի հաջողությունը առաջին հերթին պայմանավորված է տարածաշրջանում երկրների ինտեգրման գործընթացով, կարծում են քաղաքացիները:

Ա. Ցեղասպանության միջազգային ճանաչում

1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ

Սահմանի բացումով մենք կլուծենք դեպի արևմուտք ճանապարհի խնդիրը: Սակայն, չպետք է մոռանալ նաև ցեղասպանության մասին:

Եթե տնտեսական հարաբերություններում կարող ենք ճկուն լինել, մի քիչ էլ զիջող, ապա պատմական հարթություն պետք է նույնիսկ ագրեսիվ լինենք:

Ես ցավով եմ մոտենում ցեղասպանության հարցին, բայց չեմ ուզում, որ իմ երեխան սոված մեծանա:

Կարևորը սահմանը բացելն է, թեկուզ՝ ցեղասպանությունից չխոսելու գնով:

Շատ երկրներ կան, որ հարևանների հետ թշնամի են, բայց շփվում են..Մենք պետք է կարողանանք մեր շահերից ելնելով ինչ-որ փոխզիջումների գնալ: Առաջին հերթին պետք է տնտեսապես զարգանալ: Սերնդափոխությունը կբերի ցեղասպանության հարցի լուծմանը:

Ենթահանձնաժողովի ստեղծման դեպքում եթե սկսում ես քննարկել պատմության այդ ցավոտ էջը, դրանով կասկածի տակ ես առնում իսկությունը: Անթույլատրելի է:

Չպետք է այնպես անել, որ աշխարհը կարծի, թե Հայաստանի միակ խնդիրը ցեղասպանության հարցն է:

Մենք պետք է լինենք ազգի դեսպան. Թուրքիայում ոչ մեկին չեն ասի, որ իր պապերը ոճիր են գործել: Սահմանների բացումը մեր համար մեծ հնարավորություն է ճշմարտությունը տարածելու հենց Թուրքիայի ներսում՝ լողափներում, քաղաքներում, գյուղերում...

Սահմանների բացումով պայմանավորված է նաև տուրիզմի աճը. իսկ ինչ եթե թուրք գրեսաշրջիկներին բերենք Ցեղասպանության թանգարան և ցույց տանք այն: Մենք պետք է գործենք համախմբված և ներքին մղումով:

Դեմ եմ սահմանի բացմանը, դա առաջին քայլն է դեպի ցեղասպանության մոռացումը:

Ես ուրք չեմ դնի Թուրքիա, մինչև չճանաչվի Ցեղասպանության հարցը: Ինձ համար աններելի է, երբ հայերը գնում, տնավորվում են Թուրքիայում:

Ես հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ եմ, ու երբ երեխաներին պատմում եմ Գրիգոր Չոփրապի մասին, հասնելով 1915 թվին, ես չեմ կարող ասել «երեխաներ, կներեք, այս մասը չեմ պատմի»:

Մեր պահանջատիրությունն ու ցեղասպանության ընդունումը ավելի հեշտ կլինի, եթե բացենք սահմանները: Բարեկամության պայմաններում ինչ-որ բան համոզելն ու ապացուցելը ավելի հեշտ կլինի:

Ինչո՞ւ ենք վախենում պատմական հանձնաժողով ստեղծելուց: Մենք ոչինչ չունենք վախենալու:

Թուրքիայում կա 101 հողվածը: Ինչո՞ւ մենք ինքներս չենք ընդունում նմանատիպ մի հողված:

Ցանկացած լուրջ քայլի դեպքում Ցեղասպանության հարցը լուծվելու է. այլ հարց է, թե ինչպես: Բայց գործընթացի առաջընթաց հաստատ կլինի: Իսկ տեղում դոփելու պարագայում այդ հարցը, այսպես, թե այնպես, մալու է բարձր ամբիոններից խոսելու մակարդակում:

Ես պետք է հնարավորություն ունենամ տեսնելու թուրքին, որ կարողանամ նրան ասել. «Դու Ցեղասպանություն ես արել»:

Եթե ցեղասպանությունը հիշողների տեսակարար կշիռը ժամանակի ընթացքում քանա, գուցե և հնարավոր լինի, որ իշխանությունները շատ ավելի պրագմատիկ գործոններով առաջնորդվեն:

Մենք կարող ենք լուռ առաջ տանել Ցեղասպանության հարցը. չեմ հասկանում, մենք չե՞նք վիրավորվում, որ մենք անընդհատ բարձրաձայնում ենք, իսկ մեզ չեն լսում... Ինձ համար սա նշանակում է, որ անհրաժեշտ է տակտիկան փոխել:

Արդեն բավականաչափ երկրներ ճանաչել են ցեղասպանությունը, մենք ճանապարհի կեսին ենք հասել: Արդեն որոշակի մակարդակից ոչ մի դեպքում չպետք է և չենք դառնա հետ, իսկ Թուրքիան էլ այդքան ուժ չի ունենա մեզ պարտադրելու:

Ցեղասպանության հարցը չի կարելի կապել սահմանի բացման հետ: Յետո ինչ, որ Թուրքիան այդ հարցերը շահարկում է:

Սահմանի բացումը միջոց է, իսկ ցեղասպանության ճանաչումը՝ նպատակ:

Ես, որպես Հայաստանի երիտասարդ քաղաքացի, որը հայրենադարձի զավակ է, ու որի ընտանիքը տուժել է Ցեղասպանությունից, սեփական ջանքով տուրիզմի մեջ հասել եմ լուրջ հաջողությունների: Մյուս տարի, տուրիզմի միջազգային համաժողովը տեղի է ունենալու Ստամբուլում, և ես պետք է մասնակցեմ դրան: Այո, իմ ընտանիքի ցավը հաշվի առնելով, կողմ եմ պահանջատիրությանը և Ցեղասպանության ճանաչմանը, սակայն, որպես գործարար, կողմ եմ նաև սահմանի բացմանը:

Հարցը ոչ թե հանձնաժողով ստեղծելը կամ չստեղծելն է, այլ պատմաբանների որակը:

2. Զգացմունքներ, Վախեր, Մտահոգություններ

Ցեղասպանության ճանաչման գործընթացի վրա սահմանի բացումը իհարկե կազդի. մեզ կստիպեն լռել, բանի որ կասեն, թե այսպիսով մենք խանգարում ենք հարաբերություններին:

Ըստ թուրքերի հայերը կարող են մոռանալ Եղեռնը... Երեք միլիոն զոհ ենք տվել... Ինչպե՞ս մոռանանք:

Եթե բացում ենք սահմանը մինչև թուրքերը ճանաչեն ցեղասպանությունը, նշանակում է մենք էլ ենք ասում ցեղասպանություն չի եղել ու գրկաբաց ընդունում ենք նրանց:

Սահմանի բացումը վստահ կդանդաղեցնի ցեղասպանության ճանաչումը:

Սահմանի բացումը ավելի է երկարացնելու Ցեղասպանության ճանաչման գործընթացը:

Եթե մենք ունենք պահանջ Թուրքիայի նկատմամբ, այսինքն, պատկերավոր ասած, ես հարևանիս դատի եմ տվել, ու հետո ամեն օր գնում եմ հարևանիս տուն ու սուրճ եմ խմում, հարևանություն եմ անում, ապա դատավորը ի՞նչ պետք է անի:

Շատ հնարավոր է, որ սահմանի բացումով Թուրքիան փորձի լռեցնել Հայաստանը:

Ինձ թվում է, որ սահմանի բացումը մի քիչ էլ կխանգարի ցեղասպանության ճանաչմանը: Սահմանը կբացվի, մի փոքր տևտեսական աշխուժացում կսկսվի, մարդկանց մոտ կբթանա պահանջը:

Սահմանի բացումից հետո, երբ շփումները շատանան, կկարողանան արդյոք մեր երիտասարդները համոզել ու ապացուցել թուրք հասարակությանը, որ ցեղասպանությունը եղել է, որ իրենց պապերը կոտորել են: Վախենում եմ, որ հակառակը լինի, չե՞ որ թուրքական դիվանագիտությունն ու տնտեսությունն ավելի հարուստ են:

45 տարի առաջ, երբ ես անգամ չգիտեի ցեղասպանության մասին, իմ հարսանիքն եղավ ապրիլի 24-ին: Իսկ հետո, երբ իմացա, իմ հարսանիքի օրն այլևս չի նշվում: Ո՞նց կարելի է մոռանալ ցեղասպանությունը:

Զե՞ք կարծում, որ սահմանի բացումից հետո թուրքերին ավելի հեշտ կլինի լոբբինգի քաղաքականությունն իրականացնել:

Ուրուզվայից լուրը լսեցի՞ք. հիմա էլ նոր պետություններ են ի հայտ գալիս, որոնք տարակուսում են՝ հայերս ինքներս ե՞նք կասկածի տակ դնում ցեղասպանությունը:

Դարը փոփոխություն է բերում, մենք չենք ուզում մոռանալ ցեղասպանությունը: Բայց գուցե եկել է ժամանակը հարևանին ավելի լավ ճանաչելու: Գուցե սահմանը բացելուց հետո ավելի լավ կկարողանանք մեր ճշմարտությունը քարոզել:

Ցեղասպանության ճանաչման ընթացքը արդեն դանդաղել է, վախենում եմ, որ սահմանի բացումից հետո այն ետին պլան մղվի:

Եթե հիմա մենք Թուրքիայի հետ հարաբերությունները բարելավենք, մյուս երկրները կասեն էլ ինչու՞ ենք մենք ցեղասպանության հարցը քննարկելով/ընդունելով այս երկու հարևանների միջև սեպ խրում:

Եթե Ցեղասպանությունը տեղափոխենք դատական ոլորտ, ապա հարց. ի՞նչ եթե դատարանն ասի չի եղել Ցեղասպանություն... սա վերջնականապես մեր ճանապարհը կփակի:

Ցեղասպանության ճանաչման գործընթացը կվերածվի թատրոնի:

Մեզ Ցեղասպանության հուշարձանում թուրքի արհեստական ծաղիկ պետք չի, այլ մեզ առնվազն նրա բնական ներողությունն է պետք:

Ասենք թե Թուրքիան ճանաչեց ցեղասպանությունը, բա հետո ի՞նչ ենք անելու:

Եթե ցեղասպանության հարցը մոռացության ենթարկվի առաջիկա տաս տարում, ապա դա կարող է մոռացության ենթարկվել հավերժ:

Ցեղասպանությունը ճանաչելուց հետո պարզ է, որ մենք ծովից ծով Հայաստան չենք ստանալու ու կարող է ստացվել, որ մենք ընդամենը փոքրիկ երեխայի պես լացը կտրելու համար կոնֆետ ենք ստացել:

Սահմանի բացումը կխլացնի ցեղասպանության ճանաչման ալիքը:

Ենթադրենք, Թուրքիան ճանաչել է Ցեղասպանությունը, ընդունել է Սևրի պայմանագիրը, ու մենք ունենք 160 հազ. քառ. մետր տարածք, որտեղ ապրում է 20 միլիոն քուրդ, 5 միլիոն թուրք, 3-4 միլիոն հայ... ի՞նչ է լինելու այդ երկրի անունը:

Հասա, Գյուլը կգա, մի հատ ծաղիկ կառնի, կդնի հուշարձանին, էդ ծաղկի փողը կգնա բյուջե, տնտեսությունը կզարգանա... ասել կուզեմ, էդ ծաղկից մեզ ի՞նչ:

Հիմնական հարցը, որ պիտի քննարկենք, դա այն է, արդյոք մենք պատրաստ ենք սահմանի բացման համար վճարել լռությամբ...

Եթե հանձնաժողովներում պիտի քննարկենք զուտ մասնագիտական հարցեր, էդ դեպքում այդ հանձնաժողովի դերը ո՞րն է լինելու կամ նրա միջկառավարական ստատուսն ինչի՞ համար պիտի լինի:

Միջպետական հանձնաժողովի արդյունքը կլինի այն, որ առաջ կգան «կառավարական» պատմաբաններ:

3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք

Կարծում եմ, որ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը վաղ թե ուշ բերելու է Թուրքիայի կողմից Ցեղասպանության ճանաչմանը:

Մենք եթե հրաժարվենք ցեղասպանության ճանաչումից՝ ի օգուտ տնտեսական շահերի, ապա բախում կլինի Հայաստանի և սփյուռքի միջև... Թուրքիան էլ կասի.«Այ մարդ, քո երկիրը հրաժարվել է, էլ ի՞նչ ես ուզում...

Ընդամենը երկու տարի առաջ Թուրքիայում ոչ ոք չէր համարձակվի խոսել Ցեղասպանությունից, բայց հիմա անընդհատ շոշափվում է այդ թեման: Այնպես որ շփումները կբերեն Ցեղասպանության ճանաչման:

Մի բանի սերունդ հետո նոր կարող է ընդունվի ցեղասպանությունը, դա հիմա հնարավոր չէ:

Բոլոր հարցերը կապված են ցեղասպանության հետ: Առանց այդ հարցի լուծման հնարավոր չէ մնացած բոլոր հարցերի քննարկումը:

Ցեղասպանությունն ուսումնասիրող հանձնաժողովի ստեղծումն անընդունելի է, արդեն իսկ արձանագրված փաստերը կասկածանքի տակ չեն դնի:

Թուրքերը երբեք չեն ընդունի ցեղասպանության հարցը, չի կարելի հանձնաժողով ստեղծել մի բան էլ ուսումնասիրել այն, ինչը արդեն մի շարք երկրներ ընդունել են:

Ես կարծում եմ, որ Թուրքիան սահմանի բացման մասին անընդհատ խոսում է, որ մեր ձայնը կտրի ցեղասպանության հարցում:

Տրամաբանական չէ, որ թե՛ ցեղասպանություն ճանաչել փորձենք, թե՛ նորմալ հարաբերություններ ունենանք Թուրքիայի հետ: Դրանցից մեկը պետք է զիջի մյուսին:

Փակ սահմանների դեպքում մենք կարող ենք միջազգային ասպարեզում հնչեցնել մեր խնդիրները ու ավելի լսելի կլինենք:

Եթե թուրքերը ցեղասպանությունը ճանաչեն, բոլոր հարցերը կլուծվեն: Ամեն ինչ պտտվում է Ցեղասպանության հարցի շուրջ:

Նույնիսկ այն փաստը, որ թուրքը կասի «ցավում եմ» զգալի առաջընթաց կլինի:

Երկու ընկեր հանդիպում են արջի: Արջը բռնում է դրանցից մեկին, էն մյուսը փախչում է ու ասում եղ արջին թող արի: Ընկերն ասում ա. «Ես թողնում եմ, ինքը չի թողնում»: Հիմա մենք ինչքան ուզում ենք գոռալ Ցեղասպանության մասին, մեզ բաց չեն թողնելու: Էնքան ժամանակ, մինչև ուժեղ չլինենք:

Արդյոք մենք կարող ենք սահմանի բացման հաջորդ օրը պահանջել ցեղասպանության ընդունումը: Եթե ոչ, ապա պետք չէ սահմանը բացել, թեկուզ և տևտեսապես տուժենք:

Բացառվում է, որ Թուրքիան ճանաչի ցեղասպանությունը:

Ղարաբաղի հարցը մենք զենքով ենք լուծել, իսկ Ցեղասպանության հարցը ու հողերի հարցը զենքով լուծելի հարց չէ:

Եթե անգամ ԱՄՆ ճանաչի ցեղասպանությունը ոչինչ էլ չի փոխվի, անհրաժեշտ է, որ Թուրքիան ճանաչի այն:

Ցեղասպանությունը կընդունվի միայն եթե մենք ճնշման լծակ ունենանք թուրքերի վրա:

Ցեղասպանության հարցը ոչ միայն երկկողմ հարաբերությունների հարց է, այլ միջազգային հանրության:

Երրորդանի՝ Ծիծառնակաբերդում ծաղիկ դնելը ընդամենը շոու կլինի: Այդտեղ որևէ հաղթանակ, առավել ևս՝ դիվանագիտական, չկա:

Թուրքիան սահմանի բացումը օգտագործում է Ցեղասպանության հարցը լռեցնելու համար:

Այսպես թե այնպես, մենք կապերի մեջ ենք Թուրքիայի հետ: Սահմանի բացումը կնպաստի, որ մենք շփվենք թուրքերի հետ ու այդ դեպքում ցեղասպանության ընդունումը գուցե ավելի հեշտ լինի հասնել:

Թուրքիայի հիմնական խնդիրը մոռացության մատնել ցեղասպանության և հողերի վերադարձման հարցերը:

Ցեղասպանության զոհերի մասին ցավակցական արտահայտությունները մեզ բարոյական հաղթանակ են ապահովելու, ինչի կարիքը չունենք:

Մենք փնթի քաղաքականություն ենք վարում ցեղասպանության ճանաչման հարցում: Խնդիրը հենց մեր մեջ է:

60-ականներին խիստ ճնշումներ կային Ցեղասպանության թեման արծարծելու վերաբերյալ: Բայց մենք դրա մասին խոսում ու պայքարում էինք, չէ՞:

Մենք չենք փակել սահմանը. բայց և մինչ օրս էլ մեզ համար դեռ չենք որոշել, թե ինչ ենք ուզելու ցեղասպանության ճանաչման արդյունքում:

Սահմանների բացումը կնպաստի երկու երկրների հասարակությունների միջև հարաբերությունների ակտիվացմանը, ինչը Ցեղասպանության ճանաչման գործընթացում օգտակար դեր կարող է ունենալ:

Չինգերորդ տարբերակի դեպքում թուրքի ինքնությունը կվերանա: Եթե թուրքը տեղեկացվի ու ընդունի Ցեղասպանությունը, ապա այլևս թուրք չի լինի: Ցեղասպանությունը հենց այն բանի համար է արվել, որ Թուրքիան «թրքանա»:

Ոչ մի չափով չի անդրադառնա ցեղասպանության ճանաչման գործընթացի վրա, պարզապես կարող է մեկ-երկու տարի կիսաձայն խոսենք, հետո կրկին դա դառնա օրակարգի հարց:

Չայ մտավորականությունը դարասկզբին ոչ մի քայլ չձեռնարկեց ցեղասպանության կանխման ուղղությամբ:

Ժողովուրդը չի մոռանա ցեղասպանության մասին, իսկ իշխանությունն էլ չի կարող ժողովրդի կամքին հակառակ գնալ:

Հասարակ առևտրականին, որը Թուրքիայից ապրանք է ներմուծում, բացարձակ չի հետաքրքրում ցեղասպանության փաստը հիշելը և պահանջատեր լինելը:

Մեր ցեղասպանության ճանաչումը անհրաժեշտ է ոչ միայն մեզ, այլ աշխարհին, որ կանխարգելվի նման այլ ոճիր:

Ինչու՞ չէք մենք Նյուրնբերգի նման մի պրոցես պահանջում... Պատասխանս մեկն է, քանի որ մենք ինքներս չգիտենք, թե ինչ ենք ուզում. ներողություն, թե՞ մեկ այլ բան:

Եթե Էրդողանն իմանա, որ ծաղկով կպրծնի, հենց էսօր կգա ու ծաղիկ կդնի:

4. Սոցիալական երկխոսություն

Ցեղասպանության հարցը չի կարելի կապել սահմանի բացման հետ: Յետո ինչ, որ Թուրքիան այդ հարցերը շահարկում է: Ես, որպես Հայաստանի երիտասարդ քաղաքացի, որը հայրենադարձի զավակ է, ու որի ընտանիքը տուժել է Ցեղասպանությունից, սեփական ջանքով տուրիզմի մեջ հասել եմ լուրջ հաջողությունների: Մյուս տարի, տուրիզմի միջազգային համաժողովը տեղի է ունենալու Ստամբուլում, և ես պետք է մասնակցեմ դրան: Այո՛, իմ ընտանիքի ցավը հաշվի առնելով, կողմ եմ պահանջատիրությանը և Ցեղասպանության ճանաչմանը, սակայն, որպես գործարար, կողմ եմ նաև սահմանի բացմանը:

Եթե ցեղասպանությունը հիշողների տեսակարար կշիռը ժամանակի ընթացքում քջանա, գուցեև հնարավոր լինի, որ իշխանությունները շատ ավելի պրագմատիկ գործոններով առաջնորդվեն:

Ըստ թուրքերի հայերը կարող են մոռանալ Եղեռնը... Երեք միլիոն զոհ ենք տվել... Ինչպե՞ս մոռանանք:

45 տարի առաջ, երբ ես անգամ չգիտեի ցեղասպանության մասին, իմ հարսանիքն եղավ ապրիլի 24-ին: Իսկ հետո, երբ իմացա, իմ հարսանիքի օրն այլևս չի կշվում: Ո՞նց կարելի է մոռանալ ցեղասպանությունը:

Ես հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ եմ, ու երբ երեխաներին պատմում եմ Գրիգոր Չոփրապի մասին, հասնելով 1915 թվին, ես չեմ կարող ասել «երեխաներ, կներեք, այս մասը չեմ պատմի»:

Ցանկացած լուրջ քայլի դեպքում Ցեղասպանության հարցը լուծվելու է. այլ հարց է, թե ինչպես: Բայց գործընթացի առաջընթաց հաստատ կլինի: Իսկ տեղում դոփեղու պարագայում այդ հարցը, այսպես, թե այնպես, մնալու է բարձր ամբիոններից խոսելու մակարդակում:

Մենք պետք է լինենք ազգի դեսպան. Թուրքիայում ոչ մեկին չեն ասի, որ իր պապերը ոճիր են գործել: Սահմանների բացումը մեր համար մեծ հնարավորություն է ճշմարտությունը տարածելու հենց Թուրքիայի ներսում՝ լողափներում, քաղաքներում, գյուղերում...

Եթե տնտեսական հարաբերություններում կարող ենք ճկուն լինել, մի քիչ էլ զիջող, ապա պատմական հարթություն պետք է նույնիսկ ագրեսիվ լինենք:

Ես ցավով եմ մոտենում ցեղասպանության հարցին, բայց չեմ ուզում, որ իմ երեխան սոված մեծանա:

Կարևորը սահմանը բացելն է, թեկուզ՝ ցեղասպանությունից չխոսելու գնով:

Շատ երկրներ կան, որ հարևանների հետ թշնամի են, բայց շփվում են... Մենք պետք է կարողանանք մեր շահերից ելնելով ինչ-որ փոխզիջումների գնալ: Առաջին հերթին պետք է տնտեսապես զարգանալ: Մեր նպատակները կրթի ցեղասպանության հարցի լուծմանը:

Եթե ցեղասպանության հարցը մոռացության ենթարկվի առաջիկա տաս տարում, ապա դա կարող է մոռացության ենթարկվել հավերժ:

Եթե անգամ ԱՄՆ ճանաչի ցեղասպանությունը ոչինչ էլ չի փոխվի, անհրաժեշտ է, որ Թուրքիան ճանաչի այն:

Ղարաբաղի հարցը մենք զենքով ենք լուծել, իսկ Ցեղասպանության հարցը ու հողերի հարցը զենքով լուծելի հարց չէ:

Բացառվում է, որ Թուրքիան ճանաչի ցեղասպանությունը:

Մի քանի սերունդ հետո նոր կարող է ընդունվի ցեղասպանությունը, դա հիմա հնարավոր չէ:

Դեմ եմ սահմանի բացմանը, դա առաջին քայլն է դեպի ցեղասպանության մոռացումը:

Ես ուրք չեմ դնի Թուրքիա, մինչև չճանաչվի Ցեղասպանության հարցը: Ինձ համար աններելի է, երբ հայերը գնում, տնավորվում են Թուրքիայում:

Ցեղասպանության ճանաչման գործընթացի վրա սահմանի բացումը իհարկե կազդի. մեզ կստիպեն լռել, քանի որ կասեն, թե այսպիսով մենք խանգարում ենք հարաբերություններին:

Սահմանի բացումով մենք կլուծենք դեպի արևմուտք ճանապարհի խնդիրը: Սակայն, չպետք է մոռանալ նաև ցեղասպանության մասին:

Եթե բացում ենք սահմանը մինչև թուրքերը ճանաչեն ցեղասպանությունը, նշանակում է մենք էլ ենք ասում ցեղասպանություն չի եղել ու գրկաբաց ընդունում ենք նրանց:

Սահմանի բացումը վստահ կդանդաղեցնի ցեղասպանության ճանաչումը:

Մեր պահանջատիրությունն ու ցեղասպանության ընդունումը ավելի հեշտ կլինի, եթե բացենք սահմանները: Բարեկամության պայմաններում ինչ-որ բան համոզելն ու ապացուցելը ավելի հեշտ կլինի:

Սահմանների բացումով պայմանավորված է նաև տուրիզմի աճը. իսկ ինչ եթե թուրք զբոսաշրջիկներին բերենք Տեղասպանության թանգարան և ցույց տանք այն: Մենք պետք է գործենք համախմբված և ներքին մղումով:

Ես պետք է հնարավորություն ունենամ տեսնելու թուրքին, որ կարողանամ նրան ասել. «Դու Տեղասպանություն ես արել»:

Մենք կարող ենք լուռ առաջ տանել Տեղասպանության հարցը. չեմ հասկանում, մենք չե՞նք վիրավորվում, որ մենք անընդհատ բարձրաձայնում ենք, իսկ մեզ չեն լսում... Ինձ համար սա նշանակում է, որ անհրաժեշտ է տակտիկան փոխել:

Մեզ Տեղասպանության հուշարձանում թուրքի արհեստական ծաղիկ պետք չի, այլ մեզ ամնվազն նրա բնական ներողությունն է պետք:

Դարը փոփոխություն է բերում, մենք չենք ուզում մոռանալ ցեղասպանությունը: Բայց զուցե եկել է ժամանակը հարևանին ավելի լավ ճանաչելու: Գուցե սահմանը բացելուց հետո ավելի լավ կկարողանանք մեր ճշմարտությունը քարոզել:

Կարծում եմ, որ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը վաղ թե ուշ բերելու է Թուրքիայի կողմից Տեղասպանության ճանաչմանը:

Ընդամենը երկու տարի առաջ Թուրքիայում ոչ ոք չէր համարձակվի խոսել Տեղասպանությունից, բայց հիմա անընդհատ շոշափվում է այդ թեման: Այնպես որ շփումները կբերեն Տեղասպանության ճանաչման:

Ոչ մի չափով չի անդրադառնա ցեղասպանության ճանաչման գործընթացի վրա, պարզապես կարող է մեկ-երկու տարի կիսաձայն խոսենք, հետո կրկին դա դառնա օրակարգի հարց:

60-ականներին խիստ ճնշումներ կային Տեղասպանության թեման արծարծելու վերաբերյալ: Բայց մենք դրա մասին խոսում ու պայքարում էինք, չէ՞:

Սահմանների բացումը կնպաստի երկու երկրների հասարակությունների միջև հարաբերությունների ակտիվացմանը, ինչը Տեղասպանության ճանաչման գործընթացում օգտակար դեր կարող է ունենալ:

Սահմանի բացումը ավելի է երկարացնելու Տեղասպանության ճանաչման գործընթացը:

Եթե մենք ունենք պահանջ Թուրքիայի նկատմամբ, այսինքն, պատկերավոր ասած, ես հարևանիս դատի եմ տվել, ու հետո ամեն օր գնում եմ հարևանիս տուն ու սուրճ եմ խմում, հարևանություն եմ անում, ապա դատավորը ի՞նչ պետք է անի:

Շատ հնարավոր է, որ սահմանի բացումով Թուրքիան փորձի լռեցնել Հայաստանը:

Ինձ թվում է, որ սահմանի բացումը մի քիչ էլ կխանգարի ցեղասպանության ճանաչմանը: Սահմանը կբացվի, մի փոքր տնտեսական աշխուժացում կսկսվի, մարդկանց մոտ կբթանա պահանջը:

Սահմանի բացումից հետո, երբ շփումները շատանան, կկարողանա՞ն արդյոք մեր երիտասարդները համոզել ու ապացուցել թուրք հասարակությանը, որ ցեղասպանությունը եղել է, որ իրենց պապերը կոտորել են: Վախենում եմ, որ հակառակը լինի, չէ՞ որ թուրքական դիվանագիտությունն ու տնտեսությունն ավելի հարուստ են:

Ուրուզվայից լուրը լսեցի՞ք. հիմա էլ նոր պետություններ են ի հայտ գալիս, որոնք տարակուսում են՝ հայերս ինքներս ե՞նք կասկածի տակ դնում ցեղասպանությունը:

Տեղասպանության ճանաչման ընթացքը արդեն դանդաղել է, վախենում եմ, որ սահմանի բացումից հետո այն ետին պլան մղվի:

Եթե հիմա մենք Թուրքիայի հետ հարաբերությունները բարելավենք, մյուս երկրները կասեն էլ ինչու՞ ենք մենք ցեղասպանության հարցը քննարկելով/ընդունելով այս երկու հարևանների միջև սեպ խրում:

Տեղասպանության ճանաչման գործընթացը կվերածվի թատրոնի:

Սահմանի բացումը կխլացնի ցեղասպանության ճանաչման ալիքը:

Զե՞ք կարծում, որ սահմանի բացումից հետո թուրքերին ավելի հեշտ կլինի լռեցնել քաղաքականությունը իրականացնել:

Արդյոք մենք պատրաստ ենք սահմանի բացման համար վճարել լռությամբ...

Մենք եթե հրաժարվենք ցեղասպանության ճանաչումից՝ ի օգուտ տնտեսական շահերի, ապա բախում կլինի Հայաստանի և սփյուռքի միջև... Թուրքիան էլ կասի. «Այ մարդ, քո երկիրը հրաժարվել է, էլ ի՞նչ ես ուզում...»

Արդյոք մենք կարող ենք սահմանի բացման հաջորդ օրը պահանջել ցեղասպանության ընդունումը: Եթե ոչ, ապա պետք չէ սահմանը բացել, թեկուզ և տնտեսապես տուժենք:

Փակ սահմանների դեպքում մենք կարող ենք միջազգային ասպարեզում հնչեցնել մեր խնդիրները ու ավելի լսելի կլինենք:

Տրամաբանական չէ, որ թե՛ ցեղասպանություն ճանաչել փորձենք, թե՛ նորմալ հարաբերություններ ունենանք Թուրքիայի հետ: Դրանցից մեկը պետք է գիջի մյուսին:

Մենք փնթի քաղաքականություն ենք վարում ցեղասպանության ճանաչման հարցում: Խնդիրը հենց մեր մեջ է:

Այսպես թե այնպես, մենք կապերի մեջ ենք Թուրքիայի հետ: Սահմանի բացումը կնպաստի, որ մենք շփվենք թուրքերի հետ ու այդ դեպքում ցեղասպանության ընդունումը գուցե ավելի հեշտ լինի հասնել: Թուրքիայում կա 101 հոդվածը: Ինչու՞ մենք ինքներս չենք ընդունում նմանատիպ մի հոդված:

Ինչու՞ ենք վախենում պատմական հանձնաժողով ստեղծելուց: Մենք ոչինչ չունենք վախենալու:

Հարցը ոչ թե հանձնաժողով ստեղծելը կամ չստեղծելն է, այլ պատմաբանների որակը:

Մեր ցեղասպանության ճանաչումը անհրաժեշտ է ոչ միայն մեզ, այլ աշխարհին, որ կանխարգելի նման այլ ոճիր:

Զպետք է այնպես անել, որ աշխարհը կարծի, թե Հայաստանի միակ ինդիքը ցեղասպանության հարցն է:

Սահմանի բացումը միջոց է, իսկ ցեղասպանության ճանաչումը՝ նպատակ:

Եթե թուրքը տեղեկացվի ու ընդունի Ցեղասպանությունը, ապա այլևս թուրք չի լինի: Ցեղասպանությունը հենց այն բանի համար է արվել, որ Թուրքիան «թրքանա»:

Ցեղասպանության հարցը ոչ միայն երկկողմ հարաբերությունների հարց է, այլ միջազգային հանրության:

Ցեղասպանությունը կընդունվի միայն եթե մենք ճնշման լծակ ունենանք թուրքերի վրա:

Արդեն բավականաչափ երկրներ ճանաչել են ցեղասպանությունը, մենք ճանապարհի կեսին ենք հասել: Արդեն որոշակի մակարդակից ոչ մի դեպքում չպետք է և չենք դառնա հետ, իսկ Թուրքիան էլ այդքան ուժ չի ունենա մեզ պարտադրելու:

Ես կարծում եմ, որ Թուրքիան սահմանի բացման մասին անընդհատ խոսում է, որ մեր ձայնը կտրի ցեղասպանության հարցում:

Ելթահանձնաժողովի ստեղծման դեպքում եթե սկսում ես քննարկել պատմության այդ ցավոտ էջը, դրանով կասկածի տակ ես առնում իսկությունը: Անթույլատրելի է:

Եթե հանձնաժողովներում պիտի քննարկենք զուտ մասնագիտական հարցեր, էդ դեպքում այդ հանձնաժողովի դերը ո՞րն է լինելու կամ նրա միջկառավարական ստատուսն ինչի՞ համար պիտի լինի:

Միջպետական հանձնաժողովի արդյունքը կլինի այն, որ առաջ կգան «կառավարական» պատմաբաններ:

Թուրքերը երբեք չեն ընդունի ցեղասպանության հարցը, չի կարելի հանձնաժողով ստեղծել մի բան էլ ուսումնասիրել այն, ինչը արդեն մի շարք երկրներ ընդունել են:

Ցեղասպանությունն ուսումնասիրող հանձնաժողովի ստեղծումն անընդունելի է, արդեն իսկ արձանագրված փաստերը կասկածանքի տակ չեն դնի:

Ինչու՞ չեք մենք Նյուրնբերգի նման մի պրոցես պահանջում... Պատասխանս մեկն է, քանի որ մենք ինքներս չգիտենք, թե ինչ ենք ուզում. ներողություն, թե՞ մեկ այլ բան:

Եթե Երդողանն իմանա, որ ծաղկով կպրծնի, հենց էսօր կգա ու ծաղիկ կդնի:

Ասենք թե Թուրքիան ճանաչեց ցեղասպանությունը, բա հետո ի՞նչ ենք անելու:

Եթե Ցեղասպանությունը տեղափոխենք դատական ոլորտ, ապա հարց. ի՞նչ եթե դատարանն ասի չի եղել Ցեղասպանություն... սա վերջնականապես մեր ճանապարհը կփակի:

Հասա, Գյուլը կգա, մի հատ ծաղիկ կառնի, կդնի հուշարձանին, էդ ծաղկի փողը կգնա բյուջե, տնտեսությունը կզարգանա... ասել կուզեմ, էդ ծաղկից մեզ ի՞նչ:

Ցեղասպանությունը ճանաչելուց հետո պարզ է, որ մենք ծովից ծով Հայաստան չենք ստանալու ու կարող է ստացվել, որ մենք ընդամենը փոքրիկ երեխայի պես լացը կտրելու համար կոնֆետ ենք ստացել:

Բոլոր հարցերը կապված են ցեղասպանության հետ: Առանց այդ հարցի լուծման հնարավոր չէ մնացած բոլոր հարցերի քննարկումը:

Եթե թուրքերը ցեղասպանությունը ճանաչեն, բոլոր հարցերը կլուծվեն: Ամեն ինչ պտտվում է Ցեղասպանության հարցի շուրջ:

Նույնիսկ այն փաստը, որ թուրքը կասի «ցավում եմ» զգալի առաջընթաց կլինի:

Երկու ընկեր հանդիպում են արջի: Արջը բռնում է դրանցից մեկին, էն մյուսը փախչում է ու ասում եղ արջին թող արի: Ընկերն ասում ա. «Ես թողնում եմ, ինքը չի թողնում»: Հիմա մենք ինչքան ուզում ենք գոռալ Ցեղասպանության մասին, մեզ բաց չեն թողնելու: Էնքան ժամանակ, մինչև ուժեղ չլինենք:

Մենք չենք փակել սահմանը. բայց և մինչ օրս էլ մեզ համար դեռ չենք որոշել, թե ինչ ենք ուզելու ցեղասպանության ճանաչման արդյունքում:

Հայ մտավորականությունը դարասկզբին ոչ մի քայլ չձեռնարկեց ցեղասպանության կանխման ուղղությամբ:

Հասարակ առևտրականին, որը Թուրքիայից ապրանք է ներմուծում, բացարձակ չի հետաքրքրում ցեղասպանության փաստը հիշելը և պահանջատեր լինելը:

Ցեղասպանության զոհերի մասին ցավակցական արտահայտությունները մեզ բարոյական հաղթանակ են ապահովելու, ինչի կարիքը չունենք:

Թուրքիայի հիմնական խնդիրը մոռացության մատնել ցեղասպանության և հողերի վերադարձման հարցերը:

Թուրքիան սահմանի բացումը օգտագործում է Ցեղասպանության հարցը լռեցնելու համար:

Էրդողանի՝ Ծիծառնակաբերդում ծաղիկ դնելը ընդամենը շոու կլինի: Այդտեղ որևէ հաղթանակ, առավել ևս՝ դիվանագիտական, չկա:

Բ. Պահանջատիրություն

1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ

Սահմանի բացումը շատ կարևոր էմ համարում մեր երկու Հայրենիքների միավորման համար:

Մենք չպետք է վավերացնենք Ղարսի պայմանագիրը: Այլապես ինչո՞ւ ենք ցեղասպանության ճանաչում պահանջում, եթե հետո չենք կարողանալու հող ու փոխհատուցում պահանջել:

Պահանջատիրությունը մտում է պահանջատիրություն, քննարկելու ուրիշ ոչինչ չկա:

Մենք մեր պահանջատիրությունից չենք հրաժարվելու, երբեք:

Եթե հողերը վերցնենք, ինդիրներ չեն առաջանա, որպես օրինակ կարելի է դիտարկել Արցախի օրինակը:

Թող քրդերը ապրեն մեր հողերում, բայց հողերը մերը լինեն:

Եթե աշխարհը ընդունի ցեղասպանությունը, կարող ենք պահանջել մեր հողերը:

Սահմանի բացումը բնականաբար մեզ համար շատ օգտակար կլինի, բայց դրանից հետո հաստատ կբարձրացնենք հողերի հետ բերման ինդիրը:

Պետք է հաշվարկ անենք. առաջինը սահման բացել ու հզորանալ, թե շարունակել պահանջել մի երկրից, որը հազար անգամ հզոր է մեզնից:

Կարսի պայմանագրից նրանք պիտի հրաժարվեն. չկա այլևս Խորհրդային Հայաստան, ուստի չկա և պայմանագիր:

Եթե անգամ մեր հողերը վերադարձնեն՝ ես չեմ գնա այնտեղ ապրելու:

Սահմանի բացումը Թուրքիային ձեռնտու բայլ է, միգրացե մի քիչ ձգելուց և ճիշտ քաղաքականություն վարելուց հետո հող էլ կարողանանք վերցնել:

Ես մեծ մարդ եմ, ես չեմ գնա մեր պատմական հողերում ապրելու, բայց գուցե իմ թոռները գնան...

Քրդերի համար ստեղծվում է պետություն հյուսիսային Իրաքում, թող գնան այնտեղ:

Մենք տնտեսական շահից ելնելով չպետք է մոռանանք, որ Հայ Դատ ունենք:

Անընդունելի է գոյություն ունեցող սահմանների ճանաչումը ըստ այս արձանագրությունների, որը նշանակում է խայտառակ Կարսի պայմանագրի վավերացում:

Այսօր Թուրքիայում թուրքացած, բայց գենետիկորեն գտարյուն հայերը շատ մեծ թիվ են կազմում: Մենք պետք է կարողանանք նրանց մոտ արթնացնել հայի ինքնագիտակցությունը ու օգտագործել նրանց ներուժը:

Ներողությունը բավարար չէ, հողերը պետք է վերադարձնեն:

Այսօր քրդերը անկախություն են ուզում, մենք ինչո՞ւ չենք օգտագործում նրանց: Վարդան Մամիկոնյանն ասում էր. «Եթե սատանան պարսիկի թշնամին է, ուրեմն իմ բարեկամն է»:

Մենք ուզում ենք մեր հողերը, բայց առանց քրդերի:

Ես չեմ ուզում Կարսի պայմանագիրը այս պրոցեսի արդյունքում դառնա վերջնական:

Թուրքիան մեզ հող չի տա, բայց բարոյական հաղթական եմ ուզում:

Պետք է չի քննակել միայն սահմանի բացման հարցը: Ստորագրված արձանագրությունները կետեր են պարունակում սահմանների փոխադարձ ճանաչման վերաբերյալ ու այլ շատ հարցեր, որոնք վտանգավոր են:

Ցեղասպանության ճանաչումը ինքնանպատակ չի: Դրա հստակ նպատակը մեր հողերի վերադարձն ու բոլոր տնտեսական ու ֆինանսական կորուստների փոխհատուցումն է:

Ես չհասկացա, բա մեր իշխանություններն ինչ են անելու, որ հանկարծ թույլ տան, հողերը հետ տալու դեպքում քրդերն էլ հետը գան: Դա պետք է կանխվի:

Թուրքերը քրդերի միջոցով են հայերին բնաջնջել: Հայաստանի ու Թուրքիայի արագ մերձեցման դեպքում առաջին վտանգը կլինեն մեր հարևանությամբ ապրող քրդերը:

Առաջին հերթին մենք ճանապարհ ենք բացում դեպի մեր արևմտյան տարածքներ: Ու դա ոչ թե կբերի մեր պատմության մոռացությանը, այլ ընդհակառակը, մենք կկարողանանք վերջապես տեսնել այդ ամեն ինչը:

Հայ Դատի խնդիրը մենք կարող ենք ավելի մեծ թափով նոր էջից դնել հենց սահմանը բացելուց հետո:

Մենք չպետք է հյուրի նման գնանք Թուրքիա, խաչ դնենք մեր եկեղեցու վրա և վերադառնանք, այլ պարբերաբար հոգ տանենք մեր արժեքների մասին:

Ցեղասպանության ճանաչումը չի կարող լինել մեր վերջնական նպատակը, վերջնական նպատակը պիտի լինի հայ դատը՝ հայերի գերիշխանությունը պատմականորեն հայկական տարածքներում:

Աշխարհում սահմաններ հաստատում են պատերազմի միջոցով կամ ուժեղների կողմից: Մենք առայժմ դրանից ոչ մեկին պատրաստ չենք:

Իմ որդին կարող է ապագայում մեր հողերը պահանջել Թուրքիայից, սակայն ես այսօր դեռ չեմ կարող դա անել:

Ես բարոյապես «կկշտանամ» միայն այն դեպքում, եթե լուծվի մեր հողերի հարցը: Եթե մենք Թուրքիային ծնկի բերենք և վերադարձնենք մեր հողերը, ապա քրդերի հետ պայթարելը խնդիր չի լինի:

Իսկ ես ասում եմ, սպիտակ ձիս նստելու եմ ու գնամ Թուրքիա:

Եթե չես կարողանում Արցախը բնակեցնել, ինչո՞ւ խոսենք Արևմտյան Հայաստանի հողերի մասին:

Ոնց ամերիկացիներն ունեն ամերիկյան երազանք, այդպես էլ մեզ է հարկավոր մեր երազանքը՝ Արևմտյան Հայաստան, որ օրերից մի օր պետք է հետ բերենք: Բայց դա երազանք է, անիրականանալի: Թերևս պետք է, որ այդպես էլ մնա...

Խոսելով հող չեն վերցնում: Քսան թվին մենք արդեն հանձնվել ենք: Այսօր հաղթելու համար միայն մի ճանապարհ ունենք՝ ուժի միջոցով:

Մենք տաքարյուն ժողովուրդ ենք ու սահմանը բացվելուց հետո, տեսնելով, թե ինչ են արել մեր եկեղեցիների հետ քրդերը, կարող է կռվենք ու մի քանի հոգու սպանել: Այս մթնոլորտում ես դեմ եմ սահմանի բացմանը:

Հարաբերությունների հաստատումը այս արձանագրություններով հակասում է մեր Սահմանադրությանն ու Անկախության Հռչակագրին:

Իսկ ինչո՞ւ ենք միայն մտածում, որ բացվում է Հայաստանի ու Թուրքիայի միջև սահմանը... Ինչո՞ւ չենք մտածում, որ բացվում է Հայաստանի Հանրապետության և Արևմտյան Հայաստանի միջև սահմանը...

2. Չգացմունքներ, Վախեր, Մտահոգություններ

Ենթադրենք միլիոնավոր քրդերով բնակեցված հողերը տան մեզ, ի՞նչ ենք անելու:

Մեր պապերի դարավոր պայթարը դնում ենք հարվածի տակ...

Մենք վախենում ենք, որ սահմանի բացումը դեմոգրաֆիա կփոխի, բայց չենք վախենում, որ հող հետ ուզենք, հայերով փոքրամասնություն ենք կազմելու... քուրդ ու թուրք ա լցվելու:

Եթե մենք պահանջատեր լինենք ու հողեր պահանջենք՝ ո՞վ մեզ կհասկանա:

Սովահար քրդերին պատկերացնո՞ւմ եք Հայաստանում:

Սահմանը բացելով մենք վտանգում ենք հայկական դատը, հայոց հարցի լուծումը: Այսպիսով մենք ասես օգնում ենք իրենց փակելու մեր պահանջատիրության խնդիրը:

Մենք այնքան լքյալ հողեր ունենք՝ դրանք մշակել չենք կարողանում, ասենք պահանջեցինք ու պապական հողերն էլ ստացանք՝ դրանց հետ ո՞նց ենք վարվելու:

Էսօր մեր մի կտոր Հայաստանի հողերի ինստուն տոկոսը չի մշակվում: Արևմտյան Հայաստանի հողերը որ մեզ նվիրեն, ի՞նչ ենք անելու. նոր բեռ ենք բարդելու մեր էրեխեքի ուսերին:

Եթե մենք չենք ճանաչում Թուրքիայի այսօրվա սահմանը, ապա ո՞ր սահմանն ենք բացում:

ԼՂ-ում տալիս են բարձր աշխատավարձ, պայմաններ, տուն, բայց ով կգնա այնտե՞ր: Ու այս խելքով մեր պատմական հողերն ենք սպասում:

Թուրքիայի քաղաքականության գիծ է. քրդական հարցն աստիճանաբար տեղափոխել դեպի Հայաստան:

Եթե մենք ստորագրենք այս արձանագրությունները, նշանակում է մենք հրաժարվում ենք Հայ Դատից, ճանաչում ենք բոլոր միջազգային պայմանագրերը ու այդ թվում նաև Կարսի պայմանագիրը:

Մենք էլ պիտի քրդերի ցեղասպանություն անե՞նք... Ո՞ր ուղարկենք 20մլն քրդերին, անգամ եթե մեր հողերը մեզ տան:

Հողերը ներկա վիճակով հետ տրվելու դեպքում մի հինգ տարվա մեջ մեր երկիրը կկոչվի Հայաստանի Քրդական Հանրապետություն:

Չնայած հռչակվում է առանց նախապայմանների սահմանը բացելու մասին, սակայն կան շատ հստակ նախապայմաններ՝ սահմանների փոխադարձ ճանաչում, տարածքային ամբողջականություն:

Որ մեր տարածքները վերադարձնենք, քրդերի ձեռքը կրակը կընկնենք: Հայաստանում կլինի երեք միլիոն հայ ու յոթ միլիոն քուրդ:

Մենք չենք գնա Արևմտյան Հայաստան ապրելու. ինչո՞ւ հիմա ոչ մեկը չի գնում Ղարաբաղում բնակվի:

Ասենք թե մեր պահանջը բավարարվում է ու մեզ հետ են վերադարձնում մեր հողերը՝ յոթ միլիոն քրդով: Ի՞նչ ենք անելու:

Մեր հասարակությունների մերձեցումից հետո, թուրքական բանկերում հայերի ավանդները հետ կվերադարձնե՞ն:

Մեր պապական հողերում քրդեր են ապրում, ի՞նչ անենք դրանց՝ մորթե՞նք:

Վրաստանը սարքեցինք տվինք վրացիներին, Ադրբեջանը սարքեցինք տվեցինք ադրբեջանցիներին, Հայաստանն էլ տանք քրդերի՞ն...

Շատ հևարավոր է, որ Թուրքիան և՛ իր հողերը և ղրա հետ միասին 7 միլիոն քողերին, որպեսզի Յայաստանի կանգնի ավելի բարդ ինդրի առաջ:

Քուրդն Էժան աշխատուժ ա. կգա, Էստեղ մեր ձեռից աշխատանքը կխլի, ավելին՝ իրենց կրթական հարցերը Էլի կլուծեն մեր հաշվին:

3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք

Քողերը մեր դաշնակիցը չեն, որովհետև Էղ հողերը հիմա իրենցն են... Նրանք չեն տա.. Քողերն Էլ ևսյն թուրքն են...

Բարոյական հաղթանակը ո՞րն է. Հաղթանակն այն է, որ մեր հողերը մնան մեզ:

Քողերը Էթե պետություն դարձան, առաջինը մեզ են վսասելու... Ինչ տարբերություն Էղ հողերը ում ձեռք են՝ թուրքի, թե քողի:

Մենք պահանջողի դերում ենք, բայց իրական ուժ չենք ներկայացնում:

Միգուցե ցեղասպանությունը Թուրքիան ընդունի, բայց հող երբեք չի տա... հողը արյունով են վերցնում ու ջրում՝ քրտինքով...:

Մենք պատերազմին ենք հավատում: Հողերը արյամբ են վերցնում:

Արևմտյան Յայաստանում հիմա միայն քողեր են ապրում, որովհետև դա իրենց հողը չի, Նրանք վախենում են, որ մի օր հայերը հետ կվերցնեն: Բայց հայերը միասնական չեն և դրա համար Էլ չի լուծվում ոչ մի հարց:

Այսօր սահմանը գծված է, ու ուզենք, թե չուզենք, մենք դա ճանաչում ենք: Եթե ուժեղ հարևանը ցանկապատել է իր տարածքը ու դու չես կարող մտնել նրա տարածքը, ո՞նց ես ասում դա քո հողերն են:

Պահանջատեր լինելու համար, պետք է պահանջ ունենալ ու պահանջին տեր կանգնել:

Ինչքան Էլ մենք հող ուզենք՝ հող տվող չի լինի, ինչքան Էլ որդուս պատմեմ ցեղասպանության մասին՝ ոչինչ չի փոխվի:

Եթե մենք սահմանը փակ ենք պահում, սահմանը ռուսն է պահում, բայց հա գոռում մենք մեր հողերի մասին, ի՞նչ ենք ստանալու: Երազանք...

Քողերն Էս հարցում հայերի դաշնակիցը լինել չեն կարող:

Եթե մենք ավելի ուժեղ լինենք՝ կարող ենք գնալ ու մեր պապերի հողը գնել, հաստատվել ու ապրել մեր պապական հողում:

Հնարավոր է դիվանագիտական հարաբերություններ հաստատել և մնալ պահանջատեր:

Մենք հաստատ ինդիր կունենանք նաև քողերի հետ, չէ՞ որ հիմա Նրանք են ապրում մեր հողերում:

Քողերով Է բնակեցված մեր պատմական հողերի մեծ մասը, ուրեմն առաջիկայում մենք գործ ենք ունենալու քողերի հետ:

Պահանջատիրության ու հարցերի մասին բարձրաձայնում ենք միայն ապրիլյան օրերին: Դրանից առաջ ու հետո ապրում ենք առանց դա օրակարգում ունենալու:

Տրապիզոնի նահանգում միլիոն ու կես հայեր կան. Ո՞վ ասաց, թե միայն քողեր են ապրում Արևմտյան Յայաստանում...

Մենք նախկինում էլ չէինք մտածում, թե գալու է այս օրը, երբ մենք քննարկելու ենք թուրքի հետ սահմանի բացումը: Ու նույն տրամաբանությամբ էլ գալու է այն օրը, երբ մենք մեր պահանջատիրությունն իրացնելու ենք:

Թուրքիան խառնվել է իրար, որովհետև Կարսի պայմանագրի վերակնքման ժամկետն է մոտենում, դրա համար էլ ամեն բան անում է մեզ պարտադրելու, որ սահմաններ ճանաչենք:

Սահմանների փակ լինելու պատճառով մենք չենք կարողանում վերանորոգել Թուրքիայի տարածքում գտնվող պատմամշակութային արժեքները, հուշարձանները:

Այսօր մենք մեր եղածը չենք կարողանում պահպանել, ինչ մնաց թե վերանորոգենք Թուրքիայի տարածքի եղած հուշարձանները:

Ինձ թվում է, որ Արևմտյան Հայաստանը վերադարձնելուց հետո Լուսից իսկապես հայը կգա ու կապրի Կարսում:

Արագ տեմպերով մերձեցումը թուրքերի հետ հնարավոր չէ. եթե նույնիսկ վերադարձնեն Ղարսը, արտասահմանի ոչ մի հայ չի գա և բնակվի այդ հողերում, այդ իսկ պատճառով իրենք էլ իրենց հերթին են խոչընդոտում այդ գործընթացը:

Եստույնիայի բնակչության մեծամասնությունն անկախությունից հետո ռուս էր, բայց կարողացա՞ն ռուս նախագահ անցկացնել: Կան մեխանիզմներ յոթ միլիոն քուրդ ունենալով՝ չդառնալ քրդական պետություն:

Խաղաղության հաշտություն չկա նաև Ռուսաստանի և Ճապոնիայի միջև, սահմանների լուրջ վեճ կա, սակայն հարաբերվում են, տնտեսական և քաղաքական հարաբերություններն անգամ զարգանում են:

Մինչև հիմա Կանադան չի ճանաչել ԱՄՆ-ի սահմանը, Ռուսաստանը չի ճանաչել Ճապոնիայի սահմանը, բայց վա՞տ են ապրում իրար հետ:

Առանց սահմանների ճանաչման աքսուրդ է սահմանների մասին խոսելը:

Սահմանի բացումը ոչ թե Թուրքիայի հետ սահմանի բացում է նշանակում, այլ մեր պատմական հայրենիքի հետ սահմանի բացումը:

Երբ 88 եղավ, մեր կռիվը հոգու խորքում աղբյուրանցու հետ չէր, թուրքի հետ էր... թուրքի վրեժն էինք հանում դրանցից: Մեզ միշտ միավորել է վրեժի զգացումը... լավ թե վատ, մեզ միավորողն այդ է:

Տարածքային ամբողջականությունը և սահմանների ճանաչումը երկու տարբեր հարցեր են. օրինակ, Վրաստանի հետ էլ մեր սահմաններ դեմարկացված չեն:

Թուրքիայում մեծ քանակով քրդեր են ապրում, որոնք շատ ավելի լավ են տրամադրված հայերի նկատմամբ:

Հենց պահանջատիրության ոգին է, որ մեզ թույլ տվեց հաղթանակի հասնել Ղարաբաղյան հակամարտության հարցում:

Ինչո՞ւ ենք իլյուզիաների հետևից ընկել, ի՞նչ է, մեր գլխին հիմա չեն տալիս, մեզ չե՞ն ստիպում Կարսի պայմանագրի մասին լռել ու ընդունել:

Ստացվում է, որ մենք մեր հողերն ուզում ենք մեկ այլ ժողովրդից, որն ապրում է այդտեղ, այլ ոչ թե նրանից, ով մեզանից խլել է դրանք:

Կարսի պայմանագիրը կարդացել են մեզանից 4-ը, հայ-թուրքական հարաբերություններում էլի տասնյակ փաստաթղթեր կան, որոնք չենք կարդացել: Համատարած անգրագիտություն է:

Ի՞նչն է փակում թուրքերի կամ քրդերի Հայաստան գալու ճանապարհը: Որ ուզեց, այսօր էլ սարով կամ Վրաստանով կգա:

4. Սոցիալական երկխոսություն

Սահմանի բացումը շատ կարևոր էմ համարում մեր երկու Հայրենիքների միավորման համար:

Առաջին հերթին մենք ճանապարհ ենք բացում դեպի մեր արևմտյան տարածքներ: Ու դա ոչ թե կրեթի մեր պատմության մոռացությանը, այլ ընդհակառակը, մենք կկարողանանք վերջապես տեսնել այդ ամեն ինչը:

Հայ Դատի ինդիորը մենք կարող ենք ավելի մեծ թափով սոր էջից դնել հենց սահմանը բացելուց հետո:

Մենք չպետք է հյուրի նման գնանք Թուրքիա, իսաջ դնենք մեր եկեղեցու վրա և վերադառնանք, այլ պարբերաբար հոգ տանենք մեր արժեքների մասին:

Ոնց ամերիկացիներն ունեն ամերիկյան երազանք, այդպես էլ մեզ է հարկավոր մեր երազանքը՝ Արևմտյան Հայաստան, որ օրերից մի օր պետք է հետ բերենք: Բայց դա երազանք է, անիրականանալի: Թերևս պետք է, որ այդպես էլ մնա...

Իսկ ինչու՞ ենք միայն մտածում, որ բացվում է Հայաստանի ու Թուրքիայի միջև սահմանը... Ինչու՞ չենք մտածում, որ բացվում է Հայաստանի Հանրապետության և Արևմտյան Հայաստանի միջև սահմանը...

Սահմանների փակ լինելու պատճառով մենք չենք կարողանում վերանորոգել Թուրքիայի տարածքում գտնվող պատմամշակութային արժեքները, հուշարձանները:

Սահմանի բացումը ոչ թե Թուրքիայի հետ սահմանի բացում է նշանակում, այլ մեր պատմական հայրենիքի հետ սահմանի բացումը:

Տարածքային ամբողջականությունը և սահմանների ճանաչումը երկու տարբեր հարցեր են. օրինակ, Վրաստանի հետ էլ մեր սահմաններ դեմարկացված չեն:

Ի՞նչն է փակում թուրքերի կամ քրդերի Հայաստան գալու ճանապարհը: Որ ուզեց, այսօր էլ սարով կամ Վրաստանով կգա:

Մենք չպետք է վավերացնենք Ղարսի պայմանագիրը: Այլապես ինչու՞ ենք ցեղասպանության ճանաչում պահանջում, եթե հետո չենք կարողանալու հող ու փոխհատուցում պահանջել:

Պահանջատիրությունը մնում է պահանջատիրություն, քննարկելու ուրիշ ոչինչ չկա:

Մենք մեր պահանջատիրությունից չենք հրաժարվելու, երբեք:

Մենք տնտեսական շահից ելնելով չպետք է մոռանանք, որ Հայ Դատ ունենք:

Պետք չի քննակել միայն սահմանի բացման հարցը: Ստորագրված արձանագրությունները կետեր են պարունակում սահմանների փոխադարձ ճանաչման վերաբերյալ ու այլ շատ հարցեր, որոնք վտանգավոր են:

Հարաբերությունների հաստատումը այս արձանագրություններով հակասում է մեր Սահմանադրությանն ու Անկախության Հռչակագրին:

Մեր պապերի դարավոր պայթարը դնում ենք հարվածի տակ...

Սահմանը բացելով մենք վտանգում ենք հայկական դատը, հայոց հարցի լուծումը: Այսպիսով մենք ասես օգնում ենք իրենց փակելու մեր պահանջատիրության ինդիորը:

Եթե մենք ստորագրենք այս արձանագրությունները, նշանակում է մենք հրաժարվում ենք Հայ Դատից, ճանաչում ենք բոլոր միջազգային պայմանագրերը ու այդ թվում նաև Կարսի պայմանագիրը:

Չնայած հռչակվում է առանց նախապայմանների սահմանը բացելու մասին, սակայն կան շատ հստակ նախապայմաններ՝ սահմանների փոխադարձ ճանաչում, տարածքային ամբողջականություն:

Մեր հասարակությունների մերձեցումից հետո, թուրքական բանկերում հայերի ավանդները հետ կվերադարձնեն:

Թուրքիան խառնվել է իրար, որովհետև Կարսի պայմանագրի վերակնքման ժամկետն է մոտենում, դրա համար էլ ամեն բան անում է մեզ պարտադրելու, որ սահմաններ ճանաչենք:

Այսօր մենք մեր եղածը չենք կարողանում պահպանել, ինչ մնաց թե վերանորոգենք Թուրքիայի տարածքի եղած հուշարձանները:

Ինչու՞ ենք իլյուզիաների հետևից ընկել, ի՞նչ է, մեր գլխին հիմա չեն տալիս, մեզ չեն ստիպում Կարսի պայմանագրի մասին լռել ու ընդունել:

Պետք է հաշվարկ անենք. առաջինը սահման բացել ու հզորանալ, թե շարունակել պահանջել մի երկրից, որը հազար անգամ հզոր է մեզնից:

Եթե անգամ մեր հողերը վերադարձնեն՝ ես չեմ գնա այնտեղ ապրելու:

Ես մեծ մարդ եմ, ես չեմ գնա մեր պատմական հողերում ապրելու, բայց գուցե իմ թոռները գնան...

Թուրքիան մեզ հող չի տա, բայց բարոյական հաղթական են ուզում:

Եթե աշխարհը ընդունի ցեղասպանությունը, կարող ենք պահանջել մեր հողերը:

Սահմանի բացումը բնականաբար մեզ համար շատ օգտակար կլինի, բայց դրանից հետո հաստատ կբարձրացնենք հողերի հետ բերման խնդիրը:

Կարսի պայմանագրից նրանք պիտի հրաժարվեն. չկա այլևս խորհրդային Չայաստան, ուստի չկա և պայմանագիր:

Սահմանի բացումը Թուրքիային ձեռնտու քայլ է, միգրացիոն մի քիչ ձգելուց և ճիշտ քաղաքականություն վարելուց հետո հող էլ կարողանանք վերցնել:

Անընդունելի է գոյություն ունեցող սահմանների ճանաչումը ըստ այս արձանագրությունների, որը նշանակում է խայտառակ Կարսի պայմանագրի վավերացում:

Ներողությունը բավարար չէ, հողերը պետք է վերադարձնեն:

Ես չեմ ուզում Կարսի պայմանագիրը այս պրոցեսի արդյունքում դառնա վերջնական:

Ցեղասպանության ճանաչումը ինքնակատակ չի: Դրա հստակ նպատակը մեր հողերի վերադարձն ու բոլոր տևտեսական ու ֆինանսական կորուստների փոխհատուցումն է:

Ցեղասպանության ճանաչումը չի կարող լինել մեր վերջնական նպատակը, վերջնական նպատակը պիտի լինի հայ դատը՝ հայերի գերիշխանությունը պատմականորեն հայկական տարածքներում:

Ես բարոյապես «կկշտանամ» միայն այն դեպքում, եթե լուծվի մեր հողերի հարցը:

Իսկ ես ասում եմ, սպիտակ ձիս նստելու եմ ու գնամ Թուրքիա:

Խոսելով հող չեն վերցնում: Քսան թվին մենք արդեն հանձնվել ենք: Այսօր հաղթելու համար միայն մի ճանապարհ ունենք՝ ուժի միջոցով:

Բարոյական հաղթանակը ո՞րն է.

Հաղթանակն այն է, որ մեր հողերը մնան մեզ:

Մենք պատերազմին ենք հավատում: Հողերը արյամբ են վերցնում:

Եթե մենք ավելի ուժեղ լինենք՝ կարող ենք գնալ ու մեր պապերի հողը գնել, հաստատվել ու ապրել մեր պապական հողում:

Հնարավոր է դիվանագիտական հարաբերություններ հաստատել և մնալ պահանջատեր:

Մենք նախկինում էլ չէինք մտածում, թե գալու է այս օրը, երբ մենք քննարկելու ենք

Աշխարհում սահմաններ հաստատում են պատերազմի միջոցով կամ ուժեղների կողմից: Մենք առայժմ դրանից ոչ մեկին պատրաստ չենք:

Իմ որդին կարող է ապագայում մեր հողերը պահանջել Թուրքիայից, սակայն ես այսօր դեռ չեմ կարող դա անել:

Եթե չես կարողանում Արցախը բնակեցնել, ինչո՞ւ խոսենք Արևմտյան Չայաստանի հողերի մասին:

Եթե մենք պահանջատեր լինենք ու հողեր պահանջենք՝ ո՞վ մեզ կհասկանա:

Էսօր մեր մի կտոր Չայաստանի հողերի ինստունտոկոսը չի մշակվում: Արևմտյան Չայաստանի հողերը որ մեզ նվիրեն, ի՞նչ ենք անելու. նոր բեռ ենք բարդելու մեր երեխեքի ուսերին:

Մենք այնքան լքյալ հողեր ունենք՝ դրանք մշակել չենք կարողանում, ասենք պահանջեցինք ու պապական հողերն էլ ստացանք՝ դրանց հետ ո՞նց ենք վարվելու:

Մենք վախենում ենք, որ սահմանի բացումը դեմոգրաֆիա կփոխի, բայց չենք վախենում, որ հող հետ ուզենք, հայերով փոքրամասնություն ենք կազմելու... քուրդ ու թուրք ա լցվելու:

Եթե մենք չենք ճանաչում Թուրքիայի այսօրվա սահմանը, ապա ո՞ր սահման ենք բացում:

ԼՂ-ում տալիս են բարձր աշխատավարձ, պայմաններ, տուն, բայց ով կգնա այնտե՞ղ: Ու այս խելքով մեր պատմական հողերն ենք սպասում:

Մենք չենք գնա Արևմտյան Չայաստան ապրելու. ինչո՞ւ հիմա ոչ մեկը չի գնում Ղարաբաղում բնակվի:

Մենք պահանջողի դերում ենք, բայց իրական ուժ չենք ներկայացնում:

Միգրացիոն ցեղասպանությունը Թուրքիան ընդունի, բայց հող երբեք չի տա... հողը արյունով են վերցնում ու ջրում՝ քրտինքով...:

Այսօր սահմանը գծված է, ու ուզենք, թե չուզենք, մենք դա ճանաչում ենք: Եթե ուժեղ հարևանը ցանկապատել է իր տարածքը ու դու չես կարող մտնել նրա տարածքը, ո՞նց ես ասում դա քո հողերն են:

Պահանջատեր լինելու համար, պետք է պահանջ ունենալ ու պահանջին տեր կանգնել:

Ինչքան էլ հող ուզենք՝ հող տվող չի լինի, ինչքան էլ որդուս պատմեմ ցեղասպանության մասին՝ ոչինչ չի փոխվի:

Եթե մենք սահմանը փակ ենք պահում, սահմանը ռուսն է պահում, բայց հա գոռում մենք մեր հողերի մասին, ի՞նչ ենք ստանալու: երազանք...

Պահանջատիրության ու հարցերի մասին բարձրաձայնում ենք միայն ապրիլյան օրերին: Դրանից առաջ ու հետո ապրում ենք առանց դա օրակարգում ունենալու:

Եթե նույնիսկ վերադարձնեն Ղարաքը, արտասահմանի ոչ մի հայ չի գա և բնակվի այդ հողերում, այդ իսկ պատճառով իրենք էլ իրենց հերթին են խոչընդոտում այդ գործընթացը:

Առանց սահմանների ճանաչման արքուրդ է սահմանների մասին խոսելը:

թուրքի հետ սահմանի բացումը: Ու ևս այն տրամաբանությամբ էլ գալու է այն օրը, երբ մենք մեր պահանջատիրությունն իրացնելու ենք:

Ինձ թվում է, որ Արևմտյան Հայաստանը վերադարձնելուց հետո Լոսից իսկապես հայր կգա ու կապրի Կարսում:

Խաղաղության հաշտություն չկա նաև Ռուսաստանի և Ճապոնիայի միջև, սահմանների լուրջ վեճ կա, սակայն հարաբերվում են, տնտեսական և քաղաքական հարաբերություններն անգամ զարգանում են:

Մինչև հիմա Կանադան չի ճանաչել ԱՄՆ-ի սահմանը, Ռուսաստանը չի ճանաչել Ճապոնիայի սահմանը, բայց վա՛րտ են ապրում իրար հետ:

Երբ 88 եղավ, մեր կռիվը հոգու խորքում ադրբեջանցու հետ չէր, թուրքի հետ էր... թուրքի վրեժն էինք հանում դրանցից: Մեզ միշտ միավորել է վրեժի գագաթումը... լավ թե վատ, մեզ միավորողն այդ է:

Հենց պահանջատիրության ոգին է, որ մեզ թույլ տվեց հաղթանակի հասնել Ղարաբաղյան հակամարտության հարցում:

Թող քրդերը ապրեն մեր հողերում, բայց հողերը մերը լինեն:

Եթե հողերը վերցնենք, ինդիրներ չեն առաջանա, որպես օրինակ կարելի է դիտարկել Արցախի օրինակը:

Եստոնիայի բնակչության մեծամասնությունն անկախությունից հետո ռուս էր, բայց կարողացա՞ն ռուս նախագահ անցկացնել: Կան մեխանիզմներ յոթ միլիոն քուրդ ունենալով՝ չդառնալ քրդական պետություն:

Ստացվում է, որ մենք մեր հողերն ուզում ենք մեկ այլ ժողովրդից, որն ապրում է այդտեղ, այլ ոչ թե նրանից, ով մեզանից խլել է դրանք:

Ես չհասկացա, բա մեր իշխանություններն ինչ են անելու, որ հանկարծ թույլ տան, հողերը հետ տալու դեպքում քրդերն էլ հետը գան:

Ենթադրենք միլիոնավոր քրդերով բնակեցված հողերը տան մեզ, ի՞նչ ենք անելու:

Թուրքիայի քաղաքականության գիծ է. քրդական հարցն աստիճանաբար տեղափոխել դեպի Հայաստան:


Մենք էլ պիտի քրդերի ցեղասպանություն անե՞նք... Ո՞ր ուղարկենք 20մլն քրդերին, անգամ եթե մեր հողերը մեզ տան:

Հողերը ներկա վիճակով հետ տրվելու դեպքում մի հինգ տարվա մեջ մեր երկիրը կկոչվի Հայաստանի Քրդական Հանրապետություն:

Որ մեր տարածքները վերադարձնենք, քրդերի ձեռքը կրակը կընկնենք: Հայաստանում կլինի երեք միլիոն հայ ու յոթ միլիոն քուրդ:

Ասենք թե մեր պահանջը բավարարվում է ու մեզ հետ են վերադարձնում մեր հողերը՝ յոթ միլիոն քրդով: Ի՞նչ ենք անելու:

Ենթադրենք, Թուրքիան ճանաչել է Ցեղասպանությունը, ընդունել է Սևրի պայմանագիրը, ու մենք ունենք 160 հազ. քառ. մետր տարածք, որտեղ ապրում է 20 միլիոն քուրդ, 5 միլիոն թուրք, 3-4 միլիոն հայ... ի՞նչ է լինելու այդ երկրի անունը:



Այսօր Թուրքիայում թուրքացած, բայց գենետիկորեն գտարյուն հայերը շատ մեծ թիվ են կազմում: Մենք պետք է կարողանանք նրանց մոտ արթնացնել հայի ինքնագիտակցությունը ու օգտագործել նրանց ներուժը:

Այսօր քրդերը անկախություն են ուզում, մենք ինչու՞ չենք օգտագործում նրանց: Վարդան Մամիկոնյանն ասում էր. «Եթե սատանան պարսիկի թշնամին է, ուրեմն իմ բարեկամն է»:

Թուրքիայում մեծ քանակով քրդեր են ապրում, որոնք շատ ավելի լավ են տրամադրված հայերի նկատմամբ:

Մեր պապական հողերում քրդեր են ապրում, ի՞նչ անենք դրանց՝ մորթենք:

Մենք հաստատ խնդիր կունենանք նաև քրդերի հետ, չէ՞ որ հիմա նրանք են ապրում մեր հողերում:

Շատ հնարավոր է, որ Թուրքիան նվիրի մեր հողերը և դրա հետ միասին 7 միլիոն քրդերին, որպեսզի Հայաստանի կանգնի ավելի բարդ խնդրի առաջ:

Քրդերը մեր դաշնակիցը չեն, որովհետև եղ հողերը հիմա իրենցն են... Նրանք չեն տա... Քրդերն էլ նույն թուրքն են...

Տրապիզոնի նահանգում միլիոն ու կես հայեր կան. Ո՞վ ասաց, թե միայն քրդեր են ապրում Արևմտյան Հայաստանում...

Քրդերի համար ստեղծվում է պետություն հյուսիսային Իրաքում, թող գնան այնտեղ:

Մենք ուզում ենք մեր հողերը, բայց առանց քրդերի:

Թուրքերը քրդերի միջոցով են հայերին բնաջնջել: Հայաստանի ու Թուրքիայի արագ մերձեցման դեպքում առաջին վտանգը կլինեն մեր հարևանությամբ ապրող քրդերը:

Եթե մենք Թուրքիային ծնկի բերենք և վերադարձնենք մեր հողերը, ապա քրդերի հետ պայթարելը խնդիր չի լինի:

Մենք տաքարյուն ժողովուրդ ենք ու սահմանը բացվելուց հետո, տեսնելով, թե ինչ են արել մեր եկեղեցիների հետ քրդերը, կարող է կռվենք ու մի քանի հոգու սպանել: Այս մթնոլորտում ես դեմ եմ սահմանի բացմանը:

Սովահար քրդերին պատկերացնո՞ւմ եք Հայաստանում:

Վրաստանը սարքեցինք տվինք վրացիներին, Ադրբեջանը սարքեցինք տվեցինք ադրբեջանցիներին, Հայաստանն էլ տանք քրդերի՞ն...

Քրդերը եթե պետություն դարձան, առաջինը մեզ են վնասելու... Ինչ տարբերություն էղ հողերը ում ձեռք են՝ թուրքի, թե քրդի:

Քրդերն էս հարցում հայերի դաշնակիցը լինել չեն կարող:

Արևմտյան Հայաստանում հիմա միայն քրդեր են ապրում, որովհետև դա իրենց հողը չի, նրանք վախենում են, որ մի օր հայերը հետ կվերցնեն: Բայց հայերը միասնական չեն և դրա համար էլ չի լուծվում ոչ մի հարց:

Քրդերով է բնակեցված մեր պատմական հողերի մեծ մասը, ուրեմն առաջիկայում մենք գործ ենք ունենալու քրդերի հետ:

Գ. Տնտեսություն

1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ

Մաքսային ռեժիմը խիստ պետք է լինի ու աջալուրջ:

Տնտեսական առումով սահմանի բացումը մեզ ձեռնտու է միջազգային շուկա մեզ ճանապարհ է հարթում:

Այսօր մենք այլընտրանք չունենք: Չինաստանից մինչև Փոթի մի կոնտեյներ հասցնելը 800 դոլար արժե, իսկ Փոթիից մինչև Երևան՝ 1800: Մեզ պետք է նոր ճանապարհ:

Դուբայից, Եվրոպայից անորակ ապրանք չի՞ գալիս: Իսկ մենք մեր ներկրողներից պետք է պահանջենք, որ որակյալ ապրանք բերեն:

Եթե թուրքերը մտան Հայաստան, նրանք այստեղ ձեռնարկատիրություն կսկսեն և մենք պետք է ունենանք համապատասխան օրենքներ այդ կանխելու համար:

Գաղափարախոսությունը չպետք է առաջ անցնի տնտեսությունից, թե չէ կհասցնի փակուղու:

Տնտեսությունն իր հետևից կբերի տնտեսական, մշակութային նոր խնդիրներ: Դրանց պետք է պատրաստվել ու պետք է փորձել պատկերացնել, թե Արարատին մյուս կողմից ինչ մտքերով են նայում:

Որ պահին հայ-թուրքական սահմանի բացումը կապենք տնտեսականի հետ, մենք պարտվելու ենք: Կարևորը քաղաքականն է: Մենք վրեժ ունենք լուծելու այդ պետությունից ու սա շանս է:

Մենք պետք է ինքներս հզորացնենք մեր երկիրը, որ ամուր կանգնենք մեր ոտքերի վրա, չպետք է ինտեգրվենք Թուրքական տնտեսության մեջ:

Շատ կարևոր է, որ մենք կարողանանք հողեր գնել Թուրքիայում:

Մենք փոքր պետություն ենք ու անգամ մի փոքր շահից էլ պետք չէ հրաժարվել: Եթե անգամ մի քանի տասնյակ գյուղեր սահմանի բացումից հետո հարստանան, էլի լավ է...

Երկու վատը մի լավից էլ լավ է... Կունենանք երկու ճանապարհ ու մեկը գոնե բաց կլինի:

Սահմանի բացումը առաջին հայացքից շատ գրավիչ է... Միանշանակ տնտեսական աճ կլինի: Բայց դա խայժ չպետք է դառնա: Պետք է մտածել, թե ինչպես կարելի է հասնել մեր քաղաքական շահերի իրագործմանը:

Տնտեսական շահը մեր համար մեծ է, սակայն քաղաքական հարաբերությունները նույնպես պետք է կարևորել:

Մենք պետք է պետական պրոտեկցիոնիզմի քաղաքականություն վարենք. ամեն բան չէ, որ կարելի է ներմուծել Հայաստան:

Թուրքիայի հետ սահմանի բացումը կխթանի նաև տուրիզմի զարգացմանը: Դա նույնպես շատ կարևոր է:

Ներկրման և արտահանման հարցում կարևորը պետական մոտեցումներն են, կարող են այնպես սահմանափակել, որ մեր արտադրողը դրանից չտուժի:

Թուրքական կապիտալի մուտքը Հայաստան պիտի միանշանակ վերահսկվի:

Սահմանի բացումը կնվազեցնի տրանսպորտային ծախսերը, կսկսվի մրցակցություն, և, ի վերջո, կշահի հասարակ ժողովուրդը:

Սահմանի բացումից հետո առաջին տուժողը գյուղացին կլինի, իսկ առաջին շահողը՝ քաղաքացին:

Թող մի քիչ քիչ ուտենք, բայց ապահով լինենք:

Հայաստանի հասարակ բնակչի համար սահմանի բացումը միանշանակորեն օգտակար կլինի: Մրցակցությունը կավելանա, որից կշահեն մեր բնակիչները:

Սահմանամերձ շրջաններին պետք է նախապատրաստել միջև սահմանի բացումը, պետք է այնպես անել, որ նրանք չտուժեն ու նվաստանան, պետք արագ զարգացնել նրանց: Հարուստի ու աղքատի միջև սահմանը բացելիս աղքատը տուժում է:

Սահմանի բացումն անհրաժեշտություն է, մեզ տնտեսապես հզորանալ է հարկավոր:

Լավ է, խոսում եք կարճ ճանապարհի մասին, իսկ ես ասում եմ՝ «կարճ անվտանգ ճանապարհ»:

Բնականաբար, սահմանի բացումը դրական կլինի, որովհետև երկար տարիներ տևած շրջափակումն ի վերջո կավարտվի: Մենք դեպի ծով դուրս կգանք, Եվրոպա, աշխարհ, տնտեսությունը մեր ավելի արագորեն կաճի:

Մենք արտահանման ապրանք ունենք՝ մեր քիմիական արտադրությունը կարող է զարգանալ:

Մենք ուզում ենք ազատ և եժան շուկա, սահմանի բացումը՝ դուռ է դեպի Եվրոպա:

Սահմանի բացումով կտանք հնարավորություն մեր ժողովրդին տնտեսապես ավելի ուժեղանալ ու դիմակայել բոլոր խնդիրներին:

Քաղաքականը տնտեսականի հետ չպիտի կապենք: Իրարից անկախ պետք է լինեն այս երկու հարցերը:

Պետությունը պետք է ստանձնի կարգավորիչ-սահմանափակող ֆունկցիաներ ներկրման նկատմամբ, ինչպես օրինակ վրացիները դա արեցին մեր վրաստան արտահանվող կարտոֆիլի նկատմամբ:

Եթե սահմանի բացումը չի նպաստելու Հայաստանում մենաշնորհային տնտեսության վերացմանը, ուրեմն իմաստ չունի:

Գյումրիի համար սահմանի բացումն այնքանով արդյունավետ կլինի, որ փոքր բիզնեսը, անհատ ձեռներեցներ կկարողանան բիզնես անել ու զարգանալ:

Սահմանի բացումը հատկապես Գյումրիի համար շահավետ կլինի, քանի որ մենք հինգ թուփում ավելի շուտ կհասնենք Թուրքիա ու Եվրոպա, քան թե Երևան:

Մեր հարաբերությունները պետք է լինեն առևտրի ու տնտեսության մեջ միայն:

Սահմանի բացումը կվնասի միայն գյուղացուն, մնացած բոլոր առումներով մենք զարգացում կունենանք:

Սահմանի բացումից հետո կշահեն խոշոր բիզնեսմենները, բայց կշահի նաև մեր տնտեսությունը:

Երկու տարբերակ կա. ներմուծողները չեն նվազեցնում գները և եժանացում չի լինում կամ էլ նրանք համապատասխանորեն նվազեցնում են գները և մենք իրականում շահում ենք. սակայն այս երկու տարբերակների իրականանալիությունը կապված է սահմանի բացման հետ:

Էսօր Փոթիում ամեն հարց կարգավորված է մի քանի մարդկանց կողմից ու այլ մարդ չի կարող մուտք ունենալ այնտեղ: Սահմանի բացումը մեզ այլընտրանք է տալու:

Մեր երկրի տնտեսությունը ստազնացիայի մեջ է. դուրս գալու համար մեզ շուկ է պետք:

Ավելի զարգացած պետության հետ առևտուր անելը մեզ միշտ էլ շահեկան է:

Թուրքիան մեզ համար շուկա չի, Թուրքիան մեզ համար ճանապարհ է դեպի արտաքին շուկա:

Մենք դիմակայել ենք բոլորին՝ Թուրքիայի հետ փակ սահմանով, հիմա էլ պետք է դիմակայենք բոլորին՝ Ներառյալ Թուրքիան իր բաց սահմանով:

Ներմուծվող ապրանքների վրա, հատկապես Թուրքիայից եկող ապրանքների դեպքում, համապատասխան տնտեսական և մաքսային քաղաքականություն է պետք վարել, որպեսզի մեր տեղական արտադրողը չտուժի:

Թուրքիան կլինի այն շուկան, որտեղ «կսպառվի» Հայաստանի մտավոր պոտենցիալի արտադրանքը:

Եթե տնտեսական հարցերի ամբողջ կծիկը չի լուծվում, ուրեմն չեմ հասկանում ինչու ենք բացում սահմանը: Եթե երկաթուղին կանգնած է մնալու, անիմաստ է գնալ նման ռիսկի:

Մեր մտավախությունների պատճառը մենք ենք. օրինակ Նույն ԱՀԿ մենք ավելի վատ պայմաններում ենք, քան Թուրքիան: Մենք պետք է փոխենք մեր հարկային ու մաքսային դաշտը, Նոր բացել սահմանները:

Սահմանի բացումը Հայաստանին տալիս է Նոր շուկա, քանի որ Թուրքիայի սահմանամերձ գոտիները բավականին հետամնաց են:

2. Չգացմունքներ, Վախեր, Մտահոգություններ

Չանգվածային ներկրում կսկսվի ու ոչ ոք չի վերահսկի որակն այդ ներկրված ապրանքի: Իսկ այդպիսով հնարավոր է գեներալի թունավորել:

Մի երկու տարվա մեջ Թուրքիան մեր ամբողջ շուկան կգրավի, տեղական տնտեսությունը կտուժի:

Ատում ենք, որ տնտեսապես ձեռնտու է սահմանի բացումը, իսկ ես այլ կարծիքի եմ. սահմանի բացումը նշանակում է շատ էժան ապրանքի ներմուծում, ինչը կհարվածի տեղական արտադրողին... արդյունքում մեր ունեցածն էլ կկորցնենք ու կդառնանք «խանութի վաճառողներ»...

Ես տեղյակ եմ, որ Թուրքիան հզոր գյուղատնտեսություն ունի. սահմանները բացելու դեպքում մեր գյուղացիները տուժելու են:

Այսօր մեր տնտեսությունը պատրաստ չէ ընդունելու Թուրքիայի շուկայի պայմանները: Մեր գյուղատնտեսությունը շատ կտուժի, քանի որ թուրքական էժան ապրանքները կլցվեն մեր շուկան:

Եթե թուրքերը հանկարծ ներդրումներ անեն այստեղ, մենք կախվածության մեջ կընկնենք նրանցից: Հիշեք Սովետի պատմությունը... Ի՞նչ եղավ, երբ Միությունը փլուզվեց: Տնտեսական ինտեգրացիան քաղաքական կախվածության մեջ կդնի Թուրքիայից:

Զգիտեմ, արդյոք ինչ-որ փոքր տնտեսական առաջընթացի համար արժե ռիսկի գնալ թե ոչ...

Սահմանը բացելու փոխարեն Թուրքիան շատ ավելի լուրջ պահանջներ կդնի. իսկ հանուն տնտեսական շահի արդյո՞ք պետք է նման զիջումների գնալ:

Մեր գյուղերը քայքայման եզրին են, հետագայում գյուղապրանքները ավելի էժան կդառնան ու հայ գյուղացին կդադարի հող մշակելուց: Իսկ ինչո՞վ կզբաղվի, ընտանիք ինչո՞վ կպահի:

Ո՞վ ասաց, որ սահմանի բացումը ապրանք պետք է էժանացնի:

Մենք թուրքի հետ ընդհանուր շուկա չենք ունեցել, չենք կարող վստահ լինել, թե ինչպես կզարգանան հարաբերությունները:

Իհարկե տնտեսական աճ էլ կլինի, բայց վտանգը մեծ է. նրանք մեզ դիտելու են որպես հումքի աղբյուր. նրանց մոտ տեքստիլ արդյունաբերությունը զարգացած է:

Միսիանում գործարաններ ու ֆաբրիկաներ կան, որ չեն աշխատում: Թուրքերը կգան, կառնեն ու կաշխատեցնեն: Կաշխատեցնեն իրենց բանվորներով: Իսկ ինչո՞ւ սիյունաբախայերը չեկան, չառան:

Հիտուն-հարյուր տարի հետո սահմանը այսպես թե այնպես բացվելու է ու այն ժամանակ թուրքական տնտեսությունը հաստատ կուլ կտա հայկական տնտեսությունը:

Չի բացառվում, որ սահմանի բացումը չբերի որևէ աշխուժացման:

Թուրքիան կարող է սահմանն այնպես բացել, որ մենք ոչնչից էլ չօգտվենք. ճանապարհ չտա մեզ դեպի Եվրոպա, տնտեսական լավ պայմաններ չառաջադրի:

Սահմանի բացումը մեզ տնտեսական օգուտ կտա, բայց քաղաքական առումով նրանք էլ փոխզիջման չեն գնա, կասեն. «դե սահմանը բացեցինք, բոլ չի՞»:

Սահմանի բացումը կնպաստի առևտրին: Բայց թուրքերը կլցվեն մեզ մոտ, թուրքի կամ պարսիկի աշխատուժն ավելի էժան է, քան հայինը, նրանք ավելի հեշտ աշխատանք կգտնեն, հետևաբար կստացվի, որ նրանք են շահում:

Ապրանքների որակի վերահսկողության համակարգ մենք չունենք:

Էսօր ամբողջ Թումանյան փողոցը պարսիկներինն է: Սահմանի բացվելու դեպքում ամբողջ Սայաթ-Նովա փողոցն է դառնալու թուրքական:

Եթե թուրքերը Հայաստանից ապրանք արտահանելիս նույն կերպ են վարվելու, ինչպես մենք՝ բարձր մաքսատուրք սահմանելով, ուրեմն չեմ կարող ասել, թե ինչ զարգացում ակնկալել:

Մտավախություն կա, որ թանկությունը կպատի երկիրը, արհեստական կբարձրանան օրինակ անշարժ գույքի գները:

Հարկավոր է մի քանի օր գնալ մնալ սահմանամերձ գյուղում, օրինակ Զանֆիդայում, տեսնել Արաքսը և չկարողանալ անցնել գետը, նոր միայն բոլորը կհասկանան, թե ինչքան կարևոր է սահմանի բացումը:

Ինչ է նշանակում սահմանի բացում, եթե ամառային հանգիստը աննկարագրելի մեծ թվով հայեր Թուրքիայում են անցկացնում: Մտե՞ք ցանկացած խանութ. թուրքական ապրանքը ամենուրեք է:

Եթե ենթադրենք, որ սկզբում սահմանները բացվեն, մեր երկու տնտեսությունները սերտաճեն տաս-տասնհինգ տարվա ընթացքում, այնուհետև, եթե մի օր Թուրքիան որոշի սահմանը փակել, Հայաստանը կհայտնվի խորը տնտեսական ճգնաժամում, քանի որ մեր տնտեսությունն ավելի մեծ կախվածություն կունենան Թուրքիայի՝ ավելի մեծ տնտեսությունից:

Մենք հիմա նույնիսկ արտասահմանյան ներդրումների մասին օրենք չունենք ու այսպես անպատրաստ գնում ենք սահմանի բացման:

Լավ, ենթադրենք ՀՆԱ-ն յոթ տոկոս աճ կտա, դա ի՞նչ կտա մեզ...

Չեմ հավատում՝ երկաթուղու բացումը կմնա խոստում:

Թուրք և հայ մոնոպոլիստների բախումը կարող է վերածվել ոչ տնտեսական կոնֆլիկտի:

Նշվում է, որ սահմանի բացումը կնպաստի մեր գյուղատնտեսության զարգացմանը, ինչը ռեալ չի: Թուրքիան մաքսային քաղաքականությամբ կգսպի մեր արտահանումը:

Այսօրվա մենաշնորհային, կոռումպացված ու աննորմալ տնտեսության պայմաններում ի՞նչ խոսք կարող է լինել տնտեսական հնարավոր զարգացումների մասին:

Թուրքերը կամաց-կամաց գրավում են Բաթումը, թուրքական կապիտալի մեծ ազդեցություն կա: Մենք պետք է առաջինը հարց տանք՝ Չայաստանը պատրաստ է սահմանի բացմանը:

Չայ գյուղացի էլ չի լինելու, հենց սահմանը բացվի գյուղացին գնալու է Տրապիզոն առևտուր անելու, առանց այդ էլ մենք հողի գործ չենք սիրում:

Այդ ինչքան էս քո մեքենայով բենզին բերելու, որ ապահովես պահանջներդ: Իհարկե՝ քիչ: Ու պարբերաբար գնալ-գալու դեպքում քեզ հանգիստ կմեղադրեն մաքսանենգության մեջ:

3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք

Տնտեսապես ինչքան հզոր լինենք, այնքան էլ քաղաքականապես անկախ կլինենք:

Տնտեսապես առանձնապես ոչինչ չի փոխվի՝ մենք ինչքան պետք է հիմա՝ ներմուծում ենք: Հնարավոր է, ասենք, չնչին գնային տարբերություն:

Հիմա էլ թուրքական ապրանքները ծփում են Չայաստանում..

Նախկինում մեր ջերմոցներում արտադրված բանջարեղենը լավագույն համբավն ուներ: Հիմա Պարսկաստանից ու արտասահմանից ներմուծված բանջարեղենը հնարավորություն չեն տալիս մեր գյուղատնտեսությանը զարգանալուն: Նույն էլ Թուրքիայի հետ սահմանների բացման դեպքում է լինելու:

Սահմանների բացումը տնտեսական էական փոփոխության չի բերի, քանի որ հիմա փակ է միայն ցամաքային սահմանը, իսկ օդային տրանսպորտը միանշանակ աշխատում է:

Զենք կարծում, թե տնտեսական լուրջ ներգրավվածություն կլինի սահմանը բացելուց հետո: Իրենք իրենց կրոսեր եղբոր շահերը վեր են դասելու: Լավագույն դեպքում կբացվի երկաթուղին, իսկ էներգետիկ ծրագրերում մեզ չեն ընդգրկի:

Հայերը, որ ապրում են Թուրքիայում, հաստատ կուզեն ինչ-որ ձևով նպաստել հայկական տնտեսության զարգացմանը:

Սահմանը բացվելու դեպքում կլինի գրեթե նույն, ինչ այսօր է: Այսօր էլ թուրքերի հետ առևտրային կապեր ունենք, պարզապես դրանք ավելի կպարզեցվեն:

Միևնույն է մեր շուկան ողողված է թուրքական ապրանքով, այլ ինդիք է որ այդ ապրանքը գալիս է Կրաստանից և թանկ է: Սահմանի բացումը դրական միտում է այդ առումով:

Հիմա էլ ենք թուրքական ապրանքներ առնում, սահմանի բացման հետ դա կապ չունի:

Անցյալ տարի հազարավոր տոննաներով կարտոֆիլը մնաց, որովհետև Թուրքիայից էժան կարտոֆիլ գնեցին զորամասերի համար:

Եթե տնտեսական փոխհամաձայնություն լինի, դա կնպաստի նաև քաղաքական երկխոսությանը:

Մեր գյուղացու տուժելն ու չտուժելը կախված է մեր պետությունից:

Մենք մինչև հիմա չենք կարողանում օգտագործել մեր ունեցած բաց սահմանների լիարժեք հնարավորությունները:

Եթե սահմանը բաց լիներ, ճգնաժամը մեզ վրա այդպես չէր ազդի...

Մեր տնտեսության զարգացումը կախված է ոչ թե սահմանից, այլ մեր ներքին ռեսուրսներն օգտագործելուց ու ճիշտ կառավարումից:

Հայաստանի սահմանամերձ տարածքները ավելի քիչ են զարգացած, ուստի սահմանի բացումը նոր շուկա կբացի Հայաստանի համար:

Չեմ հասկանում թե ինչու պետք է միայն սահմանամերձ գյուղերը, բնակավայրերը շահեն:

Հաստատ բան եմ ասում. սահմանը բացելու դեպքում հենց մենակ մեր Գյումրին Թուրքիա արտահանելու ապրանք ունի:

Սահմանի բացումն առավել ձեռնտու է Թուրքիային, քանի որ այդ սահմանամերձ տարածքներում կակտիվանա կյանքը և շրջանառությունը:

Այսօր արդեն իսկ Գյումրիով անցնում են մոտ միլիոն հարյուր հիսուն թուրքական բեռնատարներ են անցնում, այնպես որ շփումն արդեն իսկ կա:

Այն, որ մեր սահմանամերձ գյուղերը դատարկ են, հենց փակ սահմաններն են մեղավոր:

Այսօր շատ հայ կանայք Թուրքիայում աղախնություն են անում, իսկ թուրք կինը հայ աղախին է պահում, իսկ դա արդեն շատ բան է խոսում մեր երկրների կենսամակարդակների տարբերության մասին:

Հայերը աշխատում են աշխարհի բոլոր երկրներում. իսկ ո՞րն է պատճառը. տնտեսական շահը: Հիմա մենք ինչպե՞ս ենք ասում, թե քաղաքական շահը առաջնային:

Թուրքիային շատ հարկավոր է Գյումրիով անցնող երկաթուղին, իսկ Գյումրիի համար դա վա՞տ է:

Մեր բնակչությունը այսօր անօրինական մեկնում ու առևտուր է անում Թուրքիայի հետ: Թուրքական ապրանքը այսօր ողողել է Հայաստանը: Սահմանը բացելու դեպքում այդ առևտուրը կկանոնակարգվի ու կվերահսկվի:

Գյուղատնտեսական ապրանքների հսկայական հոսք կլինի Հայաստան և գներն էլ կիջնեն:

Ցեղասպանության թանգարանը նորոգելու համար շինանյութը թուրքական է եղել. փաստացի թուրքական արտադրանքը ողողել է մեր երկիրը, իսկ դուք ասում եք, թե դեռ նոր պետք է սահմանը բացել:

Իսկ հիմա ինչու՞ չեն արվում միջազգային ներդրումներ: Չեմ կարծում, որ դրա պատճառը փակ սահմանն է:

Միևնույն է մենք ապրանքաշրջանառություն ունենք թուրքերի հետ, դա արվում է անգամ փակ սահմանների դեպքում, իսկ արտագաղթը միևնույն է կա ու կլինի...սահմանի բացումը պետք է, այն չի ազդում մեր մտավախությունների վրա:

Եղել է ժամանակ, երբ Հայաստանում պարսկական էժան և անորակ ապրանքների հեղեղ էր, բայց դրանց իրացումը մեր շուկաներում տևեց 2-3 տարի, նույնը կլինի հիմա: Պետք է հեռու նայել:

Եթե սահմանը բացվի, 10 տարի հետո Արևմտյան Հայաստանում շատ հայ կլինի: 15 տարի հետո հայերը այնտեղ բիզնեսներ կունենան: Թող թուրքը վախենա:

Չինաստանում երբ սպանեցին հինգ թուրք երիտասարդների, թուրքերը անմիջապես բոյկոտեցին չինական ապրանքները, իսկ հայերը այդ արժանապատվությունը չունեն և ողողել են շուկան թուրքական ապրանքներով:

Շուկայական տնտեսություն ունեցող պետությունները երբեք չեն ուզենա պատերազմել միմյանց հետ:

Սահմանի բացումը ցանկացած դեպքում բերելու է առնվազն սահմանամերձ մարզերի տնտեսական զարգացման:

Եթե մեր բոլոր հարցերը կապում ենք ընդամենը սահմանների բացման հետ, ապա ինչու՞ մինչև հիմա չենք կարողանում առավելագույնս օգտագործել Վրաստանի կամ Պարսկաստանի հետ սահմանի հնարավորությունները:

Սահմանի բացումը շուկա է լինելու մեզ համար. դրա արդյունքում կամ մենք արագորեն կհարմարվենք և կզարգանանք, կամ էլ միանգամից կտապալվենք ու էլ երբեք ոտքի չենք կանգնի:

Երկիր մտնում է այնպիսի ապրանք, որի պահանջարկը կա, եթե Չայաստան վատ ապրանք են բերում, ուրեմն դրա պահանջարկը կա:

Չայաստանի արդյունաբերության կործանման օբյեկտիվ պատճառը տարածաշրջանային շուկաների փակվելը կամ փակ լինելն է մեզ համար:

Այսօր Չայաստանում կան գործարաններ և ռեսուրսներ, որոնք պարզապես նպատակահարմար չէ գործարկել երեք-միլիոնանոց շուկայի համար, սակայն դեպի ավելի մեծ շուկաներ ելքի հնարավորության դեպքում դրան շահագործումը միանշանակորեն շահավետ կլինի:

Եկեք չմոռանանք, որ քաղաքականությունը թելադրվում է հզոր տնտեսությամբ: Քանի՞ հզոր, բայց աղքատ պետություն գիտեք...

Սահմանի բացելու էֆեկտը սովորական թուրքը ավելի քիչ կզգա, քան սովորական հայը:

Եթե կախված ենք, ինչ տարբերություն ումից ենք կախված, թուրքից թե վրացուց:

Մեր տրանսպորտային միջոցները այժմ գտնվում են օտարների ձեռքում, ուստի սահմանների բացումը այս ոլորտում մեզ ոչինչ չի տա:

Մի վայրկյան անգամ չեմ կասկածում, որ Սադախլոյի նման մի շուկա էլ ձևավորվելու է հայ-թուրքական սահմանին:

Թուրքիային Չայաստանը տնտեսական առումով ընդհանրապես չի հետաքրքրում. նա ցանկանում է մի գնդակով երկու նապաստակ խփել՝ մեկը Եվրոմիությունն է, մյուսը իր քաղաքականությունը:

Բնական զարգացման հետևանք է, որ թուրքական արևելյան գյուղերը թերի զարգացած են: Ստացվում է, որ մեզ վրա է դրված այդ հողերը ծաղկեցնելու պարտականությունը: Չայերը ներդրում են անելու Թուրքիայի վատ զարգացած շրջաններում:

Ոչ մի պետություն չի կարող առաջ տանել իր քաղաքական շահերը՝ առանց ունենալու հզոր տնտեսություն: Չտանք են ազգի անունը, որը փողի միջոցով կարողացավ գնել պետություն:

Սահմանների բացումը հնարավոր է և իրատեսական, ընդ որում 30%-ով կշահի Չայաստանը, 70%-ով Թուրքիան:

Չիմա մենք չենք գնո՞ւմ մեեեեծ «պալոսկավոր» սումկաներով չուլ բերում... ի՞նչ տարբերություն կլինի սահմանը բացելուց հետո. մի սումկա ավել-պակաս:

Մենք թուրքական արտադրանքն ավելի քիչ ենք սպառում, քան կարծում ենք. իրականում վախենալու բան չկա:

Մեր նպատակը գոյատևելը չի լինելու, մեր նպատակը մարդավարի ապրելն է:

Չայաստանում բացարձակ մենաշնորհի չկա:

Թուրքը չի կարող գալ ու բիզնես անել այստեղ, որովհետև ինչպես մյուսներին, սրանք էլ կասեն՝ բեր բիզնեսիդ 30 տոկոսը մեզ տուր: Կհամաձայնվի՞ կաշխատի, չէ՞ հնարավորություն չեն տա:

4. Սոցիալական երկխոսություն

Տնտեսական առումով սահմանի բացումը մեզ ձեռնտու է միջազգային շուկա մեզ ճանապարհ է հարթում:

Այսօր մենք այլընտրանք չունենք: Չինաստանից մինչև Փոթի մի կոնտեյներ հասցնելը 800 դոլար արժե, իսկ Փոթիից մինչև Երևան՝ 1800: Մեզ պետք է նոր ճանապարհ:

Մենք փոքր պետություն ենք ու անգամ մի փոքր շահից էլ պետք չէ հրաժարվել: Եթե անգամ մի քանի տասնյակ գյուղեր սահմանի բացումից հետո հարստանան, էլի լավ է...

Երկու վատը մի լավից էլ լավ է... Կունենանք երկու ճանապարհ ու մեկը գոնե բաց կլինի:

Թուրքիայի հետ սահմանի բացումը կխթանի նաև տուրիզմի զարգացումը: Դա նույնպես շատ կարևոր է:

Սահմանի բացումն անհրաժեշտություն է, մեզ տնտեսապես հզորանալ է հարկավոր:

Բնականաբար, սահմանի բացումը դրական կլինի, որովհետև երկար տարիներ տևած շրջափակումն ի վերջո կավարտվի: Մենք դեպի ծով դուրս կգանք, Եվրոպա, աշխարհ, տնտեսությունը մեր ավելի արագորեն կաճի:

Սահմանի բացումով կտանք հնարավորություն մեր ժողովրդին տնտեսապես ավելի ուժեղանալ ու դիմակայել բոլոր խնդիրներին:

Սահմանի բացումը հատկապես Գյումրիի համար շահավետ կլինի, քանի որ մենք հինգ րոպեում ավելի շուտ կհասնենք Թուրքիա ու Եվրոպա, քան թե Երևան:

Էսօր Փոթիում ամեն հարց կարգավորված է մի քանի մարդկանց կողմից ու այլ մարդ չի կարող մուտք ունենալ այնտեղ: Սահմանի բացումը մեզ այլընտրանք է տալու:

Մեր երկրի տնտեսությունը ստագնացիայի մեջ է. դուրս գալու համար մեզ շոկ է պետք:

Մենք ուզում ենք ազատ և էժան շուկա, սահմանի բացումը՝ դուռ է դեպի Եվրոպա:

Հարկավոր է մի քանի օր գնալ մնալ սահմանամերձ գյուղում, օրինակ Ջանֆիդայում, տեսնել Արաքսը և չկարողանալ անցնել գետը, նոր միայն բոլորը կհասկանան, թե ինչքան կարևոր է սահմանի բացումը:

Հայերը, որ ապրում են Թուրքիայում, հաստատ կուզեն ինչ-որ ձևով նպաստել հայկական տնտեսության զարգացմանը:

Սահմանը բացվելու դեպքում կլինի գրեթե նույն, ինչ այսօր է: Այսօր էլ թուրքերի հետ առևտրային կապեր ունենք, պարզապես դրանք ավելի կպարզեցվեն:

Թող մի քիչ քիչ ուտենք, բայց ապահով լինենք:

Լավ է, խոսում եք կարճ ճանապարհի մասին, իսկ ես ստում եմ «կարճ անվտանգ ճանապարհ»:

Մենք դիմակայել ենք բոլորին՝ Թուրքիայի հետ փակ սահմանով, հիմա էլ պետք է դիմակայենք բոլորին՝ ներառյալ Թուրքիան իր բաց սահմանով:

Եթե տնտեսական հարցերի ամբողջ կծիկը չի լուծվում, ուրեմն չեմ հասկանում ինչու ենք բացում սահմանը: Եթե երկպառակի կանգնած է մնալու, անիմաստ է գնալ նման ռիսկի:

Չգիտեմ, արդյոք ինչ-որ փոքր տնտեսական առաջընթացի համար արժե ռիսկի գնալ թե ոչ...

Չանգվածային ներկրում կսկսվի ու ոչ ոք չի վերահսկի որակն այդ ներկրված ապրանքի: Իսկ այդպիսով հնարավոր է գենոֆոնդ թունավորել:

Տնտեսությունն իր հետևից կբերի տնտեսական, մշակութային նոր խնդիրներ: Դրանց պետք է պատրաստվել ու պետք է փորձել պատկերացնել, թե Արարատին մյուս կողմից ինչ մտքերով են նայում:

Եթե թուրքերը հանկարծ ներդրումներ անեն այստեղ, մենք կախվածության մեջ կընկնենք նրանցից: Հիշեք Սովետի պատմությունը... Ի՞նչ եղավ, երբ Միությունը փլուզվեց: Տնտեսական ինտեգրացիան քաղաքական կախվածության մեջ կդնի Թուրքիայից:

Մենք պետք է ինքներս հզորացնենք մեր երկիրը, որ ամուր կանգնենք մեր ոտքերի վրա, չպետք է ինտեգրվենք Թուրքական տնտեսության մեջ:

Ո՞վ ասաց, որ սահմանի բացումը ապրանք պետք է էժանացի:

Եթե ենթադրենք, որ սկզբում սահմանները բացվեն, մեր երկու տնտեսությունները սերտաճեն տաս-տասնհինգ տարվա ընթացքում, այնուհետև, եթե մի օր Թուրքիան որոշի սահմանը փակել, Հայաստանը կհայտնվի խորը տնտեսական ճգնաժամում, քանի որ մեր տնտեսությունն ավելի մեծ կախվածություն կունենան Թուրքիայի՝ ավելի մեծ տնտեսությունից:

Մենք թուրքի հետ ընդհանուր շուկա չենք ունեցել, չենք կարող վստահ լինել, թե ինչպես կզարգանան հարաբերությունները:

Հիսուն-հարյուր տարի հետո սահմանը այսպես թե այնպես բացվելու է ու այն ժամանակ թուրքական տնտեսությունը հաստատ կուլ կտա հայկական տնտեսությունը:

Չի բացառվում, որ սահմանի բացումը չբերի որևէ աշխուժացման:

Թուրքիան կարող է սահմանն այնպես բացել, որ մենք ոչչից էլ չօգտվենք. ճանապարհ չտա մեզ դեպի Եվրոպա, տնտեսական լավ պայմաններ չառաջադրի:

Ապրանքների որակի վերահսկողության համակարգ մենք չունենք:

Էսօր ամբողջ Թումանյան փողոցը պարսիկներին է: Սահմանի բացվելու դեպքում ամբողջ Սայաթ-Նովա

Եթե սահմանը բաց լիներ, ճգնաժամը մեզ վրա այդպես չէր ազդի...

Այն, որ մեր սահմանամերձ գյուղերը դատարկ են, հենց փակ սահմաններն են մեղավոր:

Թուրքիային շատ հարկավոր է Գյումրիով անցնող երկաթուղին, իսկ Գյումրիի համար դա վա՛տ է:

Մեր բնակչությունը այսօր անօրինական մեկնում ու առևտուր է անում Թուրքիայի հետ: Թուրքական ապրանքը այսօր ողողել է Զայաստանը: Սահմանը բացելու դեպքում այդ առևտուրը կկանոնակարգվի ու կվերահսկվի:

Միևնույն է մենք ապրանքաշրջանառություն ունենք թուրքերի հետ, դա արվում է անգամ փակ սահմանների դեպքում, իսկ արտագաղթը միևնույն է կա ու կլինի...սահմանի բացումը պետք է, այն չի ազդում մեր մտավախությունների վրա:

Գյուղատնտեսական ապրանքների հսկայական հոսք կլինի Զայաստան և գներն էլ կիջնեն:

Սահմանի բացումը ցանկացած դեպքում բերելու է առնվազն սահմանամերձ մարզերի տնտեսական զարգացման:

Սահմանի բացումը շուկա է լինելու մեզ համար. դրա արդյունքում կամ մենք արագորեն կհարմարվենք և կզարգանանք, կամ էլ միանգամից կտապալվենք ու էլ երբեք ոտքի չենք կանգնի:

Զայաստանի արդյունաբերության կործանման օբյեկտիվ պատճառը տարածաշրջանային շուկաների փակվելը կամ փակ լինելն է մեզ համար:

Այսօր Զայաստանում կան գործարաններ և ռեսուրսներ, որոնք պարզապես նպատակահարմար չէ գործարկել երեք-միլիոնանոց շուկայի համար, սակայն դեպի ավելի մեծ շուկաներ ելքի հնարավորության դեպքում դրան շահագործումը միանշանակորեն շահավետ կլինի:

Սահմանի բացելու էֆեկտը սովորական թուրքը ավելի քիչ կզգա, քան սովորական հայը:

Սահմանների բացումը հնարավոր է և իրատեսական, ընդ որում 30%-ով կշահի Զայաստանը, 70%-ով Թուրքիան:

Մեր նպատակը գոյատևելը չի լինելու, մեր նպատակը մարդավարի ապրելն է:

Շատ կարևոր է, որ մենք կարողանանք հողեր գնել Թուրքիայում:

Սահմանի բացումն առավել ձեռնտու է Թուրքիային, քանի որ այդ սահմանամերձ տարածքներում կակտիվանա կյանքը և

փողոցն է դառնալու թուրքական:

Եթե թուրքերը Զայաստանից ապրանք արտահանելիս նույն կերպ են վարվելու, ինչպես մենք՝ բարձր մաքսատուրք սահմանելով, ուրեմն չեմ կարող ասել, թե ինչ զարգացում ակնկալել:

Մտավախություն կա, որ թանկությունը կպատի երկիրը, արհեստական կբարձրանան օրինակ անշարժ գույքի գները:

Մենք հիմա նույնիսկ արտասահմանյան ներդրումների մասին օրենք չունենք ու այսպես անպատրաստ գնում ենք սահմանի բացման:

Չեմ հավատում՝ երկաթուղու բացումը կմնա խոստում:

Նշվում է, որ սահմանի բացումը կնպաստի մեր գյուղատնտեսության զարգացմանը, ինչը ռեալ չի: Թուրքիան մաքսային քաղաքականությամբ կզսպի մեր արտահանումը:

Այսօրվա մենաշնորհային, կոռումպացված ու անևորմալ տնտեսության պայմաններում ի՞նչ խոսք կարող է լինել տնտեսական հնարավոր զարգացումների մասին:

Յայ գյուղացի էլ չի լինելու, հենց սահմանը բացվի, գյուղացին գնալու է Տրապիզոն առևտուր անելու, առանց այդ էլ մենք հողի գործ չենք սիրում:

Այդ ինչքա՞ն են քո մեքենայով բենզին բերելու, որ ապահովես պահանջներդ: Իհարկե՞ քիչ: Ու պարբերաբար գնալ-գալու դեպքում քեզ հանգիստ կմեղադրեն մաքսանենգության մեջ:

Տնտեսապես առանձնապես ոչինչ չի փոխվի՝ մենք ինչքան պետք է հիմա՝ ներմուծում ենք: Հնարավոր է, ասենք, չլնին գնային տարբերություն:

Սահմանների բացումը տնտեսական էական փոփոխության չի բերի, քանի որ հիմա փակ է միայն ցամաքային սահմանը, իսկ օդային տրանսպորտը միանշանակ աշխատում է:

Չենք կարծում, թե տնտեսական լուրջ ներգրավվածություն կլինի սահմանը բացելուց հետո: Իրենք իրենց կոտսեր եղբոր շահերը վեր են դասելու: Լավագույն դեպքում կբացվի երկաթուղին, իսկ **Էներգետիկ ծրագրերում մեզ չեն ընդգրկի:**

Մենք մինչև հիմա չենք կարողանում օգտագործել մեր ունեցած բաց սահմանների լիարժեք հնարավորությունները:

Մեր տնտեսության զարգացումը կախված է ոչ թե սահմանից, այլ մեր ներքին ռեսուրսներն օգտագործելուց ու ճիշտ կառավարումից:

Իսկ հիմա ինչու՞ չեն արվում միջազգային ներդրումներ: Չեմ կարծում, որ դրա պատճառը փակ սահմանն է:

Եթե մեր բոլոր հարցերը կապում ենք ընդամենը սահմանների բացման հետ, ապա ինչու՞ մինչև հիմա չենք կարողանում առավելագույնս օգտագործել Վրաստանի կամ Պարսկաստանի հետ սահմանի հնարավորությունները:

Թուրքիային Զայաստանը տնտեսական առումով ընդհանրապես չի հետաքրքրում. նա ցանկանում է մի գնդակով երկու նպատակ խփել՝ մեկը Եվրամիությունն է, մյուսը իր քաղաքականությունը:

շրջանառությունը:

Թուրքիան կլինի այն շուկան, որտեղ «կսպառվի» Հայաստանի մտավոր պոտենցիալի արտադրանքը:

Եթե կախված ենք, ինչ տարբերություն ումից ենք կախված, թուրքից թե վրացուց:
Մեր տրանսպորտային միջոցները այժմ գտնվում են օտարների ձեռքում, ուստի սահմանների բացումը այս ոլորտում մեզ ոչինչ չի տա:
Բնական զարգացման հետևանք է, որ թուրքական արևելյան գյուղերը թերի զարգացած են: Ստացվում է, որ մեզ վրա է դրված այդ հողերը ծաղկեցնելու պարտականությունը: Հայերը ներդրում են անելու Թուրքիայի վատ զարգացած շրջաններում:
Հիմա մենք չենք գնում մեքենա «պալոսկավոր» սումկաներով չուլ բերում... ի՞նչ տարբերություն կլինի սահմանը բացելուց հետո. մի սումկա ավել-պակաս:
Թուրքը չի կարող գալ ու բիզնես անել այստեղ, որովհետև ինչպես մյուսներին, սրանք էլ կասեն՝ բեր բիզնեսիդ 30 տոկոսը մեզ տուր: Կհամաձայնվի՝ կաշխատի, չէ՛՝ հնարավորություն չեն տա:

Սահմանի բացումը կնպաստի առևտրին: Բայց թուրքերը կլցվեն մեզ մոտ, թուրքի կամ պարսիկի աշխատուժն ավելի էժան է, քան հայինը, նրանք ավելի հեշտ աշխատանք կգտնեն, հետևաբար կստացվի, որ նրանք են շահում:
Այսօր շատ հայ կանայք Թուրքիայում աղախնություն են անում, իսկ թուրք կինը հայ աղախին է պահում, իսկ դա արդեն շատ բան է խոսում մեր երկրների կենսամակարդակների տարբերության մասին:
Քուրդն էժան աշխատուժ ա. կգա, էստեղ մեր ձեռից աշխատանքը կխլի, ավելին՝ իրենց կրթական հարցերը էլի կլուծեն մեր հաշվին:

Դ. Մրցունակություն

1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ

Սահմանի բացումը ռիսկեր է պարունակում, սակայն դրան պետք է գնալ: Երբ ժամանակին բացվեց Իրանի հետ ճանապարհը, պարսկական էժան ապրանքը ողողեց շուկան, սակայն հիմա մենք շատ ու շատ նման ապրանքներից հրաժարվել ենք: Մեր արտադրողը մրցունակ է:

Մենք այսպես թե այնպես թուրքական ապրանքներից օգտվում ենք, իսկ պետությունը պետք է հովանավորի տեղական արտադրողին, որ կարողանա այն մրցունակ դարձնել:

Սահմանների բացումը կնպաստի մրցակցությանը: Մեր գյուղացիները ստիպված կլինեն ավելի լավ մթերք արտադրել, որպեսզի մրցակցի թուրքական էժան մթերքի հետ:

Շուկան ինքնըստինքյան կլուծի տնտեսական և քաղաքական մրցակցության հարցը, պետք չի անհանգստանալ այդ առումով.. ազատ շուկա է հարկավոր մեզ:

Թռչնաբուծարանները ո՞նց զարգացան Հայաստանում, նույն սահմանափակումը իրականացնելով ներկրվող ապրանքի նկատմամբ մենք մեր արտադրողին կօգնենք:

Ախր պարսկական ապրանքը վերացավ, որովհետև մեր շուկան զարգացավ: Նույնն էլ սպասում ենք հիմա, պետք է կարողանանք նոր տեխնոլոգիաներ ներմուծենք, որ կարողանանք մրցունակ ապրանք տանք:

Չէ որ պարսկական ապրանքը վերացավ, որովհետև մեր շուկան զարգացավ: Նույնն էլ սպասում ենք հիմա, պետք է կարողանանք նոր տեխնոլոգիաներ ներմուծենք, որ կարողանանք մրցունակ ապրանք տանք:

Թուրքիան եվրոպական առևտրային գոտու մեջ գտնվող երկիր է: Մենք շատ արագ պետք է քայլեր ձեռնարկենք մեր առևտրական գործելակերպը եվրոպական ստանդարտներին հասցնելու համար:

2. Չգացմունքներ, Վախեր, Մտահոգություններ

Սահմանը բացել նշանակում է. առջևում կա անդունդ, որը բերում է բաց սահմանը, մեր ոչ մրցունակ տնտեսությունը կզիջի դիրքերը:

Կա նաև անվտանգության խնդիր. հնարավոր է, որ Թուրքիայի հետ տնտեսական մրցակցությանը չդիմանանք:

Մեր արտադրողի մրցունակության հարցն է առաջանում կրիմանա՞նք, թե ոչ թուրքական ապրանքների կողմից հայկական շուկան ողողելուն:

Մեզանում լուրջ խնդիր կա գյուղատնտեսության ոլորտում: Իսկ շուկայում թուրքական գյուղմթերքի հայտնվելը մեր գյուղացուն շատ ավելի անապահով վիճակում կդնի:

Մեր տնտեսությունը չի դիմանա թուրքական տնտեսության ճնշմանը:

Տնտեսական ասպեկտով՝ սահմանի բացումը բացասաբար կազդի տեղական շուկայի և արտադրողի վրա:

Վերցնենք շոկոլադի արտադրությունը. Գրանդ Զենդիի ու թուրքական շոկոլադի մրցակցության դեպքում, եթե չլինի պետական ճիշտ քաղաքականություն, համոզված եմ, մեր արտադրողը ամեն բան տանուլ կտա:

Սահմանի բացումը կարող է նաև շատ վատ ազդել տեղական արտադրողի վրա:

Ստացվում է՝ միայն ներկրում է լինելու, մենք արտահանման բան չունենք: Վաղը մյուս օր հայտնվելու ենք թուրքերից կախվածության մեջ:

Մենք կդառնանք թուրքական շուկա սահմանի բացմամբ: Մենք կդադարենք լինել արտադրող երկիր, զուտ վաճառականներ կլինենք:

Թուրքիան այսօր լուրջ տնտեսություն ունի: Սահման որ բացվի, օրինակ, թուրքական կառավարությունը դուրսացիա կտա Կարսի թռչնաբուժական ֆաբրիկային ու ձուկ 22 դրամով կլցվի Գյումրի:

Թուրքիան մեզ համար մեծ շուկա կլիներ, բայց մենք ի՞նչ ունենք արտահանելու: Մենք ամբողջովն միլիոնավոր տոննաներով է արտադրում, աշխարհի առաջատարներից է: Մենք այդ ի՞նչ ենք արտահանելու, հանքային ջո՞ւր, տեքստիլ, կամ թե այդ ի՞նչ արդյունաբերական ուրիշ ապրանք:

Այդ որո՞նք են արդյունաբերության այն ճյուղերը, որ դեպի Թուրքիա արտահանման պոտենցիալ ունեն:

3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք

Միակ լուծումն այն է, որ Հայաստանն ունենա մրցունակ տնտեսություն, այս պարագայում սահմանի բացումը մեզ համար վտանգավոր չէ:

Սահմանի բացումը նպաստելու է մրցակցային հարաբերությունների զարգացմանը մեր երկրում:

Մենք ներքին խնդիրներ ունենք, որոնք մեզ խանգարում են այս հարցում ավելի թելադրող լինել. դա մեր սոցիալական վիճակն է, անմրցունակ լինելն է...

91-92թթ. իրանցիներն իրենց ապրանքով ողողեցին մեր երկիրը: Իսկ հիմա ու՞ր է այդ վաճառքը, թխվածքաբլիթը... Ես գնում եմ Դարոհիսկի ու Շանթի արտադրանքը: Տեսնում եմ, որ մեր արտադրանքն ավելի որակյալ է ու պարսկական էժանը չեմ առնում:

Սահմանի բացումը կստիպի մեզ մրցունակ լինել ու որակով արտադրանք կլինի:

Վստահ եմ, որ սահմանի բացման պարագայում, «Գրանդ հոլդինգը» կգրավի ողջ արևելյան Թուրքիան:

Մինչև եղեմն էլ մենք ամենահարուստն ենք եղել, հիմա էլ նույնը լինելու է. մենք վախենալու բան չունենք:

Քանի դեռ մեր արտադրանքը մրցունակ չէ, թուրքական ապրանքը ավելի ցանկալի կլինի ու կողողի շուկան:

Ապաշրջափակումը ձեռնտու կլինի թե՛ մեզ, թե՛ թուրքերին և չեմ հասկանում, թե ինչու կա էժան թուրքական ապրանքների մտավախությունը, քանի որ այդ ապրանքներն արդեն իսկ մեր շուկայում են:

Գյումրին գորգ է արտադրում, որը շատ հարգի կլինի Թուրքիայում: Ավելին ասեմ, վերջերս էլ շինարարական մի բրիգադի հրավիրել էին այնտեղ աշխատելու:

Այսօր Թուրքիայում չկա այնպիսի գյուղատնտեսական ապրանք, որը Հայաստանից էժան լինի, վտանգ չկա:

Մեր արդյունաբերական տեխնոլոգիաներն այնքան ցածր են, մենք ընդհանրապես չունենք բազա, որպեսզի թուրքերի հետ մրցակցենք:

Մեր գյուղատնտեսությունը հաստատ չի տուժելու սահմանի բացումից: Պարսկաստանի հետ սահմանի բացման ժամանակ էլ կար հայկական շուկան պարսկական ապրանքներով ողողելու մտավախություն:

Հայաստանից արտահանման հարցը թուրքիայի հետ կապված չի, հարցը մեր մրցունակության մեջ է, այս տեսանկյունից թուրքիայի հետ սահմանի բացումը մեր վրա տնտեսապես առանձնապես չի անդրադառնա:

Եթե մենք տնտեսապես կարող, մրցունակ լինենք, կկարողանանք նաև թելադրել:

Եթե Թուրքիան պրոտեկցիոնիզմ չխաղա էլ, հայկական արտադրանքի համար բարդ է լինելու թուրքական շուկան գրավելը:

4. Սոցիալական երկխոսություն

Վստահ եմ, որ սահմանի բացման պարագայում, «Գրանդ հոլդինգը» կգրավի ողջ արևելյան Թուրքիան:

Մինչև եղեռն էլ մենք ամենահարուստն ենք եղել, հիմա էլ նույնը լինելու է. մենք վախենալու բան չունենք:

Ապաշրջափակումը ձեռնտու կլինի թե՛ մեզ, թե՛ թուրքերին և չեմ հասկանում, թե ինչու կա էժան թուրքական ապրանքների մտավախությունը, քանի որ այդ ապրանքներն արդեն իսկ մեր շուկայում են:

Այսօր Թուրքիայում չկա այնպիսի գյուղատնտեսական ապրանք, որը Չայաստանից էժան լինի, վտանգ չկա:

Մեր գյուղատնտեսությունը հաստատ չի տուժելու սահմանի բացումից:

Պարսկաստանի հետ սահմանի բացման ժամանակ էլ կար հայկական շուկան պարսկական ապրանքներով ողողելու մտավախություն:

Սահմանի բացումից հետո առաջին տուժողը գյուղացին կլինի, իսկ առաջին շահողը՝ քաղաքացին:

91-92թթ. իրանցիներն իրենց ապրանքով ողողեցին մեր երկիրը: Իսկ հիմա ու՞ր է այդ վաֆլին, թխվածքաբլիթը... Ես գնում եմ Դարոփնկի ու Շանթի արտադրանքը: Տեսնում եմ, որ մեր արտադրանքն ավելի որակյալ է ու պարսկական էժանը չեմ առնում:

Սահմանի բացումը ռիսկեր է պարունակում, սակայն դրան պետք է գնալ: Երբ ժամանակին բացվեց Իրանի հետ ճանապարհը, պարսկական էժան ապրանքը ողողեց շուկան, սակայն հիմա մենք շատ ու շատ նման ապրանքներից հրաժարվել ենք: Մեր արտադրողը մրցունակ է:

Եթե մենք տնտեսապես կարող, մրցունակ լինենք, կկարողանանք նաև թելադրել:

Ավելի զարգացած պետության հետ առևտուր անելը մեզ միշտ էլ շահեկան է:

Սահմանի բացումը Չայաստանին տալիս է նոր շուկա, քանի որ Թուրքիայի սահմանամերձ գոտիները բավականին հետամնաց են:

Գյումրին գորգ է արտադրում, որը շատ հարգի կլինի Թուրքիայում: Ավելին ասեմ, վերջերս էլ շինարարական մի բրիգադի հրավիրել էին այնտեղ աշխատելու:

Մենք արտահանման ապրանք ունենք՝ մեր քիմիական արտադրությունը կարող է զարգանալ:

Մեր գյուղերը քայքայման եզրին են, հետագայում գյուղապրանքները ավելի էժան կդառնան ու հայ գյուղացին կդադարի հող մշակելուց: Իսկ ինչո՞վ կգրադվի, ընտանիք ինչո՞վ կպահի:

Անում ենք, որ տնտեսապես ձեռնտու է սահմանի բացումը, իսկ ես այլ կարծիքի եմ. սահմանի բացումը նշանակում է շատ էժան ապրանքի ներմուծում, ինչը կհարվածի տեղական արտադրողին... արդյունքում մեր ունեցածն էլ կկորցնենք ու կդառնանք «խանութի վաճառողներ»...

Սահմանը բացել նշանակում է առջևում կա անդունդ, որը բերում է բաց սահմանը, մեր ոչ մրցունակ տնտեսությունը կզիջի դիրքերը

Կա նաև անվտանգության խնդիր. հնարավոր է, որ Թուրքիայի հետ տնտեսական մրցակցությանը չդիմանանք:

Մեր արտադրողի մրցունակության հարցն է առաջանում՝ կդիմանա՞նք, թե ոչ թուրքական ապրանքների կողմից հայկական շուկան ողողելուն:

Մեզանում լուրջ խնդիր կա գյուղատնտեսության ոլորտում: Իսկ շուկայում թուրքական գյուղմթերքի հայտնվելը մեր գյուղացուն շատ ավելի անապահով վիճակում կդնի:

Մեր տնտեսությունը չի դիմանա թուրքական տնտեսության ճնշմանը:

Տնտեսական ասպեկտով՝ սահմանի բացումը բացասաբար կազդի տեղական շուկայի և արտադրողի վրա:

Սահմանի բացումը կարող է նաև շատ վատ ազդել տեղական արտադրողի վրա:

Ստացվում է՝ միայն ներկրում է լինելու, մենք արտահանման բան չունենք: Վաղը մյուս օր հայտնվելու ենք թուրքերից կախվածության մեջ:

Մենք կդառնանք թուրքական շուկա սահմանի բացմամբ: Մենք կդադարենք լինել արտադրող երկիր, զուտ վաճառականներ կլինենք:

Թուրքիան այսօր լուրջ տնտեսություն ունի: Սահման որ բացվի, օրինակ, թուրքական կառավարությունը դոտացիա կտա Կարսի թռչնաբուժական ֆաբրիկային ու ձուկ 22 դրամով կլցվի Գյումրի:

Այդ որո՞նք են արդյունաբերության այն ճյուղերը, որ դեպի Թուրքիա արտահանման պոտենցիալ ունեն:

Մենք ներքին խնդիրներ ունենք, որոնք մեզ խանգարում են այս հարցում ավելի թելադրող լինել. դա մեր սոցիալական վիճակն է, անմրցունակ լինելն է...

Քանի դեռ մեր արտադրանքը մրցունակ չէ, թուրքական ապրանքը ավելի ցանկալի կլինի ու կողողի շուկան:

Մեր արդյունաբերական տեխնոլոգիաներն այնքան ցածր են, մենք ընդհանրապես չունենք բազա, որպեսզի թուրքերի հետ մրցակցենք:

Մի երկու տարվա մեջ Թուրքիան մեր ամբողջ շուկան կգրավի, տեղական տնտեսությունը կտուժի:

Ինչ է նշանակում սահմանի բացում, եթե ամառային հանգիստը անսկարագրելի մեծ թվով հայեր Թուրքիայում են անցկացնում: Մտեք ցանկացած խանութ. թուրքական ապրանքը ամենուրեք է:

Հիմա էլ թուրքական ապրանքները ծփում են Չայաստանում..

Միևնույն է մեր շուկան ողողված է թուրքական ապրանքով, այլ ինչի որ է այդ ապրանքը գալիս է Վրաստանից և թանկ է: Սահմանի բացումը դրական միտում է այդ առումով:

Հիմա էլ ենք թուրքական ապրանքներ առնում, սահմանի բացման հետ դա կապ չունի:

Չայաստանի սահմանամերձ տարածքները ավելի քիչ են զարգացած, ուստի սահմանի բացումը նոր շուկա կբացի Չայաստանի համար:

Չեմ հասկանում թե ինչու պետք է միայն սահմանամերձ գյուղերը, բնակավայրերը շահեն:

Չաստատ բան եմ ասում. սահմանը բացելու դեպքում հենց մենակ մեր Գյումրին Թուրքիա արտահանելու ապրանք ունի:

Այսօր արդեն իսկ Գյումրիով անցնում են մոտ մինչև հարյուր հիսուն թուրքական բեռնատարներ են անցնում, այնպես որ շփումն արդեն իսկ կա:

Ցեղասպանության թանգարանը նորոգելու համար շինանյութը թուրքական է եղել. փաստացի թուրքական արտադրանքը ողողել է մեր երկիրը, իսկ դուք ասում եք, թե դեռ նոր պետք է սահմանը բացել:

Մենք թուրքական արտադրանքն ավելի քիչ ենք սպառում, քան կարծում ենք. իրականում վախենալու բան չկա:

Սահմանների բացումը կնպաստի մրցակցությանը: Մեր գյուղացիները ստիպված կլինեն ավելի լավ մթերք արտադրել, որպեսզի մրցակցի թուրքական էժան մթերքի հետ:

Շուկան ինքնըստինքյան կլուծի տնտեսական և քաղաքական մրցակցության հարցը, պետք չի անհանգստանալ այդ առումով.. ազատ շուկա է հարկավոր մեզ:

Սահմանի բացումը նպաստելու է մրցակցային հարաբերությունների զարգացմանը մեր երկրում:

Միակ լուծումն այն է, որ Չայաստանն ունենա մրցունակ տնտեսություն, այս պարագայում սահմանի բացումը մեզ համար վտանգավոր չէ:

Եթե Թուրքիան պրոտեկցիոնիզմ չխաղա էլ, հայկական արտադրանքի համար բարդ է լինելու թուրքական շուկան գրավելը:

Սահմանամերձ շրջաններին պետք է նախապատրաստել մինչև սահմանի բացումը, պետք է այնպես անել, որ նրանք չտուժեն ու նվաստանան, պետք արագ զարգացնել նրանց: Հարուստի ու աղքատի միջև սահմանը բացելիս աղքատը տուժում է:

Ես տեղյակ եմ, որ Թուրքիան հզոր գյուղատնտեսություն ունի. սահմանները բացելու դեպքում մեր գյուղացիները տուժելու են:

Այսօր մեր տնտեսությունը պատրաստ չէ ընդունելու Թուրքիայի շուկայի պայմանները: Մեր գյուղատնտեսությունը շատ կտուժի, քանի որ թուրքական էժան ապրանքները կլցվեն մեր շուկան:

Թուրքիան մեզ համար մեծ շուկա կլինի, բայց մենք ի՞նչ ունենք արտահանելու: Սննդամթերքը միլիոնավոր տոննաներով է արտադրում, աշխարհի առաջատարներից է: Մենք այդ ի՞նչ ենք արտահանելու, հանքային ջո՞ւր, տեքստիլ, կամ թե այդ ի՞նչ արդյունաբերական ուրիշ ապրանք:

Թուրքիան մեզ համար շուկա չի, Թուրքիան մեզ համար ճանապարհ է դեպի արտաքին շուկա:

Իհարկե տնտեսական աճ էլ կլինի, բայց վտանգը մեծ է. նրանք մեզ դիտելու են որպես հումքի աղբյուր. նրանց մոտ տեքստիլ արդյունաբերությունը զարգացած է:

Նախկինում մեր ջերմոցներում արտադրված բանջարեղենը լավագույն համբավն ուներ: Հիմա Պարսկաստանից ու արտասահմանից ներմուծված բանջարեղենը հնարավորություն չեն տալիս մեր գյուղատնտեսությանը զարգանալու: Նույնն էլ Թուրքիայի հետ սահմանների բացման դեպքում է լինելու:

Չինաստանում երբ սպանեցին հինգ թուրք երիտասարդների, թուրքերը անմիջապես բոյկոտեցին չինական ապրանքները, իսկ հայերը այդ արժանապատվությունը չունեն և ողողել են շուկան թուրքական ապրանքներով:

Մենք պետք է պետական պրոտեկցիոնիզմի քաղաքականություն վարենք. ամեն բան չէ, որ կարելի է ներմուծել Չայաստան:

Պետությունը պետք է ստանձնի կարգավորիչ-սահմանափակող ֆունկցիաներ ներկրման նկատմամբ, ինչպես օրինակ վրացիները դա արեցին մեր վրաստան արտահանվող կարտոֆիլի նկատմամբ:

Ներկրման և արտահանման հարցում կարևորը պետական մոտեցումներն են, կարող են այնպես սահմանափակել, որ մեր արտադրողը դրանից չտուժի:

Թուրքական կապիտալի մուտքը Չայաստան պիտի միանշանակ վերահսկվի:

Թռչնաբուծարանները ո՞նց զարգացան Չայաստանում, նույն սահմանափակումը իրականացնելով ներկրվող ապրանքի նկատմամբ մենք մեր արտադրողին կօգնենք:

Թուրքիան եվրոպական առևտրային գոտու մեջ գտնվող երկիր է: Մենք շատ արագ պետք է քայլեր ձեռնարկենք մեր առևտրական գործելակերպը եվրոպական ստանդարտներին հասցնելու համար:

Սահմանի բացումը կատիպի մեզ մրցունակ լինել ու որակով արտադրանք կլինի:

Չէ որ պարսկական ապրանքը վերացավ, որովհետև մեր շուկան զարգացավ: Նույնն էլ սպասում ենք հիմա, պետք է կարողանանք Նոր տեխնոլոգիաներ ներմուծենք, որ կարողանանք մրցունակ ապրանք տանք:

Հայաստանից արտահանման հարցը թուրքիայի հետ կապված չի, հարցը մեր մրցունակության մեջ է, այս տեսանկյունից թուրքիայի հետ սահմանի բացումը մեր վրա տևտեսապես առանձնապես չի անդրադառնա:

Եղել է ժամանակ, երբ Հայաստանում պարսկական էժան և անորակ ապրանքների հեղեղ էր, բայց դրանց իրացումը մեր շուկաներում տևեց 2-3 տարի, նույնը կլինի հիմա: Պետք է հեռու նայել:

Եթե սահմանը բացվի, 10 տարի հետո Արևմտյան Հայաստանում շատ հայ կլինի: 15 տարի հետո հայերը այնտեղ բիզնեսներ կունենան: Թող թուրքը վախենա:

Երկիր մտնում է այնպիսի ապրանք, որի պահանջարկը կա, եթե Հայաստան վատ ապրանք են բերում, ուրեմն դրա պահանջարկը կա:

Մենք այսպես թե այնպես թուրքական ապրանքներից օգտվում ենք, իսկ պետությունը պետք է հովանավորի տեղական արտադրողին, որ կարողանա այն մրցունակ դարձնել:

Ներմուծվող ապրանքների վրա, հատկապես Թուրքիայից եկող ապրանքների դեպքում, համապատասխան տնտեսական և մաքսային քաղաքականություն է պետք վարել, որպեսզի մեր տեղական արտադրողը չտուժի:

Վերցնենք շոկոլադի արտադրությունը. Գրանդ Զենդիի ու թուրքական շոկոլադի մրցակցության դեպքում, եթե չլինի պետական ճիշտ քաղաքականություն, համոզված եմ, մեր արտադրողը ամեն բան տանուլ կտա:

Դուրբայից, Եվրոպայից անորակ ապրանք չի՞ գալիս: Իսկ մենք մեր ներկրողներից պետք է պահանջենք, որ որակյալ ապրանք բերեն:

Մաքսային ռեժիմը խիստ պետք է լինի ու աչալուրջ:

Եթե թուրքերը մտան Հայաստան, նրանք այստեղ ձեռնարկատիրություն կսկսեն և մենք պետք է ունենանք համապատասխան օրենքներ այդ կանխելու համար:

Մեր մտավախությունների պատճառը մենք ենք. օրինակ նույն ԱՀԿ մենք ավելի վատ պայմաններում ենք, քան Թուրքիան: Մենք պետք է փոխենք մեր հարկային ու մաքսային դաշտը, Նոր բացել սահմանները:

Անցյալ տարի հազարավոր տոննաներով կարտոֆիլը մնաց, որովհետև Թուրքիայից էժան կարտոֆիլ գնեցին զորամասերի համար:

Մեր գյուղացու տուժելն ու չտուժելը կախված է մեր պետությունից:

Ե. Բիզնես շահ, ազդեցություն և սոցիալական արդարություն

1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ

Պետական շահը չպետք է տուժի բիզնեսի շահերից:

Իրենց սննդարդյունաբերական ապրանքները էժան են, սա ներկրողի շահույթի հարց է միայն:

Իրենք լավ առևտրականներ են ու իրենց մանր առևտրականների համար սա օգտակար կլինի:

Մենք պետք է անտեսենք անհատների շահերը և մտածենք ընդհանուր երկրի շահերի մասին:

Թող մեր օլիգարխները գնան Մասիսն առնեն:

Ես հասարակ թոշակառու եմ ու կշահեմ սահմանը բացելուց: Սահմանների փակ վիճակից օլիգարխներն են շահում:

Մի քանի հոգու գրպանը լցնելու համար զիջելու՞ ենք մեր երկիրը: Միանշանակ՝ ո՛չ:

Դեմ չեմ սահմանի բացմանը, սակայն ներքին քաղաքականությունը պետք է վերանայել:

Սահմանի բացումով կսահմանափակվեն այսօրվա օլիգարխների հնարավորությունները և կշահի հասարակ ժողովուրդը:

Սահմանի բացումը չպետք է նպաստի զուտ մոնոպոլիստների զարգացմանը, այլ պետք է նաև նպաստի փոքր գործարարների բիզնեսի զարգացմանը:

Սահմանը բացելով օլիգարխների գործունեությունը հեշտացնելու համար ես չեմ ուզում վտանգել մեր պահանջատիրությունը:

Բիզնես շահով պիտի առաջնորդվենք: Երկու ելք ունենք. կամ պիտի այդ բիզնեսի տիրոջն իրոք ազգայնական դարձնենք, որի դեպքում կշահենք, կամ մեր ցանկացած ճիշտ քայլ սխալ արդյունք կբերի:

Հայաստանի միջազգային իմիջը բարձրանում է ոչ թե սահմանների բացումով, այլ մեկ անգամ արդար ընտրություններ անցկացնելով, կանխելով մարտի 1-ը:

Անթալիայի «պուլտյովկան» էլ կեժանանա, բայց մեկ ա մենք էլի չենք օգտվի...

Չի կարելի քաղաքական շահը հանուն տնտեսական շահի կորցնել:

Պետք է առաջին հերթին առաջ տանենք մեր քաղաքական ու գաղափարական շահերը, հետո նոր ուշադրություն դարձնենք տնտեսականին, ու բիզնեսը պետք է հարմարվի քաղաքականին, ոչ թե հակառակը:

Մեզ հարկավոր են ներդրումներ, որպեսզի մենաշնորհները վերանան ու ավելի մեծանա խաղաղություն պահպանելու բոլորի ջանքերը:

Դեմ եմ սահմանների բացմանը, քանի որ դա կբերի միայն մեր «խոշոր ձկների» հարստացմանը, իսկ ժողովրդի համար ոչինչ չի փոխվի:

Եթե մենք առաջնորդվենք բիզնես շահերով, պարզ է, թե մեզ հետ ինչ կլինի: Պետք է պետությունը կարողանա սանձել ու կարգավորել մեր պետության շահին հակասող քայլերը:

Եթե նոր հնարավորություններ բացվեն, խոշոր բիզնեսը կսկսի մրցել ինքն իր հետ:

2. Չգացմունքներ, Վախեր, Մտահոգություններ

Շահելու ենք մե՞նք, թե՛ օլիգարխները... Հասարակ ժողովրդին ի՞նչ օգուտ կլինի:

Մի րոպե, եթե սահմանը բացում ենք, մեր սոցիալական վիճակը լավանալու է, թե ոչ... իսկ եթե ոչ, էլ ի՞նչ ենք ուզում...

Եթե Թուրքիան մեծ ներդրումներ ունենա Հայաստանում և համագործակցի մեր բիզնեսմենների հետ, ապա Թուրքիան ազդեցություն կունենա նաև մեր քաղաքական որոշումների վրա:

Ինչ շուկայի զարգացում, եթե մենք շուկայական հարաբերությունների չենք անցել, մենատիրություն է դառնալու:

Մենք մի փոքր կարող է շահենք, բայց առավել կշահեն օլիգարխները ու հասարակության շերտավորումն ավելի կարվի:

Սահմանի բացումը հասարակ ժողովրդի վիճակն ենքան էլ չի լավացնի: Կշահեն նրանք, ովքեր հիմա էլ վատ չեն ապրում:

Քանի դեռ այս երկրում մեծ տարբերություն կա հարուստների ու աղքատների միջև ու աղքատները շատ են, քանի դեռ մեր ներսի պորբլեմները չենք լուծել, ոչ մի բան էլ չի ստացվի:

Հանուն շահույթի, անգամ, մեր շատ պատգամավորներ ու նախարարներ ընդունակ են ամեն բան ծախելու: Դա նշանակում է, որ երաշխիք՝ մեր ապահովության ու պայմանների բարելավման հարցում չկա:

Սահմանի բացումը կօգնի Հայաստանի 2-3 գործարարներին:

Մեր մոտ ամեն ինչ այնքան է մոնոպոլացված, որ սահմանի բացումը հարց չի լուծի:

Սահմանի բացումից հետո հարուստներն ավելի կհարստանան, իսկ աղքատները ավելի կաղքատանան...

Սահմանը մենք պիտի պաշտպանենք, իսկ այս հարցում ի՞նչ է կարծում նույն մեր օլիգարխը: Որտե՞ղ կլինի նա իր բիզնեսով, երբ սահման պահելու պահանջ լինի:

Մի հատ ձեռներեցից մինչև հիմա չլսեցինք, որ սահմանը բացելու դեպքում գները կիջնեն:

Հետևանքն այն կլինի, որ ձեռներեցը նոր ճանապարհ է գտնելու, իսկ մենք տուժելու ենք:

Սահմանի բացումը բեռնափոխադրումների առումով շահեկան է մոնոպոլիստներին, այն չի բերի գների իջեցման:

Հարցը երաշխիքն է. այս գարնան էլ պարարտանյութն մոտ 5900 դրամով ներկրվեց, բայց ծախվեց 10000 դրամով: Ի՞նչ երաշխիքներ կան, որ նույնն էլ հետո չի լինի:

Միջազգային խոշոր ներդրումները չեն ծառայի իրենց նպատակին, քանի որ նրանք կրկին անգամ կուտակվելու են մի քանի անհատների ձեռքերում:

Ներկայում թե՛ ֆինանսական, թե՛ տնտեսական լծակները Հայաստանում մի խումբ մարդկանց ձեռքին է կենտրոնացած: Սահմանի բացումը այդ նույն խմբի մարդկանց է օգուտ տալու:

Բաց սահմանը խթանելու է ընդամենը մի քանի օլիգարխների մենաշնորհային բիզնեսը:

Սահմանի բացումը միայն որոշակի խմբերի է օգուտ բերելու:

Հարստության բաշխման բևեռացման հնարավորություն կլինի, հարուստն ավելի կհարստանա, իսկ աղքատն ավելի կաղքատանա:

Պետք է վստահ լինել, որ տնտեսական զարգացումը շահույթ չի տա միայն մոնոպոլիստներին:

Մեր Գյուժրին ոչինչ չունի, ինչ սահմանի բացման մասին է խոսքը: Դա ձեռնտու է միայն մի քանի մոնոպոլիստների կամ օլիգարխների:

Ներկրողներն ավելի շատ կլինեն, և եթե հիմա մենք ունենք միջին բիզնես, ապա զարգացման դեպքում հենց նրանք կկրեն առաջին հարվածը: Ես չեմ տեսնում ռեալ տնտեսական զարգացում հայերի համար, բացի մի քանի օլիգարխներից:

Մեր բնակչության մեծամասնությունը «յուլա գնացողներ» են, իսկ սահմանը բացելուց կօգտվեն օլիգարխները:

Որ սահմանը բացենք ու որոշ տնտեսական հարցեր լուծենք, էլ մարտի մեկ չի՞ լինելու:

Սրանից օգտվելու են մենաշնորհները: Մեզ ի՞նչ:

Եթե քաղաքականության թիկունքում կանգնածը թուրք գործարարը լինի, մենք էլի կպարտվենք:

Մենք մենաշնորհը հաղթահարելու համար այլընտրանք ենք փնտրում Թուրքիայում, բայց ինչու՞ չենք կարողանում այդ մենաշնորհի դեմն առնել հենց ներսում:

Սահմանի բացման արդյունքում մեր տնտեսությունը կհեղեղվի թուրքական ընկերությունների ներդրումներով. արդյունքում մեր մենաշնորհային օլիգարխները կկործանվեն:

Եթե կառավարությունը տեսնի, որ շահ ունի, ժողովրդի կարծիքը հաշվի չի առնի:

Երկրի ներսում հարց որոշողը նա է, ով փող ունի, իշխանություն ունի, այսինքն էլիտան, ու էլիտայի կարծիքի վրա կարող են ազդել դոսիս՝ ելնելով նրանց անձնական շահերից:

Մեր բիզնեսմենները իրենց շահերից ելնելով կարգավորելու են հայ-թուրքական հարաբերությունները՝ անտեսելով հայերի ազգային շահերը:

Աղքատությունը, սոցիալական խնդիրները գերակշռում են, մարդիկ այսօր օրվա հացի խնդիր են լուծում: Նման դեպքում ավելի վե՛հ ու խոշոր ծրագրերով նրան չես վարակի:

Շատ խորը տնտեսական վերլուծություն պետք չի, որպեսզի պարզ լինի, որ սահմանի բացումից օգտվելու են մի քանի տասնյակ հոգի:

Հիշելով նախորդ տարվա փորձը կարող ենք ասել, որ եթե համաշխարհային շուկայում բենզինի գինը իջնում է 20-30%-ով, իսկ Հայաստանում ընդամենը 20-30 դրամով, ուստի կարող եք ասել, որ ամեն ինչ օլիգարխների ձեռքում է: Սա նշանակում է, որ սահմանի բացման պարագայում էլ գները կիջնեն չնչին չափով և շատ կարճ ժամանակով:

3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք

Սահմանների բացումը կարող է խթանել միջին խավի զարգացմանը

Բիզնեսի առումով թուրքերը բավականին կիրթ են մեր հետ հարաբերություններում, ինչը կարող են հաստատել բիզնեսմենները:

Ցանկացած երկրում քաղաքականությունը որոշում են տնտեսվարողները... մեր երկրում սա ավելի քան իրական է. սահմանի բացումը կնշանակի բիզնեսի միջոցով ազդել քաղաքականության վրա:

Հակամենաշնորհային ոչ մի միջոցառում մեր երկրում չի աշխատում:

Անկախ սահմանի բացումից ներդրումներ կամ լինում են, կամ չեն լինում: Մեկը մյուսի հետ կապ չունի:

Չայաստանում հիմա էլ կա եղեռն՝ սպիտակ եղեռն է, երբ այսօր մարդ լքում է հայրենիքը:

Չայտնի է, որ շատ հարցերում մեր տնտեսությունը մենաշնորհային է, սահմանը բացելուց հետո առավել կտուժեն մենաշնորհային դիրք ունեցողները, որովհետև իրենցից բացի էլի տնտեսվարողներ կլինեն, որոնք հարաբերություններ կհաստատեն Նոր գործընկերների հետ:

Մենաշնորհ ունեցող տնտեսվարողը Չայաստանում երբեք չի տուժի, որովհետև նրանց կապերը ավելի շատ են ու ավելի մեծ հնարավորություն ունեն մենաշնորհը խորացնելու:

Ներկա իրավիճակն իհարկե վատ է և մեզ դուր չի գալիս, բայց կարծում ենք, որ սովորական մարդու համար սահմանի բացումը էական ազդեցություն չի ունենա: Մեր մոտ աղքատների և հարուստների միջև անջրպետը կմեծանա: Ինչպես անցյալում եղավ՝ արագ, անկառավարելի գործընթացներից շատ քչերը շահեցին, բայց ավելի շատերը տուժեցին: Նույնը հիմա է լինելու:

Տնտեսական վնասի ռիսկը կա, սակայն այդ մասին խոսում են սահմանափակ մարդիկ, նրանք, ովքեր ձգտում էին Չայաստանում մենաշնորհ դիրք հաստատել: Միանշանակ է, որ զարգացման տանող մեկ ճանապարհից երկուսն ավելի լավ է:

Տնտեսությունը կշահի միայն այն բիզնեսներում, որտեղ մոնոպոլիա չկա:

Շահող են դուրս գալիս այն երկրները, որոնք իրենց երկրի ներսում ստեղծել են ազատ տնտեսական հարաբերություններ, առանց մենաշնորհների տնտեսություն:

Սահմանի փակ լինելը նպաստում է, որ մեր երկրում զարգանա մենաշնորհային տնտեսությունը: Դրա պատճառն այն է, որ հիմա խողովակի երկու կողմում էլ նույն՝ սովետական պետության հետևորդներն են:

Մեր բլոկադան բազմաշերտ է, հայ-թուրքական բլոկադայից բացի անհրաժեշտ է բացել տարբեր մականունավոր օլիգարխների իրականացրած բլոկադան: Ինձ թվում է մեր տնտեսությունը ավելի շատ շրջափակում են օլիգարխները, և ոչ-թե հայ-թուրքական սահմանը:

Եթե Չայաստանում ընդամենը հինգ հոգու ձեռնտու լինի սահմանի բացումը, ապա այն կբացվի՝ անկախ հասարակ ժողովրդի կարծիքից:

Եթե ինչ-որ բիզնեսմեն փորձի այսօր մտնել ներմուծման դաշտ, ապա բախվելու է մեր մոնոպոլիստներին:

Չայ-թուրքական հարաբերություններն այսօր ինչ-որ տեղ արդեն բիզնես շահերի են վերածվել:

Բիզնեսի մեջ ազդություն չկա, կա շահ ու եկամուտ:

Բիզնես շահն իհարկե ազդում է մեր ու վրացիների հարաբերությունների վրա: Նույնը կլինի հայ-թուրքականի դեպքում:

4. Սոցիալական երկխոսություն

Սահմանի բացումով կահմանափակվեն այսօրվա օլիգարխների հնարավորությունները և կշահի հասարակ ժողովուրդը:

Եթե նոր հնարավորություններ բացվեն, խոշոր բիզնեսը կսկսի մրցել ինքն իր հետ:

Սահմանի բացման արդյունքում մեր տնտեսությունը կհեղեղվի թուրքական ընկերությունների ներդրումներով. արդյունքում մեր մենաշնորհային օլիգարխները կկործանվեն:

Ես հասարակ թռչակառու եմ ու կշահեմ սահմանը բացելուց: Սահմանների փակ վիճակից օլիգարխներն են շահում:

Սահմանների բացումը կարող է խթանել միջին խավի զարգացումը:

Հայտնի է, որ շատ հարցերում մեր տնտեսությունը մենաշնորհային է, սահմանը բացելուց հետո առավել կտուժեն մենաշնորհային դիրք ունեցողները, որովհետև իրենցից բացի էլի տնտեսվարողներ կլինեն, որոնք հարաբերություններ կհաստատեն նոր գործընկերների հետ:

Տնտեսական վնասի ռիսկը կա, սակայն այդ մասին խոսում են սահմանափակ մարդիկ, նրանք, ովքեր ձգտում էին Հայաստանում մենաշնորհի դիրք հաստատել: Միանշանակ է, որ զարգացման տանող մեկ ճանապարհից երկուսն ավելի լավ է:

Տնտեսությունը կշահի միայն այն բիզնեսներում, որտեղ մոնոպոլիա չկա:

Սահմանի փակ լինելը նպաստում է, որ մեր երկրում զարգանա մենաշնորհային տնտեսությունը: Դրա պատճառն այն է, որ հիմա խողովակի երկու կողմում էլ նույն՝ սովետական պետության հետևորդներն են:

Եթե ինչ-որ բիզնեսմեն փորձի այսօր մտնել ներմուծման դաշտ, ապա բախվելու է մեր մոնոպոլիստներին:

Սահմանի բացումը կնվազեցնի տրանսպորտային ծախսերը, կսկսվի մրցակցություն, և, ի վերջո, կշահի հասարակ ժողովուրդը:

Հայաստանում բացարձակ մենաշնորհ չկա:

Գյուլբրիի համար սահմանի բացումն այնքանով արդյունավետ կլինի, որ փոքր բիզնեսը, անհատ ձեռներեցներ կկարողանան բիզնես անել ու զարգանալ: Սահմանի բացումից հետո կշահեն խոշոր բիզնեսմենները, բայց կշահի նաև մեր տնտեսությունը:

Մի քանի հոգու գրպանը լցնելու համար զիջելու՞ ենք մեր երկիրը: Միանշանակ՝ ո՛չ:

Դեմ չեմ սահմանի բացմանը, սակայն ներքին քաղաքականությունը պետք է վերանայել:

Իրենց սննդարդյունաբերական ապրանքները էժան են, սա ներկրողի շահույթի հարց է միայն:

Սահմանը բացելով օլիգարխների գործունեությունը հեշտացնելու համար ես չեմ ուզում վտանգել մեր պահանջատիրությունը:

Դեմ եմ սահմանների բացմանը, քանի որ դա կբերի միայն մեր «խոշոր ձկներին» հարստացմանը, իսկ ժողովրդի համար ոչինչ չի փոխվի:

Սահմանի բացումը չպետք է նպաստի զուտ մոնոպոլիստների զարգացմանը, այլ պետք է նաև նպաստի փոքր գործարարների բիզնեսի զարգացմանը:

Շահելու ենք մե՞նք, թե՞ օլիգարխները... Հասարակ ժողովրդին ի՞նչ օգուտ կլինի:

Անթալիայի «պուտյովկան» էլ կեժանանա, բայց մեկ և մենք էլի չենք օգտվի...

Եթե սահմանը բացում ենք, մեր սոցիալական վիճակը լավանալու է, թե՞ ոչ... իսկ եթե ոչ, էլ ի՞նչ ենք ուզում...

Ինչ շուկայի զարգացում, եթե մենք շուկայական հարաբերությունների չենք անցել, մենատիրություն է դառնալու:

Մենք մի փոքր կարող է շահենք, բայց առավել կշահեն օլիգարխները ու հասարակության շերտավորումն ավելի կսրվի:

Սահմանի բացումը հասարակ ժողովրդի վիճակն էնքան էլ չի լավացնի: Կշահեն նրանք, ովքեր հիմա էլ վատ չեն ապրում:

Քանի դեռ այս երկրում մեծ տարբերություն կա հարուստների ու աղքատների միջև ու աղքատները շատ են, քանի դեռ մեր ներսի պրոբլեմները չենք լուծել, ոչ մի բան էլ չի ստացվի:

Սահմանի բացումը կօգնի Հայաստանի 2-3 գործարարներին:

Մեր մոտ ամեն ինչ այնքան է մոնոպոլացված, որ սահմանի բացումը հարց չի լուծի:

Սահմանի բացումից հետո հարուստներն ավելի կհարստանան, աղքատներն ավելի կաղքատանան...

Ի՞նչ է կարծում նույն մեր օլիգարխը: Որտե՞ղ կլինի նա իր բիզնեսով, երբ սահման պահելու պահանջ լինի:

Մի հատ ձեռներեցից մինչև հիմա չլսեցինք, որ սահմանը բացելու դեպքում գները կիջնեն:

Հետևանքն այն կլինի, որ ձեռներեցը նոր ճանապարհ է գտնելու, իսկ մենք տուժելու ենք:

Սահմանի բացումը միայն որոշակի խմբերի է օգուտ բերելու:

Պետք է վստահ լինել, որ տնտեսական զարգացումը շահույթ չի տա միայն մոնոպոլիստներին:

Հայաստանի հասարակ բնակչի համար սահմանի բացումը միանշանակորեն օգտակար կլինի: Մրցակցությունը կավելանա, որից կշահեն մեր բնակիչները:

Սահմանի բացումը կվնասի միայն գյուղացուն, մնացած բոլոր առումներով մենք զարգացում կունենանք:

Մրանից օգտվելու են մենաշնորհները: Մեզ ի՞նչ:

Իրենք լավ առևտրականներ են ու իրենց մանր առևտրականների համար սա օգտակար կլինի:

Սահմանի բացումը բեռնափոխադրումների առումով շահեկան է մոնոպոլիստներին, այն չի բերի գների իջեցման:

Այս գարնան էլ պարարտանյութը մոտ 5900 դրամով ներկրվեց, բայց ծախվեց 10000 դրամով: Ի՞նչ երաշխիքներ կան, որ նույնն էլ հետո չի լինի:

Միջազգային խոշոր ներդրումները չեն ծառայի իրենց նպատակին, քանի որ նրանք կրկին անգամ կուտակվելու են մի քանի անհատների ձեռքերում:

Ներկայում թե՛ ֆինանսական, թե՛ տնտեսական լծակները Հայաստանում մի խումբ մարդկանց ձեռքին է կենտրոնացած: Սահմանի բացումը այդ նույն խմբի մարդկանց է օգուտ տալու:

Բաց սահմանը խթանելու է ընդամենը մի քանի օլիգարխների մենաշնորհային բիզնեսը:

Հարստության բաշխման բևեռացման հնարավորություն կլինի, հարուստն ավելի կհարստանա, իսկ աղքատն ավելի կաղքատանա:

Մեր Գյումրին ոչինչ չունի, ինչ սահմանի բացման մասին է խոսքը: Դա ձեռնտու է միայն մի քանի մոնոպոլիստների կամ օլիգարխների:

Ներկրողներն ավելի շատ կլինեն, և եթե հիմա մենք ունենք միջին բիզնես, ապա զարգացման դեպքում հենց նրանք կկրեն առաջին հարվածը: Ես չեմ տեսնում ռեալ տնտեսական զարգացում հայերի համար, բացի մի քանի օլիգարխներից:

Մեր բնակչության մեծամասնությունը «յուլա գնացողներ» են, իսկ սահմանը բացելուց կօգտվեն օլիգարխները:

Մենք մենաշնորհը հաղթահարելու այլընտրանք ենք փնտրում Թուրքիայում, բայց ինչու՞ չենք կարողանում այդ մենաշնորհի դեմն առնել հենց ներսում:

Շատ խորը տնտեսական վերլուծություն պետք չի, որպեսզի պարզ լինի, որ սահմանի բացումից օգտվելու են մի քանի տասնյակ հոգի:

Մենաշնորհ ունեցող տնտեսվարողը Հայաստանում երբեք չի տուժի, որովհետև նրանց կապերն ավելի շատ են ու ավելի մեծ հնարավորություն ունեն մենաշնորհը խորացնելու:

Հակամենաշնորհային ոչ մի միջոցառում մեր երկրում չի աշխատում:

Եթե սահմանի բացումը չի նպաստելու Հայաստանում մենաշնորհային տնտեսության վերացմանը, ուրեմն իմաստ չունի:

Ներկա իրավիճակն իհարկե վատ է և մեզ դուր չի գալիս, բայց կարծում ենք, որ հասարակ մարդու համար սահմանի բացումն էական ազդեցություն չի ունենա:

Աղքատների և հարուստների միջև անջրպետը կմեծանա: Ինչպես անցյալում եղավ՝ արագ, անկառավարելի գործընթացներից շատ քչերը շահեցին, բայց ավելի շատերը տուժեցին: Նույնը հիմա է լինելու:



Բիզնես շահով պիտի առաջնորդվենք: Երկու էլք ունենք. կամ պիտի այդ բիզնեսի տիրոջն իրոք ազգայնական դարձնենք, որի դեպքում կշահենք, կամ մեր ցանկացած ճիշտ քայլ սխալ արդյունք կբերի:

Մեզ հարկավոր են ներդրումներ, որպեսզի մենաշնորհները վերանան ու ավելի մեծանա խաղաղություն պահպանելու բոլորի ջանքերը:

Անկախ սահմանի բացումից ներդրումներ կամ լինում են, կամ չեն լինում: Մեկը մյուսի հետ կապ չունի:

Շահող են դուրս գալիս այն երկրները, որոնք իրենց երկրի ներսում ստեղծել են ազատ տնտեսական հարաբերություններ, առանց մենաշնորհների տնտեսություն:

Հայաստանի միջազգային իմիջք բարձրանում է ոչ թե սահմանների բացումով, այլ մեկ անգամ արդար ընտրություններ անցկացնելով, կանխելով մարտի 1-ը:

Որ սահմանը բացենք ու որոշ տնտեսական հարցեր լուծենք, էլ մարտի մեկ չի՞ լինելու:

Աղքատությունը, սոցիալական խնդիրները գերակշռում են, մարդիկ այսօր օրվա հացի խնդիր են լուծում: Նման դեպքում ավելի վե՛տ ու խոշոր ծրագրերով նրան չես վարակի:

Գաղափարախոսությունը չպետք է առաջ անցնի տնտեսությունից, թե չէ կհասցնի փակուղու:

Տնտեսապես ինչքան հզոր լինենք, այնքան էլ քաղաքականապես անկախ կլինենք:

Եթե տնտեսական փոխհամաձայնություն լինի, դա կնպաստի նաև քաղաքական երկխոսությանը:

Շուկայական տնտեսություն ունեցող պետությունները երբեք չեն ուզենա պատերազմել միմյանց հետ:

Հիշենք Նախորդ տարվա փորձը. եթե համաշխարհային շուկայում բենզինի գինն իջնում է 20-30%-ով, իսկ Հայաստանում ընդամենը 20-30 դրամով, ուստի կարող ենք ասել, որ ամեն ինչ օլիգարխների ձեռքում է: Սահմանի բացման պարագայում էլ գները կիջնեն չնչին չափով և շատ կարճ ժամանակով:

Երկու տարբերակ կա. ներմուծողները չեն նվազեցնում գները և էժանացում չի լինում կամ էլ նրանք համապատասխանորեն նվազեցնում են գները և մենք իրականում շահում ենք. սակայն այս երկու տարբերակների իրականանալիությունը կապված է սահմանի բացման հետ:

Մի վայրկյան անգամ չեմ կասկածում, որ Սադախլոյի նման մի շուկա էլ ձևավորվելու է հայ-թուրքական սահմանին:

Չի կարելի քաղաքական շահը հանուն տնտեսական շահի կորցնել:

Պետք է առաջին հերթին առաջ տանենք մեր քաղաքական ու գաղափարական շահերը, հետո նոր ուշադրություն դարձնենք տնտեսականին, ու բիզնեսը պետք է հարմարվի քաղաքականին, ոչ թե հակառակը:

Եթե Թուրքիան մեծ ներդրումներ ունենա Հայաստանում և համագործակցի մեր բիզնեսմենների հետ, ապա Թուրքիան ազդեցություն կունենա նաև մեր քաղաքական որոշումների վրա:

Հանուն շահույթի, անգամ, մեր շատ պատգամավորներ ու նախարարներ ընդունակ են ամեն բան ծախելու: Դա նշանակում է, որ երաշխիք՝ մեր ապահովության ու պայմանների բարելավման հարցում չկա:

Եթե քաղաքականության թիկունքում կանգնածը թուրք գործարարը լինի, մենք էլի կպարտվենք:

Եթե կառավարությունը տեսնի, որ շահ ունի, ժողովրդի կարծիքը հաշվի չի առնի:

Երկրի ներսում հարց որոշողը նա է, ով փող ունի, իշխանություն ունի, այսինքն էլիտան, ու էլիտայի կարծիքի վրա կարող են ազդել դրսից՝ ելնելով նրանց անձնական շահերից:

Բիզնեսմենները իրենց շահերից ելնելով կարգավորելու են հայ-թուրքական հարաբերությունները՝ անտեսելով մեր ազգային շահերը:

Պետական շահը չպետք է տուժի բիզնեսի շահերից:

Մենք պետք է անտեսենք անհատների շահերը և մտածենք ընդհանուր երկրի շահերի մասին:

Եթե մենք առաջնորդվենք բիզնես շահերով, պարզ է, թե մեզ հետ ինչ կլինի: Պետք է պետությունը կարողանա սանձել ու կարգավորել մեր պետության շահին հակասող քայլերը:

Եթե Հայաստանում ընդամենը հինգ հոգու ձեռնտու լինի սահմանի բացումը, ապա այն կբացվի՝ անկախ հասարակ ժողովրդի կարծիքից:

Հայ-թուրքական հարաբերություններն այսօր ինչ-որ տեղ արդեն բիզնես շահերի են վերածվել:

Բիզնեսի մեջ ազդություն չկա, կա շահ ու եկամուտ:

Եկեք չմոռանանք, որ քաղաքականությունը թելադրվում է հզոր տնտեսությամբ: Քանի՞ հզոր, բայց աղքատ պետություն գիտեք...

Հայերը աշխատում են աշխարհի բոլոր երկրներում. իսկ ո՞րն է պատճառը. տնտեսական շահը: Հիմա մենք ինչպե՞ս ենք ասում, թե քաղաքական շահը առաջնային:

Ոչ մի պետություն չի կարող առաջ տանել իր քաղաքական շահերը՝ առանց ունենալու հզոր տնտեսություն: Չտանք էն ազգի անունը, որը փողի միջոցով կարողացավ գնել պետություն:

Մեր բլոկադան բազմաշերտ է, հայ-թուրքական բլոկադայից բացի անհրաժեշտ է բացել օլիգարխների իրականացրած բլոկադան: Ինձ թվում է մեր տնտեսությունն ավելի շատ շրջափակում են օլիգարխները, և ոչ-թե հայ-թուրքական սահմանը:

Ցանկացած երկրում քաղաքականությունը որոշում են տնտեսվարողները... մեր երկրում սա ավելի քան իրական է. սահմանի բացումը կնշանակի բիզնեսի միջոցով ազդել քաղաքականության վրա:

Բիզնես շահն իհարկե ազդում է մեր ու վրացիների հարաբերությունների վրա: Նույնը կլինի հայ-թուրքականի դեպքում:

Որ պահին հայ-թուրքական սահմանի բացումը կապենք տնտեսականի հետ, պարտվելու ենք: Կարևորը քաղաքականն է: Մենք վրեժ ունենք լուծելու այդ պետությունից ու սա շանս է:

Տնտեսական շահը մեր համար մեծ է, սակայն քաղաքական հարաբերությունները նույնպես պետք է կարևորել:

Սահմանի բացումը առաջին հայացքից շատ գրավիչ է.. Միանշանակ տնտեսական աճ կլինի: Բայց դա խայծ չպետք է դառնա: Պետք է մտածել, թե ինչպես կարելի է հասնել մեր քաղաքական շահերի իրագործմանը:

Քաղաքականը տնտեսականի հետ չպիտի կապենք: Իրարից անկախ պետք է լինեն այս երկու հարցերը:

Մեր հարաբերությունները պետք է լինեն առևտրի ու տնտեսության մեջ միայն:

Սահմանը բացելու փոխարեն Թուրքիան շատ ավելի լուրջ պահանջներ կդնի. իսկ հանուն տնտեսական շահի արդյո՞ք պետք է նման զիջումների գնալ:

Սահմանի բացումը մեզ տնտեսական օգուտ կտա, բայց քաղաքական առումով նրանք էլ փոխզիջման չեն գնա, կասեն. «դե սահմանը բացեցինք, բոլ չի՞»:

Լավ, ենթադրենք ՀՆԱ-ն յոթ տոկոս աճ կտա, դա ի՞նչ կտա մեզ...

Թուրք և հայ մոնոպոլիստների բախումը կարող է վերածվել ոչ տնտեսական կոնֆլիկտի:

Թուրքերը կամաց-կամաց գրավում են Բաթումը, թուրքական կապիտալի մեծ ազդեցություն կա: Մենք պետք է առաջինը հարց տանք՝ Հայաստանը պատրա՞ստ է սահմանի բացմանը:

2. Սփյուռք

1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ

Երեք միլիոն հայ ապրում է Հայաստանում, բայց ութ միլիոն հայ ապրում է դրսում: Առաջին հերթին պետք է հաշվի առնվի սփյուռքահայերի կարծիքը Ես հարցում:

Ոնց որ իմ տունը մեկը գրաված լինի, քանդած լինի, կողքի մարդը գա, ասի. «Այսպես լավ կլինի, այնպես լավ կլինի»: Առաջին հերթին պետք է հաշվի առնել Արևմտյան Հայաստան կորցրած մարդկանց կարծիքը:

Մենք Սփյուռքին միշտ ընդունել ենք որպես «կթու կով», բայց իրականությունն այդպես չի, պետք է հաշվի նստել նաև նրանց կարծիքի հետ:

Մենք չենք կարող բացել սահմանը՝ սփյուռքի օժանդակությունից զրկվելու գնով:

Սփյուռքին չի կարելի նեղացնել, բայց և նրանց չուզելը քիչ է: Մենք անընդհատ բաժանվում ենք երկու մասի՝ սփյուռք և հայաստանցիներ: Դա շատ սխալ է:

Միանշանակ պետք է հաշվի առնել սփյուռքի դիրքորոշումը:

Սահմանի բացումը կարող է մեզ ավելի մեծ օգուտ տալ, քան սփյուռքի օգնությունն է մեզ:

Հայ-թուրքական հարաբերություններում ամբողջ ազգը պիտի շահի:

Եթե սահմանի բացումը սեպ է խրելու Սփյուռքի ու Հայաստանի, Արցախի ու Հայաստանի միջև, ապա սահմանի բացում ինձ բացարձակ պետք չէ:

Սփյուռքը սկեսուրն է, իսկ մենք ընտանիքի մնացած մասը: Չպետք է թույլ տալ, որ սկեսուրը խառնվի քո ներքին գործերին, բայց նաև չի կարելի պառակտում թույլ տալ:

Սփյուռքին հարկավոր չէ խառնել այս հարցին, սփյուռքը իր համար հանգիստ ապրում է այնտեղ:

Մենք սփյուռք, պետություն ունենք... պիտի դերերի բաշխում լինի. ով է զբաղվում ասենք տնտեսությամբ, ով է զբաղվում պահանջատիրությամբ և այլն:

Սփյուռքը պետք է շարունակի բարձրաձայնել Սփյուռքի մասին, իսկ մենք զբաղվենք հիմնականում մեր պետության կայացմամբ:

Սփյուռքի ու մեր հոգեբանությունը տարբեր է, հայ է՝ թող գա այստեղ ապրի, այլ ոչ թե խոսի կորցրածի մասին:

Մոսաղն ամենաեժան ծառայություն է, քանի որ հրեան տեղեկություն է տալիս հանուն իր պետության առանց փողի. «յուրաքանչյուր հրեա Մոսաղի անդամ է»: Իսկ մե՞նք...

2. Չգացմունքներ, Վախեր, Մտահոգություններ

Արևելահայության և արևմտահայության մեջ մեծ ճեղքվածք կառաջանա, եթե սփյուռքը չստանա իրեն հուզող հարցերի պատասխանները:

Մենք ունենք Հայ դատի խնդիր, որով զբաղվում է ոչ միայն Հայաստանը, այլ ամբողջ սփյուռքը: Սահմանների բացումը մեզ կզրկի սփյուռքի հզոր օժանդակությունից:

Միսիանում գործարաններ ու ֆաբրիկաներ կան, որ չեն աշխատում: Թուրքերը կգան, կառնեն ու կաշխատեցնեն: Կաշխատեցնեն իրենց բանվորներով: Իսկ ինչո՞ւ սփյուռքահայերը չեկան, չառան:

Իսկ մեր Սփյուռքը որքանո՞վ է խրախուսում սահմանի բացումը: Կարծում եմ, իրենք չեն ընդունի, միայն ներողությամբ չեն բավարարվի:

Իսկ սփյուռքի մասին մոռացե՞լ եք, նրանք էլ են չե՞ր հայ... Ի՞նչ կարծիքի են նրանք:

Պետությունը մենք ենք, սակայն մեզ պահողը սփյուռքն է: Թուրքիան փորձում է սեպ խրել մեր ու սփյուռքի հարաբերություններում:

Յողերի մասին առավելապես խոսում են սփյուռքահայերը: Բայց որ նայում ես՝ մենակ խոսում են: Կտակներում գրում են, թե ինձ մահից հետո կթաղե՞ք Յայաստանում: Բայց ոչ մեկը չի գալիս ապրելու և երկիրը զարգացնելու:

Սփյուռքը շատ արագ ճուլվում է, հատկապես ոչ իսլամական երկրներում և քսան տարի անց նրանք դժվար թե հիշեն իրենց պապերի հետ տեղի ունեցածը:

Յինգերորդ սցենարում մենք ունենք մեր սփյուռքը մեզնից հեռացնելու խնդիր, որովհետև սփյուռքը պատրաստ չի նման փոփոխությունների:

Եթե սփյուռքը մեզ ընդհանրապես չօգնի, մենք միանշանակ կխամրենք: Այսօրվա դրությամբ մենք հիմնականում ապրում ենք սփյուռքից ուղարկված գումարներով:

Ոչ միայն մենք սփյուռք ունենք, այլ նաև թուրքերը: Մենք ենթադրում ենք, որ մեր սփյուռքը ավելի ուժեղ է, բայց այդպես է արդյո՞ք:

Երկու մտավախություն. ներքին՝ տնտեսական էքսպանսիա, արտաքին՝ դեմոգրաֆիական ու պառակտում սփյուռքի հետ:

Մեծ հիասթափություն է ապրում սփյուռքը, որն այս քայլը դիտում է որպես դավաճանություն:

Սփյուռքը մեր «խլամ» դիվանագիտության վիճակը մի կերպ շտկում է, պատկերացնո՞ւմ եք, եթե հարաբերությունները սրենք, ինչ կլինի մեր վայ դիվանագիտության վիճակը:

Ինձ համար շատ վտանգավոր է սփյուռքահայերի գործոնը. սփյուռքից եկած հայերը փորձում են իրենց մշակույթը տարածել Յայաստանում:

3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք

Սփյուռքահայերը չեն կարող զգալ այն, ինչ զգում ենք մենք:

Մեր սփյուռքը մեզ համար նույն վայրուտան է, ինչ Ադրբեջանի համար նավթը:

Սփյուռքը պետք է ուրախ լինի մեր պետության ամրապնդման համար, այլ ոչ թե խոչընդոտի:

Մեր ժողովրդի մեծ մասը այսօր դրսում է և սփյուռքը թույլ չի տա, որ այն մոռացվի և չի լռի:

Սահմանը որ բացվի էլ, մեկ է՝ ոչ մի հայ հետ չի վերադառնա:

Զմոռանա՞նք, որ ունենք նաև հզոր Սփյուռք, որն իր հերթին ամենամեծ պահանջատերն է, ու անկախ ամեն ինչից, նրանք չեն լռելու:

Կարծում եմ մեր սփյուռքը նույնպես հարաբերություններ ունի թուրքերի հետ:

Քաղաքական հարցերում մեզ կօգնի սփյուռքը:

Սփյուռքը չլինի՝ հայաստանցիները ցեղասպանության հարցը չեն էլ շահարկի, մոռացության կտան:

Ինչքան էլ սփյուռքը դեմ լինի սահմանի բացմանը, քայլ կատարողն ու որոշում ընդունողը Հայաստանն է լինելու:

Սփյուռքի մոտեցումը՝ «Աճյունս տարեք Հայաստան», պետք է փոխվի. Հայաստանը գերեզմանոց չի, այստեղ պետք է ապրել:

Սահմանի բացման շահարկումը ունի մի նպատակ՝ սեպ խրել Հայաստանի ու սփյուռքի, Հայաստանի ու Արցախի մեջ: Ոչ թե բացումը, այլ դրա շահարկումը:

Եթե մենք համարում ենք որ Թուրքիան ունի հզոր ռեսուրսներ, մենք էլ ունենք Սփյուռքի հզոր ներուժ:

Թուրքիան շատ խելացի ձևով ցեցը գցել է մեր մեջ ու մի կողմ կանգնել: Մենք իրար ուտում ենք, իսկ նրանք ձեռք են բերում դեմոկրատի իմիջ:

Մի կարծեք թե արտասահմանում գտնվող հայերը դեմ են սահմանի բացմանը, քանի որ իրենք տարբեր երկրներում միայն օգտվում են բաց սահմաններից:

Հայ դատի պահանջատերը մենք չենք, այլ սփյուռքը:

Եթե սփյուռքը մեր մեջքին կանգնած լինի, մենք կկարողանանք ճիշտ ու հաղթանակած դուրս գանք այս ամենից:

Ցեղասպանության հարցը մոռանալը անհեռառես քայլ է, քանի որ Սփյուռքը հավաքական պահող գործոններից մեկն է:

Սփյուռքը չափից ավել քաղաքականացված է: Նրանք չեն պատկերացնում այս ամենի տնտեսական կողմը:

Հայաստանը նավթ ունեցող երկիր է. մեր նավթը սփյուռքն է: Եկեք որոշենք, մեզ մեր նավթը պետք է, թե ոչ:

Տնտեսական ոլորտ, անվտանգություն, սփյուռք... ահա մեր գլխի սահմանները:

Սփյուռքը և Հայաստանի հայությունը մի կարծիքի են, Հայաստանի կառավարությունը մի այլ:

Հարցերի հարցն այն է, որ ոչ թե Հայաստանն է սփյուռքի համար, այլ սփյուռքը՝ Հայաստանի:

Սփյուռքը փողն ուղարկել է Լևոնի օրոք, Քոչարյանի օրոք, Սերժի օրոք, վաղը Վահանի, մյուս օրը՝ Էդոյի...

4. Սոցիալական երկխոսություն

Երեք միլիոն հայ ապրում է Հայաստանում, բայց ութ միլիոն հայ ապրում է դրսում: Առաջին հերթին պետք է հաշվի առնվի սփյուռքահայերի կարծիքը ես հարցում:

Ոնց որ իմ տունը մեկը գրաված լինի, քանդած լինի, կողքի մարդը գա, ասի. «Այսպես լավ կլինի, այնպես լավ կլինի»: Առաջին հերթին պետք է հաշվի առնել Արևմտյան Հայաստան կորցրած մարդկանց կարծիքը:

Մենք Սփյուռքին միշտ ընդունել ենք որպես «կթու կով», բայց իրականությունն այդպես չի, պետք է հաշվի նստել նաև նրանց կարծիքի հետ:

Միանշանակ պետք է հաշվի առնել սփյուռքի

Սփյուռքին չի կարելի նեղացնել, բայց և նրանց չուզելը քիչ է: Մենք անընդհատ բաժանվում ենք երկու մասի՝ սփյուռք և հայաստանցիներ: Դա շատ սխալ է:

Սփյուռքը սկեսուրն է, իսկ մենք ընտանիքի մնացած մասը: Չպետք է թույլ տալ, որ սկեսուրը խառնվի քո ներքին գործերին, բայց նաև չի կարելի պառակտում թույլ տալ:

Սփյուռքին հարկավոր չէ խառնել այս հարցին, սփյուռքը իր համար հանգիստ ապրում է այնտեղ:

Սփյուռքի ու մեր հոգեբանությունը տարբեր է, հայ է՝ թող գա այստեղ ապրի, այլ ոչ թե խոսի կորցրածի մասին:

Սփյուռքահայերը չեն կարող զգալ այն, ինչ զգում ենք մենք:

դիրքորոշումը:

Իսկ սփյուռքի մասին մոռացե՞լ եք, նրանք էլ են չե՞ հայ... Ի՞նչ կարծիքի են նրանք:

Հայ-թուրքական հարաբերություններում ամբողջ ազգը պիտի շահի:

Սփյուռքը և Հայաստանի հայությունը մի կարծիքի են, Հայաստանի կառավարությունը մի այլ:

Սահմանի բացումը կարող է մեզ ավելի մեծ օգուտ տալ, քան սփյուռքի օգնությունն է մեզ:

Մի կարծեք թե արտասահմանում գտնվող հայերը դեմ են սահմանի բացմանը, քանի որ իրենք տարբեր երկրներում միայն օգտվում են բաց սահմաններից:

Սփյուռքը պետք է ուրախ լինի մեր պետության ամրապնդման համար, այլ ոչ թե խոչընդոտի:

Ինչքան էլ սփյուռքը դեմ լինի սահմանի բացմանը, քայլ կատարողն ու որոշում ընդունողը Հայաստանն է լինելու:

Սփյուռքը չափից ավել քաղաքականացված է: Նրանք չեն պատկերացնում այս ամենի տնտեսական կողմը:

Մենք չենք կարող բացել սահմանը՝ սփյուռքի օժանդակությունից զրկվելու գնով:

Եթե սահմանի բացումը սեպ է խրելու Սփյուռքի ու Հայաստանի, Արցախի ու Հայաստանի միջև, ապա սահմանի բացում ինձ բացարձակ պետք չէ:

Արևելահայության և արևմտահայության մեջ մեծ ճեղքվածք կառաջանա, եթե սփյուռքը չստանա իրեն հուզող հարցերի պատասխանները:

Մենք ունենք Հայ դատի խնդիր, որով զբաղվում է ոչ միայն Հայաստանը, այլ ամբողջ սփյուռքը: Սահմանների բացումը մեզ կզրկի սփյուռքի հզոր օժանդակությունից:

Իսկ մեր Սփյուռքը որքանո՞վ է խրախուսում սահմանի բացումը: Կարծում եմ, իրենք չեն ընդունի, միայն ներողությամբ չեն բավարարվի:

Պետությունը մենք ենք, սակայն մեզ պահողը սփյուռքն է: Թուրքիան փորձում է սեպ խրել մեր ու սփյուռքի հարաբերություններում:

Հինգերորդ սցենարում մենք ունենք մեր սփյուռքը մեզնից հեռացնելու խնդիր, որովհետև սփյուռքը պատրաստ չի նման փոփոխությունների:

Եթե սփյուռքը մեզ ընդհանրապես չօգնի, մենք միանշանակ կխամրենք: Այսօրվա դրությամբ մենք հիմնականում ապրում ենք սփյուռքից ուղարկված գումարներով:

Երկու մտավախություն. ներքին՝ տնտեսական էքսպանսիա, արտաքին՝ դեմոգրաֆիական ու պառակտում սփյուռքի հետ:

Մեծ հիասթափություն է ապրում սփյուռքը, որն այս քայլը դիտում է որպես դավաճանություն:

Սփյուռքը մեր «խլամ» դիվանագիտության վիճակը մի կերպ շտկում է, պատկերացնո՞ւմ եք, եթե հարաբերությունները սրենք, ինչ կլինի մեր վայ դիվանագիտության վիճակը:

Սահմանի բացման շահարկումը ունի մի նպատակ՝ սեպ խրել Հայաստանի ու սփյուռքի, Հայաստանի ու Արցախի մեջ: Ոչ թե բացումը, այլ դրա շահարկումը:

Թուրքիան շատ խելացի ձևով ցեցը գցել է մեր մեջ ու մի կողմ կանգնել: Մենք իրար ուտում ենք, իսկ նրանք ձեռք են բերում դեմոկրատի իմիջ:

Ցեղասպանության հարցը Սփյուռքը հավաքական պահող գործոններից մեկն է:

Հայաստանը նավթ ունեցող երկիր է. մեր նավթը սփյուռքն է: Որոշենք, մեզ մեր նավթը պետք է, թե ոչ: Տնտեսական ոլորտ, անվտանգություն, սփյուռք... ահա մեր գնի սահմանները:

Մոսադն ամենաեժան ծառայություն է, քանի որ հրեան տեղեկություն է տալիս հանուն իր պետության առանց փողի. «յուրաքանչյուր հրեա Մոսադի անդամ է»: Իսկ մե՞նք...

Մենք սփյուռք, պետություն ունենք... պիտի դերաբաշխում լինի. ով է զբաղվում ասենք տնտեսությամբ, ով՝ պահանջատիրությամբ:

Սփյուռքը պետք է շարունակի բարձրաձայնել ցեղասպանության մասին, իսկ մենք զբաղվենք հիմնականում մեր պետության կայացմամբ:

Սփյուռքը չի լռի:

Չմոռանաք, որ ունենք նաև հզոր Սփյուռք, որն իր հերթին ամենամեծ պահանջատերն է, ու անկախ ամեն ինչից, նրանք չեն լռելու:

Քաղաքական հարցերում մեզ կօգնի սփյուռքը:

Մեր սփյուռքը մեզ համար նույն վայրուտան է, ինչ Ադրբեջանի համար նավթը:

Սփյուռքը չլինի՝ հայաստանցիները ցեղասպանության հարցը չեն էլ շահարկի, մոռացության կտան:

Եթե մենք համարում ենք որ Թուրքիան ունի հզոր ռեսուրսներ, մենք էլ ունենք Սփյուռքի հզոր ներուժ:

Հայ դատի պահանջատերը մենք չենք, այլ սփյուռքը:

Եթե սփյուռքը մեր մեջքին կանգնած լինի, մենք կկարողանանք ճիշտ ու հաղթանակած դուրս գանք այս ամենից:

Սփյուռքը փողն ուղարկել է Լևոնի օրոք, Քոչարյանի օրոք, Սերժի օրոք, վաղը Վահանի, մյուս օրը՝ Էդոյի...

Ոչ միայն մենք սփյուռք ունենք, այլ նաև թուրքերը: Մենք ենթադրում ենք, որ մեր սփյուռքը ավելի ուժեղ է, բայց այդպես է արդյո՞ք:

Սահմանը որ բացվի էլ, մեկ է՝ ոչ մի հայ հետ չի վերադառնա:

Կարծում եմ մեր սփյուռքը նույնպես հարաբերություններ ունի թուրքերի հետ:

Սփյուռքը շատ արագ ձուլվում է, հատկապես ոչ իսլամական երկրներում և քսան տարի անց նրանք դժվար թե հիշեն իրենց պապերի հետ տեղի ունեցածը:

Ինձ համար շատ վտանգավոր է սփյուռքահայերի գործոնը. սփյուռքից եկած հայերը փորձում են իրենց մշակույթը տարածել Հայաստանում:

Միսիանում գործարաններ ու ֆաբրիկաներ կան, որ չեն աշխատում: Թուրքերը կգան, կառնեն ու կաշխատեցնեն: Կաշխատեցնեն իրենց բանվորներով: Իսկ ինչո՞ւ սփյուռքահայերը չեկան, չառան:

Հողերի մասին առավելապես խոսում են սփյուռքահայերը: Բայց որ նայում ես՝ մենակ խոսում են: Կտակներում գրում են, թե ինձ մահից հետո կթաղե՞ք Հայաստանում: Բայց ոչ մեկը չի գալիս ապրելու և երկիրը զարգացնելու:

Սփյուռքի մոտեցումը՝ «Աճյունս տարեք Հայաստան», պետք է փոխվի. Հայաստանը գերեզմանոց չի, այստեղ պետք է ապրել:

Հարցերի հարցն այն է, որ ոչ թե Հայաստանն է սփյուռքի համար, այլ սփյուռքը՝ Հայաստանի:

Է. Ռուսաստան

Օտարի շահը դա քամին է, եթե ուզում ես, քամու ազդեցության տակ չընկնել, պիտի ընդհանրապես ջուրը չմտնես, այլ պառկես ափին: Եդպես ափին պառկած էլ կմնաս...

Գերտերությունների ասած հաճոյախոսությունները ժամանակակից քաղաքականության մեջ պետք է ընդունել որպես հրաման:

Այստեղ ոչ միայն հայ-թուրքական հարաբերությունների հարցն է, բայց արևելք-արևմուտք բախումն է: Այս հարցում բոլոր մեծ տերությունները ունեն իրենց շահերը և հետաքրքրությունները:

Եվրոմիության պահանջով է, որ Թուրքիան ցանկանում է բացել սահման: Փակ սահմանի դեպքում ամենամեծ՝ քաղաքական կորուստը կրում է Թուրքիան:

Գերմանիան փոխհատուցեց հրեաների վնասները, որովհետև պատերազմում պարտվելուց հետո նրանց ստիպեցին:

Գերտերություններն են որոշում փոքր ազգերի ճակատագիրը: Այն ինչ պետք է լինի, լինելու է: Պետք է փորձել հնարավորինս օգուտ քաղել այս ամենից:

Գերտերություններն իրենց շահերն ունեն, մեզ հենց այնպես չեն օգնում: Պետք է պահից ճիշտ օգտվել:

Սա շահավետ է բոլոր գերտերությունների համար. Ռուսաստանի համար՝ Վրաստանին ճնշելու, Ամերիկային՝ որպես նոր ճանապարհի դեպի իրեն հետաքրքրող տարածաշրջան, Եվրամիությանն էլ՝ խաղաղության և անվտանգության առումով:

ԱՄՆ-ի շահը ՆԱՏՕ-ի սահմանը բաց պահելն է՝ Հայաստանի տարածքը օգտագործելով:

ՌԴ-ի շահը՝ ՌԴ-ի Գյումրիի բազայի կապն է ոչ միայն օդով: Վրաստանը շահ չունի: Իրանը շահ կունենա, եթե ՌԴ-ն ունենա, իսկ եթե ՆԱՏՕ-ն մտնի Հայաստան, ապա Իրանն էլ շահ չի ունենա:

Նախ պետք է պարզել, թե որ պետությունն է շահագրգռված հայ-թուրքական սահմանը վերաբացել՝ Ռուսաստանը, Ամերիկան,

Եթե սահմանի բացումը զուտ գերտերությունների քաղաքականության արդյունք է լինելու ու ձևական բնույթ է կրելու, ապա դա մեզ պետք չէ: Խոշոր գերտերությունները չպետք է խառնվեն մեր ու Թուրքիայի գործերին:

Միջազգային հանրությունը ամեն դեպքում չի կարող զսպել երկու երկրների կողմից բարձրացվող հարցերը:

Տարիներ առաջ գերտերությունների նացիոնալիստական գործելակերպը մեզ վրա թանկ նստեց , ու մենք հիմա փոշմանել ենք:

Կարծում եմ գերտերություններն այստեղ շահ չունեն:

Ռուսաստանն ու Թուրքիան էլ խնդիրներ ունեն, Ամերիկան էլ...Շահերի բախում կլինի, որից կտուժի Հայաստանը... Դրա համար պետք է պատերազմի գնալ զենքով:

Մեզ՝ երկուսիս էլ ճնշում են: Պետք է հասկանանք, թե ում ինչի համար...

Ազերիներին, վրացիներին ու իրանցիների նույնպես պետք չի, որ սահմանը բացվի:

Այս երկիրը պետք է հարստանա, որ նոր կարողանա նստել սեղանի շուրջ որպես հավասարազոր պարտնյոր: Իսկ հիմա մենք ընդամենը խաղալիք ենք ուժեղների ձեռքում:

Մեզ պետք է նախընտրություն չտանք Ռուսաստանին կամ Ամերիկային, այլ առաջ տանենք մեր ազգային շահը:

Այսօր սահմանի բացումը պարտադրված է դրսից և մենք պետք է աշխատենք մինիմալ կորուստներով դուրս գալ այս իրավիճակից:

Միայն պետական մակարդակի վրա թողնելով խնդիրը՝ ավելի հեշտ կենթարկվենք գերտերությունների ճնշումներին:

Գերտերությունների խնդիրն է մասնատել Թուրքիան, իսկ Հայաստանը դրանում ոչ մի շահ չունի:

Եվրամիությունը..... Այ, այդ շահերը բացահայտելով կհասկանանք, թե հետագա քայլերն ինչպիսին կլինեն:

Եթե կարողանանք մեր շահերը համադրել խոշոր պետությունների շահերին, կկարողանանք շահել:

Եթե մեր ձգտումները համընկնեն մեծ տերությունների շահերին, այդ դեպքում մենք կշահենք:

Այսօր Թուրքիայի համար նույնպես դժվար է: Նրան էլ են ստիպել որոշակի նախապայմաններ ընդունել:

Այսօր Թուրքիայում կառավարում է խիստ հետադիմական կուսակցություն:

Եկթադրում եմ, որ եթե Թուրքիան արդեն մտել է այս առաջադիմական խաղի մեջ, ուրեմն ինքը չի բացում սահմանը, այլ մի երրորդ կողմը՝ Եվրամիությունը:

Ես կարծում եմ, որ հարաբերություններից ավելի շատ շահելու ենք մենք և թուրքերը, և ոչ թե գերտերությունները:

Միջազգային հանրությունը շարժվում է որոշակի «կլիշեներով»: Այդ կաղապարներից մեկը երկու երկրների միջև ստորագրվող արձանագրություններն են: Իսկ մեր հարաբերությունների ջերմացումը հաստատ որոշակի խնդիրներ է առաջացնելու թուրքադրբեջանական հարաբերություններում:

Սահմանի բացման հարցում ճնշման է ենթարկվում ոչ միայն Հայաստանը, այլև Թուրքիան:

Հայկական Հարցը մեր պահանջն է, իսկ գերտերություններն այդ հարցը միշտ իրենց շահերով են պայմանավորում, մենք էլ լռում ենք ու հաշտվում: Եթե պետք է գոռալու ենք, եթե պետք է պիտի լռենք:

Չորրորդ սցենարը լրիվ ուրիշի ֆուտբոլում որպես երրորդ կողմ ֆուտբոլ խաղալ է... Հայաստան, ինչքան ուզում ես Ռուսաստանի ու Թուրքիայի խաղում գնդակ տշի, մեկ ա գոլ խփես էլ, հաղթող չես լինելու, քանի որ ֆուտբոլ երկուսով են խաղում...

Ռիսկ կա, որ աշխարհը կպարտադրի մեզ հանուն մեծ խաղաղության լռել մեր պահանջների մասին:

Հարց է՝ Թուրքիան ուզո՞ւմ է սահման բացել: Ոչ, մենք տեսնում ենք, որ ստիպում են հզորներն ու իրենք էլ համաձայնվում են: Իսկ մենք պատմությունից գիտենք, որ երբ երրորդ ուժերն են պարտադրում, հետո մենք տուժում ենք, մեր անվտանգությունը ոչ ոք մեզ չի երաշխավորի:

Շահողը կլինեն Ռուսաստանն ու Թուրքիան: Մենք ընդամենը կլինենք գործիք:

Մենք ոչ մի երաշխիք չունենք, որ Եվրոպան որևէ կերպ մեր կողքին կկանգնի, ինչպես և չկանգնեց Կիպրոսի կողքին՝ նրա կեսը զավթելիս:

Միջազգային հանրությանը մեր հետ չեն կոտորել, չեն ոչնչացրել... Նրանք այդ ամենը չեն ապրել, ուստի դժվար օգնեն:

Երկու տիրոջ ծառայից դառնալու ենք չորս տիրոջ ծառա:

Կան գերտերությունների շահեր, որոնք Հայաստանի հարցում համընկնում են: Սա իրականություն կլիներ այն ժամանակ, երբ երկրի վրա լինեինք միայն Մենք ու Ավստրիան:

Նույն միջազգային հանրությունը նախորդ դարասկզբին հենց ի՞նքը չփակեց իր աչքերը մեր ջարդերի վրա: Հիմա ինչու՞ ենք նրանց վրա հույս դնում:

Մեր միջոցով խաղում են Թուրքիան և Ռուսաստանը:

Միջազգային հանրությունը մեզ և Թուրքիային չի կարող դիտարկել նույն հարթության վրա:

Սահմանների բացումը միջազգային հանրության ճնշման արդյունք է, ոչ այլ ինչ:

Ռուսաստանը հազարամյակներ շարունակ իր շահերն է ունեցել այս տարածաշրջանում, հիմա ԱՄՆ-ն է ձեռք գցում, իսկ Հայաստանին չեն հարցնում:


Սա գերտերությունների թելադրանքով կատարվող քայլ է, մենք դրանից օգուտ չունենք:

Մեծ պետությունների պահվածքն ու քաղաքականությունը շատ փոփոխական է՝ կախված պահի շահերից:

Որևէ մեծ երկիր հանուն Հայաստանի կտրուկ չի փոխի իր քաղաքականությունը:

Աշխարհի մի քանի պետություններ ամեն կերպ փորձում են ճնշել երկու կողմերին՝ ի նպաստ իրենց սեփական շահերի:

Մեր հեղինակությունը կընկնի միջազգային հանրության աչքում, եթե խոչընդոտենք սահմանի բացմանը:



Պատմության ընթացքում երբևէ չի եղել մի դեպք, որ աշխարհի տերությունները պաշտպանեն հայերի շահերը: Միշտ խաբել են: Այս անգամ էլ են խաբում: Թուրքիան իր աշխարհագրական դիրքով միշտ ճնշում է գործադրում աշխարհի վրա

Եթե Հայաստանը պատրաստ չլինի երկխոսության, համաշխարհային հանրությունը ճնշում կգործադրի Հայաստանի վրա:

Թուրքերը ամեն կերպ փորձում են տևտեսապես ճնշել Հայաստանին՝ փակ պահելով սահմանը, միևնույն ժամանակ փորձում են դրական կողմերով ներկայանալ համաշխարհային հանրությանը:

Միշտ էլ շահում են գերտերությունները: Ցեղասպանությունն էլ գերտերությունների շահերի բախման հետևանքն էր: Դա բնական է:

Մենք գաղութ ենք, ոչ թե պետություն, ու խաղալիք ենք գերտերությունների ձեռքին:

Այս ամենը կրեթի ՆԱՏՕ-ի ամրապնդմանը այս տարածաշրջանում:

Թուրքիան որպես պետություն ստեղծեցին եվրոպացիները որպես հավասարակշռություն ապահովող գործիք: Սակայն բանը շատ ավելի հեռուն գնաց ու հիմա այդ երկիրը հակակշիռ է դարձել:

Հայ-թուրքական սահմանի բացումը ավելի շատ պետք է միջազգային հանրությանը, քան Թուրքիային կամ Հայաստանին:

Յուրաքանչյուր պետության վրա ամենամեծ ազդեցությունը ունի ավելի մեծ պետությունը:

Այսօր հզոր պետություններն են թելադրում խաղի կանոնները:

Միջազգային հանրության համար ավելի կարևոր է գործընթացի իմիտացիա անել, այլ ոչ թե իրական լուծում տալ մեր խնդրին:

ԺԴ. Նախաձեռնություն, պատասխանատվություն, դիվանագիտություն

1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ

Ապրի նախագահը, որ դուխով գնաց այս հարցը լուծելու ճանապարհով: Վերջիվերջո այս հարցը պետք է լուծվեր, թե՞ ոչ: Ոչ ոք չիսկ չէր անում այս հարցը փորձել լուծել: Աշխատող մարդն է սխալվում՝ հնարավոր են սխալներ:

Լռություն պետք չի. ակտիվություն է պետք. համագործակցենք, բայց ճկուն դիվանագիտության միջոցով չթողնենք, որ մեզ խաբեն:

Պետք է այնպես անել, որ հետագա սերունդները մեզ չմեղադրեն մեր այսօրվա սխալների համար՝ գործունեության կամ անգործության:

Ճշմարտությունը պետք է բարձրաձայնել. սատանան է փսփսոցով խոսում:

Ես կարծում եմ, ինքներս մեզ «տուպիկի» մեջ ենք գցել... պատճառն այն է, որ մենք հարցը միշտ միակողմանիորեն ենք քննարկում՝ կամ միայն տնտեսական կողմն ենք նայում կամ էլ ապուպապերին ենք հիշում:

Գործընթացը սկսելուց առաջ մենք պետք է հաղթահարենք վախը, հետո անցնենք առաջ:

Քաղաքականությունը դա հնարավորությունների արվեստ է՝ մենք պետք է մեր հնարավորությունները ճշտենք, նոր խոսենք: Պետք չէ երազանքների գիրկն ընկնել:

Չայաստանը չի փակել, իրենք են փակել, իրենք էլ թող բացեն, մենք ինչու՞ ենք խորացել:

Ամենից շատ դուրս եկավ այս արտահայտությունը. «Չայաստանը հանդես է գալիս թելադրող նախաձեռնողի դերում»... այ էսպես է պետք...

Մենք միշտ բոլոր ատյաններում պասիվ դեր ենք ունեցել, բայց միշտ էլ տուժել ենք. հիմա ժամանակն է ակտիվ լինել:

Նիկիտա Սիմոնյակին հարց են տալիս, թե ով է ամենալավ դարպասապահը, ասում ա Իվան Խոմիչը: Իսկ ինչու՞ : Որովհետև երկու աչքն էլ շիլ էր: Մենք էլ պիտի մի քիչ շիլ լինենք, որ կարողանանք Թուրքիայի հարձակումներին դիմադրել:

Թուրքերը քաղաքական շահ են հետապնդում, իսկ մենք՝ տնտեսական: Մենք դա անում ենք հանուն մեր երեխաների:

Եթե մենք լռելու ենք մեր խնդիրների մասին, ուրեմն պետք չի բացել սահմանը:

Գուցե կկորցնենք, գուցե կշահենք... բայց այլընտրանք չունենք...

Կյ մարդ, մենք մեզ լավ ենք զգում, մենք սենց էլ կապրենք: Գլուխը հանգիստ դնում ենք բարձին, մեզ դա է պետք:

Պետք է որոշենք՝ ուզում ենք լավ ապրել թե՞ անվտանգ ապրել:

Երեխան օրերից մի օր պետք է դուրս գա բակ, փողոց ու ճանաչի մյուսներին: Մենք էլ պետք է դուրս գանք շրջափակումից ու կամաց-կամաց ինտեգրվենք միջազգային ընտանիք:

Ուժեղի մոտ միշտ էլ թուլյլն է մեղավոր. նստած խոսում ենք տնտեսական շահերի, քաղաքական անկախության մասին. բայց ես ասում եմ, որպեսզի մեզ հարգեն ու մենք շահենք, պետք է մենք ուժեղանանք, ինչպես հրեաները արեցին:

Մենք յուրահատուկ ժողովուրդ ենք, մինչև դանակը ոսկորին չի հասնում, ունիկալ ու ճիշտ քայլեր չենք անում: Հիմա, եթե չենք կարողանում կողմնորոշվել, եկեք սպասենք, մինչև դանակը ոսկորին կհասնի:

Եկեք մենք ինքներս մեզ վստահենք էլի:

Եթե հիմա Հայաստանը հետ քաշվի, Թուրքիան կասի, տեսաք, մենք առաջարկեցինք, դուք մերժեցիք: Եթե խաղում ենք, արդեն խաղի մեջ ենք մտել, ապա պիտի մինչև վերջ խաղանք:

Մենք ոչ թե շատ պիտի խոսենք, այլ խելացի և հիմնավոր:

Ինձ չի հետաքրքրում, թե Թուրքիան ինչ է շահում, ինձ միայն հետաքրքրում է, թե ես դրա դիմաց ինչ եմ վճարում...

Առաջին անգամ հնարավորություն է ստեղծվել, որ հայկական պետությունը բանակցի Թուրքիայի հետ, և ոչ թե ես կամ էն երկրի թագավորը: Պետք է օգտագործենք այս շանսը:

Պետք է ուժեղ լրագրող, ուժեղ զինվոր, ուժեղ պատմաբան ու դիվանագետ լինել:

Եթե նայենք քաղաքական տեսանկյունից, Քոչարյանն ասում էր, Թուրքիան փակել է թող նա էլ բացի: Այսօր Թուրքիայի շահից է բխում բացելը, ինքն էլ բացում է:

Սահմանը մենք ե՞նք փակել: Ոչ: Ով փակել է, նա էլ թող բացի...

Մենք մեր ապագա սերունդներին պատասխան պիտի տանք ու հիմքեր ստեղծենք զարգացման համար: Դրա համար էլ սահմանի բացումը կարևոր է:

Զարգացման համար, եթե պետք է ուրեմն պիտի քայլ առ քայլ առաջ գնանք, ոչ թե մեծ-մեծ խոսենք:

Հոգնել ենք արդարացումներից, որ մենք պետություն չենք ունեցել, նոր ենք սովորում, նոր ենք դիվանագիտություն պարացնում. Եղբայր, եթե չէինք կարողանալու լողալ, էլ ինչո՞ւ մտանք ջուրը:

Աղվեսից խուսափելու համար պետք չի սահմանը փակել, այլ պետք է թակարդ դնել: Իսկ եթե հանկարծ արջը դուրս գա, արջին պիտի մեր կողմ բերենք:

Մենք չպետք է կղզիանանք: Մեր դիվանագետները պետք է կարողանան այնքան խելացի գտնվել, որ պահից ճիշտ օգտվենք:

Այս քայլերը նման են երկսայրի թրի՝ պիտի կոթից բռնենք:

Նախապայմանները պետք է հայտնի լինեին, որ իմանայինք մեր անելիքը: Չեմ ուզում հետագայում ֆիդայի դառնալ, զենք առնել ու սարերն ընկնել ու թուրքին իմ հողից քշել, հետո էլ երեխուս բացատրել, թե այդ ո՞նց եղավ, որ ես օրին հասանք:

Ես մենակ մի բան եմ ուզում, որ մեր ժողովուրդը լավ ապրի, էրեխես էլ բանակում ա, պատերազմ չեմ ուզում:

Մենք կանգնելու ենք մի վիճակի առաջ, երբ սահմանը բացվելու է առանց մեր «հա» կամ «չե»-ի: Մեր ինդիքը դրան պատրաստ լինելն է:

Լավ կլիներ իմանայինք դրանց մտքում ինչ կա:

Ցանկալի է, որ Հայաստանը խնդրողի դերում հանդես չգա:

Կարևորն այս մեռյալ կետից շարժվելն է:

Եթե հարևաններ ենք այսքան դարեր, պետք է կարողանանք ընդհանուր լեզու գտնել. կռվի ժամանակ՝ կռիվ, բարեկամության ժամանակ՝ բարեկամություն:

Հայաստանը սահման բացել-չբացելու խնդիր չունի: Արձանագրությունների մեջ պետք է նշվի, որ Թուրքիան բարի կամք է դրսևորում և բացում է սահմանը:

Շարժում է անհրաժեշտ: Անշարժ ջուրը լճանում է: Թեկուզ գիշումների գնով՝ մեզ անհրաժեշտ է չդուփել տեղում:

Յերիք է բավարարվենք բարոյական հաղթանակներով: Մեզ իրական հաղթանակներ են պետք:

Պետք է թուրքերին բերել այն համոզման, որ մենք չենք պատրաստվում զիջել ԼՂ և ցեղասպանության հարցերում: Եթե պետք է նաև փակել սահմանը:

Ամռանը շաբաթը յոթ անգամ ինքնաթիռ է գնում Երևան-Ստամբուլ: Այսինքն, շփումն արդեն կա: Մնում է պաշտոնապես ընդունել այդ շփումն ու սահմանը բացել: Դրանից հետո մենք իրար ավելի լավ կճանաչենք որպես հարևաններ ու ճիշտ կկողմնորոշվենք հետագա զարգացումների առումով: Դա կլինի երկար գործընթաց, բայց դրանից վախենալ պետք չի:

Ինձ համար կարևոր է, որ առաջին անգամ Հայաստանն ու Թուրքիան հավասար դիրքերից են հարաբերվում, առաջին անգամ մենք պետություն ենք, որն ինքն է իր անունից խոսում:

Ինչո՞ւ ենք մենք վախենում սահմանը բացելուց: Եթե պետք լինի՝ մենք կփակենք: Ռ՞ով է մեզ խանգարելու:

Մեր միջից պետք է հանենք «ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր»-ով առաջնորդվելու սկզբունքը:

Եթե մենք սահմանը չբացենք մեր պայմաններով, ուրիշները կպարտադրեն այն բացել իրենց պայմաններով:

Ամոթ կլինի, որ Սարգսյանը չգնա Թուրքիա: Հո վախկոտ չենք:

Այսօր թուրքերը շահագրգռված են սահմանի բացումով, մենք էլ պիտի օգտվենք առիթից՝ նախապայմաններ դնելով իրանց առջև:

Թուրքիան Եվրամիություն մտնելու ճանապարհին ցանկանում է անել ևս մեկ քայլ, ու այդ քայլը անելու համար նա կախված է մեզանից: Մի՞թե մենք չենք կարող օգտվել դրանից:

Այս հարաբերությունները նման են մրցման. մեզ ստարտ է տված և մենք պետք է օգտագործենք այդ տրված հնարավորությունը:

Հիմնական հարցը դիվանագիտական հարաբերությունների հաստատման խնդիրն է: Սահմանի հարցը եական չի:

Չի կարելի թշնամու հետ չչփվել, հարևանի հետ չչփվել, պետք է փորձել ուղղակի դիմամիկա ապահովել մեր հարաբերություններում: Սա է ամբողջ խնդիրը:

Պետք չէ խոսել նրա մասին, թե ինչ կավելանա կամ կպակասի, այլ պետք է խոսել էն գնի մասին, որը մենք վճարելու ենք այդ ավել-պակասի համար: Մենք դեռ չգիտենք էլ, թե ինչ գին ենք վճարելու, ուր մնաց խոսենք նրա մասին, թե արժի այդ գինը տալ թե ոչ:

Եթե մենք չուզենանք խաղալ այս խաղը, ոչ ոք չի կարող մեզ խաղացնել: Մեզ խաղացնում են ու մենք խաղում ենք, որովհետև մենք էլ այս խաղի մեջ շահեր ունենք:

Եթե մենք չենք կարող այսպիսի խոշոր խաղ ինքներս խաղալ, եկեք ուղղակի փորձենք այս խաղից տորթի մեր կտորը պոկենք:

Ես կարծում եմ, որ մեզ հնարավորություն է տրվել մի քայլ առաջ անելու ու մենք պետք է ձեռքներից բաց չթողնենք այդ հնարավորությունը:

Մի խելոք մարդ ասեց. տվեք ինձ հենման կետ ու ես կշրջեմ աշխարհը... հիմա մենք էդ հենման կետը կարող ենք գտնել ու ի օգուտ մեզ օգտագործել, բայց, չգիտեմ ինչու, վախենում ենք:

Մենք հիմա գրոյական վիճակում ենք. կամ մի քայլ առաջ կամ մի քայլ հետ:

Գրիչ ձեռք բերելու համար պետք չի ավելին տալ, քան էդ գրիչի արժեքն է...

Լրիվ աղվեսի պատմությունն է. քիթը խաղողին չհասավ, ասեց խաղողը թթու էր... Հերիք մենք մեր սխալները ուրիշի գլխին բարդենք:

Մեր առջև եղած վտանգները տեսնելու համար, պետք է լավ իմանանք մեր նպատակները:

Երբ նախաձեռնվում է խաղ, արտաքին ուժի ազդեցությունից անկախ, հաղթող կամ պարտվող կարող է լինել միայն խաղացողը, ոչ թե խաղի դատավորը, բժիշկը կամ օգնականը...

Բանակցությունները պարտադիր են, պետք է բանակցել թե՛ բարեկամների, թե՛ թշնամիների հետ:

Մեզ մոտիվացիա է պետք առաջ շարժվելու համար. ժողովուրդը մինչև անդունդի եզրին չլինի, առաջընթաց չի լինի:

Սահմանը բացվելու դեպքում Թուրքիան հնարավորություն է ստանում մեզ կործանելու, բայց, միաժամանակ, մենք էլ ենք հնարավորություն ստանում նրանց դեմ պայքարելու: Ես համոզված եմ, որ այդ պայքարում մենք չենք պարտվելու:

Ամեն ինչ կախված է այն բանից, թե մեր ուզածը ինչ է ու ինչ աստիճանի ախորժակ ունենք մենք:

«Ձիանսամը» թե կողքից մեկն էլ չի շահում այս ամենից, կարևորը արանքից ես իմ շահույթը վերցնեմ:

Պետք է ուժեղ լինել, պատմությունը ուժեղներն են գրում: Եկեք լինենք ուժեղ ու միասնական:

Սահմանի բացման պատճառները տարբեր են, սակայն Հայաստանը պետք է չեզոք դիրք ընդունի այս հարցում, մենք չենք փակել սահմանը:

Ստատուս քվոյի պահպանումը այսօր ձեռնտու է նրանով, որ եթե Սարգսյանը արձանագրությունները չստորագրի էլ, Եվրամիությունը վաղը ստիպելու է Թուրքիային բացել սահմանը:

Պետք չէ հայերի համար բուսաբանական այգի ստեղծել, պետք է հակազդեցության միջոցներ ու մեխանիզմներ ստեղծել:

Պետք է Հայաստանում ներքին կյանքում այնքան բան փոխել, որ մենք պատրաստ լինենք, այս ամենը ճիշտ հուն մտնի:

Մեզ հարց լուծող ղեկավար ա պետք, ոչ թե ժպտացող...

Եթե հարևանդ գա ու տունդ թալանի, մյուս օրը դատարան կդիմես: Եթե դատարանն էլ արդարացի, մյուս օրը դռանդ վերևը մուրճ կկախես ու գործի կանցնես:

2. Ձգացմունքներ, Վախեր, Մտահոգություններ

Մեկ հարց. ո՞վ է սահմանի բացման հարցում նախաձեռնություն վերցրել... մենք թե՞ թուրքերը... ահա թե որտեղ է թաքնված շան գլուխը:

Դուք սիսիանցի ե՞ք... զարմանում եմ ձեր լավատեսության վրա... իրոք սիսիանցի եք, գյուղապետ, բան-ման չե՞ք: Բա ինչո՞ւ եք այդքան ուզում սահմանը բացել:

Ես նկատում էի, որ Թուրքիան արդեն պատրաստ էր փոխզիջումների գնալ՝ Օբամայի ընտրության նախօրեին, Ֆրանսիայի՝ ցեղասպանության ժխտումը պատժելու որոշումից հետո... Իսկ հիմա այդ հույսս կորավ:

Մենք երիտասարդ պետություն ենք, նոր ենք սովորում ինչ է պետականությունը, դիվանագիտությունը և այլն: Իսկ Թուրքիան ունի դարավոր զարգացած գիտություն: Վտանգավոր խաղ ենք խաղում:

Ցանկացած հարաբերությունների պարագայում վտանգ միշտ էլ կա. նույն վտանգները կան և՛ թուրքերի պարագայում, և՛ պարսիկների ու վրացիներն էլ վրադիր... Հիմա ի՞նչ, գնանք բոլոր սահմանները փակե՞նք...

Սահմանը բացվել է ու արջը նապաստակին ասում է, արի ճակատդ պաչեմ: Հիմա նապաստակն ի՞նչ է անելու:

Այս ամբողջի նախաձեռնողը հայկական կողմն էր, հայ նախագահն արեց առաջին քայլն ու սկսվեց գործընթացը: Բայց չգիտեմ, թե հետո ում միջամտությունն ու ազդեցությունը ավելացավ:

Մեր հիմնական մտավախությունը ոչ թե սահմանի բացումն է, այլ այն, որ մեր դիվանագիտությունը պարտվելու է:

Եթե Թուրքիան ուզի, սահմանը կբացի, չուզի՝ չի բացի: Բա մեր միջամտությունը ո՞րն է:

Եթե մենք հրաժարվենք համագործակցությունից, Թուրքիան կկանգնի ու կհայտարարի, թե՛ տեսա՞ք, հայերն են կամակոր ու ընդդիմանում են նորմալ հարաբերություններ հաստատելուն: Ես աղվեսն ամեն դեպքում շահելու է:

Ինչու մեր ազգային անվտանգության հայեցակարգում կարելի է գրել, որ առանց նախապայմանների են լինելու զարգացումները, իսկ այս արձանագրությունում չեն գրում: Ի՞նչ իմանամ, թե թուրքական նմանատիպ փաստաթղթերում իրականում ինչ է գրված:

Տևտեսապես թույլ զարգացած պետությունը միշտ էլ կախվածության մեջ է լինելու ավելի ուժեղ պետությունից՝ որքան էլ հստակորեն գիտակցի իր ազգային ու քաղաքական շահերը:

Եթե գայլից վախենում ենք, դա չի նշանակում չպետք է գնանք անտառ:

Մենք ոչ մի երաշխիք չունենք, որ սահմանների փակ լինելու դեպքում կարող են առաջ տանել մեր ազգային շահերը:

Սահմանը Թուրքիան փակել է, ևս էլ պիտի բացի: Մեր ձեռքին ի՞նչ կա:

Էդ ձիով քայլը՝ կաղ ձիով քայլ է...

Մենք դեռ Էնթան կայացած պետություն չենք, որ կարողանանք բարձրաձայնել մեր խնդիրները:

«Առաջ» գոռալով հետ ենք գնում:

Եթե Թուրքիան սահմանը բացում է, նշանակում է երկու երևել մի տեղ Թուրքիայի համար՝ համ Եվրամիություն կմտնի, համ էլ տարածքային ամբողջականության ճանաչմամբ Ցեղասպանության հարցն էլ կփակի: Բայց մենք սա չենք հասկանում, որ եթե սահմանը փակ պահենք, մեկ է, թուրքը պիտի համոզի, որ սահման բացենք... սա էլ հեևց Էն է, ինչ պիտի օգտագործենք մեր պահանջն առաջ տանելու համար:

Ինչ-որ բան կփոխվի, բայց արդյո՞ք մենք հավասարը հավասարի պես է Հայաստանը հարաբերվելու Թուրքիայի հետ:

Սահմանը բացելով Թուրքիան լրացուցիչ խաղաքարտ կստանա տարածաշրջանում իր դերակատարությունն ամրապնդելու համար:

Մեր ես «սիտուացիան» լրիվ Պեպոյի վիճակն է. եթե մենք մեր բարաթը չգտնենք, մեր Կեկելին էլ տանող չի լինի:

Ոնց որ կազինո խաղանք. ամեն ինչ դնում ենք սեղանին. կամ կհաղթենք կամ կպարտվենք: Հիմի պիտի նայենք. մենք հաճույքի համար ենք գնում խաղալու թե՞ հիմնավորված «ստավկա» ենք դնում:

Հայերը սիրում են գլուխները տաք տեղ պահել, պայթարի ոգի չեմ տեսնում:

Սահմանի բացումը ենթադրում է նաև փոփոխություններ բանակում. իսկ սրան մենք պատրաստ ենք:

Վերջապես պատմության մեջ առաջին անգամ կարող ենք ունենալ բարոյական պարտություն, սակայն, արդյո՞ք դիմացը ռեալ հաղթանակ իրոք կստանանք:

Այդ ե՞րբ է եղել, որ հայ դիվանագետները մատի վրա «ֆռռացնեն» թուրք դիվանագետներին, կողքից նաև՝ գերտերությունների դիվանագետներին, որ քայլ ձիով կարողանանք անել:

Եվրամիությունն է ճնշում Թուրքիային, իսկ մենք էլ խնդրողի դերում ենք երևում:

Արդյո՞ք Թուրքիան շահագրգիռ է բացել սահմանը, թվում է, որ մենք ենք միայն շահագրգռված, որովհետև մեզ այլընտրանքային ճանապարհ է հարկավոր:

Դիվանագիտությունը 94թ-ից հետո չի աշխատում, ԱԳՆ-ն դարձել է տուրիստական գործակալություն: Այսօր մենք վայելում ենք ոչ ճիշտ կադրային քաղաքականության արդյունքները:

Մենք տեսնում ենք «ինչ» հարցը և չենք ուզում պատասխանել «ինչու» հարցին:

Մեր դիվանագիտությունը «Վեց հոգով յոթ երգ ենք երգում» վիճակում աս...

Մեր սխալն այն է, որ նստած զցում-բռնում ենք, թե Թուրքիան ինչի աս սահման բացում-փակում, փոխանակ մտածենք մեզ ինչ աս պետք, ինչ ենք ուզում... Ցավոք, վերևներում էլ են ես կերպ մտածում:

Եթե սա լինել էր կողմ փոխզիջում՝ գոնե լավ կլինել, բայց հիմա միայն զիջում ենք, զիջում ենք, զիջում ենք...

Համաձայնագիր կա, որի տակ ստորագրել է Թուրքիան և որը նախատեսում է երրորդ երկրին մուտք ապահովել դեպի ծով: Մենք ինչու՞ չենք կարողանում օգտագործել այդ համաձայնագիրը:

Մենք ունենք ընտրության երկու հնարավորություն. վատ կամ ավելի վատ:

Սցենարներից մեկի անունը քայլ ձիով է: Ի՞նչ քայլ ձիով, երբ որ մենք ուղղակի պեշկա ենք:

Ես չեի ուզեմ, որ այս հարցը հանրաքվեի դրվեր, քանի որ նորից կեղծիքի ենք ականատես լինելու:

3. Արժեքներ, Կարծրատիպեր, Համոզմունք

Մեր ու նրանց պայթարը հավասար չէ, մեր նյութական միջոցները նույնը չեն:

Սահմանի բացումը միջազգային արեւայում Հայաստանի հեղինակությունը կբարձրացնի:

Եթե խելոք լինենք, մենք այս սահմանի բացումը կարող ենք օգտագործել և ի շահ տնտեսության, և, որը շատ ավելի կարևոր է, քաղաքականապես:

Մի օր մենք ենք շախ անելու, մի օր նրանք... Բայց թե որերորդ սերունդը կկարողան լուծել էս հարցը, չգիտեմ:

Ո՞վ է ասում, որ եթե մենք սա ստորագրենք, ապա այլևս չենք կարող դրանից հրաժարվել: Ցանկացած պայմանագիր հետո կարելի է անվավեր ճանաչել: Պետք է այդքան լուրջ ընդունել այս ամենը:

Թուրքերը միշտ էլ կարողացել են համ նալին խփեն, համ էլ մեխին: Էդ մենակ մենք ենք, որ հազար տարի Նույն երգն ենք երգում, առանց հասկանալու, որ միգրացիոն մեր ուզածին հասնելու այլ եղանակներ էլ կան:

Մեր երկու թշնամիների հետ սահմանը ամենամեծն են, դրա համար էլ սահմանի բացումը շատ կարևոր է մեզ համար:

Մարդն ինչքան արտաքին աշխարհի հետ շատ է շփվում, այնքան նրան վերահսկելը դժվարանում է. մեր պարագայում էլ է սա:

Դե եթե եղպես վախենում ենք, եկեք բոլորի հետ կտրենք մեր կապերը ու բոռ բվի նման նստենք:

Յրեան սպասեց-սպասեց, հետո ոտքի կանգնեց, աշխարհ տիրեց, իսկ մենք սպասում, սպասում ենք, բայց հենց ոտքի կանգնելու պահն է գալիս դեմագոգություն ենք անում: Դրա համար էլ ունենք այն, ինչ ունենք:

Խելոք մարդն ուրիշի սխալների վրա ա սովորում, իսկ հիմարն իր: Բայց մենք ոչ ուրիշի սխալներից ենք խերվում, ոչ էլ մեր:

Եկեք հասկանանք, սահմանը հիմա փակ է, թե բաց է: Վրաստանով գնում, շրջանցում ու մտնում ենք Թուրքիա: Է, ինչ տարբերություն:

Նույն Թուրքիան դարասկզբին քանի՞ անգամ պայմանագիր ստորագրեց Յայաստանի հետ. Սևր, Ալեքսանդրապոլ, Կարս: Մենք էլ Եսոր կարող ենք ստորագրել պայմանագիր, իսկ վաղը՝ հրաժարվել:

90 տարի այս հարցը քնած է մնացել, երբեք հայն ու թուրքը չեն նստել Նույն սեղանի շուրջ իրենց կնճռոտ հարցերը քննարկելու: Հիմա լավ շանս ունենք:

Հայ-թուրքական հարաբերությունները միանշանակ ազդելու են մեր մտածելակերպի և ցանկությունների վրա... Նույն կերպ, ինչպես որ մեր մտածելակերպն ու ցանկություններն են ազդում հարաբերությունների վրա:

Թուրքիան միակողմանի փակել է սահմանը, միակողմանի էլ բացելու է: Խնդիրը մեր դիմակայման ունակության մեջ է:

Սահմանների բացումը շահի հարց է՝ թե՛ մեր, թե՛ թուրքերի, թե՛ մյուսների:

Իմ կարծիքով թուրքերն ավելի են շահագրգռված սահմանը բացելու մեջ, քան մենք:

Թուրքիան Անդրկովկասի հետ կապ չունի, ինքն ուր, մենք ուր: Պարզապես քիթը խոթում է ու հաստատվել ցանկանում:

Եթե չենք կարողանում բռունցքը կտրել, պետք է համբուրենք այն: Սա վերաբերում է թուրքական դիվանագիտությանը:

Մեզ վերջին հարյուր տարիների ընթացքում առաջին անգամ հնարավորություն է տրվել դեմ դիմաց նստելու և քննարկելու մեր հարցերը:

Սև կատու ենք փնտրում բացարձակ մութ սենյակում, որն այնտեղ չէ:

Ֆուտբոլային քայլ անելուց առաջ էր պետք ձիով քայլ անել:

Խրիմյան հայրիկը ասում էր մեր շերտիը թղթից է ու պետք է ապավինենք երկաթին: Ապավինեցինք Սարդարապատում ու հիմա կարող ենք այստեղ նստել ու ինչ-որ բան քննարկել: Մեր հարցերը մեր փոխարեն ոչ ոք չի լուծելու:

Չերջիլն ասում էր. «Ամենալավ քաղաքական գործիչը նա է, ով իր գրած սցենարով իրադարձությունները չգարգանալու դեպքում հստակ կարողանում է արդարացնել նոր ստեղծված իրավիճակը»: Մենք այդ հմտությունն էլ չունենք:

Մենք հիմա ամենաներքևի կետում ենք, սրանից վատ մեր հարաբերությունները չեն կարող լինել: Այնպես որ, այսպես թե այնպես ինչ-որ բան շահելու ենք:

Մենք միշտ քայլ ենք անում, երբ որ ուրիշ տարբերակ չենք ունենում ու ամենավատ վիճակում ենք լինում:

Եթե վախենանք ամեն ինչից, ուրեմն պետք է լրիվ մեկուսանանք: Դա հնարավոր է: Մենք մեզանից վախենում ենք:

Երկու երկրների մեջ բոլոր հարաբերությունները յուրօրինակ «առևտուր» են՝ սկսած բարոյականությունից, պատմությունից, շահերից և այլն. յուրաքանչյուր կողմ պետք է «շնորհք» ունենա իր շահերի օգտին օգտագործել առկա գործոնները:

Ուժեղից պետք է վախենալ, մտնել տուն ու դուռն ու պատուհանը փակել: Նրա հետ հարաբերվելուց չես փախչի:

Թուրքիայի կողմից սահմանը փակելու ժամանակ մեր պետությունը ընդհանրապես դեր չուներ: Այժմ իրավիճակը մի փոքր այլ է:

Միջև խաղակոճերը չգցես, չես կարող որոշել, թե ինչպես խաղաս:

Այսօր Հայաստանի և Թուրքիայի միջև ըստ էության պատերազմ է ընթանում. բարեբախտաբար դա զենքով պատերազմ չէ, այլ ուղեղների:

Մենք սովոր ենք սահմանը փակ լինի, որ չմտածենք: Հիմա վախենում ենք սահմանը բացել, որովհետև վախենում ենք մտածելուց:

Հիմա Թուրքիան է ձիով քայլ անում, ես կասեի «դաժե» թագուհով:

Այսօրվա բանակցությունները պատերազմ են կլոր սեղանի շուրջ:

Կադրերը ձևավորվում են պատերազմների ընթացքում: Պատերազմն է ծնում հերոսներ:

Կան օրինակներ. Իռլանդիան և Միացյալ Թագավորությունն ունեն սահմանային վեճ, բայց դա չի խոչընդոտում հարաբերություններին:

Մենք նման ենք երեխայի, որ անօգնական գնում-կանգնում է մայրուղու մեջտեղում:

Կողմը, որը լավ ռեսուրս ունի, միշտ աշխատում է օգտագործել փոխհամագործակցության սկզբունքը:

Երկու կողմն էլ շահագրգիռ է իմիտացիա անել, թե գնում են հաշտեցման ու կարգավորման:

Բանակցություններ վարելուց հետո շահում են բոլորը՝ մեկը շատ, մյուսը քիչ:

Կշեռք չունենք, որ շահ ու չշահ չափենք... այս պարագայում կշեռքը դիվանագիտությունն ա:

4. Սոցիալական երկխոսություն

Ապրի Նախագահը, որ դուխով գնաց այս հարցը լուծելու ճանապարհով: Վերջիվերջո այս հարցը պետք է լուծվեր, թե՞ ոչ: Ոչ ոք չիսկ չէր անում այս հարցը փորձել լուծել: Աշխատող մարդն է սխալվում՝ հնարավոր են սխալներ:

Լռություն պետք չի. ակտիվություն է պետք. համագործակցել, բայց ճկուն դիվանագիտության միջոցով չթողնել, որ մեզ խաբեն:

Ամենից շատ դուրս եկավ այս արտահայտությունը. «Հայաստանը հանդես է գալիս թելադրող Նախաձեռնողի դերում»... այ էսպես է պետք...

Մենք միշտ բոլոր առյուծներում պասիվ դեր ենք ունեցել, բայց միշտ էլ տուժել ենք. հիմա ժամանակն է ակտիվ լինել:

Առաջին անգամ հնարավորություն է ստեղծվել, որ հայկական պետությունը բանակցի Թուրքիայի հետ, և ոչ թե էս կամ էն երկրի թագավորը: Պետք է օգտագործենք այս շանսը:

Մենք յուրահատուկ ժողովուրդ ենք, մինչև դանակը ոսկորին չի հասնում, ունիկալ ու ճիշտ քայլեր չենք անում: Հիմա, եթե չենք կարողանում կողմնորոշվել, եկեք սպասենք, մինչև դանակը ոսկորին կհասնի:

Մենք մեր ապագա սերունդներին պատասխան պիտի տանք ու հիմքեր ստեղծենք զարգացման համար: Դրա համար էլ սահմանի բացումը կարևոր է:

Չարգացման համար, եթե պետք է ուրեմն պիտի քայլ առ քայլ առաջ գնանք, ոչ թե մեծ-մեծ խոսենք:

Հոգնել ենք արդարացումներից, որ մենք պետություն չենք ունեցել, նոր ենք սովորում, նոր ենք դիվանագիտություն պարացնում. Եղբայր, եթե չէինք կարողանալու լողալ, էլ ինչո՞ւ մտանք ջուրը:

Մենք չպետք է կղզիանանք: Մեր դիվանագետները պետք է կարողանան այնքան խելացի գտնվել, որ պահից ճիշտ օգտվենք:

Կարևորն այս մեռյալ կետից շարժվելն է:

Շարժում է անհրաժեշտ: Անշարժ ջուրը լճանում է: Թեկուզ գիշումների գնով՝ մեզ անհրաժեշտ է չդուրս գալ տեղում:

Եթե մենք սահմանը չբացենք մեր պայմաններով, ուրիշները կպարտադրեն այն բացել իրենց պայմաններով:

Ամոթ կլինի, որ Սարգսյանը չգնա Թուրքիա: Հո վախկոտ չենք:

Հայաստանը չի փակել, իրենք են փակել, իրենք էլ թող բացեն, մենք ինչու՞ ենք խորացել:

Գուցե կկորցնենք, գուցե կշահենք... բայց այլընտրանք չունենք...

Այ մարդ, մենք մեզ լավ ենք զգում, մենք սենց էլ կապրենք: Գլուխը հանգիստ դնում ենք բարձին, մեզ դա է պետք:

Եթե Նայենք բաղաբական տեսանկյունից, Քոչարյանն ասում էր, Թուրքիան փակել է, թող Նա էլ բացի: Այսօր Թուրքիայի շահից է բխում բացելը, ինքն էլ բացում է:

Սահմանը մենք ե՞նք փակել: Ոչ: Ով փակել է, Նա էլ թող բացի...

Մենք կանգնելու ենք մի վիճակի առաջ, երբ սահմանը բացվելու է առանց մեր «հա» կամ «չե»-ի: Մեր խնդիրը դրան պատրաստ լինելն է:

Հայաստանը սահման բացել-չբացելու խնդիր չունի: Արձանագրությունների մեջ պետք է նշվի, որ Թուրքիան բարի կամք է դրսևորում և բացում է սահմանը:

Մեզ մոտիվացիա է պետք առաջ շարժվելու համար. ժողովուրդը մինչև անդունդի եզրին չլինի, առաջընթաց չի լինի:

Սահմանը բացվելու դեպքում Թուրքիան հնարավորություն է ստանում մեզ կործանելու, բայց, միաժամանակ, մենք էլ ենք հնարավորություն ստանում նրանց դեմ պայքարելու: Ես համոզված եմ, որ այդ պայքարում մենք չենք պարտվելու:

Սահմանի բացման պատճառները տարբեր են, սակայն Հայաստանը պետք է չեզոք դիրք ընդունի այս հարցում, մենք չենք փակել սահմանը:

Ստատուս քվոյի պահպանումը այսօր ձեռնառու է նրանով, որ եթե Սարգսյանը արձանագրությունները չստորագրի էլ, Եվրամիությունը վաղը ստիպվել է Թուրքիային բացել սահմանը:

Մեկ հարց. ո՞վ է սահմանի բացման հարցում Նախաձեռնություն վերցրել... մենք թե՞ թուրքերը... ահա թե որտեղ է թաքնված շան գլուխը:

Դուք սիսիանցի ե՞ք... զարմանում եմ ձեր լավատեսության վրա... իրոք սիսիանցի եք, գյուղապետ, բան-ման չե՞ք: Բա ինչո՞ւ եք այդքան ուզում սահմանը բացել:

Սահմանը բացվել է ու արջը Նապաստակին ասում է, արի ճակատդ պաչեմ: Հիմա Նապաստակն ի՞նչ է անելու:

Այս ամբողջի Նախաձեռնողը հայկական կողմն էր, հայ Նախագահն արեց առաջին քայլն ու սկսվեց գործընթացը: Բայց չգիտեմ, թե հետո ում միջամտությունն ու ազդեցությունը ավելացավ:

Եթե Թուրքիան ուզի, սահմանը կբացի, չուզի՞ չի բացի: Բա մեր միջամտությունը ո՞րն է:

Սահմանը Թուրքիան փակել է, Նա էլ պիտի բացի: Մեր ձեռքին ի՞նչ կա:

Այսօր թուրքերը շահագրգռված են սահմանի բացումով, մենք էլ պիտի օգտվենք առիթից՝ նախապայմաններ դնելով իրանց առջև:

Թուրքիան Եվրամիություն մտնելու ճանապարհին ցանկանում է անել ևս մեկ քայլ, ու այդ քայլը անելու համար նա կախված է մեզանից: Մի՞թե մենք չենք կարող օգտվել դրանից:

Այս հարաբերությունները նման են մրցման. մեզ ստարտ է տված և մենք պետք է օգտագործենք այդ տրված հնարավորությունը:

Մեզ հնարավորություն է տրվել մի քայլ առաջ անելու ու մենք պետք է ձեռքներից բաց չթողնենք այդ հնարավորությունը:

Մի խելոք մարդ ասեց. տվեք ինձ հենման կետ ու ես կշրջեմ աշխարհը... հիմա մենք էդ հենման կետը կարող ենք գտնել ու ի օգուտ մեզ օգտագործել, բայց, չգիտեմ ինչու, վախենում ենք:

Մենք հիմա զրոյական վիճակում ենք. կամ մի քայլ առաջ կամ մի քայլ հետ:

Երբ նախաձեռնվում է խաղ, արտաքին ուժի ազդեցությունից անկախ, հաղթող կամ պարտվող կարող է լինել միայն խաղացողը, ոչ թե խաղի դատավորը, բժիշկը կամ օգնականը...

Պետք է հայերի համար բուսաբանական այգի ստեղծել, պետք է հակազդեցության միջոցներ ու մեխանիզմներ ստեղծել:

Մեզ հարց լուծող ղեկավար ա պետք, ոչ թե ժպտացող...

Հայերը սիրում են գլուխները տաք տեղ պահել, պայթարի ոգի չեն տեսնում:

Մեր երկու թշնամիների հետ սահմանը ամենամեծն են, դրա համար էլ սահմանի բացումը շատ կարևոր է մեզ համար:

Դե եթե եղպես վախենում ենք, եկեք բոլորի հետ կտրենք մեր կապերը ու քոռ բվի նման նստենք:

Հրեան սպասեց-սպասեց, հետո ոտքի կանգնեց, աշխարհ տիրեց, իսկ մենք սպասում, սպասում ենք, բայց հենց ոտքի կանգնելու պահն է գալիս դեմագոգություն ենք անում: Դրա համար ունենք այն, ինչ ունենք:

90 տարի այս հարցը քնած է մնացել, երբեք հայն ու թուրքը չեն նստել նույն սեղանի շուրջ իրենց կնճռոտ հարցերը քննարկելու: Հիմա լավ շանս ունենք:

Մեզ վերջին հարյուր տարիների ընթացքում առաջին անգամ հնարավորություն է տրվել դեմ դիմաց նստելու և քննարկելու մեր հարցերը:

Եթե Թուրքիան սահմանը բացում է, նշանակում է երկու երևել մի տեղ Թուրքիայի համար՝ համ Եվրամիություն կմտնի, համ էլ տարածքային ամբողջականության ճանաչմամբ Ցեղասպանության հարցն էլ կփակի: Բայց մենք սա չենք հասկանում, որ եթե սահմանը փակ պահենք, մեկ է, թուրքը պիտի համոզի, որ սահման բացենք... սա էլ հենց էն է, ինչ պիտի օգտագործենք մեր պահանջն առաջ տանելու համար:

Ոնց որ կազինո խաղանք. ամեն ինչ դնում ենք սեղանին. կամ կհաղթենք կամ կպարտվենք: Հիմի պիտի նայենք. մենք հաճույքի համար ենք գնում խաղալու թե՞ հիմնավորված «ստավկա» ենք դնում: Եվրամիությունն է ճնշում Թուրքիային, իսկ մենք էլ ինդրողի դերում ենք երևում:

Արդյո՞ք Թուրքիան շահագրգռ է բացել սահմանը, թվում է, որ մենք ենք միայն շահագրգռված, որովհետև մեզ այլընտրանքային ճանապարհ է հարկավոր:

Եթե սա լինեք երկկողմ փոխզիջում՝ գոնե լավ կլինեք, բայց հիմա միայն զիջում ենք, զիջում ենք, զիջում ենք... Սցենարներից մեկի անունը քայլ ձիով է: Ի՞նչ քայլ ձիով, երբ որ մենք ուղղակի պեշկա ենք:

Ես չեի ուզեմ, որ այս հարցը հանրաքվեի դրվեր, բանի որ նորից կեղծիքի ենք ականատես լինելու:

Թուրքիան միակողմանի փակել է սահմանը, միակողմանի էլ բացելու է: Խնդիրը մեր դիմակայման ունակության մեջ է:

Մենք միշտ քայլ ենք անում, երբ որ ուրիշ տարբերակ չենք ունենում ու ամենավատ վիճակում ենք լինում:

Մենք սովոր ենք սահմանը փակ լինի, որ չմտածենք: Հիմա վախենում ենք սահմանը բացել, որովհետև վախենում ենք մտածելուց:

Հիմա Թուրքիան է ձիով քայլ անում, ես կասեի «դաժե» թագուհով:

Մենք նման ենք երեխայի, որ անօգնական գնում-կանգնում է մայրուղու մեջտեղում:

Երկու կողմն էլ շահագրգռ է իմիտացիա անել, թե գնում են հաշտեցման ու կարգավորման:

Ֆուտբոլային քայլ անելուց առաջ էր պետք ծիով քայլ անել:

Խրիմյան հայրիկը ասում էր մեր շերտիդ թղթից է ու պետք է ապավինենք երկաթին: Ապավինեցինք Սարգարապատում ու հիմա կարող ենք այստեղ նստել ու ինչ-որ բան քննարկել: Մեր հարցերը մեր փոխարեն ոչ ոք չի լուծելու:

Եթե վախենանք ամեն ինչից, ուրեմն պետք է լրիվ մեկուսանանք: Դա հնարավոր է: Մենք մեզանից վախենում ենք:

Ուժեղից պետք է վախենալ, մտնել տուն ու դուռն ու պատուհանը փակել: Նրա հետ հարաբերվելուց չես փախչի:

Թուրքիայի կողմից սահմանը փակելու ժամանակ մեր պետությունը ընդհանրապես դեր չունեի: Այժմ իրավիճակը մի փոքր այլ է: Մինչև խաղակոճերը չզգես, չես կարող որոշել, թե ինչպես խաղաս:

Նիկիտա Սիմոնյանին հարց են տալիս, թե ով է ամենալավ դարպասապահը, ասում ա Իվան Խոմիչը: Իսկ ինչու՞ : Որովհետև երկու աչքն էլ շիլ էր: Մենք էլ պիտի մի քիչ շիլ լինենք, որ կարողանանք Թուրքիայի հարձակումներին դիմադրել:

Ճշմարտությունը պետք է բարձրաձայնել. սատանան է փսփոցով խոսում:

Թուրքերը քաղաքական շահ են հետապնդում, իսկ մենք՝ տնտեսական: Մենք դա անում ենք հանուն մեր երեխաների:

Երեխան օրերից մի օր պետք է դուրս գա բակ, փողոց ու ճանաչի մյուսներին: Մենք էլ պետք է դուրս գանք շրջափակումից ու կամաց-կամաց ինտեգրվենք միջազգային ընտանիք:

Ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր. նստած խոսում ենք տնտեսական շահերի, քաղաքական անկախության մասին. բայց ես ասում եմ, որպեսզի մեզ հարգեն ու մենք շահենք, պետք է մենք ուժեղանանք, ինչպես հրեաները արեցին:

Եկեք մենք ինքներս մեզ վստահենք էլի:

Եթե հիմա Հայաստանը հետ քաշվի, Թուրքիան կասի, տեսաք, մենք առաջարկեցինք, դուք մերժեցիք: Եթե խաղում ենք, արդեն խաղի մեջ ենք մտել, ապա պիտի մինչև վերջ խաղանք:

Մենք ոչ թե շատ պիտի խոսենք, այլ խելացի և հիմնավոր:

Ես մենակ մի բան եմ ուզում, որ մեր ժողովուրդը լավ ապրի, երեխես էլ բանակում ա, պատերազմ չեմ ուզում:

Քաղաքականությունը դա հնարավորությունների արվեստ է՝ մենք պետք է մեր հնարավորությունները ճշտենք, նոր խոսենք: Պետք է երազանքների գիրկն ընկնել:

Պետք է այնպես անել, որ հետագա սերունդները մեզ չմեղադրեն մեր այսօրվա սխալների համար՝ գործունեության կամ անգործության:

Ես կարծում եմ, ինքներս մեզ «տուպիկի» մեջ ենք զգել... պատճառն այն է, որ մենք հարցը միշտ միակողմանիորեն ենք քննարկում՝ կամ միայն տնտեսական կողմն ենք նայում կամ էլ ապուլապապերին ենք հիշում:

Եթե մենք լռելու ենք մեր ինդիքների մասին, ուրեմն Գործընթացը սկսելուց առաջ մենք պետք է հաղթահարենք վախը, հետո անցնենք առաջ:

պետք չի բացել սահմանը:

Պետք է որոշենք՝ ուզում ենք լավ ապրել թե՞ անվտանգ ապրել:

Ինձ չի հետաքրքրում, թե Թուրքիան ինչ է շահում, ինձ միայն հետաքրքրում է, թե ես դրա դիմաց ինչ եմ վճարում...

Նախապայմանները պետք է հայտնի լինեին, որ իմանայինք մեր անելիքը: Չեմ ուզում հետագայում ֆիդայի դառնալ, զենք առնել ու սարերն ընկնել ու թուրքին իմ հողից քշել, հետո էլ երեխուն բացատրել, թե այդ ո՞նց եղավ, որ ես օրին հասանք:

Լավ կլիներ իմանայինք դրանց մտքում ինչ կա:

Ցանկալի է, որ Հայաստանը ինդիքողի դերում հանդես չգա:

Պետք է թուրքերին բերել այն համոզման, որ մենք չենք պատրաստվում զիջել ԼՂ և ցեղասպանության հարցերում: Եթե պետք է նաև փակել սահմանը:

Մեր միջից պետք է հանենք «ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր»-ով առաջնորդվելու սկզբունքը:

Աղվեսից խուսափելու համար պետք չի սահմանը փակել, այլ պետք է թակարդ դնել: Իսկ եթե հանկարծ արջը դուրս գա, արջին պիտի մեր կողմ բերենք:

Պետք է ուժեղ լրագրող, ուժեղ զինվոր, ուժեղ պատմաբան ու դիվանագետ լինել:

Այս քայլերը նման են երկսայրի թրի՝ պիտի կոթից բռնենք:

Եթե հարևաններ ենք այսքան դարեր, պետք է կարողանանք ընդհանուր լեզու գտնել. կռվի ժամանակ՝ կռիվ, բարեկամության ժամանակ՝ բարեկամություն:

Յերիք է բավարարվենք բարոյական հաղթանակներով: Մեզ իրական հաղթանակներ են պետք:

Ամռանը շաքաթը յոթ անգամ ինքնաթիռ է գնում Երևան-Ստամբուլ: Այսինքն, շփումն արդեն կա: Մնում է պաշտոնապես ընդունել այդ շփումն ու սահմանը բացել: Դրանից հետո մենք իրար ավելի լավ կճանաչենք որպես հարևաններ ու ճիշտ կկողմնորոշվենք հետագա զարգացումների առումով: Դա կլինի երկար գործընթաց, բայց դրանից վախենալ պետք չի:

Ինձ համար կարևոր է, որ առաջին անգամ Յայաստանն ու Թուրքիան հավասար դիրքերից են հարաբերվում, առաջին անգամ մենք պետություն ենք, որն ինքն է իր անունից խոսում:

Ինչո՞ւ ենք մենք վախենում սահմանը բացելուց: Եթե պետք լինի՝ մենք կփակենք: Ո՞վ է մեզ խանգարելու:

Չի կարելի թշնամու հետ չչփվել, հարևանի հետ չչփվել, պետք է փորձել ուղղակի դիմամիկա ապահովել մեր հարաբերություններում: Սա է ամբողջ խնդիրը:

Եթե մենք չուզենանք խաղալ այս խաղը, ոչ ոք չի կարող մեզ սոփալել: Մեզ խաղացնում են ու մենք խաղում ենք, որովհետև մենք էլ այս խաղի մեջ շահեր ունենք:

Մեր առջև եղած վտանգները տեսնելու համար, պետք է լավ իմանանք մեր նպատակները:

Բանակցությունները պարտադիր են, պետք է բանակցել թե՛ բարեկամների, թե՛ թշնամիների հետ:

Ամեն ինչ կախված է այն բանից, թե մեր ուզածը ինչ է ու ինչ աստիճանի ախորժակ ունենք մենք:

Եթե գայլից վախենում ենք, դա չի նշանակում չպետք է գնանք անտառ:

Պետք է ուժեղ լինել, պատմությունը ուժեղներն են գրում: Եկեք լինենք ուժեղ ու միասնական:

Յիմնական հարցը դիվանագիտական հարաբերությունների հաստատման խնդիրն է: Սահմանի հարցը Եական չի:

Պետք չէ խոսել նրա մասին, թե ինչ կավելանա կամ կպակասի, այլ պետք է խոսել էն գնի մասին, որը մենք վճարելու ենք այդ ավել-պակասի համար: Մենք դեռ չգիտենք էլ, թե ինչ գին ենք վճարելու, ուր մնաց խոսենք նրա մասին, թե արժի այդ գինը տալ թե ոչ:

Եթե մենք չենք կարող այսպիսի խոշոր խաղ ինքներս խաղալ, եկեք ուղղակի փորձենք այս խաղից տորթի մեր կտորը պոկենք:

Գրիչ ձեռք բերելու համար պետք չի ավելին տալ, քան եղ գրիչի արժեքն է...

«Ջհաննամը» թե կողքից մեկն էլ չի շահում այս ամենից, կարևորը արանքից ես իմ շահույթը վերցնեմ:

Եթե հարևանը գա ու տունդ թալանի, մյուս օրը դատարան կդիմես: Եթե դատարանն էլ արդարացի, մյուս օրը դռանդ վերևը մուրճ կկախես ու գործի կանցնես:

Ես նկատում էի, որ Թուրքիան արդեն պատրաստ էր փոխգիշուների գնալ՝ Օբամայի ընտրության նախօրեին, Ֆրանսիայի՝ ցեղասպանության ժխտումը պատժելու որոշումից հետո... Իսկ հիմա այդ հույսս կորավ:

Մենք երիտասարդ պետություն ենք, նոր ենք սովորում ինչ է պետականությունը, դիվանագիտությունը և այլն: Իսկ Թուրքիան ունի դարավոր զարգացած գիտություն: Վտանգավոր խաղ ենք խաղում:

Մեր հիմնական մտավախությունը ոչ թե սահմանի բացումն է, այլ այն, որ մեր դիվանագիտությունը պարտվելու է:

Եթե մենք հրաժարվենք համագործակցությունից, Թուրքիան կկանգնի ու կհայտարարի, թե՛ տեսա՞ք, հայերն են կամակոր ու ընդդիմանում են նորմալ հարաբերություններ հաստատելուն: Ես աղվեսն ամեն դեպքում շահելու է:

Ինչու մեր ազգային անվտանգության հայեցակարգում կարելի է գրել, որ առանց նախապայմանների են լինելու զարգացումները, իսկ այս արձանագրությունում չեն գրում: Ի՞նչ իմանամ, թե թուրքական նմանատիպ փաստաթղթերում իրականում ինչ է գրված:

Տեսնեսապես թույլ զարգացած պետությունը միշտ էլ կախվածության մեջ է լինելու ավելի ուժեղ պետությունից՝ որքան էլ հստակորեն գիտակցի իր ազգային ու քաղաքական շահերը:

Մենք ոչ մի երաշխիք չունենք, որ սահմանների փակ լինելու դեպքում կարող են առաջ տանել մեր ազգային շահերը:

Եղ ձիով քայլը՝ կաղ ձիով քայլ է...

Մենք դեռ ենքան կայացած պետություն չենք, որ կարողանանք բարձրաձայնել մեր խնդիրները:

«Առաջ» գոռալով հետ ենք գնում:

Ինչ-որ բան կփոխվի, բայց արդյո՞ք մենք հավասարը հավասարի պես է Յայաստանը հարաբերվելու Թուրքիայի հետ:

Լրիվ աղվեսի պատմությունն է. քիթը խաղողին չհասավ, ասեց խաղողը թթու էր...
Յերիք մենք մեր սխալները ուրիշի գլխին բարդենք:

Պետք է Յայաստանում ներքին կյանքում այնքան բան փոխել, որ մենք պատրաստ լինենք, այս ամենը ճիշտ հուն մտնի:

**Ցանկացած հարաբերությունների պարագայում վտանգ միշտ էլ կա. նույն վտանգները կան և՛ թուրքերի պարագայում, և՛ պարսիկների ու վրացիներն էլ վրադիր...
Յիմա ի՞նչ, գնանք բոլոր սահմանները փակե՞նք...**

Սահմանի բացումը միջազգային արենայում Յայաստանի հեղինակությունը կբարձրացնի:

Եթե խելոք լինենք, մենք այս սահմանի բացումը կարող ենք օգտագործել և ի շահ տնտեսության, և, որը շատ ավելի կարևոր է, քաղաքականապես:

Մի օր մենք ենք շախ անելու, մի օր նրանք...
Բայց թե որերորդ սերունդը կկարողան լուծել էս հարցը, չգիտեմ:

Մարդն ինչքան արտաքին աշխարհի հետ շատ է շփվում, այնքան նրան վերահսկելը դժվարանում է. մեր պարագայում էլ է սա:

Նույն Թուրքիան դարակզբին քանի՞ անգամ պայմանագիր ստորագրեց Յայաստանի հետ. Սևր, Ալեքսանդրապոլ, Կարս: Մենք էլ էսօր կարող ենք ստորագրել պայմանագիր, իսկ վաղը՝ հրաժարվել:

**Յայ-թուրքական հարաբերությունները միանշանակ ազդելու են մեր մտածելակերպի և ցանկությունների վրա...
Նույն կերպ, ինչպես որ մեր մտածելակերպն ու ցանկություններն են ազդում հարաբերությունների վրա:**

Սահմանների բացումը շահի հարց է՝ թե՛ մեր, թե՛ թուրքերի, թե՛ մյուսների:

Մենք հիմա ամենաներքևի կետում ենք, սրանից վատ մեր հարաբերությունները չեն կարող լինել: Այնպես որ, այսպես թե այնպես ինչ-որ բան շահելու ենք:

Այսօր Յայաստանի և Թուրքիայի միջև ըստ էության պատերազմ է ընթանում. բարեբախտաբար դա զենքով պատերազմ չէ, այլ ուղեղների:

Երկու երկրների մեջ բոլոր հարաբերությունները յուրօրինակ «ամռտուր» են՝ սկսած բարոյականությունից, պատմությունից, շահերից և այլն. յուրաքանչյուր կողմ պետք է «շնորհք» ունենա իր շահերի օգտին օգտագործել ամկա գործոնները:

Սահմանը բացելով Թուրքիան լրացուցիչ խաղաքարտ կստանա տարածաշրջանում իր դերակատարությունն ամրապնդելու համար:

Մեր էս «սիտուացիան» լրիվ Պետյոյի վիճակն է. եթե մենք մեր բարաթը չգտնենք, մեր Կեկելին էլ տանող չի լինի:

Սահմանի բացումը ենթադրում է նաև փոփոխություններ բանակում. իսկ սրան մենք պատրաստ ենք:

Վերջապես պատմության մեջ առաջին անգամ կարող ենք ունենալ բարոյական պարտություն, սակայն, արդյո՞ք դիմացը ռեալ հաղթանակ իրոք կստանանք:

Այդ ե՞րբ է եղել, որ հայ դիվանագետները մատի վրա «Ֆռռացնեն» թուրք դիվանագետներին, կողքից նաև՝ գերտերությունների դիվանագետներին, որ քայլ ձիով կարողանանք անել:

Դիվանագիտությունը 94թ-ից հետո չի աշխատում, ԱԳՆ-ն դարձել է տուրիստական գործակալություն: Այսօր մենք վայելում ենք ոչ ճիշտ կադրային քաղաքականության արդյունքները:

Մենք տեսնում ենք «ինչ» հարցը և չենք ուզում պատասխանել «ինչու» հարցին:

Մեր դիվանագիտությունը «Վեց հոգով յոթ երգ ենք երգում» վիճակում ա...

Մեր սխալն այն է, որ նստած զցում-բռնում ենք, թե Թուրքիան ինչի ա սահման բացում-փակում, փոխանակ մտածենք մեզ ինչ ա պետք, ինչ ենք ուզում... Ցավոք, վերևներում էլ են էս կերպ մտածում:

Յամաճայնագիր կա, որի տակ ստորագրել է Թուրքիան և որը նախատեսում է երրորդ երկրին մուտք ապահովել դեպի ծով: Մենք ինչու՞ չենք կարողանում օգտագործել այդ համաճայնագիրը:

Մենք ունենք ընտրության երկու հնարավորություն. վատ կամ ավելի վատ:

Մեր ու նրանց պայթարը հավասար չէ, մեր նյութական միջոցները նույնը չեն:

Ո՞վ է ասում, որ եթե մենք սա ստորագրենք, ապա այլևս չենք կարող դրանից հրաժարվել: Ցանկացած պայմանագիր հետո կարելի է անվավեր ճանաչել: Պետք չէ այդքան լուրջ ընդունել այս ամենը:

Թուրքերը միշտ էլ կարողացել են համ նալին խփեն, համ էլ մեխին: Եղ մենակ մենք ենք, որ հազար տարի նույն երգն ենք երգում, առանց հասկանալու, որ միգուցե մեր ուզածին հասնելու այլ եղանակներ էլ կան:

Խելոք մարդն ուրիշի սխալների վրա ա սովորում, իսկ հիմարն իր: Բայց մենք ոչ ուրիշի սխալներից ենք խերվում, ոչ էլ մեր:

Իմ կարծիքով թուրքերն ավելի են շահագրգռված սահմանը բացելու մեջ, քան մենք:

Եկեք հասկանանք, սահմանը հիմա փակ է, թե բաց է: Վրաստանով գնում, շրջանցում ու մտնում ենք Թուրքիա: Ե, ինչ տարբերություն:

Թուրքիան Անդրկովկասի հետ կապ չունի, ինքն ուր, մենք ուր: Պարզապես քիթը խոթում է ու հաստատվել ցանկանում:

Կարգերը ձևավորվում են պատերազմների ընթացքում: Պատերազմն է ծնում հերոսներ: Կան օրինակներ. Իռլանդիան և Միացյալ Թագավորությունն ունեն սահմանային վեճ, բայց դա չի խոչընդոտում հարաբերություններին:

Եթե չենք կարողանում բռնկոցքը կտրել, պետք է համբուրենք այն: Սա վերաբերում է թուրքական դիվանագիտությանը:

Սև կառու ենք փնտրում բացարձակ մութ սենյակում, որն այնտեղ չէ:

Չերչիլն ասում էր. «Ամենալավ քաղաքական գործիչը նա է, ով իր գրած սցենարով իրադարձությունները չգարգանալու դեպքում հստակ կարողանում է արդարացնել նոր ստեղծված իրավիճակը»: Մենք այդ հմտությունն էլ չունենք:

Այսօրվա բանակցությունները պատերազմ են կլոր սեղանի շուրջ:

Կողմը, որը լավ ռեսուրս ունի, միշտ աշխատում է օգտագործել փոխհամագործակցության սկզբունքը:

Բանակցություններ վարելուց հետո շահում են բոլորը՝ մեկը շատ, մյուսը քիչ:

ԺԵ. Ժամանակ, տեմպ և հեռանկար

1. Շահեր, Դիրքորոշում, Մտադրություններ

Քաղաքական մերձեցում պետք է լինի, ուղղակի մենք շտապում ենք:

Ստատուս քվոն ձեռնտու է նրան, ում օգտին է աշխատում ժամանակը: Ժամանակը մեր օգտին չի աշխատում:

Մենք ժամանակը պետք է օգտագործենք սահմանի բացման նախապատրաստվելու համար, ոչ թե բացենք, հետո հարցեր լուծենք:

Ստատուս քվոն բացասական է, քանի որ հիմա կա միջազգային ճնշում, տնտեսական իրադրություն, որը թելադրում է որոշակի գործողություններ:

Մենք շախմատ պիտի խաղանք. մեկ քայլ մենք, մեկ քայլ իրենք: Որպեսզի այդ ընթացքում հասկանանք ում խոսքին հավատանք, ում խոսքին՝ ոչ: Իսկ հիմա մեզանից պահանջում են, որ մենք ամեն ինչ անենք, հետո նստենք թախտին, սպասենք բախտին:

Ելնելով մեր ներկա վիճակից, մենք պետք է խելացի գտնվենք: Արդեն երկար ժամանակ շրջափակման մեջ ենք..Պետք է նպատակին քայլ առ քայլ մոտենալ..Պետք է տնտեսապես անկախանալ, ճանապարհի հարթել սերունդների համար:

Ժամանակն է, որ մենք մի քիչ ոտներս կախ գցենք ու սպասենք... Թուրքիան ստիպված կլինի ընդունել մեր պայմանները:

Ինչո՞ւ են այս ամենը այսքան հապճեպ անում: Պետք է տասը չափել, մեկ կտրել: Պետք չէ շտապել:

Մենք պետք է փորձենք ավելի հանգիստ և հաշտ բանակցել Թուրքիայի հետ, որպեսզի հաջորդ սերունդները ավելի հեշտ շփվեն միմյանց հետ:

Մենք դեռ «ա»-ն չասած «բ»-ի մասին ենք խոսում: Առանց հիմքը գցելու շենք ենք կառուցում: Պետք է քայլ առ քայլ շարժվենք առաջ, ոչ թե ոտքով-գլխով միանգամից ընդունենք բոլոր առաջարկները:

Գիտենք պատմությունից, որ կայսրությունները կործանվում են. եկեք սահմանը բացեք, կործանվեն գնան:

Որպեսզի ամեն ինչ մեր երկրների միջև նորմալ ընթանա, մեզ պետք է դանդաղ շտապել:

Ավելի արագ զարգանան հարաբերությունները... բայց ինչ զոհողությունների ու ռիսկերի գնով: Պետք չէ:

Մենք ունենք չլուծված պատմական լուրջ խնդիրներ և մինչև դրանք չլուծվեն, պետք չէ սահմանը բացել: Թող ճանաչեն Ցեղասպանությունը, ապահովվի մեր ազգային անվտանգությունը նոր բացենք սահմանը և ինտեգրվենք: Հիմա շուտ է: 20 տարի դիմացել ենք, էլի կդիմանանք:

Թուրքերի լացուկոցին պետք չէ հավատալ, մեզ արագ քայլեր հարկավոր չեն:

Ուժեղ ենք՝ կշահենք, թույլ ենք՝ կպարտվենք ու արժանի կլինենք թե՛ հաղթանակին, թե՛ պարտությանը: Ամեն դեպքում, էսպես որ մնա, մեկ է՝ պարտվելու ենք...

Այս հարցում ժամանակը մեր օգտին է աշխատում, մենք ավելի կշռադատված ենք դառնում:

Սահմանի փակումը միայն վնաս է բերել Հայաստանին, հարկավոր է անմիջապես փոխել այդ իրավիճակը:

Մենք շուրջ պատրաստ չենք, մեզ պետք է դանդաղ մոտել շուրջ: Սառը ջրին պիտի աստիճանաբար համակերպվել, թե չէ՝ մկանների կբռնվեն ու կուլվեն ջրի հատակը:

Մեր հասարակությունները կառչել են անցյալից: Սա սխալ է: Պետք է մտածել ներկայի ու ապագայի մասին՝ չմոռանալով անցյալը:

Սահմանի բացման ցանկացած հետաձգում վնասելու է առաջին հերթին մեզ: Եթե քսան տարի առաջ բացած լինեինք սահմանը, մենք Թուրքիայում պահպանած կլինեինք շատ լուրջ հայկական համայնք:

Ամեն ինչի սպեղանին ժամանակի մեջ է: Պետք է համաձայնվել բացել այսօր սահմանը, մի քիչ աշխուժացնել առևտուրը: Որոշ ժամանակ անց կտեսնենք դա մեզ օգուտ բերեց, թե՞ ոչ:

Թուրքին ձեռնտու է հիմա սահմանը բացել՝ բացում է: Հետո պետք լինի նորից կփակի: Պետք չէ այս ամենի համար գնալ քաղաքական գիշումների:

Թող այսպես էլ շարունակվի, ոչինչ չփոխվի, Ղարաբաղի հարցն էլ ինչքան հնանա, այնքան ավելի հայանպաստ լուծում կստանա:

2. Զգացմունքներ, Վախեր, Մտահոգություններ

Հրադարձից հետո տասնհինգ տարի բանակցություն է գնում արևելյան ճակատի վրա, բայց արդյունք չկա: Թուրքիայի շտապողականությունը պարզ է, նրանց միանշանակ պետք է սահմանի բացումը: Բայց ես չեմ հասկանում, թե մենք ինչու ենք շտապում: Ցանկացած դեպքում ուտելու հաց կգտնենք:

Այսօր Հայաստանը ամենևին պատրաստ չէ սահմանի բացմանը: Մենք պետք է տարիներ առաջ սկսեինք օրենքներ մշակել:

Սահմանը բացելուց հետո ժամանակից շուտ արված քայլերը մեզ միայն կվնասեն:

Սահմանի բացումից հետո հարցը այնքան կխորանա, որ հնարավոր է նաև զինված ընդհարում:

Թուրքիան կբավարարվի զուտ սահման բացելով: Այլ քայլեր չի ձեռնարկի: Ձևեր կթափի, թե հարաբերություններ է զարգացնում:

Ժամանակից շուտ արված քայլերը մեզ միայն կվնասեն:

Ամեն հարցի լուծում կամ չլուծում թողնում ենք ապագային, իսկ գիշումներն անում ենք այսօր: Բա էդպես կլինի՞...

Անկախ սահմանների բաց լինելուց Հայաստանի խնդիրները վերջնական լուծում չեն ստանա:

Եթե թուրքերը գան, հաստատվեն Հայաստանում, թվաքանակով կգերակշռեն մեզանից ու մենք ականա մեր երկրից կհեռանանք: Մենք երկիրը կկորցնենք:

Թուրքերը խելացի լինեն, առանց նախապայմանների սահմանը կբացեն՝ մի 10 տարում Հայաստանը կգրավեն:

Սահմանի բացումը հարևանության դեռ սկիզբն է: Հնարավոր է, որ սահմանը բաց լինի, բայց իրականում փակ լինի:

Սահմանի բացմամբ հայ-թուրքական հարաբերությունները կվատանան:

Երկաթե վարագույրի հետևում կարո՞ղ ենք զարգանալ... անգամ խորհրդային միությունը չկարողացավ:

Իշխանությունը շատ կտրուկ կայացրեց սահմանի բացման որոշումը:

Ամեն դեպքում ստատուս քվոն լավ չի. արդեն շատ ենք դուփում տեղում, դրա համար էլ աճում-աճում ենք, հետո միանգամից անկում ապրում:

Սահմանի բացումը հայերի աչքին թոզ փչել է նշանակելու: Մի քսան տարի հետո մեզ ավելի լուրջ խնդիրների առաջ են կանգնեցնելու:

Մեր ժողովուրդը հոգեբանորեն պատրաստ չի դեռ սահմանի բացմանը կամ զարգացումներին: Սահմանի բացումից հետո հնարավոր է ցայտնտ:

Այս հարցի լուծման հապճեպությունը թույլ չի տալիս հաշվի առնել հասարակ ժողովրդի կարծիքը: Արդյո՞ք մեր այսօրվա ղեկավարությունը պատրաստ է միայնակ պատասխան տալ կատարած ամեն քայլի համար:

Մենք բոլորս էլ ուզում ենք, որ սահմանը բացվի, բայց արդյո՞ք այն կբացվի: Ինչու՞ խորհրդարանի համար չկա սահմանված ժամկետ արձանագրությունները ստորագրելու համար: Վախենամ, որ արձանագրության վավերացումը մեր մոտ կամ էլ Թուրքիայում նմանատիպ պատճառներով ձգձգվի:

Սահմանի բացման քննարկումը շատ անսպասելի արագություն ստացավ և հասարակ մարդիկ պատրաստ չեն զարգացման, քանի որ հստակ չեն պատկերացնում դրա հետևանքները:

Փակ սահմանը նման է ապահովիչը հանած նռնակի, իսկ սահման բացելը՝ ապահովիչը բացելուն: Եկեք մի քիչ երկար մտածենք նախքան սահման բացելը: Արդյո՞ք գիտե՞նք, նռնակը որ կողմ ենք նետելու, թե՞ պիտի գլխներինս պայթի...

